

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(104)  
2021

**Խմբագրական խորհուրդ՝**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,  
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,  
Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ**

*Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:*

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- \* ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԵՐԸ և ԴՐԱՆՑ  
ԼՈՒԾՈՒՄԸ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ (ՊԱԼԱՏԻ)  
ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**.....9
- \* PROTECTION OF HUMAN DIGNITY AND CONTEMPORARY  
CHALLENGES IN BIOMEDICINE – **NELLY ARAKELYAN**.....40
- \* ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ – **ԴԱՎԻԹ ԹՈՒՄՍՅԱՆ, ՆԱԻԿԵ ՏՈՆՈՅԱՆ** .....49

## II. ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1612-1621)

- \* ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1612, 5 հոկտեմբերի 2021 թվականի).....60
- \* ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 19-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔ» ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1613, 12 հոկտեմբերի 2021 թվականի).....73

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

- \* 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1614, 19 հոկտեմբերի 2021 թվականի).....101
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....107
- \* «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ԶԿԱՆՈՆԱԿԱՐԳՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՏՎՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1615, 26 հոկտեմբերի 2021 թվականի).....118
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....126
- \* ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1616, 2 նոյեմբերի 2021 թվականի) .....137
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....169
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....175

- \* ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
 ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
 ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
 ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1617, 9 նոյեմբերի 2021 թվականի) .....231
  
- \* ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
 ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
 1086-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
 236-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1992 ԹՎԱԿԱՆԻ  
 ՆՈՑԵՄԲԵՐԻ 15-Ի «ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ  
 ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԿԱԽ  
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՑ) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
 ԽԵՂՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՎՆԱՍՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
 ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ  
 ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 579 ՈՐՈՇՄԱՆ,  
 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 23-Ի  
 «ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
 ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ՝ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
 ՃԱՆԱՉՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՍ  
 ՄՆԱՆԿ ՃԱՆԱՉՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ  
 ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՔ ՏՈՒԺՈՂԻՆ  
 ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 914-Ն  
 ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1618, 30 նոյեմբերի 2021 թվականի) .....250
  
- \* ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ  
 ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ,  
 295-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
 ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1619, 7 դեկտեմբերի 2021 թվականի) .....273
  
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ  
 Հ. ԹՈՎՍԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՍՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....295

**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....313
  
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՄԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
(ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
(ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1620, 10 դեկտեմբերի 2021 թվականի).....320
  
- \* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....332
  
- \* ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ  
ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 65-Ն  
ՀՐԱՄԱՆԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1621, 23 դեկտեմբերի 2021 թվականի).....343

**III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

- \* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ) ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ.....397
  
- \* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
«INTERNATIONAL IDEA» ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ.....398

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ .....399
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....400
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ .....401
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ .....402
- ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ ԱՅՅԵԼԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ .....403

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ**

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԳԵՂԱՆԻՍ ՓՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ .....404
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՈՒՀԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻՆ .....404
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ .....405
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ .....406
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ .....407

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**


- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԼ Է ՖՐԱՆԿՈՖՈՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ .....408
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՅԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ IV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ.....409
- ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ .....410

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

- ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ Է ԺԱՄԱՆԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐԱԲ ՏՈՒՐԱՎԱՅԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....411
- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՌԱՋՆԱԶՐՈՒԹՅՈՒՆԸ.....412
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՅՐԵԼ ԵՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ.....413
- ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՅԵԼԵԼ Է ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆ.....414
- ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՅԵԼԵԼ Է ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ .....415
- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ .....415
- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ .....417





**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

*Հայ-ռուսական համալսարանի  
իրավունքի տեսության և սահմանադրական  
իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԵՐԸ և ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ  
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ (ՊԱԼԱՏԻ) ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ**

**Ամփոփագիր.** Մույն հոդվածի նպատակն է բացահայտել տարած-  
քային ընդդատության մասին վեճերի էությունը և «ինստիտուտ-  
գործառույթ» ներդաշնակության տեսանկյունից վերլուծել ընդդա-  
տության մասին վեճերը լուծելու գործառույթը ՀՀ վճռաբեկ դատա-  
րանի (պալատի) նախագահին վերապահելու օրենսդրի մոտեցման  
իրավացիությունը:

Ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը ՀՀ վճռաբեկ  
դատարանի (պալատի) նախագահին վերապահելու մոտեցման  
իրավացիությունը գնահատելու նպատակով վերլուծվել են ընդդա-  
տության մասին վեճերի էությունը, դրա տեսակները, տարբերու-  
թյունները հարակից ինստիտուտներից, իրականացվել են իրավա-  
համեմատական և պատմաիրավական վերլուծություններ:

Հոդվածում քննադատության է ենթարկվել ՀՀ սահմանադրական  
դատարանի 25.06.2021թ. ՄԴԱՈ-123 աշխատակարգային որոշ-  
մամբ արտահայտված այն մոտեցումը, ըստ որի՝ տարածքային  
ընդդատության և ենթակայության կապակցությամբ դատարան-  
ների միջև առաջացած տարաձայնության հարցի լուծումը դատա-  
կան վարչարարություն է:

**Հիմնաբառեր.** ընդդատություն, իրավասություն, վեճ, նեգատիվ և  
պոզիտիվ վեճեր, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ:

**1. Ընդհանուր դրույթներ**

Ուսումնասիրության առարկան են կազմում ընդդատության մա-  
սին վեճերի լուծման տեսական, ինստիտուցիոնալ և ընթացակար-  
գային բնույթի մի շարք հարցեր, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատա-  
րանի (այսուհետ նաև ՀՀ ՎԴ) կամ դրա պալատի նախագահի

9 ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

(այսուհետ նաև՝ ՀՀ ՎԴ նախագահի) կողմից ընդդատության մասին վեճերի լուծման հարցում առկա օրենսդրական կարգավորումները, դրանց հետ կապված խնդիրները:

Հատուկ կհետազոտվեն ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճը լուծելու իր իսկ լիազորության սահմանադրականությունը վիճարկելու փորձը և դրա մասին ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ նաև՝ ՀՀ ՄԴ) դիրքորոշումները:

Ընդդատության մասին վեճերին առնչվող կանոնները կվերլուծվեն առավելագույն 30.06.2021 թ. -ին ընդունված ՀՀ քր. դատ. օր-ի (այսուհետ՝ 2021 թ. ՀՀ քր. դատ. օր)<sup>1</sup> դրույթների հիման վրա, իսկ երբեմն նաև կվկայակոչվեն 1998 թ. -ին ընդունված և այս պահին գործող ՀՀ քր. դատ. օր-ի դրույթները (այսուհետ՝ 1998 թ. ՀՀ քր. դատ. օր.):

Սույն հոդվածում խնդիր դրված չէ քննարկել «իրավասություն» և «ընդդատություն» հասկացությունների հարաբերակցությունը: Նկատի ունենալով, որ մի շարք պետություններում «ընդդատություն» եզրույթի փոխարեն գործածվում է «իրավասություն» եզրույթը, ուստի սույն հոդվածում դրանց կտրվի հավասարազոր նշանակություն:

## 2. Ընդդատության մասին վեճը

*2.1. Ընդդատության մասին վեճի հասկացությունը:* Ընդդատության մասին վեճը միևնույն գործը (մեղադրանքը) քննելու իրավասության առկայության կամ բացակայության մասին երկու դատարանների տարաձայնությունն է (ընդդատության մասին բախումներ, կոնֆլիկտներ): Ընդդատության մասին դատարանների տարաձայնությունը վեճերի վեճն է, քանի որ առանց ընդդատության մասին տարաձայնությունները պատշաճ կերպով հարթելու քրեական արդարադատությունը կհաստատվի փխրուն հիմքերի վրա:

Բարձր և ցածր աստիճանի դատարանների միջև ընդդատության մասին տարաձայնությունը լուծվում է օրենքի ուժով՝ նախապատվությունը տալով բարձր աստիճանի դատարանին<sup>2</sup>: Եթե դատարանը, որին հանձնվել է մեղադրական եզրակացությունը և նյութերը, համարում է, որ վարույթն ընդդատյա է բարձր աստիճանի դատարանին, ապա նյութերն ուղարկում է այդ դատարանին: Եթե մեղադրական

<sup>1</sup> Ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ.:

<sup>2</sup> Табриэлэ Розэ. Введение в немецкое уголовно-процессуальное право. Учебное пособие. – Красноярск, 2001. – С. 43.

եզրակացությունն ստացած դատարանը կարծում է, որ վարույթն ընդդատյա է ցածր աստիճանի դատարանին, ապա դատական քննությունն սկսվում է այդ աստիճանի դատարանում (օրինակ՝ Գերմանիայի քր. դատ. օր-ի 209 պարագրաֆ): Այս մոտեցման հիմքում ընկած է «մեծ խաղաքարտը խփում է փոքրին» կանոնը<sup>1</sup>:

Տարածքային ընդդատության մասին վեճը հասկացվում է ակտիվ և պասիվ իմաստներով: Ակտիվ իմաստով ընդդատության մասին վեճի դեպքում դատարանները հաստատում են, որ միևնույն մեղադրանքի քննությունն ընդդատյա է իրենց, իսկ պասիվ իմաստով՝ դատարանները պնդում են, որ մեղադրանքի քննությունը դուրս է իրենց իրավասությունից<sup>2</sup>: Համեմատության համար նշենք, որ սահմանադրական արդարադատության ոլորտում առանձնացվում են լիազորության ճանաչման և ժխտման վեճի տեսակները: Առաջին դեպքում պետական մարմինը պնդում է, որ պետական իշխանության այլ մարմնի կողմից ընդունված իրավական ակտը կամ գործողությունը մտնում է իր լիազորությունների մեջ, իսկ ժխտման վեճի դեպքում պետական մարմինը պնդում է, որ կոնկրետ լիազորությունը պետք է կատարի պետական իշխանության այլ մարմին, իսկ վերջինս ժխտում է իր այդ լիազորությունը (տե՛ս ՀՀ ՄԴ 11.02.2021 թ. ՄԴԱՌ-27 որոշումը)<sup>3</sup>:

Քրեատավարական տերմինաբանությամբ՝ ընդդատության մասին վեճի ակտիվ իմաստով ընկալումը համապատասխանում է սահմանադրաիրավական տերմինաբանությամբ լիազորության

<sup>1</sup> Фридрих-Кристиан Ш., Горстен Ф. Уголовно-процессуальное право Германии. Учебник. - М.: Изд. Инфотропик, 2016. - С. 134.

<sup>2</sup> Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Т. 2 / Под ред. А. В. Смирнова. - СПб.: Альфа, 1996. - С. 154.

<sup>3</sup> ՀՀ սահմանադրական դատարանը, սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի բովանդակությունը դասակարգելիս, բացի ճանաչման և ժխտման վեճերից, առանձնացրել է վեճերի ևս երկու տեսակ. առաջինը՝ լիազորության յուրացման վեճը, երբ պետական իշխանության մարմինն իրավունքի չարաշահման (պետական մարմնի պարագայում՝ «իրավունքի չարաշահում» ձևակերպման օգտագործումը խիստ վիճելի է՝ Ա.Ղ.) արդյունքում դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակներից, երկրորդը՝ իրավունքի բացի կամ իրավական նորմերի անորոշության արդյունքում առաջացող վեճ, երբ իրավունքի բացի կամ անորոշության արդյունքում առաջանում են հակասություններ կամ լիազորությունների համընկնումներ:

ՀՀ սահմանադրական դատարանի նշած վեճերը լիազորությունների առնչությամբ վեճի ինքնուրույն տեսակներ չեն: Եթե լիազորության յուրացման վեճը նույն լիազորությունների ճանաչման վեճն է, քանի որ մի պետական մարմին, դուրս գալով իր իրավասությունից, իրեն է վերագրում այնպիսի լիազորություններ, որոնք վերապահված են այլ պետական մարմնին: Ընդ որում՝ մյուս պետական մարմինը նույնպես պնդում է, որ այդ լիազորությունը վերապահված է իրեն:

Ինչ վերաբերում է իրավունքի բացի կամ իրավական նորմերի անորոշության արդյունքում առաջացող վեճին, ապա դա դուրս է ՀՀ սահմանադրական դատարանի նշած դասակարգման համակարգից, քանի որ այս դեպքում փոխվում է դասակարգման հիմքը: Տվյալ պարագայում խոսք է գնում լիազորության առնչությամբ վեճերի առաջացման պատճառների մասին, որը կարող է հանդիսանալ դասակարգման ինքնուրույն հիմք (լիազորությունների առնչությամբ վեճերի դասակարգումը՝ ըստ դրանց առաջացման պատճառների):

ճանաչման վեճի ընկալմանը, իսկ պասիվ իմաստով վեճի ընկալումը՝ ժխտման վեճի ընկալմանը:

**2.2. Ընդդատության մասին վեճի տեսակները:** Ներկայումս ընդդատության մասին վեճերի ակտիվ և պասիվ ընկալումներն անվանում են ընդդատության մասին պոզիտիվ և նեգատիվ վեճեր<sup>1</sup>: Ավելին, նույնիսկ ժամանակակից որոշ քրեադատավարական համակարգերում վեճերի այս տեսակներն ստացել են օրենսդրական ճանաչում: Այսպես Մոլդովայի քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի 1-ին մասում առանձնացվել են իրավասության մասին պոզիտիվ և նեգատիվ կոնֆլիկտի տեսակները: Ընդդատության մասին պոզիտիվ կոնֆլիկտն այն է, երբ երկու կամ ավելի դատարաններ ճանաչում են, որ իրավասու են քննելու նույն գործը, իրավասության նեգատիվ կոնֆլիկտի դեպքում՝ մերժում են գործը իրենց կողմից քննելու իրավասությունը:

Ընդդատության մասին պոզիտիվ վեճեր կարող են ծագել այն համակարգերում, որտեղ թույլատրվում է զուգահեռ ընդդատություն: Պատմականորեն զուգահեռ ընդդատությունը ծագել է այն երկրներում, որտեղ տարածքային ընդդատությունը որոշելու տարբեր չափանիշներին (հանցանքի կատարման վայր, ձերբակալման վայր) տրվում է հավասարազոր նշանակություն: Օրինակ Ֆրանսիայում և Գերմանիայում տարածքային ընդդատության որոշման հանցանքի կատարման վայրին և քրեական հետապնդում հարուցելու վայրին երբեմն տրվել է հավասար նշանակություն, որն էլ հանգեցրել է մի քանի դատարանների զուգահեռ ընդդատությանը, այսինքն՝ միևնույն մեղադրանքն ընդդատյա է եղել տարբեր դատարաններին: Դրա հետևանքով ձևավորվել է զուգահեռ ընդդատությունը որոշելու հատուկ կանոն, ըստ որի՝ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որն առաջինն է սկսել քննությունը<sup>2</sup>:

Գերմանիայի քրեական դատավարությունում առայսօր դատախազությանը թույլատրվում է նույն դեպքով միաժամանակ կիրառել տարածքային ընդդատությունը որոշելու տարբեր կանոններ (հանցանքի կատարման վայրի, ձերբակալման վայրի և այլն): Նման դեպքերում դատախազությունը կարող է իր հայեցողությամբ պետական

<sup>1</sup> Люблинский П.И., Полянский Н.Н. Уголовно-процессуальный кодекс РСФСР: Текст и постатейный комментарий с прил. алф.-предмет. указ. / Под общ. ред. проф. А.М. Винавера, М.Н. Гернета и А.Н. Трайнина. - М.: Право и жизнь, 1924. - С. 46.

<sup>2</sup> Розин Н. Н. Уголовное судопроизводство. Пособие к лекциям. 2-е изд. (измененное и дополненное). - Санкт-Петербург, 1914. - С. 207-208.

մեղադրանք ներկայացնել մի քանի դատարաններում, որոնք ընդդատության տարբեր կանոնների կիրառմամբ իրավասու են քննելու գործը: Ընդդատության մասին պոզիտիվ վեճը լուծելիս, եթե կհաստատվի այնպիսի իրավիճակ, որ իրոք վարույթն ընդդատյա է երկու դատարաններին էլ, ապա «նախապատվություն պետք է տալ այն դատարանին, որն առաջինն է սկսել դատական քննությունը»<sup>1</sup>:

Ն. Ռոզինը փաստում է, որ զուգահեռ ընդդատության ինստիտուտը ռուսական քրեական դատավարությանը հայտնի չէ<sup>2</sup>: ՀՀ քրեական դատավարությունում զուգահեռ ընդդատության վիճակ, հատկապես հանրային մեղադրանքի կարգով իրականացվող վարույթով, չի կարող ծագել: Նախ՝ ՀՀ-ում տարածքային ընդդատությունը որոշելու գլխավոր տիտղոսը վերապահված է հանցանքի կատարման վայրի չափանիշին, իսկ ընդդատության մյուս չափանիշներն օժանդակ են: Բացի այդ, հանրային մեղադրանքով դատախազությունն իրավասու չէ մեղադրական եզրակացությունը և նյութերը միաժամանակ հանձնել երկու տարբեր դատարանների: Միևնույն ժամանակ, զուտ տեսականորեն, զուգահեռ ընդդատության իրավիճակը չենք բացառում մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող վարույթներով, երբ նույն դեպքով առկա են մի քանի տուժողներ և նրանք քրեական հայցերը ներկայացնում են տարբեր դատարաններ: Օրինակ՝ մանր հափշտակությունների դեպքում, երբ հափշտակվել է համատեղ սեփականություն համարվող գույք, համասեփականատերերից մեկը քրեական հայցը ներկայացնում է հանցանքի կատարման վայրի դատարան, իսկ մյուսը՝ մեղադրյալի բնակության վայրի դատարան:

Պոզիտիվ և նեգատիվ վեճերի առանձնացումը կարող է ունենալ գործնական նշանակություն: Օրինակ՝ պոզիտիվ վեճի դեպքում վերադաս դատարան դիմում է վերջին դատարանը, ով ճանաչել է, որ ինքն իրավասու է քննելու այդ մեղադրանքը, իսկ նեգատիվ վեճի դեպքում՝ այն դատարանը, ով վերջինն է մերժել իր իրավասությունը քննելու այդ մեղադրանքը (Մոլդովայի քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՌՄՖՍՀ 1922 թ. -ի քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածում ամրագրված էր, որ եթե գործը ստացող դատարանը կարծում է, թե գործը իրեն փոխանցվել է սխալ կերպով, կարող է բողոքարկել վերադաս աստյա-

<sup>1</sup> **Бойльке В.** Уголовно-процессуальное право ФРГ. 6-е издание. Пер. с нем. Плошкиной Я. М. - Красноярск, 2004. - С. 56.

<sup>2</sup> **Розин Н. Н.** Указ. соч. - С. 208.

նին, հսկողության կարգով, սակայն դա կարող է անել միայն գործի մասին դատավճիռ կայացնելուց հետո: Դոկտրինում միայն դատավճիռ կայացնելուց հետո ընդդատությունը վիճարկելու կանոնը մեկնաբանվեց այնպես, որ այն վերաբերում է միայն նեգատիվ վեճերին: Ընդդատության մասին պոզիտիվ վեճը, երբ երկու կամ ավելի դատարաններ պնդում են, որ գործն ընդդատյա է իրենց, լուծում է վերադաս ատյանը<sup>1</sup>: Ընդդատության մասին պոզիտիվ վեճի մասին այս վերապահումը պոզիտիվ իրավունքում (օրենքի այդ հոդվածում) ամրագրված չէր, այն դոկտրինալ կանոն էր, որը, անկասկած, տեղավորվում էր իրավունքի տրամաբանության շրջանակներում և ենթակա էր կիրառման, նույնիսկ եթե օրենսդրության մեջ այդ մասին անմիջական արտացոլված դրույթ նախատեսված չէր:

*2.3. Ընդդատության մասին վեճի լուծումը և ընդդատության կանոնների խախտման վերացումը:* Ընդդատության մասին վեճը ծագում է այն դեպքում, երբ դատարանները, հիմք ընդունելով օրենքով սահմանված ընդդատության կանոնները, կարծում են, որ իրենք իրավասու չեն այդ գործով իրականացնելու իրենց գործառույթները: Այս հարցը բարձրացվում է մինչև հիմնական դատալսումներ սկսելը՝ նախնական դատալսումների ժամանակ: Ընդդատության կանոնների խախտման հարց կարող է ծագել նաև հիմնական դատաքննության փուլում, որի պարագայում կողմերը ընդդատության կանոնների խախտման հարցը կարող են բարձրացնել հետաձգված բողոքարկման ռեժիմով:

Բայց այս տեսության մեջ նշվում է, որ ընդդատության մասին վեճի լուծումը և ընդդատության կանոնի խախտման վերացումը տարբերվում են լուծման ընթացակարգերով: Կողմերն ընդդատության կանոնի խախտումը վիճարկում են ընդհանուր դատավարական կարգով, մինչդեռ ընդդատության մասին վեճը, լինելով երկու հավասարազոր ինստիտուտների միջև տարաձայնություն, լուծվում է այնպիսի կարգով, որն ավելի շատ հիշեցնում է բարձր ատյանի կողմից ցածր ատյանի նկատմամբ հսկողության իրականացման կարգը<sup>2</sup>:

<sup>1</sup> Люблинский П.И., Полянский Н.Н. Уголовно-процессуальный кодекс РСФСР. Текст и постатейный комментарий с прил. алф.-предмет. указ. / Под общ. ред. проф. А.М. Винавера, М.Н. Гернета и А.Н. Трайнина. - М.: Право и жизнь, 1924. - С. 46.

<sup>2</sup> Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Т. 2. / Под ред. А. В. Смирнова. - СПб.: Альфа, 1996. - С. 154.

2.4. Ընդդատության մասին վեճերը՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս և ընդդատությունը փոխելիս: Ընդդատությունը փոխելու ինստիտուտը (2021 թ. ՀՀ քր. դատ. օր-ի 262-րդ հոդվածի 5-րդ մաս) պետք է տարբերակել վարույթն ըստ ընդդատության փոխանցելու կարգավորումից (ՀՀ քր. դատ. օր-ի 263-րդ հոդված): Վարույթն ըստ ընդդատության է փոխանցվում այն ժամանակ, երբ դատարանը պարզում է, որ տվյալ վարույթն իրեն ընդդատյա չէ: Մինչդեռ, վարույթի ընդդատությունը փոխելու դեպքում վարույթն օրենքով ընդդատյա է տվյալ դատարանին, սակայն նա, օրենքով նախատեսված փաստակազմի առկայության դեպքում, ելնելով նպատակահարմարության շարժառիթներից, որոշում է վարույթի ընդդատությունը փոխելու մասին: Եթե դատավորը 2021 թ. ՀՀ քր. դատ. օր-ի 262-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պայմանների պահպանմամբ որոշում է կայացրել նպատակահարմարության հիմքով վարույթի ընդդատությունը փոխելու մասին (ուղարկող դատավոր), ապա մյուս դատավորը, ստանալով որոշումը և քրեական վարույթի նյութերը, պարտավոր է այն ընդունել վարույթ (ստացող դատավոր):

ՀՀ քրեական դատավարությունում ընդդատության մասին վեճը ՀՀ ՎԴ քրեական պալատի նախագահի կողմից լուծելու կառուցակարգը (2021 թ. ՀՀ քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 4-րդ մաս) կապվել է միայն վարույթն ըստ ընդդատության փոխանցելու ինստիտուտի հետ (2021 թ. ՀՀ քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդդատությունը վիճարկելու այդ կարգը կիրառելի չէ, երբ ընդդատությունը փոխվել է նպատակահարմարության հիմքով (ՀՀ քր. դատ. օր-ի 262-րդ հոդվածի 5-րդ մաս): Մյուս կողմից՝ եթե ուղարկող դատավորը, վարույթի ընդդատությունը փոխելու մասին որոշում կայացնելիս, խախտել է ընդդատությունը փոխելու՝ օրենքով նախատեսված ֆորմալ-իրավաբանական պայմանները, ապա դա ոչ թե նպատակահարմարության գնահատման անհամաձայնություն է, այլ օրինականության մասին վեճ է, որը պետք է անհապաղ լուծում ստանա: Այն, որ օրենսդիրը չի նախատեսել ընդդատությունը փոխելու դեպքում օրինականության խախտումը վերականգնելու կառուցակարգ, պետք է գնահատել որպես օրենսդրական բաց:

Նման իրավիճակում իրավաբանորեն հիմնավորված ճանապարհը օրենքի անալոգիայի ինստիտուտին դիմելն է: Դրա համար առկա են բոլոր նախադրյալները: ՀՀ դատավարական համակարգում ամ-

րագրված չէ ընդդատության վերաբերյալ վեճերի արգելք: Բացի այդ, ընդդատությունը փոխելիս օրինականության մասին վեճի չհետաձգված (անհապաղ) լուծումը (մինչև հիմնական դատալուծումները) պայմանավորված է անձի՝ օրինական դատարանի իրավունքի ապահովմամբ:

Այս օրենսդրական բացը պետք է լրացնել դատավարական համանման նորմը անալոգիայով կիրառելու ճանապարհով: Տվյալ իրավիճակում համանման դրույթ պետք է համարել ՀՀ քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 4-րդ մասը և այն կիրառել ՀՀ քր. դատ. օր-ի 262-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պայմանները վիճարկելու դեպքում:

**2.5. Ընդդատության մասին վեճերի արգելքը:** Ընդդատության մասին վեճերի արգելքի էությունն այն է, որ դատավորը, ով ստացել է ըստ ընդդատության փոխանցված վարույթ, պարտավոր է այն ընդունել վարույթ: Դատարաններին արգելվում է ընդդատության մասին անհամաձայնության հիմքով վարույթի նյութերը «միմյանց նետել»: Նման արգելք նախատեսված է հիմնականում հետխորհրդային երկրների դատավարական համակարգերում: Օրինակ ՌԴ քր. դատ. օր-ի 36-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների միջև ընդդատության մասին վեճերը չեն թույլատրվում: Քրեական ցանկացած գործ, որ մի դատարանից ուղարկվել է մյուսին օրենսգրքի 34-րդ և 35-րդ հոդվածներով նախատեսված կարգով, ենթակա է անվերապահ ընդունման այն դատարանի կողմից, որին փոխանցվել է<sup>1</sup>: Նմանատիպ կարգավորումներ նախատեսված են նաև Բելառուսի Հանրապետությունում<sup>2</sup>, Ղրղզստանի Հանրապետությունում<sup>3</sup>, Տաջիկստանի Հանրապետությունում<sup>4</sup>, Ուզբեկստանի Հանրապետությունում<sup>5</sup>:

Այս հարցում անտրամաբանությամբ են աչքի ընկնում Ադրբեջանի քր. դատ. օր-ի կարգավորումները: Նշված պետության քր. դատ. օր-ի 77-րդ հոդվածի վերտառությունն է «ընդդատության

<sup>1</sup> Уголовно-процессуальный кодекс Российской Федерации // от 18.12.2001 г. / КонсультантПлюс (consultant.ru).

<sup>2</sup> Տե՛ս Բելառուսի քր. դատ. օր-ի 275-րդ հոդված: Уголовно-Процессуальный Кодекс Республики Беларусь // от 16.07.1999 г. (kodeksy-by.com):

<sup>3</sup> Տե՛ս Ղրղզստանի քր. դատ. օր-ի 267-րդ հոդված: Уголовно-процессуальный Кодекс Кыргызской Республики // от 2.02.2017 г. (minjust.gov.kg):

<sup>4</sup> Տե՛ս Տաջիկստանի քր. դատ. օր-ի 260-րդ հոդված: Уголовно-процессуальный кодекс Республики Таджикистан // от 3.12.2009 г. (continent-online.com):

<sup>5</sup> Տե՛ս Ուզբեկստանի քր. դատ. օր-ի 394-րդ հոդված: Уголовно-процессуальный кодекс Республики Узбекистан // от 22.09.1994 г. (lex.uz):



մասին վեճերի լուծումը», սակայն հողվածի 1-ին մասում ամրագրված է, որ դատարանների միջև ընդդատության մասին վեճերը չեն թույլատրվում: Օրենսդրի մտքի հակասականությունն առավել խորանում է, երբ նույն հողվածի հաջորդ նախադասությունում ընթերցում ենք՝ «քրեական գործը կամ այլ նյութը, որոնք ընդդատության կանոններին համապատասխան ուղարկվել են մի դատարանից մյուսին, ենթակա են անվերապահ ընդունման», այնուհետև սահմանվում է, որ ընդդատության մասին *դատարանների միջև տարաձայնության անկայության դեպքում*, քրեական գործը կամ այլ նյութը ուղարկվում է մի դատարանից մյուսին՝ համապատասխան վերաքննիչ ատյանի դատարանի նախագահի կողմից<sup>1</sup>: Փաստորեն՝ մի կողմից արգելված են ընդդատության մասին վեճերը, մյուս կողմից՝ նախատեսված է ընդդատության մասին վեճերի լուծման կառուցակարգ: Բացի այդ, Վերաքննիչ ատյանի դատարանը միջամտում է այն ժամանակ, երբ դատարանների միջև արդեն իսկ ծագել է տարաձայնություն:

Ի հակադրության նշվածի, Լատվիայի քրեական դատավարությունում թեև ամրագրված է ընդդատության մասին վեճերի անթույլատրելիության կանոնը (Լատվիայի քր. դատ. օր-ի 446-րդ հոդված), սակայն այս համակարգի տրամաբանությունն այնպիսին է, որ այդ արգելքին զուգահեռ նախատեսվել է դատարանների միջև ընդդատության հարցի մասին տարաձայնությունները բարձր ատյանի դատարանի որոշմամբ կանխելու կառուցակարգ, այսինքն՝ սահմանված է, որ քրեական գործը մի դատարանից մեկ այլ դատարան փոխանցելու հարցը լուծում է մեկ ատյան բարձր վերադաս դատարանի նախագահը (Լատվիայի քր. դատ. օր-ի 445-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս դեպքում՝ նույն ատյանի դատարանների միջև ընդդատության մասին տեսանելի տարաձայնություններ չեն կարող ծագել, քանի որ վարույթն ի սկզբանե փոխանցվում է բարձր ատյանի դատարանի նախագահի միջոցով: Այս իմաստով հասկանալի է, թե ինչու է մի կողմից սահմանվել ընդդատության մասին վեճերի անթույլատրելիության մասին նորմ, մյուս կողմից՝ դրան զուգահեռ նախատեսվել է այնպիսի կառուցակարգ (բարձր ատյանի դատարանի կողմից ընդդատությունը նախապես որոշելը), որը կոչված է բարձր արտյանի հեղինակության ուժով թույլ չտալու, որ առաջին ատյանի դատարանների միջև ծագեն ընդդատության մասին տեսանելի տարաձայնություններ:

<sup>1</sup> Уголовно-процессуальный кодекс Азербайджанской Республики // от 14.07.2000 г. (continent-online.com).

Ընդդատության մասին վեճերի արգելքը, ընդհանուր առմամբ, արհեստական դրույթ է: Նախ՝ Ռուսաստանի հեղինակավոր դատավարագետներն այս արգելքը մեկնաբանում են հետևյալ կերպ.

*«Այս արգելքը չի նշանակում, որ փոխանցված գործը ստացած դատարանը պարտավոր չէ ստուգել, թե արդյոք այն ընդդատյա է իրեն: Եթե դատարանն իր հերթին գալիս է այն եզրակացության, որ գործն իրեն ընդդատյա չէ, ապա նա պետք է այդ մասին ընդունի դատավարական որոշում (այդ թվում, գործն ըստ ընդդատության փոխանցելու մասին), որը վարույթի մասնակիցները կարող են վերաքննության կարգով բողոքարկել»<sup>1</sup>:*

Փաստորեն ընդդատության մասին վեճերի արգելքը Ռուսաստանի դատավարական համակարգում մեկնաբանվում է այնպես, որ փոխանցված (նույնիսկ եթե այն փոխանցվել է բարձր աստիճանի դատարանի միջոցով) վարույթի նյութերը ստանալիս դատավորը պետք է կրկին ստուգի՝ այն իրեն ընդդատյա է, թե՛ ոչ, և եթե որոշի, որ այն իրեն ընդդատյա չէ, ապա կրկին պետք է վարույթի նյութերը փոխանցի այլ դատարանին, նույնիսկ չի բացառվում, որ վարույթի նյութերը կարող են փոխանցվել այն դատարանին, որից վարույթն ստացել է: Եթե դա այդպես է, ապա հարց է ծագում՝ ո՞րն է այս արգելքի իմաստը, արդյոք այս դեպքում առկա չէ ընդդատության մասին վեճ, մի թե այս դեպքում դատարանները «միմյանց չեն նետում» վարույթի նյութերը:

Երկրորդ ընդդատության մասին վեճերի արգելքն ինքնին չի կարող բացառել, որ օբյեկտիվ իրականությունում կամ դատավորի սուբյեկտիվ աշխարհում կարող են ծագել ընդդատության մասին տարաձայնություններ: Դատավորը, ով ստանում է մեկ այլ դատարանի կողմից փոխանցված վարույթը, կարող է համաձայն չլինել նախորդ դատավորի որոշման հետ: Պարզապես վարույթի նյութերն ստացած դատավորն իր անհամաձայնությունը և դրա հիմնավորումները պարտավոր է պահել իր իդեաների աշխարհում, քանի որ նա չունի այն պոզիտիվ արտահայտելու իրավական հնարավորություն. նա կարող է անել մեկ բան՝ փոխանցված գործն ընդունել վարույթ: Այս համակարգերում ընդդատության մասին տարաձայնություններ կարող են ունենալ կողմերը, որը կարող է օբյեկտիվ

<sup>1</sup> Курс уголовного процесса / Под ред. Л. В. Головки. - М.: Статут, 2016. - С. 837.

իրականությունում արտահայտվել դատավճիռ կայացնելուց հետո՝ հետաձգված բողոքարկման ռեժիմով: Այսինքն՝ կողմերը, դատավճիռը բողոքարկելիս, կարող են կասկածի տակ դնել մեղադրանքն օրինական դատարանի կողմից քննելու հանգամանքը:

### **3. Ընդդատության մասին վեճի լուծումը ՀՀ վճարելի դատարանի նախագահի կողմից**

*3.1. Ընդհանուր դրույթներ:* Հայաստանի Երրորդ Հանրապետության քրեական դատավարությունում ընդդատության մասին վեճերի լուծումը վերապահվել է կամ ՀՀ ՎԴ նախագահին (1998 թ. քր. դատ. օր-ի 51-րդ հոդ.) կամ ՀՀ ՎԴ քրեական պալատի նախագահին (2021 թ. քր. դատ. օր-ի 263-րդ հոդ. 4-րդ մաս):

Ի տարբերություն 1998 թ. -ի ՀՀ քր. դատ. օր-ի, 1998 թ. -ի ՀՀ քաղ. դատ. օր-ում կարգավորված չէր ընդդատության մասին վեճի լուծման ոչ միայն ընթացակարգային, այլև ինստիտուցիոնալ որևէ հարց<sup>1</sup>: Միայն 2018 թ. -ին ընդունված ՀՀ քաղ. դատ. օր-ով ընդդատության մասին վեճի լուծումը վերապահվեց ՀՀ վճարելի դատարանի նախագահին (ՀՀ քաղ. դատ. օր-ի 26-րդ հոդ.): Ինչպես նկատում ենք՝ օրենսդիրն այս երկու հարակից դատավարության իրավունքի ճյուղերում ընդդատության մասին վեճերի լուծման հարցի վերաբերյալ արտահայտել է տարբերվող մոտեցումներ:

Ինչու՝ օրենսդիրը դատավարական այս վեճի լուծման լիազորությունը վերապահեց ՀՀ ՎԴ նախագահին: Այս հարցի պատասխանը գտնելու համար պետք է իրականացնել իրավահամեմատական և ռետրոսպեկտիվ վերլուծություն:

### *3.2. Ընդդատության մասին վեճերի լուծումը (իրավահամեմատական վերլուծություն)*

Այն երկրներում, որտեղ պոզիտիվ իրավունքով ընդդատության մասին վեճերն արգելված չեն, կարելի է առանձնացնել այդ վեճերի լուծման ինստիտուցիոնալ երկու համակարգ՝

1) ընդդատության մասին վեճերի լուծումը անմիջական վերահաս դատարանի կողմից.

2) ընդդատության մասին վեճերի լուծումը բարձր աստիճանի դատարանի նախագահի կողմից:

#### **3.2.1. Ընդդատության մասին վեճերի լուծումը անմիջական վերահաս դատարանի կողմից**

<sup>1</sup> Ուժը կորցրել է 09.04.2018 թ.:

(a) Եվրոպական երկրների դատավարական համակարգերը: Չարգացած դատավարական համակարգերում տարածքային ընդդատության մասին վեճերը լուծում են բարձր ատյանի դատարանները՝ վերաքննիչ կամ վճռաբեկ (Գերագույն) դատարանները: Այսպես, Գերմանիայի քրեական դատավարությունում մի քանի դատարանների միջև ընդդատության մասին վեճ ծագելու դեպքում այն լուծում է նրանց վերադաս դատարանը: Ընդդատության մասին վեճից պետք է տարբերել իրավասու դատարանին (ընդդատությունը) որոշելու անհնարինության վիճակը, օրինակ՝ եթե անձը հանցանքը կատարել է այլ պետության տարածքում և հայտնի չէ նրա գտնվելու վայրը (նման իրավիճակում կիրառելի չէ տարածքային ընդդատության մասին որևէ հատուկ նորմ): Այս դեպքում իրավասու դատարանին որոշում է Դաշնային Գերագույն դատարանը<sup>1</sup>:

Իտալիայի քրեական դատավարությունում իրավասության մասին վեճ կարող է ծագել վարույթի ցանկացած փուլում, իսկ դրա նախաձեռնող կարող են լինել ինչպես վարույթի մասնավոր մասնակիցները, դատախազը, այնպես էլ դատավորներից մեկը, ով կայացնում է կոնֆլիկտի առկայության մասին համապատասխան որոշում (ordinanza): Կոնֆլիկտի մասին մասնավոր անձանց կամ դատախազի դիմումը կամ դատարանի որոշումը, անհրաժեշտ որոշումների պատճենների հետ միասին, փոխանցվում են Վճռաբեկ դատարան: Ընդ որում, կոնֆլիկտի առկայության մասին ո՛չ կողմերի դիմումը, ո՛չ էլ դատարանի որոշումը չունեն վարույթի ընթացքը կասեցնող ազդեցություն: Վճռաբեկ դատարանը վեճը լուծում է դռնփակ նիստով և որոշում է կայացնում, որտեղ նշվում է պատշաճ դատարանը: Այն պարտադիր է մյուս ատյանի դատարանների համար, եթե ի հայտ չեն գալիս փաստեր, որով վարույթն ընդդատյա է ավելի բարձր ատյանի դատարանին<sup>2</sup>:

Իսպանիայի քրեական դատավարությունում ընդհանուր իրավասության և զինվորական դատարանների իրավասության մասին կոնֆլիկտների լուծումը կարգավորվում է «Դատական կոնֆլիկտների մասին» 2/1987 օրենքով: Այս վեճերը լուծում է իրավասությունների կոնֆլիկտի Պալատը, որը կազմված է Գերագույն տրիբունալի (դատարանի) նախագահից, Գերագույն տրիբունալի երկրորդ պա-

<sup>1</sup> **Бойльке В.** Уголовно-процессуальное право ФРГ. 6-е издание. Пер. с нем. Плошкиной Я. М. - Красноярск, 2004. - С. 54.

<sup>2</sup> **Барабанов П. К.** Уголовный процесс Италии. - М.: Изд. «Спутник», 2019. - С. 65.

լատի (քրեական գործերով պալատ (հեղ.) և Գերագույն տրիբունալի՝ զինձառայողների գործերով պալատի երկուական մագիստրատներից<sup>1</sup>:

Շվեյցարիայի քրեական դատավարությունում ընդդատության մասին վեճերը նույնպես լուծում է տվյալ Կանտոնի բողոքարկման հարցերով դատարանը<sup>2</sup>:

Լիխտենշտեյնի քրեական դատավարությունում ընդդատության մասին վեճերի առաջացման դեպքում, որոշումը կայացնում է Բարձրագույն դատարանը (վերաքննիչ աստյան (հեղ.)), իսկ վերջնական որոշումը՝ Գերագույն դատարանը (քր. դատ. օր-ի 18-րդ պարագրաֆ)<sup>3</sup>:

Բուլղարիայի քրեական դատավարությունում դատարանների միջև իրավասության մասին վեճերը լուծում է Վճռաբեկության Գերագույն դատարանը (Supreme Court of Cassation): Այդ ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմինները պետք է կատարեն միայն անհետաձգելի գործողությունները (քր. դատ. օր-ի 44-րդ հոդված)<sup>4</sup>:

Խորվաթիայի քրեական դատավարությունում նույնպես սահմանված է, որ դատարանը, ում փոխանցվել է գործը, կարծում է, որ այն ընդդատյա է ոչ թե իրեն, այլ գործը փոխանցած դատարանին կամ մեկ այլ դատարանին, ապա պետք է նախաձեռնի իրավասության մասին վեճի վարույթ: Իրավասության մասին վեճը լուծում է նրանց համար անմիջական վերադաս դատարանը: Նրա որոշումը բողոքարկման ենթակա չէ (քր. դատ. օր-ի 30-րդ, 31-րդ հոդվածներ)<sup>5</sup>: Նմանատիպ կարգավորումներ նախատեսված են նաև Մոնտենեգրոյի քր. դատ. օր-ի 36-րդ, 37-րդ հոդվածներով<sup>6</sup>:

Չեխիայի քրեական դատավարությունում հատուկ նորմով սահմանված է, որ դատարանների միջև ընդդատության մասին վեճը

<sup>1</sup> Барабанов П. К. Уголовный процесс Испании. - М.: Изд. «Спутник», 2021. - С. 68-69.

<sup>2</sup> Трефилов А. А. Уголовный процесс Швейцарии // Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). - М.: «НИПКЦ Восход-А», 2016. - С. 423-424.

<sup>3</sup> Трефилов А. А. Уголовное судопроизводство в Лихтенштейне // Уголовный процесс зарубежных стран. Том 3 (15). - М.: «НИПКЦ Восход-А», 2020. - С. 235.

<sup>4</sup> Criminal procedure code // Promulgated State Gazette No. 86/28.10.2005, effective 29.04.2006 [https://www.imolin.org/doc/amlid/Bulgaria/Bulgaria\\_Criminal\\_Procedure\\_Code\\_2009.pdf](https://www.imolin.org/doc/amlid/Bulgaria/Bulgaria_Criminal_Procedure_Code_2009.pdf) (04.12.2021).

<sup>5</sup> Criminal Procedure Code of the Republic of Croatia // NN 76/09 [https://www.legislationline.org/download/id/7895/file/Croatia\\_Criminal\\_proc\\_code\\_am2009\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7895/file/Croatia_Criminal_proc_code_am2009_en.pdf) (04.12.2021).

<sup>6</sup> Criminal Procedure Code of Montenegro // Official Gazette of Montenegro, no. 57/09, August 18, 2009. <http://www.anb.gov.me> (04.12.2021).

լուծում է նրանց անմիջական վերադաս դատարանը (քր. դատ. օր-ի 24-րդ պարագրաֆ)<sup>1</sup>:

(b) *Մուսուլմանական դատավարական համակարգերը*: Մուսուլմանական որոշ դատավարական համակարգերում ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը վերապահված է վերադաս դատարանին: Այսպես՝ Սաուդյան Արաբիայի Թագավորության քր. դատ. օրենքի 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Վերաքննիչ դատարանը<sup>2</sup>: Իրանի Իսլամական Հանրապետության Հասարակական և Հեղափոխական դատարանների քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածում խոսվում է դատարանների իրավասության մասին վեճերի մասին, սակայն դրանց լուծման նկատմամբ կիրառելի է համարում Քաղ. դատ. օր-ի կարգավորումները<sup>3</sup>:

(c) *Հետխորհրդային դատավարական համակարգերը*: Մոլդովայում սահմանված է, որ իրավասության մասին դրական կամ բացասական վեճը լուծում է նրանց վերադաս դատարանը (քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի 1-ին մասում):

ԱՊՀ երկրների համար մոդելային քր. դատ. օր-ի (17.02.1996 թ.) 82-րդ հոդվածի համաձայն՝ ընդդատության մասին վեճերը լուծում են վերաքննիչ կամ գերագույն դատարանները:

Ղազախստանում դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է վերադաս դատարանը, որի որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Կողմերի հայտարարությունները գործի տվյալ դատարանին ոչ ընդդատյա լինելու մասին, լուծվում են այդ դատարանի կողմից: Ընդդատության մասին դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան, որի որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման (քր. դատ. օր-ի 318-րդ հոդված)<sup>4</sup>:

(d) *Այլ դատավարական համակարգերը*: Ճապոնիայի քրեական դատավարությունում եթե ծագում են ընդդատությունը որոշելու բարդություններ, ապա դատախազը պարտավոր է միջնորդությամբ

<sup>1</sup> Уголовно-процессуальное законодательство Чешской Республики. Учебно-методическое пособие. Краснояр. гос. ун-т / Сост. Л.В. Майорова. - Красноярск, 1999. - С. 26.

<sup>2</sup> Гусенова П. А. Исламский уголовный процесс: религиозно-правовая природа и характерные черты (на примере Исламской Республики Иран и Королевства Саудовская Аравия). Дисс. канд. юрид. наук. - Санкт-Петербург, 2016. - С. 144.

<sup>3</sup> Уголовно-процессуальный кодекс общественных и революционных судов Исламской Республики Иран / Науч. ред. докт. юрид. наук, проф. Н.Г. Стойко; вступ. ст. и перевод П.А. Гусеновой. - СПб., 2016. - С. 166.

<sup>4</sup> Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан // от 4.07. 2014 г.

դիմել առաջին ատյանի դատարանի համար վերադաս դատարան՝ ընդդատությունը որոշելու խնդրանքով, իսկ եթե չկա որևէ դատարան, ով իրավասու կլիներ լուծելու այդ մեղադրանքը կամ հնարավոր չէ այդպիսի դատարան տեղակայել (установить), ապա Գլխավոր դատախազը դիմում է Ճապոնիայի Գերագույն դատարան, որպեսզի վերջինս որոշի, թե որ դատարանը պետք է իրականացնի վարույթը<sup>1</sup>:

(e) *Միջանկյալ եզրահանգում*: Ինչպես նկատում ենք, այս համակարգերում ընդդատության մասին վեճերի լուծման կառուցակարգերն ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ընթացակարգային տեսանկյուններից դասական իմաստով դատավարական են: Նման երկրներում դատավարական օրենսգրքով նույնիսկ սահմանված են բարձր ատյանի դատարանների կողմից ընդդատության մասին վեճերի լուծման հատուկ դատական ընթացակարգեր:

**3.2.2. Ընդդատության մասին վեճերի լուծումը բարձր ատյանի դատարանի նախագահի կողմից**: Ընդդատության մասին վեճերի լուծումը բարձր ատյանի դատարանի նախագահներին է վերապահված հիմնականում հետխորհրդային առանձին երկրներում, այդ թվում՝ Մերձբալթյան պետություններում: Այսպես՝ Վրաստանում ընդդատության մասին վեճերը լուծում է վերադաս դատարանի նախագահը (քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 6-րդ մաս): Լիտվայում իրավասության մասին վեճը լուծում է Բարձր դատարանի նախագահը կամ այդ դատարանի քրեական բաժնի նախագահը (քր. դատ. օր-ի 230-րդ հոդված)<sup>2</sup>: Էստոնիայում դատարանի կողմից այլ դատարանից ստացված քրեական գործի ընդդատությունը վիճարկելու դեպքում ընդդատությունը որոշում է Գերագույն դատարանի նախագահը (քր. դատ. օր-ի 28-րդ հոդվածի 3-րդ մաս)<sup>3</sup>:

Այս երկրներում, որտեղ ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը վերապահված է բարձր ատյանի դատարանների նախագահներին, կարող են ծագել մի շարք հարցեր, որոնց պատասխանը հնարավոր է տալ պրակտիկան ուսումնասիրելու արդյունքում: Մասնավորապես եթե բարձր ատյանի դատարանի

<sup>1</sup> Волосова Н. Ю., Волосова М. В. Уголовно-процессуальное законодательство Японии: сравнительное исследование. - М.: Юрлитинформ, 2016. - С. 56-57.

<sup>2</sup> Baudžiamojo proceso kodeksas Lietuvos Respublikos// Suvestinė redakcija nuo 2021-07-01, Įstatymas paskelbtas: Žin. 2002, Nr. 37-1341; Žin. 2002, Nr.46-0, i. k. 10210101STA001X-785 // <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.163482/asr> (04.12.2021).

<sup>3</sup> Kriminaalmenetluse seadustik // Vastu võetud 12.02.2003 RT I 2003, 27, 166, jõustumine 01.07.2004 // <https://www.riigiteataja.ee/akt/111072013011> (04.12.2021).

նախագահը լուծում է ընդդատության մասին վեճը, կողմերն արդյոք ք կարող են դատավճիռ բողոքարկել՝ վիճարկելով ընդդատությունը, թե՛ այդ հարցը համարվում է արդեն իսկ լուծված բարձր աստյանի պաշտոնատար անձի կողմից:

3.3. *Ընդդատության մասին վեճերի լուծումը Հայաստանում (ռետրոսպեկտիվ վերլուծություն)*

**3.3.1. ՀՄԽՀ 1923թ. քր. դատ. օր-ի կանոնակարգումները:** 1923 թ. -ի սեպտեմբերի 28-ի Հայկական ՄՍՌ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածում սահմանվում էր.

*«Ամեն մի դատարան, որ օրենքի նշված հոդվածներում սահմանված կարգով մի այլ դատարանից ստանում է մի գործ, անպայման պարտավոր է ընդունել այն ի քննություն, և այս առիթով դատարանների միջև ոչ մի վիճաբանություն թույլ չի տրվում: Եթե գործը ստացող դատարանը կարծում է, թե գործը իրեն փոխանցվել է անկանոն կերպով, կարող է բողոքարկել վերադաս ատյանին, հսկողության կարգով, սակայն գործի մասին դատավճիռ արձակելուց հետո միայն»<sup>1</sup>:*

Այս նորմի վերաբերյալ կարելի է կատարել մի քանի նկատառում:

*Նախ*՝ նշված հոդվածում ամրագրված է իրավասության (օրենքի այդ հոդվածում «ընդդատություն» եզրույթը չէր գործածվում) մասին վեճի անթույլատրելիության կանոնը, ինչն արգելում էր գործն ստացող դատավորին իրավասության մասին նեգատիվ վեճն անմիջապես տեղափոխել (այն առանց վարույթ ընդունելու) վերադաս ատյան:

*Երկրորդ*՝ նշված նորմը հնարավորություն էր տալիս գործն ստացող դատավորին դատավճիռ կայացնելուց հետո այն բողոքարկել վերադաս դատարան: Այսինքն, իրավասության մասին դատարանների միջև վեճը պետք է լուծեր վերադաս դատարանը՝ հետաձգված բողոքարկման ռեժիմով: Այս կարգավորման մեջ անհասկանալին այն է, որ դատավորն իր իսկ կայացրած դատական ակտը պետք է բողոքարկեր բարձր ատյանի դատարան: Տվյալ ժամանակահատվածում Ուկրաինայի ԽՍՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդվածում նշվում էր ոչ թե բողոքարկելու, այլ բարձր դատական ատյանին իրավասու-

<sup>1</sup> ՀՄԽՀ դեկրետների և որոշումների ժողովածու, 1924, սպրիլ, թիվ 5, էջ 10:



թյան մասին հարցի մասին տեղյակ պահելու մասին<sup>1</sup>: Թեև այս դեպքում էլ հարց էր ծագելու, թե դատավորն ինչ դատավարական ձևով պետք է տեղյակ պահեր իրավասության վեճի մասին:

**3.3.2. ՀՄՍՌ 1934 թ. քր. դատ. օր-ի կանոնակարգումները:** 1923 թ. -ի ՀՄԽՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի բովանդակությանը նման դրույթ հետագայում նախատեսվեց նաև 1934 թ. -ի հունիսի 22-ի Հայկական ՄՍՌ քր. դատ. օր-ի 39-րդ հոդվածում<sup>2</sup>: Այս նորմում բարձրատյանի դատարանի նախագահի լիազորությունների մասին կարգավորումներ նախատեսված չէին:

**3.3.3. Հայաստանի 1961 թ. քր. դատ. օր-ի կանոնակարգումները:** Միայն 1961 թ. Հայաստանի քր. դատ. օր-ի 32-րդ հոդվածում (25.07.1984 թ. խմբագրությամբ) սահմանված էր .

*«Գործը մեկ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանից մեկ ուրիշ դատարանի հանձնելու հարցը լուծում է Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի նախագահը ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ դատախազի կամ այն դատարանի միջնորդությամբ, որին ընդդատյա է գործը:*

Եթե գործը մեկ այլ դատարանի հանձնելու հարցի մասին գոյություն ունի տնօրինական նիստի որոշում, ՀՀ գերագույն դատարանի նախագահը, դրան համաձայն չլինելու դեպքում, այդ որոշումը կարող է բողոքարկել հսկողության կարգով»:

Թեև այս դեպքում խոսվում էր Գերագույն դատարանի նախագահի մասին, սակայն պետք է նկատի ունենալ, որ Գերագույն դատարանի նախագահը չէր լուծում դատարանների միջև ընդդատության մասին վեճ: Հոդվածի 1-ին մասում ամրագրված էր ոչ թե Գերագույն դատարանի նախագահի կողմից ընդդատության մասին դատարանների տարաձայնությունը լուծելու, այլ գործը մի դատարանից մեկ ուրիշ դատարան հանձնելու հարցը լուծելու մասին նորմ: Եթե առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն այլ դատարանին հանձնելու մասին որոշում, ապա Գերագույն դատարանի նախագահը, դրա հետ համաձայն չլինելու դեպքում, ոչ թե ինքն էր լուծում ընդդատության հարցը, այլ այդ որոշումը բողոքարկում էր հսկողության կարգով:

<sup>1</sup> Канарский С. Уголовный процессуальный кодекс: научно-теоретический и практический комментарий / Теоретическая часть составлена П. И. Люблинским. 2-е изд., перераб. и доп., с изменениями по 15 августа 1929 г. - Юридическое издательство Наркомюста УССР, 1930. - С. 61.

<sup>2</sup> Հայկական ՄՍՌ քրեական դատավարության օրենսգիրք. Հայրապետ, Երևան, 1951, էջ 16:

**3.3.4. Միջանկյալ եզրահանգում:** 1923 թ. -ի և 1934 թ. -ի օրենսգրքերով բարձր աստիճանի դատարանի նախագահի՝ ընդդատության մասին նեգատիվ կամ պոզիտիվ վեճերի լուծման գործառույթ նախատեսած չէր:

Հայաստանի 1961 թ. -ի քր. դատ. օր-ում Գերագույն դատարանի նախագահը օժտված էր առաջին աստիճանի դատարանի կայացրած ընդդատության փոխելու որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, բողոքարկման վարույթ նախաձեռնելու լիազորությամբ, սակայն նա ընդդատության մասին վեճը լուծելու գործառույթով օժտված չէր:

ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճն ինքնուրույն լուծելու գործառույթն<sup>1</sup> ամրագրվեց միայն 1998 թ. -ի ՀՀ քր. դատ. օր-ի 51-րդ հոդվածում, որտեղ սահմանվեց, որ առաջին աստիճանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է ՀՀ ՎԴ նախագահը:

*3.4. ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճի լուծման խնդիրները*

**3.4.1. Դոկտրինալ տեսանկյունը:** Դատավարագիտության մեջ ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճերը լուծելու մասին օրենսդրական կարգավորումը համարվել է վիճելի<sup>2</sup>, իսկ Ս. Մարաբյանը դեռևս 2016 թ. -ին բարձրաձայնել է այս հարցը և նշել է, որ ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճի լուծման կարգավորումները հակաիրավական են: Նա իր դիրքորոշումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Նախ՝ եթե անձը համաձայն չէ ՀՀ ՎԴ նախագահի՝ ընդդատության մասին վեճը լուծելու որոշման հետ, ապա օրենքով նախատեսված չէ այն վիճարկելու որևէ կառուցակարգ: Այն պարագայում, երբ անձն օրենքի հիման վրա ստեղծված, անկախ, անկողմնակալ և պատշաճ դատարանի իրավունքի կրողն է:

Երկրորդ՝ անձն իրավունք ունի ընդդատությունը խախտված լինելու հիմքով բողոքարկելու դատավճիռը, իսկ ընդդատությունը խախտելը նաև դատավճռի բեկանման հիմք է, մինչդեռ ՀՀ ՎԴ նախագահի որոշումը ենթակա չէ վիճարկման և բնականաբար փոփոխման<sup>3</sup>:

<sup>1</sup> ՀՀ վճարելի դատարանի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանի մասին 03.05.2021թ.-ի որոշմամբ ընդդատության մասին վեճերի լուծումը որակվել է որպես լիազորություն:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (դատական և հատուկ վարույթներ): Մաս 3, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Հրատ. «Տիգրան Մեծ», 2017, էջ 15:

<sup>3</sup> **Մարաբյան Ս.** Որոշ նկատառումներ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործերի տարածքային ընդդատությունը փոխելու մասին: Պետություն և իրավունք, 2016, թիվ 2 (72), էջեր 169-170:

ՀՀ ՎԴ նախագահը, իրավաբան գիտնականի՝ տարիներ առաջ մատնանշած խնդիրները, բովանդակային և էսթետիկ տեսանկյուններից պատշաճ ձևակերպված դիմումով, 2021 թ. -ին ներկայացրեց ՀՀ սահմանադրական դատարանի քննարկմանը:

**3.4.2. ՀՀ ՎԴ նախագահի որոշումը ՀՀ ՍԴ դիմելու մասին:** ՀՀ ՎԴ նախագահը 03.05.2021 թ. որոշում է կայացրել ՀՀ ՍԴ դիմելու մասին, որով վիճարկել է ընդդատության մասին վեճերը լուծելու գործառույթը ՀՀ ՎԴ նախագահին վերապահելու սահմանադրականությունը: Այս դիմումում արտացոլված որոշ դիրքորոշումներ դոկտրինալ հետաքրքրություն են ներկայացնում:

Նախ ՀՀ ՎԴ նախագահը, ընդդատության վեճերը լուծելիս, արդյոք հանդես գալիս է որպես դատարան և իրավասու է արդյոք ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով դիմել ՀՀ ՍԴ:

Երկրորդ՝ ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման գործառույթն արդյոք բխում է ՀՀ ՎԴ նախագահի՝ որպես ՀՀ ՎԴ ներկայացուցչական և կազմակերպչական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի իրավական կարգավիճակից:

Ըստ ՀՀ ՎԴ նախագահի՝ օրենսդրությամբ նախատեսված գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունը չի բխում ՎԴ նախագահի՝ որպես Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի իրավական կարգավիճակից և վտանգում է բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջը:

Ավելին՝ ընդդատության մասին վեճերի լուծումը ՀՀ ՎԴ նախագահին վերապահելու դեպքում նա հանդես կգա որպես այդ դատարանների միջև բարձրացված ընդդատության և ենթակայության մասին վեճերը հանգուցալուծող վերադաս դատական ատյան՝ այն դեպքում, երբ ՀՀ ՎԴ նախագահը ներառված չէ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների ցանկում:

Երրորդ ՀՀ ՎԴ նախագահի կողմից կոնկրետ գործով ընդդատության կամ ենթակայության մասին վեճի լուծումից հետո գործի քննությունն իրականացրած դատարանի պատշաճությունը հետագայում՝ վերջնական դատական ակտի հետ միասին վիճարկելու հնարավորությունը՝ ընթացակարգային առումով դառնում է խն-

դրահարույց, քանի որ prima facie վտանգվում է դատական մարմինների միջև գործառության կապի ապահովման սկզբունքը: Մասնավորապես ՀՀ ՎԴ նախագահի կողմից որոշված առաջին ատյանի դատարանի կողմից քաղաքացիական կամ վարչական գործի քննությունն իրականացնելուց հետո, շահագրգիռ անձանց կողմից այդ դատարանի «օրենքի հիման վրա ստեղծված» լինելը վերաքննիչ ատյանում վիճարկելու դեպքում կատարվի այնպես, որ վերաքննիչ դատարանը, ըստ էության, պետք է վերանայի ՀՀ ՎԴ նախագահի կողմից կայացված որոշման իրավաչափությունը:

Այսպիսով ՀՀ ՎԴ նախագահը կարծում է, որ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ՀՀ ՎԴ նախագահին վերապահված գործառույթը խախտում է դատական մարմինների միջև գործառության կապը և վտանգում է անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

**3.4.3. ՀՀ ՄԴ վիճահարույց դիրքորոշումը:** ՀՀ ՄԴ (ողջ կազմով) լուծել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի դիմումի քննության ընդունելու հարցը և 25.06.2021 թ. ՄԴԱՌ-123 որոշմամբ գործի քննությունը մերժել է: ՀՀ ՄԴ-ն այս որոշմամբ քննարկել է երկու հարց

1) ՀՀ ՎԴ նախագահը գործի ընդդատության և ենթակայության հարցը լուծելիս արդյոք հանդես է գալիս որպես դատարան, ով իրավասու է դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

2) գործի ընդդատության և ենթակայության հարցի լուծումն արդյոք ենթադրում է կոնկրետ գործի լուծում:

Առաջին հարցի կապակցությամբ, ՀՀ ՄԴ-ն, վերլուծելով ՀՀ դատական համակարգի ինստիտուցիոնալ կողմը սահմանող նորմերը<sup>1</sup>, եզրակացրել է.

*Սահմանադիրը Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք է վերապահել, ի թիվս այլ սուբյեկտների, նաև դատարաններին՝ միաժամանակ հստակ սահմանելով, թե որոնք են ՀՀ-ում*

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մաս, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 2-րդ հոդված, 15-րդ հոդված, 20-րդ հոդված, 24-րդ հոդված, 27-րդ հոդված, 29-րդ հոդված:

գործող դատարանները: Վերոնշյալից հետևում է, որ սահմանադիրը Վճռաբեկ դատարանի նախագահին չի դիտարկել որպես դատարան, ավելին՝ վերջինիս չի օժտել նաև Սահմանադրական դատարան դիմելու իրավունքով:

Երկրորդ հարցի մասին ՀՀ սահմանադրական դատարանը նշել է.

«Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործերի ընդատությունը և ենթակայությունը լուծելու լիազորության իրականացման հարցին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ լիազորության իրականացումը ենթադրում է գործի տարածքային ընդատության և ենթակայության կապակցությամբ դատարանների միջև առաջացած տարաձայնության հարցի լուծում՝ ըստ էության դատական վարչարարության իրականացում: Այսինքն՝ գործի տարածքային ընդատության և ենթակայության կապակցությամբ առաջացած անհամաձայնության առնչությամբ Վճռաբեկ դատարանի նախագահը բացառապես որոշում է գործի ընդատության և ենթակայության հարցը, որպիսի լիազորության իրականացումը չի համարվում արդարադատության իրականացում, հետևաբար նման գործառույթի իրացման պարագայում վերջինս չի կարող որակվել որպես գործը քննող դատարան»:

ՀՀ ՄԴ-ն եզրակացրել է, որ ՀՀ ՎԴ նախագահը չի հաղթահարել «դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան» պայմանը:

**3.5. Հեղինակի նկատառումները**

ՀՀ ՄԴ-ն, ՀՀ ՎԴ նախագահի կարգավիճակը որոշելիս (ՀՀ ՄԴ դիմելու իրավասությունից կտրուկության և ընդատության մասին վեճերի լուծման տիրույթում), հիմք է ընդունել հարցի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ գործառութային կողմերը:

**3.5.1. Ինստիտուցիոնալ տեսանկյունը**

(a) ՀՀ ՎԴ նախագահի ՀՀ ՄԴ դիմելու իրավասությունը: Ինստիտուցիոնալ տեսանկյունից ՀՀ ՎԴ նախագահը թեև իր ստատիկ կարգավիճակով ՀՀ ՎԴ կառուցվածքային տարր է, սակայն նա դասական իմաստով դատական համակարգի ինքնուրույն օղակ չէ (ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդված): Այս հարցում ՀՀ ՄԴ-ն իրավացի է, երբ նշել է, որ ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի

իմաստով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը դատարան չէ:

Միննույն ժամանակ, եթե ՀՀ ՎԴ նախագահին օրենքով վերապահվել է դատավարական բնույթի վեճի լուծում, ապա նա, չլինելով դատական համակարգի ինքնուրույն օղակ, սուր անհրաժեշտության դեպքում, իրավական ֆիկցիայի ձևաչափով, պետք է համարվեր ՀՀ ՄԴ դիմելու իրավասուբյեկտությամբ օժտված դատարան: Ընդ որում՝ նման իրավական ֆիկցիա ձևավորելն անհրաժեշտություն է, եթե միայն այդ եղանակով է հնարավոր հրատապ նախաձեռնել պատշաճ իրավական գործընթացներ և վերացնել «ինստիտուտի-գործառույթի-լիազորության» ներդաշնակության խախտման այնպիսի դրսևորումներ, որոնք միջամտում են արդարադատության կազմակերպման համար բազիսային համարվող «օրինական դատարանի» իրավունքին:

Տվյալ դեպքում կասկածելի ինստիտուտի (ՀՀ ՎԴ նախագահի) կողմից ընդդատության մասին դատավարական վեճի լուծման հետևանքները ուղիղ միջամտում են դատավարության մասնավոր մասնակցի «օրինական դատարանի» հիմնական իրավունքին: Քրեական գործով արդարադատությունը կհաստատվի փխրուն հիմքերի վրա, եթե ի սկզբանե կասկածի տակ է դրվում այն, որ ընդդատության մասին վեճը լուծվել է այդ գործառույթի համար ոչ ներդաշնակ սուբյեկտի կողմից: Խնդիրն առավել է սրվում, երբ հենց ՀՀ ՎԴ նախագահն է վիճարկում ընդդատության մասին վեճը լուծելու գործառույթը ոչ ներդաշնակ ինստիտուտին (իրեն) վերապահելու սահմանադրականությունը:

Սա վերը նկարագրված այն սուր անհրաժեշտությունն է, որից ելնելով ՀՀ ՄԴ-ն, իրավական ֆիկցիա ձևավորելով, կարող էր ՀՀ ՎԴ նախագահին այս հարցով համարել ՀՀ ՄԴ դիմելու իրավասուբյեկտությամբ օժտված անձ և հրատապ որոշեր ընդդատության մասին վեճի լուծումը ՀՀ ՎԴ նախագահին վերապահելու նորմի սահմանադրականությունը: Այս հարցի սահմանադրականությունը հրատապ լուծելու դեպքում դատավարությունը կշարունակվեր ընդդատության մասին վեճը պատշաճ սուբյեկտի կողմից լուծելուց հետո:

Համեմատության համար նշենք, որ ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ նաև ԲԴԽ) ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի իմաստով նույնպես դատարան չէ: Միայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական

օրենքում է որպես իրավական ֆիկցիա ամրագրվել, որ ԲԴԽ-ն որոշ հարցերով հանդես է գալիս որպես դատարան (տե՛ս օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասը): Ընդ որում, օրենսդիրը դիմել է իրավական ֆիկցիայի, որպեսզի ԲԴԽ-ի իրականացրած որոշ վարույթներով *mutatis mutandis* կիրառելի համարվեն դատավարական երաշխիքներ: Այս ֆիկցիայի նպատակը բնավ ԲԴԽ-ին ՀՀ ՍԴ դիմելու իրավասություններ տալու օժտելը չէ: Մինչդեռ՝ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը 2020 թ.-ին դիմել է ՀՀ ՍԴ, և վերջինս 09.06.2020 թ. ՍԴԱՌ-115 որոշմամբ գործն ընդունել է քննության: Այս դեպքում ԲԴԽ-ն թեև ինստիտուցիոնալ տեսանկյունից ՀՀ դատական համակարգի օղակ չէ, սակայն ՀՀ ՍԴ-ն, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով վերը նշված իրավական ֆիկցիան, նրան նույնպես համարել է ՀՀ ՍԴ դիմելու լիազորություն ունեցող դատարան:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այս փուլում ընդդատության մասին վեճը լուծելու գործառույթը ՀՀ ՎԴ նախագահին վերապահելու կարգավորման սահմանադրականության հարցը չլուծվեց, սակայն հետագայում ՀՀ օրենսդիր մարմինը կամ ՀՀ ՍԴ-ն (մեկ այլ սուբյեկտի դիմումի հիման վրա) անկասկած քննության առարկա կդարձնեն գործառույթի (ընդդատության մասին վեճի լուծման) և ինստիտուտի (ՀՀ ՎԴ նախագահի) ներդաշնակության հարցը:

*(b) Ընդդատության մասին վեճը լուծելու գործառույթի և այն իրականացնող ինստիտուտի աններդաշնակությունը:* Ընդդատության մասին վեճի լուծումը ոչ թե ինստիտուտին պետք է վերապահել: Այս հացի պատասխանի հիմքում պետք է դնել ՀՀ ՍԴ-ի տարիներ առաջ ձևավորած արժեքավոր կանոնը, ըստ որի՝ ինստիտուտի և գործառույթի միջև պետք է լինի ներդաշնակություն, իսկ ինստիտուտը և իրավասությունը (լիազորությունը՝ Ա.Ղ.) միջոց են գործառույթն իրականացնելու համար (14.10.2008թ. ՍԴՌ-766 որոշում):

Ընդդատության մասին վեճերի լուծման դատական (դատավարական) գործառույթը ՀՀ ՎԴ նախագահին վերապահելով՝ խախտվում է ինստիտուտի և գործառույթի (լիազորության) ներդաշնակության սահմանադրական պահանջը: Բանն այն է, որ ՀՀ ՎԴ նախագահը, դատական համակարգի ինքնուրույն օղակ չէ, նրա իրավական կարգավիճակը սահմանափակվում է միայն ՀՀ ՎԴ ներկայացուցչական և կազմակերպչական գործառույթներով և

դրանից բխող լիազորություններով: ՀՀ ՎԴ նախագահը չի կարող ունենալ ինքնուրույն դատավարական գործառույթներ և լիազորություններ, ուստի նա ընդդատության մասին վեճի լուծման համար ներդաշնակ ինստիտուտ չէ:

Ներդաշնակ ինստիտուտը որոշելիս պետք է հիմք ընդունել, որ ընդդատությունը հիմնարար նշանակություն ունեցող դատավարական հարց է (այս մասին հաջորդիվ), ուստի դրա հետ կապված վեճը լուծող ինստիտուտը պետք է լինի դատական մարմին: Այս նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք ընդդատության վերաբերյալ վեճի լուծման երկու տարբերակ:

Առաջին տարբերակ՝ դատարանների միջև քրեական գործերի ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը պետք է վերապահել ՀՀ դատական համակարգի ընդհանուր իրավասության դատարանների բարձր ատյանի դատարանին՝ օրինակ՝ ՀՀ ՎԴ քրեական պալատին, որը, օրենքի միատեսակ կիրառման գործառույթի շրջանակներում, կլուծի դատավարական վեճը: Ընդ որում, ՀՀ ՎԴ ընդդատության մասին վեճը պետք է լուծի պատշաճ դատական ընթացակարգով (այս մասին հաջորդիվ):

Բարձր ատյանի դատարանի ՀՀ ՎԴ կողմից ընդդատության մասին վեճի նախապես լուծումը նշանակում է, որ սովյալ մեղադրանքով արդարադատությունն ի սկզբանե կհաստատվի ամուր հիմքերի վրա, քանի որ կողմերը հետաձգված բողոքարկման ռեժիմով ընդդատությունը չեն կարող վիճարկել:

Եթե, այնուամենայնիվ, օրենսդրական քաղաքականության սուբյեկտները, հիմք ընդունելով դատական համակարգի եռաստիճան լինելը, որոշեն, որ ընդդատության մասին վեճի լուծումը չի կարող անմիջապես վերապահվել ՀՀ ՎԴ-ին, այլ պետք է վերապահել ՀՀ վերաքննիչ դատարանին, ապա վերջինս այդ վեճը պետք է լուծի կոլեգիալ կազմով և պատշաճ ընթացակարգով: Այս մոտեցման դեպքում դատավարության կողմերը չեն կարող վերաքննության կարգով (հետաձգված բողոքարկման ռեժիմով) վիճարկել ընդդատությանը վերաբերող այն հանգամանքները, որոնք նախկինում դարձել են ՀՀ վերաքննիչ դատարանի քննության առարկա: Այս մոտեցման թույլ կողմն այն է, որ կողմերը, հետագայում մեղադրանքն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելիս, կարող են անդրադառնալ ընդդատության հարցին և վիճարկեն, որ ընդդատության վեճն ի սկզբանե սխալ է



լուծվել և ընդդատությունը սխալ է որոշվել, ինչը կնշանակի, որ հետադարձության կարգով կխարխլվեն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների իրականացրած արդարադատության հիմքերը:

Երկրորդ տարբերակ՝ դատարանների միջև ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը պետք է վերապահել ՀՀ ՄԴ-ին: Բանն այն է, որ ընդդատության մասին տարաձայնությունը, ըստ էության, տարբեր դատարանների (սահմանադրական մարմինների) միջև սահմանադրական լիազորության (արդարադատության) մասին վեճ է: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման գործառույթը վերապահվեց ՀՀ ՄԴ-ին (ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդված):

ՀՀ սահմանադրական իրավունքի դոկտրինը և ՀՀ ՄԴ-ն դեռևս չունեն սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման վերաբերյալ բազում հարցերի պատասխաններ, մասնավորապես՝ չեն հստակեցվել «սահմանադրական մարմին» և «սահմանադրական լիազորություն» հասկացությունների բովանդակությունը: Այնուամենայնիվ, դատարանների միջև ընդդատության մասին վեճի լուծումը, հատկապես եթե դրա պատճառը օրենսդրական բացն է, ՀՀ ՄԴ-ին վերապահելու հարցը պետք է դառնա սահմանադրական իրավունքի և դատավարության մասնագետների քննարկման առարկա, որի արդյունքում հնարավոր կլինի որոշել, թե ինչքանով է հիմնավոր ընդդատության մասին վեճը որակել որպես սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորության առնչությամբ վեճ և ՀՀ դատարաններին հնարավորություն տալ ընդդատության մասին վեճերի հարցով դիմել ՀՀ ՄԴ:

### 3.5.2. Ընթացակարգային տեսանկյունը

(a) *Ընդդատության մասին վեճի լուծումը դատական վարչարարություն չէ:* ՀՀ ՄԴ ՍԴԱՈ-123 որոշման մեջ արտացոլված դիրքորոշումներից առավել մտահոգիչ է ընդդատության մասին վեճի լուծումը որպես դատական վարչարարություն որակելը: ՀՀ ՄԴ-ն փաստորեն կասկածի տակ է դրել ընդդատության մասին վեճերի լուծման հարաբերությունների դատավարական բնույթը՝ դրանով

իսկ ստվերելով նաև ընդդատության ընդհանուր ինստիտուտի դատավարական բնույթը: Բանն այն է, որ ընդդատության մասին վեճերի լուծմանը վերաբերող նորմերն ընդդատության դատավարական ինստիտուտի կառուցվածքային տարրերից են. ընդդատությունը չի կարող համարվել դատավարական ինստիտուտ, իսկ դրա մասին վեճերի լուծումը՝ ոչ դատավարական (դատական վարչարարություն): Ընդ որում «վարչարարություն» բառից առաջ «դատական» ածականն օգտագործելը որևէ կերպ չի ազդում հարցի էության վրա, քանի որ ՀՀ ՄԴ-ն, ընդդատության մասին վեճը վարչարարություն որակելով, ըստ էության բացառել է դրա դատավարական բնույթը, հերքել է, որ այն դատավարական գործառույթ է: Ընդդատության ինստիտուտը թեև որոշ իմաստով ունի դատարանակազմական նշանակություն, սակայն դատական համակարգում վարչարարությունը և դատարանակազմությունը չեն կարող նույնացվել<sup>1</sup>:

Այսպիսով՝ ընդդատության մասին վեճի լուծումը վարչարարություն որակելով՝ լուրջ հարված է հասցվել առհասարակ ընդդատության ինստիտուտի սոցիալ-քաղաքական և հանրային-իրավական նշանակությանը<sup>2</sup> և «օրինական դատարանի» հիմնական իրավունքի ապահովմանը:

Համեմատության համար նշենք, որ ՀՀ ՄԴ-ն, սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճը լուծելով, իրականացնում է ոչ թե արտաքին ներգործության ինչ-որ վարչարարություն, այլ դատական իշխանություն (դատական գործառույթ): Ընդ որում՝ էական չէ, թե լիազորությունների մասին վեճերի լուծումը կհամարվի սահմանադրական արդարադատություն, թե ինքնուրույն դատական գործառույթ:

Այն, որ ընդդատությունը դատավարական ինստիտուտ է՝ ինքնակնհայտ է: Ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային Հայաստանի օրենսդիր մարմինները, ընդդատության կանոնները և դրանց հետ կապված վեճերի լուծմանն առնչվող նորմերը դա-

<sup>1</sup> Քննարկվող հարցի տեսանկյունից անկարևոր է նաև այն, թե «դատական վարչարարություն» ձևակերպումն օգտագործելիս ՀՀ սահմանադրական դատարանը նկատի է ունեցել «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով վարչարարությունը, թե՛ ոչ:

<sup>2</sup> Ընդդատության ինստիտուտի քաղաքական, սահմանադրական, դատարանակազմական և դատավարական նշանակության մասին տե՛ս Գոյնիցկի **И. Я.** Курс уголовного судопроизводства. Т. 2 / Под ред. Смирнова А. В. - СПб.: Альфа, 1996, էջեր 87-90; Чельцов **М. А.** Уголовный процесс. - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1948, էջեր 438-441; Уголовный процесс / Под ред. К.Ф. Гуценко. Изд. 3-е, перераб. и доп. - М.: Зерцало, 1998, էջեր 280-282:

տավարական օրենսգրքում ամրագրելով, դրանք վստահաբար ճանաչել են որպես դատավարական ինստիտուտ:

Դատական համակարգում դատարանների միջև իրավասության մասին վեճերի լուծման դատական (դատավարական) գործառույթը պետք է իրականացվի ոչ միայն իրեն ներդաշնակ դատական ինստիտուտի կողմից, այլ պատշաճ դատավարական ընթացակարգերով:

(b) Բարձր ատյանի կողմից ընդդատության մասին վեճի լուծման դատական ընթացակարգերը: ՀՀ ՎԴ նախագահի կողմից ընդդատության մասին վեճը լուծելու որևէ ընթացակարգ 1998 թ. քր. դատ. օր-ով սահմանված չէ:

Համեմատության համար նշենք, որ օրինակ՝ ՌԴ ՄԴ-ն 16.03.1998 թ. № 9-ՈՒ որոշմամբ անդրադարձել է վերադաս դատարանի նախագահի կողմից ընդդատությունը փոխելու ընթացակարգերի անհրաժեշտության հարցերին: Այս մոտեցումները *mutatis mutandis* կարող են վերաբերել նաև բարձր ատյանի դատարանի կողմից ընդդատության մասին վեճերի լուծման ընթացակարգերը որոշելուն: ՌԴ սահմանադրական դատարանը նշել է.

առաջին որ բարձր ատյանի դատարանի կողմից վարույթի ընդդատությունը փոխելը չի հակասի ՌԴ Սահմանադրությանը, եթե այն իրականացվում է դատական ընթացակարգերի շրջանակներում և օրենքով նախատեսված հստակ հիմքերի առկայության դեպքում:

Երկրորդ՝ գործը մի դատարանից մեկ այլ դատարան փոխանցելը կհամարվի կամայական, եթե դատավարական օրենքը չի պահանջում վարույթը փոխանցելիս պատճառաբանված դատական ակտի կայացում: Դա կնշանակի, որ այդպիսի որոշում կայացրած բարձր ատյանի դատարանի ղեկավարը կգործի ոչ թե որպես դատավոր, այլ պաշտոնատար անձ, փաստացի ազատվելով վարույթի ընդդատությունը փոխելու օրենքով նախատեսված հիմքերը պարզելու և գնահատելու պարտականությունից:

Ներդաշնակ դատական ինստիտուտի կողմից ընդդատության մասին վեճերի լուծման դատավարական գործառույթը կարող է իրականացվել օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգով, որի հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ գաղափարները:

Նախ կարևոր է, որ ընդդատության վերաբերյալ վեճերը լուծվեն անհապաղ, որպեսզի արդարադատության սկիզբն անհամաչափ չհետաձգվի: Պոզիտիվ իրավունքով կարող են սահմանվել այս դա-

տավարական վեճերի լուծման առաջնահերթություն և կոնկրետ ժամկետներ:

*Երկրորդ* դատավարական այս վեճի լուծման ժամանակ նյութա-իրավական վեճի կողմերը պետք է լսված լինեն, այսինքն՝ հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց դիրքորոշումը, քանի որ դատավարական այս վեճի լուծման արդյունքներն ազդում են իրենց հիմնարար իրավունքի վրա: Օրինակ՝ եթե այս դատավարական վեճը լուծվում է գրավոր ընթացակարգով, ապա առաջին ատյանի դատարանի՝ ընդդատության վեճը լուծող իրավասու դատարանին դիմելու ակտին կցվում է նաև կողմերի գրավոր դիրքորոշումը:

*Երրորդ* ընդդատության մասին վեճը լուծող դատական մարմնի որոշումը պետք է վերջնականապես փակի տվյալ վեճի հանգամանքների շրջանականերում՝ հետաձգված բողոքարկման հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ ընդդատության մասին վեճը պետք է լուծվի վերջնական և անբեկանելի կերպով, որպեսզի հետագայում դատական ակտը վերանայելու դեպքում՝ բարձր ատյանի դատարանը դատավճիոր չբեկանի այն հիմքով, որ ընդդատության վերաբերյալ վեճը սխալ է լուծվել, հետևապես խախտվել են նաև ընդդատության կանոնները:

*Չորրորդ* ընդդատության մասին վեճը պետք է լուծվի պատճառաբանված դատական ակտով: Իրավասու դատարանի կողմից ընդդատության մասին վեճը գրությամբ (վարչարարական փաստաթղթոր) «լուծելը» հատուկ է ոչ թե դատավարությանը, այլ վարչարարությանը:

Երկար տարիներ ՀՀ ՎԴ նախագահն ընդդատության մասին վեճը լուծում էր վարչական ակտով: Նա վարույթի նյութերը գրությամբ հանձնում էր այն դատարանին, ով իր կարծիքով իրավասու է քննելու այդ մեղադրանքը: Թեև 1998 թ. քր. դատ. օր-ով ընդդատության մասին վեճով պատճառաբանված դատավարական որոշում կայացնելու մասին պոզիտիվ-իրավական կարգավորումներ բացակայում են, սակայն ՀՀ ՎԴ նախագահը 2018 թ.-ից իրավացիորեն հրաժարվեց նախորդ պրակտիկայից ընդդատության մասին վեճի լուծման մասին կայացնելով պատճառաբանված դատավարական որոշում<sup>1</sup>: Միայն 2021 թ. քր. դատ. օր-ում էքսպլիցիտ սահմանվեց, որ ՀՀ ՎԴ քրեական պալատի նախագահն ընդդատության մասին վեճը լուծում է որոշմամբ (2021 թ. քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 4-րդ մաս):

<sup>1</sup> <https://court.am/hy/court-of-cassation-resolutions>

#### 4. Եզրակացություն

Ընդդատության մասին դատարանների տարաձայնությունը վեճերի վեճն է, քանի որ առանց ընդդատության մասին տարաձայնությունները պատշաճ ընթացակարգերով նախապես հարթելու քրեական արդարադատությունը կհաստատվի ավագի վրա:

Իրավահամեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ եվրոպական զարգացած դատավարական համակարգերում ընդդատության մասին վեճերի լուծումը դատավարական գործընթաց է, որն իրականացվում է, որպես կանոն, մեկ աստիճան բարձր դատարանի կողմից: Հետխորհրդային առանձին պետություններում, այդ թվում՝ Մերձբայթյան պետություններում, ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման գործառույթը վերապահվել է բարձր ատյանի դատարանների նախագահներին:

Հայաստանի 1923 թ., 1934 թ., 1961 թ. օրենսգրքերով Գերագույն դատարանի նախագահին ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթ վերապահված չէր: Միայն 1998 թ.-ին ընդդատության մասին վեճերի լուծման գործառույթը վերապահվեց ՀՀ ՎԴ նախագահին, որով խախտվեց «գործառույթ-ինստիտուտ» ներդաշնակությունը:

Դատական համակարգում դատարանների միջև ընդդատության մասին վեճերի լուծման դատական (դատավարական) գործառույթը պետք է իրականացվի ոչ միայն իրեն ներդաշնակ դատական ինստիտուտի դատարանի կողմից, այլ պատշաճ դատավարական ընթացակարգերով (կողմերի լսված լինելու իրավունքի ապահովմամբ):

Մեր համոզմամբ, ՀՀ ՄԴ-ն, ընդդատության մասին վեճի լուծումը վարչարարություն որակելով, լուրջ հարված է հասցրել առհասարակ ընդդատության ինստիտուտի սոցիալ-քաղաքական և հանրային-իրավական նշանակությանը:

## СПОРЫ О ПОДСУДНОСТИ И ИХ РАЗРЕШЕНИЕ ПРЕДСЕДАТЕЛЕМ КАССАЦИОННОГО СУДА (ПАЛАТЫ) РА

### Аннотация

Цель настоящей статьи - раскрыть сущность споров о территориальной подсудности и с точки зрения гармоничности “институт-функция” проанализировать правильность подхода законодателя к наделению Председателя Кассационного Суда (палаты) РА функцией разрешения споров о подсудности.

С целью оценки правильности подхода к предоставлению функции разрешения споров о подсудности Председателю Кассационного Суда (палаты) РА проанализированы сущность споров о подсудности, их виды, отличия от смежных институтов, сделан сравнительно-правовой и историко-правовой анализ.

В статье критикуется выраженный в Процедурном решении Конституционного Суда РА от 25.06.2021 г. ПРКС-123 подход, согласно которому разрешение возникших между судами разногласий относительно территориальной подсудности и подведомственности является судебным администрированием.

**Ключевые слова:** подсудность, правомочие, спор, негативные и позитивные споры, Председатель Кассационного Суда РА.

## DISPUTES ON JURISDICTION AND THE RESOLUTION THEREOF BY THE CHAIRPERSON OF THE CASSATION COURT (CHAMBER) OF THE REPUBLIC OF ARMEINA

### Annotation

This article aims to reveal the essence of disputes on territorial jurisdiction and, from the perspective of “institution-function” harmony, to analyze the accuracy of the legislator’s approach to provide the function of resolving disputes on jurisdiction to the Chairperson of the Cassation Court (Chamber) of the Republic of Armenia.

The essence of disputes on jurisdiction, the types thereof and the differences from the related institutions have been analyzed, as well as the comparative-legal and historical-legal analyzes have been conducted for the assessment of the accuracy of the approach to provide the function of resolving disputes on jurisdiction to the Chairperson of the Cassation Court (Chamber) of the Republic of Armenia.

The article criticizes the approach expressed by the Procedural Decision PDCC-123 of the Constitutional Court dated 25.06.2021, according to which the resolution of the issue of a disagreement between the courts regarding territorial jurisdiction and jurisdiction shall be considered as judicial administration.

**Keywords:** jurisdiction, authority, dispute, negative and positive disputes, Chairperson of the Cassation Court of the Republic of Armenia.



***NELLY ARAKELYAN***  
*Head of the Legal Advisory  
Department at the Constitutional  
Court of RA, PhD in Law*

## PROTECTION OF HUMAN DIGNITY AND CONTEMPORARY CHALLENGES IN BIOMEDICINE

**Annotation:** In the article the Author discusses the role of human dignity in the discourse of biomedicine. The Author presented the idea of direct application of human dignity in the sphere of biomedicine. The main mechanisms of protection of human dignity have been discussed. The principle of paternalism and right to autonomy have been discussed. The necessity to protect the uniqueness and identity of the person and the type of humankind through human dignity is claimed.

**Keywords:** Human dignity, biomedicine, direct protection of human dignity, paternalism, right to autonomy.

The application of human dignity can get two expressions; direct and indirect. In cases of indirect application, it serves as a basis for all human rights and freedoms and thereby it gets intermediary application and protection. From the point of view of this topic it is necessary to find out whether human dignity is directly applied in any sphere of biomedicine and if yes, what types of expression it gets. Scientists state that human dignity is a central concept in biolaw and bioethics<sup>1</sup>. It is difficult not to agree with this idea when observing the existing international documents still evolving and especially domestic legislation of the countries, where the legislations are developing in order to fit the protection of dignity in the sphere of biomedicine. Just to mention one example, that of Armenia, which adopted constitutional reforms in the end of 2015 and Article 25

<sup>1</sup> **Jordaan D.** Autonomy as an Element of Human Dignity in South African Case Law, <http://jpsl.org/archives/autonomy-element-human-dignity-south-african-case-law/>, also Herring J., Medical Law and Ethics, 6th Edition, Oxford University Press, USA, 2013, p. 21, where the idea of Charles Foster is cited in accordance with which «human dignity is the essential principle of bioethics». Also Mitchell B., Human Dignity and Biomedicine, Ethics & Medicine: An International Journal of Bioethics, Vol. 27:1 Spring 2011, p. 5, where the author cites the idea of Roberto Andorno according to which 'It is therefore not exaggerated to characterize it as the "overarching principle" of international biolaw' ('Human dignity and human rights as a common ground for a global bioethics', Journal of Medicine and Philosophy 34 (2009): 223-240).



of which directly stipulates 3 prohibitions in the sphere of biomedicine: prohibition of eugenics, transplantation as a source of profit and reproductive cloning.

At international level the most important document in the respective sphere is the Convention on Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to Application of Biology and Medicine. Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to the Application of Biology and Medicine is the main international legally binding instrument on the protection of human dignity and human rights in the biomedical field. It was signed on 4 April 1997 within the Council of Europe in Oviedo (Spain). Hence, it also carries the name “Oviedo Convention”. 29 countries have ratified the Oviedo Convention. It entered into force on 1 December 1999. It has 4 Additional Protocols; **Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, on the Prohibition of Cloning Human Beings, Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, on Transplantation of Organs and Tissues of Human Origin, Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, concerning Biomedical Research and Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Genetic Testing for Health Purposes.**

There are some other documents at international level worth discussing, particularly such as Principles adopted by the Ad Hoc Committee of Experts on Progress in the Biomedical Sciences, some EU law, particularly such documents as Biotechnology directive, European Parliament resolution on patents for biotechnological inventions, European Parliament resolution of 17 December 2015 on the Annual Report on Human Rights and Democracy in the World 2014 and the European Union’s policy on the matter (2015/2229(INI), also case-law of the Court of Justice of the EU. European Convention on Human Rights shall be stated as well, though it does not define either human dignity or special terms for biomedicine, however through its case law the European Convention on Human Rights has now become the main document for protection of human rights and human dignity in the discourse of biomedicine.

From the point of view of the issue in question such cases are of great importance as *Brustle v. Greenpeace* of the Court of Justice of the EU and *Case C 364/13 International Stem Cell Corporation v. Comptroller General*

of Patents, Designs and Trade Marks. For the ECtHR such cases as Parillo v. Italy, Evans v. the UK, R.R. v. Poland, V.C. v. Slovakia, Gross v. Switzerland, S.H. and others v. Austria, etc.

As a result of the analysis of the main case-law of the European Court of Human Rights and the domestic practice of the various countries it shall be stated for the beginning that the main form of protection of human dignity in this regard is its connection to right to autonomy, from which various forms of its application derive. This is prevailing approach on human dignity, which will be argued in the research.

First of all, it shall be made some reference to the ideas existing in literature in regard to this connection. Some consider that "Dignity means one is able to make his/her own autonomous decisions"<sup>1</sup>. Others also use the term right to act<sup>2</sup> and discuss protection of human dignity in biomedicine in combination with right to autonomy, as an element of dignity<sup>3</sup>. The Canadian Supreme Court refers to human dignity mostly as a right to autonomy<sup>4</sup>. And here autonomy and dignity are being interpreted in such a way that dignity is a basis for all rights, but this approach was linked to the idea of autonomy, particularly that enjoyment of human rights and freedoms and the choice of the form of that enjoyment is of free choice of the person. Hereby the dignity as a source of all rights directly becomes a right to autonomy in Canadian legal system. Afterwards within direct application of human dignity the same approach has been adopted, and dignity has been applied mostly in combination with right to autonomy, freedom of choice and in regard with those rights, which give the most possibility for self-discretion.

In this context the case-law of the European Court of Human Rights plays key role. In several cases the European Court of Human Rights has developed some basic ideas on human dignity, autonomy and biomedical issues in regard with Article 3 of the European Convention on Human Rights, which prohibits torture, inhuman and degrading treatment and in regard with Article 8 which states that "Everyone has the right to respect for his private and family life, his home and his correspondence".

<sup>1</sup> **Lam K.** Dignity, Respect for Dignity, and Dignity Conserving in Palliative Care, HKSPM Newsletter 2007 Dec Issue 3, p. 30 <http://www.fmshk.org/database/articles/dignityrespectfordignityanddignityconservinginpall.pdf>.

<sup>2</sup> ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբ'. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր.:«Իրավունք», 2010, էջ 167 (Harutyunyan G. and Vagharshyan A. Interpretations to the Constitution of the Republic of Armenia, Yerevan, 2010, p. 167) <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>.

<sup>3</sup> **Jordaan D.** Autonomy as an Element of Human Dignity in South African Case Law, The Journal of Philosophy, Science & Law Volume 9, 2009 <http://jpsl.org/archives/autonomy-element-human-dignity-south-african-case-law/>.

<sup>4</sup> **Penninga M.** Up next for the Supreme Court: Defining human "dignity", El-journal National Post <http://fullcomment.nationalpost.com/2014/01/27/mark-penninga-up-next-for-the-supreme-court-defining-human-dignity/>.

The European Court of Human Rights in various judgments developed positions for the biomedical issues particularly in regard with "private life". From this notion it brings out the notions of personal autonomy, free choice and right to self-determination<sup>1</sup>. In 2002 in case of *Pretty v. the United Kingdom* the ECtHR held that "The very essence of the Convention is respect for human dignity and human freedom. Without in any way negating the principle of sanctity of life protected under the Convention, the Court considers that it is under Article 8 that notions of the quality of life take on significance. In an era of growing medical sophistication combined with longer life expectancies, many people are concerned that they should not be forced to linger on in old age or in states of advanced physical or mental decrepitude which conflict with strongly held ideas of self and personal identity. [...] The applicant in this case is prevented by law from exercising her choice to avoid what she considers will be an undignified and distressing end to her life. The Court is not prepared to exclude that this constitutes an interference with her right to respect for private life as guaranteed under Article 8 §1 of the Convention"<sup>2</sup>. I would like to stress especially three elements in this judgment, which can be challenging from the point of view of dignity and even autonomy as well. Firstly, it is that the Court mentioned "what she considers", it means that the Court did not state any criteria in which case the person can choose the death, in which case even the little disadvantage in life could be defined by the person in this way. Secondly, the Court mentioned "mental decrepitude" as a ground, which can make life undignified. But here a question arises; whether the person may enjoy personal autonomy and decide on life or death issues being mentally ill? The answer seems to be obvious. The third one is mentioning as a ground for making life undignified "being in old age". In my opinion, such statement undermines the value of old people. Such statement of the Court reminds some eugenics of the society. In another case, *Haas v. Switzerland* the Court developed the idea adding that "... an individual's right to decide the way in which and at which point his or her life should end, provided that he or she was in a position to freely form his or her own judgment and to act accordingly, was one of the aspects of the right to respect for private life within the meaning of Article 8 of the Convention"<sup>3</sup>.

<sup>1</sup> Research Report, Bioethics and the case-law of the Court [http://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts\\_and\\_documents/Bioethics\\_and\\_caselaw\\_Court\\_EN.pdf](http://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts_and_documents/Bioethics_and_caselaw_Court_EN.pdf).

<sup>2</sup> *Pretty v. the United Kingdom*, no. 2346/02, 29 August 2002.

<sup>3</sup> *Haas v. Switzerland*, no. 31322/07, 20 June 2011.

The ideas expressed in *Gross v. Switzerland* seem to be ideological support for death even in cases of absence of any illness. The Court here cited the mentioned ideas and added that “having regard to the above considerations, and, in particular, the principle of subsidiarity, the Court considers that it is primarily up to the domestic authorities to issue comprehensive and clear guidelines on whether and under which circumstances an individual in the applicant’s situation – that is, someone not suffering from a terminal illness – should be granted the ability to acquire a lethal dose of medication allowing them to end their life. Accordingly, the Court decides to limit itself to the conclusion that the absence of clear and comprehensive legal guidelines violated the applicant’s right to respect for her private life under Article 8 of the Convention, without in any way taking up a stance on the substantive content of such guidelines”<sup>1</sup>. Thus, the Court considers it possible for the states to help people die in case they are just old or do not want to become old or in any other case instead of calling the states to take care of such people and showing them social and moral aid.

Positions like these undermine the idea of life as a value in general. In this regard some authors have already expressed an idea that “the basic argument for assisted suicide is that life has its value only as long as it has a meaning for the person whose life it is...<sup>2</sup>. Such approaches to human life are risky as ideologically they are full of nihilism to human life and human being in general, like “do what you want, nobody cares for you”. Such position contradicts the very substance of human dignity as it belongs to human being only due to his qualities, which differentiate him from other creatures, and one of that qualities, is the conscience.

The problems in protection of autonomy as human dignity arise from various points of view. The usage of right to autonomy as a synonym for human dignity cannot also be justified from the point of view of its correlation with other’s rights and freedoms. Sometimes human dignity is being perceived as an absolute value, in such case any interference would be illegitimate, but autonomy which derives from it refers also to other’s rights and freedoms, and as fairly noted by Mattias Mahlmann “Any exercise of any right cannot go as far as to violate dignity of another person”<sup>3</sup>. The urgent issue in this regard is the autonomy of women, which

<sup>1</sup> *Gross v. Switzerland*, no. 67810/10, 30 September 2014.

<sup>2</sup> **Drogoń E.** ‘The Right to Die with Dignity’, in: T. Gries and R. Alleweldt, *Human Rights within the European Union*, Berlin : Berliner Wissenschafts-Verlag 2004, p. 100.

<sup>3</sup> **Mahmaan M.** *Human Dignity and Autonomy in Modern Constitutional Orders*, p. 388 <https://www.jura.uni-hamburg.de/media/ueber-die-fakultaet/personen/albers-marion/seoul-national-university/course-outline/mahlmann-2013-human-dignity-and-autonomy-in-modern-constitutional-orders.pdf>.

has been given too broad protection within the jurisdictions from one side and the new emerging regulations of the protection of human embryos. If we can talk about the prohibition of embryo stem cell research as it destroys the embryos, if we can talk about the right to development of the embryos, so why then we do not give full protection to embryos already in the womb of the women? Until getting to the womb of the woman, the embryo gets full protection, after replacement in the womb or in case of natural fertilization from the moment of development of the embryo the protection should be given as well.

Another problematic point in such exercise of dignity like autonomy in biomedicine is that some people can be deprived of the possibility of enjoyment of the right to autonomy, for example children, mentally or even physically ill people. In this case, a question arises whether these people stay beyond the protection of human dignity. For sure, the answer cannot be positive.

The mechanisms of domestic laws and international regulations prove that regardless the understanding by the person of his own dignity, regardless his/her possibility to enjoy his/her autonomy the protection of human dignity is anyway being provided. For example, these are all the provisions of criminal legislation, which forbid any interference with physical and mental integrity of a person. For instance, in Armenia subjecting the person to medical or scientific experiments without the person's fully informed consent is a crime of public accusation and is enshrined in Article 127 of the Criminal Code. As examples can also serve the other branches of law, for instance the Civil Code of Armenia, which gives possibility to the interested people to apply for the protection of dignity of the dead person. The fact that human dignity cannot be considered as a personal treatment towards own person and autonomy can also be proved by the attitude existing in international practice according to which all crimes lead to violation of human dignity. Such a legal attitude is expressed in one of the decisions of the Constitutional Court of the Russian Federation (Decision of the Constitutional Court of the Russian Federation, N 1-II, 15.01.99 <http://zakonbase.ru/content/base/31562> (In Russian)<sup>1</sup>. It is obvious from this that judicial function of human dignity goes far beyond the right to autonomy and can reach to respect of memory of dead. For proving the idea that dignity is not a right to autonomy and expands its application can serve also all those provisions

<sup>1</sup> Arakelyan, N. Constitutional Status of Human Dignity and its Reflection in the Framework of Constitutional Justice, International Almanac, Constitutional justice through new millennium, Yerevan, 2014, p. 128.

which regulate and protect the dignity of human embryo and uniqueness and identity of the person by prohibition of cloning. Regardless the wish of the person such practices are forbidden. In Montenegro, Armenia, cloning is forbidden at constitutional level. Constitution of the Republic of Armenia, Article 25 states, inter alia, that reproductive cloning of a human being is forbidden. Article 27, para 2 of the Constitution of Montenegro states that any intervention aimed at creating a human being that is genetically identical to another human being, living or dead shall be prohibited.

Such treatment speaks not only about protection of a concrete person, but also about the necessity to protect uniqueness of the person as a humankind value beyond autonomy. Almost 28 countries have ratified Protocol to the Oviedo Convention on Cloning, which stipulates absolute prohibition of cloning of a human being alive or dead. 31 countries, including Germany, Russia and France forbid all types of cloning, 15 countries, such as UK, Israel and Japan only reproductive one<sup>1</sup>. For some countries it is an upcoming issue to forbid it, as they adopted their legislation before embryonic stem cell research came into legal circulation<sup>2</sup>. The controversy in case of therapeutic cloning is that it destroys human embryo from which healthy cell is taken<sup>3</sup>. And thus therapeutic cloning is considered to be violation of human dignity<sup>4</sup> as well.

Such crimes should also be noted as torture and crimes against physical and mental integrity. Torture, for example, covers most part of bioethical crimes under the European Convention on Human Rights. These crimes are within public prosecution system, regardless the complaint of the person. In Armenia existing Criminal Code stipulates sanctions for the sphere of biomedicine after criminalization of several acts in the sphere of genetics and medicine<sup>5</sup> in order to fit the provisions of the constitutional reforms which forbid eugenics, reproductive cloning and transplantation as a source of profit. Observance of several criminal legislations shows that various sanctions exist in this regard. For example, in the Criminal Code of Moldova it is stated that the performance by a

<sup>1</sup> Wheat **K. and Matthews K.** World Human Cloning Policies, p.1 <http://www.ruf.rice.edu/~neal/stemcell/World.pdf>.

<sup>2</sup> Ibid.

<sup>3</sup> Murnaghan I., Therapeutic Cloning, <http://www.explorestemcells.co.uk/therapeuticcloning.html>.

<sup>4</sup> Wheat **K. and Matthews K.** World Human Cloning Policies, p.1 <http://www.ruf.rice.edu/~neal/stemcell/World.pdf>.

<sup>5</sup> Criminal Code of the Republic of Armenian, entered into force from 01.08.2003, amended on 21.03.18, Articles 127.1, 127.2.

doctor of artificial insemination or the implantation of an embryo without the written consent of the patient shall be punished. So in this case it is clear that regardless the person's understanding of his own value or possibility to enjoy autonomy the mere fact of making inseminations is punishable. Article 144 states that creating human beings through cloning shall be punished by imprisonment for 7 to 15 years.

So in general, human dignity is perceived as self-value and in biomedicine mostly as a right to autonomy. These two perceptions cause the same problems. Besides there is inner contradiction in the application of human dignity as a right to autonomy in the biomedicine, because from one side it is forbidden to cause damage to the personal body or dispose the organs, but from the other side in some legislations death is guaranteed. In general, I think that the right to autonomy for sure could be an element deriving from dignity but only an element which is subject to limitations and there should be two criteria; rights and freedoms of others and personal well-being, i.e. health and life. Life should be taken as a basis in protection of right to autonomy, the last cannot prevail, as human being can cause harm to himself whilst the first and the most obvious function of law is protection and not destruction. Thus if the law in general took as a basis for centuries the protection of life as a value, the further development of law should keep it in mind, besides the whole system, the rights and freedoms and the autonomy itself would be senseless without the thing which gives birth to the content of the law system, without LIFE. In this regard, the issue of paternalism should be taken into account. The idea of paternalism is broadly connected with the right to autonomy and dignity in general. Actually it is impossible to safeguard human lives without it.

To sum up it shall be stressed that nowadays more and more the protection of human dignity in biomedicine gets a form of protection of a uniqueness and identity of the person, as well as type of humankind in general. It is not only autonomy which matters in biomedicine when it comes to the protection of human dignity. Human dignity, in its turn, cannot be regarded as solely autonomy of a person when becoming an object of protection in biomedical issues.

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՁ

**Ամփոփագիր**

Հոդվածում քննարկվում է մարդու արժանապատվության դերը կանսաբժշկության ոլորտում: Ներկայացվում է մարդու արժանապատվության անմիջական գործողությունը կանսաբժշկության ոլորտում առկա հիմնահարցերի լուծման հարցում, քննարկվում են մարդու արժանապատվության պաշտպանության հիմնական ուղղություններն այս ոլորտում: Մարդու արժանապատվության պաշտպանության հարցերը դիտարկվում են պատեռնալիզմի սկզբունքի և անձի ինքնավարության իրավունքի հարաբերակցության համատեքստում:

**Հիմնաբառեր.** Մարդու արժանապատվություն, կենսաբժշկություն, պատեռնալիզմ, ինքնավարության իրավունք:


ЗАЩИТА ЧЕЛОВЕЧЕСКОГО ДОСТОИНСТВА И  
СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ В БИОМЕДИЦИНЕ

**Аннотация**

В статье автор рассуждает о роли человеческого достоинства в сфере биомедицины. Им представлена идея прямого применения человеческого достоинства в сфере биомедицины. Рассмотрены основные механизмы защиты человеческого достоинства в данной сфере. Поднимается вопрос защиты достоинства личности в контексте соотношения принципа патернализма и права на автономию. Отмечается необходимость сохранения уникальности и самобытности человека и человеческого типа посредством защиты человеческого достоинства.

**Ключевые слова:** достоинство личности, биомедицина, патернализм, право на автономию.





**ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՍՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ



**ԼԱՐԻՆԵ ՏՈՆՈՅԱՆ**

ՀԵՀ իրավագիտության ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

**Ամփոփագիր.** Հողվածում ներկայացված է հասարակության զգայուն թեմաներից մեկի՝ ընտանիքում բռնության, իրավական կարգավորումը, մասնավորապես՝ սահմանադրաիրավական երաշխիքների համատեքստում: Ընտանիքում բռնությունն ուղեկցվում է, իսկ դրան հակազդելը փոխկապակցված է մարդու տարբեր իրավունքների սահմանափակումներով և զրկանքներով, ինչն անհրաժեշտ է քննարկել ՀՀ սահմանադրության և իրավունքի սկզբունքների լույսի ներքո՝ հատուկ շեշտելով, որ ընտանիքում բռնությունը չի սահմանափակվում լոկալ ֆիզիկական բռնությամբ:

**Հիմնաբառեր.** բռնություն, ընտանիք, ընտանիքում բռնություն, ընտանիքում բռնության ենթարկված անձ, ընտանիքում բռնության դեմ պայքար, ֆիզիկական բռնություն, ՀՀ նոր քրեական օրենսգիրք:

Չնայած Հայաստանի Հանրապետության<sup>1</sup> թե՛ գործող, թե՛ նախկին Սահմանադրությունները չեն բովանդակում նորմեր բռնության,

<sup>1</sup> Այսուհետ՝ ՀՀ:

առավել ևս՝ ընտանիքում բռնության կամ դրանց դեմ պայքարի կամ դրանցից պաշտպանության վերաբերյալ, այնուամենայնիվ ՀՀ Սահմանադրությունն ուղղակի կամ անուղակի երաշխավորում է մարդկանց պաշտպանությունն իրավունքի տարբեր ոտնահարումներից, ներառյալ բռնությունից:

Միջազգային փաստաթղթերի մի մասը, որոնք վավերացրել է նաև Հայաստանը, ինչը փաստում է նաև դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը, երաշխավորում են մարդու՝ բռնությունից զերծ ապրելն ու ընտանիքի կարևորությունը:

Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի<sup>1</sup> 16-րդ հոդվածի 3-րդ մասը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի<sup>2</sup> 23-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում են. «ընտանիքը հասարակության բնականոն ու հիմնարար բջիջն է և ունի պետության ու հասարակության կողմից պաշտպանության իրավունք»:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի<sup>3</sup> 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «ընտանիքին, որը հանդիսանում է հասարակության բնական ու հիմնական բջիջը, պետք է ըստ հնարավորին տրամադրվեն ամենալայն պահպանություն և օգնություն, հատկապես ընտանիքի կազմավորման ժամանակ, և քանի դեռ ընտանիքի պատասխանատվության վրա է ընկած ոչ ինքնուրույն երեխայի ու նրա դաստիարակության հոգսը»:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան<sup>4</sup> ազդարարում է, որ ընտանիքին, որպես հասարակության հիմնական բջիջի և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն՝ հասարակության շրջանակներում իր վրա պարտականություններ ստանձնել կարողանալու համար, երեխային իր լիակատար զարգացման համար անհրաժեշտ է մեծանալ ընտանեկան շրջապատում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում:

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896>

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18500>

<sup>3</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>

<sup>4</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503>

Մեջբերված միջազգային իրավական նորմերի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ ընտանիքն է հասարակության, հետևաբար նաև պետության հիմքը, և ընտանիքի տարրեր սոցիալական՝ դաստիարակաչական, կենցաղային, տնտեսական, սոցիալ-հսկողական և այլ գործառույթների հաջող կատարման արդյունքում է ձևավորվում առողջ հասարակություն ու կայուն պետություն: Ինչպես իրավագիտորեն նշել է Ֆ. Ադլերը, «Ընտանիքը փոքրացված հասարակություն է, որի ամբողջությունից է կախված մարդկային ողջ հասարակության անվտանգությունը»<sup>1</sup>:

Ընտանիքը հասարակության զարգացման և շարունակական գոյության գրավականն է: Այն իր մեջ պարունակում է բնական ու հասարակական տարրեր: Բնական տարրերը դրսևորվում են մարդկային ցեղի վերարտադրության ձևով, իսկ հասարակական տարրերը դրսևորվում են նրանով, որ ընտանիքի անդամների փոխհարաբերությունները հասարակական հարաբերություններ են: Սրանով իսկ ընտանիքը կատարում է երկու հիմնական ֆունկցիա՝ կենսաբանական և սոցիալական: Ընտանիքի կենսաբանական ֆունկցիան անփոփոխ է մնացել նրա գոյության ողջ ընթացքում, մինչդեռ սոցիալական ֆունկցիան հասարակական զարգացմանը զուգընթաց մշտապես ենթարկվում է փոփոխությունների<sup>2</sup>:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Միննույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

<sup>1</sup> Տե՛ս **Макаров А.Н., Давлитова Л.М.** Укрепление института семьи на уровне муниципальных образований. - Казань, 2019, [https://kpfu.ru/staff\\_files/F\\_1982666323/Makarov\\_A.N.\\_Davlitova\\_L.M.\\_Mon.pdf](https://kpfu.ru/staff_files/F_1982666323/Makarov_A.N._Davlitova_L.M._Mon.pdf)

<sup>2</sup> Տե՛ս **Ղաթախանյան Գ.Հ.** Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջեր 12-13:

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածը բացարձակ կերպով պաշտպանում է յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը՝ անկախ այն իրականացնելու վայրից, իրականացնող անձի ով լինելուց կամ տուժած անձի հետ փոխհարաբերությունից: Նման ունիվերսալ ձևակերպումը միանշանակ ընդունելի է և առավելապես արժևորում է մարդուն ու նրա ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, սակայն ընտանիքը, լինելով այն միկրոսոցիալական միջավայրը, որտեղ առաջնահերթ պետք է ստեղծվի անվտանգ միջավայր ընտանիքի բոլոր անդամների համար, ունի կրկնակի պարտավորություն՝ իր բոլոր անդամների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության պաշտպանության հարցում:

Անհերքելի է, որ «ընտանիքն այնպիսի անձանց միություն է, ովքեր իրար հետ կապված են փոխադարձ սիրո ու համաձայնության վրա հենվող ամուսնական կապերով, գտնվում են ազգակցական (արյունակցական) կապերի մեջ կամ այնպիսի հարաբերությունների մեջ, որոնց ընտանեկան բնույթ է տրվում օրենսդրության ուժով (որդեգրում, դաստիարակության նպատակով երեխային ընտանիք ընդունելը) և որոնց համար ծագում են օրենսդրությամբ սահմանված իրավունքներ ու պարտականություններ»<sup>1</sup>:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամ ամուսնության, ընտանիքում ամուսինների իրավունքների հավասարության, ընտանեկան հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու, նրանց բարեկեցության մասին հոգատարության, ընտանիքի անչափահաս և անաշխատունակ անդամների իրավունքների և շահերի առաջնային պաշտպանությունն ապահովելու սկզբունքներին համապատասխան: Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներն իրենց հայեցողությամբ իրականացնում են ընտանեկան հարաբերություններից բխող և օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքներ (ընտանեկան իրավունքներ, ընդ որում՝ այդ իրավունքների պաշտպանությունը), եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Ընտանիքի անդամների կողմից

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ/ Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 432:

իրենց իրավունքների իրականացումը և իրենց պարտականությունների կատարումը չպետք է խախտեն ընտանիքի այլ անդամների և այլոց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը: Իսկ նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից:

Ինչպես ցույց է տալիս ՀՀ ընտանեկան օրենսգրքի համակարգային վերլուծությունը՝ ընտանիքի անդամների և նրանց իրավունքների առաջնային պաշտպանությունը դրված է ընտանիքի անդամների վրա, և միայն դրա բացակայության դեպքում պետությունը կարող է միջամտել խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության տեսքով կամ դատական կամ այլ կարգերի պահպանմամբ:

Այսինքն, անգամ մինչև ընտանիքում բռնության դեմ պայքարին վերաբերող հատուկ օրենսդրության ընդունումը ՀՀ-ում չեն բացառվել դեպքերը, որ ընտանիքի մի անդամին անհրաժեշտ կլինի պաշտպանել ընտանիքի մեկ այլ անդամից:

Ընտանիքում բռնության<sup>1</sup> սահմանումը տրված է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիայում<sup>2</sup>, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ընտանեկան բռնություն» նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում:

2017թ.-ի դեկտեմբերի 13-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը,

<sup>1</sup> Այսուհետ՝ ընտանիքում բռնությունն ու ընտանեկան բռնությունն օգտագործվելու են որպես հոմանիշներ՝ հիմք ընդունելով միջազգային և ազգային օրենսդրությամբ կիրառվող տերմինաբանությունը:

<sup>2</sup> <https://rm.coe.int/168046246d>

ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև: Նույն օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է «ընտանիքի անդամներ» հասկացությունը և որպես այդպիսիք հանդիսանում են՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ. համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Ընտանիքի անդամի նմանօրինակ մեկնաբանումը վերաբերելի է լոկ այդ օրենքի շրջանակներում առկա իրավակարգավորումներին, և չի կարող կիրառվել այլ իրավահարաբերություններում:

Ընտանիքի անդամների տարբերակված մոտեցումն ազգային ու միջազգային փաստաթղթերում առաջացնում է բազում քննարկումներ և տարրնթերցումներ: Մասնավորապես, համատեղ բնակվելու կամ չբնակվելու հարցը ՀՀ ազգային օրենսդրությամբ հստակ տարանջատում է բռնության ընտանիքում կատարվելու հանգամանքը՝ պայմանավորված որոշակի մերձավոր ազգականների ով լինելով:

Հարկ է նշել, որ ինքնին «բռնություն» եզրույթը նույնպես չունի միատեսակ մեկնաբանություն: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը գրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք<sup>1</sup>: Այսինքն, ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես իր ուշադրությունը կետրոնացրել է ֆիզիկական և հոգեբանական բռնության վրա: Ավելին, իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն ֆիզիկական բռնության տարբեր բնորոշումներ: Հեղինակների մի խումբ, այդ թվում Ի.Գ. Ֆիլանովսկին,

<sup>1</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ.-ի նոյեմբերի 1-ի Ա. և Օ. Սահակյանների վերաբերյալ թիվ ԱԸԴ/0176/01/11 քրեական գործով որոշում:

ֆիզիկական բռնության ներքո հասկանում են «տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելը»<sup>1</sup>: Հեղինակների մեկ այլ խումբ էլ, ինչպես օրինակ՝ Ա.Ա. Պիոնտովսկին, Վ.Դ. Մենշագինը, ֆիզիկական բռնություն են համարում «ցանկացած ազդեցություն տուժողի մարմնական անձեռնմխելիության վրա»<sup>2</sup>: Մասնագիտական գրականության մեջ կան ֆիզիկական բռնության այնպիսի սահմանումներ, որոնցում բռնության պարտադիր հատկանիշ են հանդիսանում դրա հետևանքները: Այսպես, Ա.Կ. Շեդրինայի կարծիքով՝ ֆիզիկական բռնությունը մարմնի վրա ուղղակի ազդեցությունն է և կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ հասարակ ծեծից մինչև ծանր մարմնական վնասվածքներ պատճառելը և կյանքից զրկելը<sup>3</sup>: Համանման են բնորոշել ֆիզիկական բռնությունը նաև Յու.Ա. Վորոնինը և Պ.Ֆ. Տելնովը՝ բնորոշելով ֆիզիկական բռնությունը «տուժողի վրա ազդեցություն, որը կարող է արտահայտվել տուժողին հարված կամ հարվածներ հասցնելով, մարմնական վնասվածքներ պատճառելով (ինչպես թեթև, այնպես էլ ծանր), խոշտանգումներով և տանջանքներով, ինչպես նաև մահ պատճառելով»<sup>4</sup>:

Ֆիզիկական բռնության վերոնշյալ սահմանումները մասնագիտական գրականության մեջ քննադատության են արժանացել, քանի որ դրանցում հատուկ ուշադրության էին արժանանում միայն ֆիզիկական բռնության արտաքին կողմը, արարքի կատարման եղանակը, հետևանքները, չէին մատնանշվում արարքի հանրային վտանգավորությունը, հակաիրավականությունը, արարքի նկատմամբ հանցավորի և տուժողի կամային վերաբերմունքը: Վ.Ի. Սիմոնովը և Վ.Գ. Շումիլինը բնորոշում են ֆիզիկական բռնությունը որպես հանցավոր բռնության տարատեսակ՝ ֆիզիկական ուժի կիրառմամբ գիտակցված հակաիրավական ազդեցություն՝ ուրիշի մարմնական անձեռնմխելիությունը խախտելու նպատակով՝ առանց վերջինիս կամքը հաշվի առնելու կամ նրա կամքին հակառակ<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Советское уголовное право. Особенная часть. - М., 1962. էջ 206:

<sup>2</sup> Տե՛ս **Пионтовский А.А., Меньшагин В.Д.** Курс советского уголовного права. Особенная часть. - М., 1995, Т. 1, էջ 722:

<sup>3</sup> Տե՛ս **Щедрина А.К.** Ответственность за разбой по Указу Президиума Верховного Совета СССР от 4 июня 1947 г. "Об усилении охраны личной собственности граждан" // Вопросы советского уголовного права и процесса: Ученые записки Свердловского юридического института. - Свердловск, 1958, Т. VI, էջ 24:

<sup>4</sup> Տե՛ս Советское уголовное право. Особенная часть. - М., 1983. էջեր 97-98; Советское уголовное право. Особенная часть. - М., 1988, էջ 115:

<sup>5</sup> Տե՛ս **Симонов В.И., Шумихин В.Г.** Квалификация насильственных посягательств на собственность. Учебное пособие. - М., 1993, էջ 19:

ՀՀ նոր քրեական օրենսգրքը, ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, 3-րդ հոդվածով նախատեսել է քրեական օրենսդրության հասկացությունները, որոնց թվում նշվել է նաև բռնությունը, որը ներկայացվում է որպես «այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը»։ Փաստացի ՀՀ նոր քրեական օրենսգրքը սահմանել է միայն ֆիզիկական բռնությունը՝ չներառելով բռնության այլ ձևերը որպես այդպիսիք։

Հարկ է նշել, որ ընտանեկան բռնությանը բնորոշ են այն բոլոր հիմնական հատկանիշները, որոնցով բնութագրվում է հանցավոր բռնությունը (լայն իմաստով)՝ արարքի դիտավորությունը, հակաիրավականությունը, ուրիշի կամքին հակառակ կամ առանց ուրիշի կամքը հաշվի առնելու կատարված գործողությունը, մարդու դեմ ուղղված լինելը և այլն։ Ինչպես հանցավոր բռնության, այնպես էլ ընտանիքում բռնության օբյեկտ են հանդիսանում մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական ազատության, ֆիզիկական ցավերից, ֆիզիկական և հոգեկան տառապանքներից պաշտպանվածության հետ կապված հասարակական հարաբերությունները։ Երկու դեպքում էլ հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների օբյեկտ հանդիսացող արժեքներ կամ բարիքներ են մարդու կյանքը, առողջությունը, ֆիզիկական ազատությունը, ֆիզիկական ցավերից, ֆիզիկական և հոգեկան տառապանքներից պաշտպանվածությունը։ Հանցավոր բռնության և ընտանեկան բռնության անմիջական ներգործության առարկա է հանդիսանում մարդը, որը միաժամանակ հանդիսանում է նաև հանցավոր բռնության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության կողմ և կոնկրետ արժեքի կամ բարիքի կրող<sup>1</sup>։

Այն, որ ՀՀ Սահմանադրությունը հանցագործությունների կանխարգելման գործում հիմնարար փաստաթուղթ է՝ անհերքելի է, հետևապես, բռնության ցանկացած դրսևորում, ներառյալ՝ ընտանիքում և հանցավոր բռնությունները, նույնպես պետք է կանխարգելվեն՝ երաշխավորելով յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը։

<sup>1</sup> Տե՛ս **Հունանյան Դ. Ռ.** Բռնությունը քրեական իրավունքի մեջ (իրավահամեմատական վերլուծություն ՀՀ և ՌԴ օրինակով) իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010, էջեր 54-58։



ՀՀ սահմանադրական դատարանն ընտանիքում բռնության հիմնախնդիրներից մեկին անդրադարձել է 2020թ.-ի ապրիլի 14-ի ՄԴՈ-1522 որոշմամբ, սակայն անդրադարձել է ոչ թե ընտանիքում բռնության եզրույթին կամ դրա սահմանադրականությանը, այլ նշանակվող պաշտպանական միջոցների ընթացքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումներին: Մասնավորապես, այդ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի նման սահմանափակումը նախատեսված է օրենքով, հետապնդում է Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակ, այն է՝ ընտանիքի մյուս անդամի (անդամների) կյանքի և առողջության ապահովումը, ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելը, ինչպես նաև ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելը, և պիտանի ու անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար<sup>1</sup>: ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակի՝ ընտանիքի մյուս անդամի (անդամների) կյանքի և առողջության ապահովման, ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելու, ինչպես նաև ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու համար պետությունն իր ողջ գործիքակազմով պետք է ապահովի դրա իրականացումը:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքը նախատեսել է մերձավոր ազգականի<sup>2</sup> կողմից հանցանքը կատարելը՝ որպես ծանրացնող հանգամանք, սպանության, ինքնասպանության հասցնելու, առողջությանը ծանր, միջին և թեթև ծանրության վնաս պատճառելու, ապօրինի ազատությունից զրկելու, հոգեկան և ֆիզիկական ներգործության և այլ հանցանքների դեպքում, դրանով իսկ շեշտելով ընտանիքում բռնության վտանգավորությունը և նման դրսևորումների դեպքում՝ պատժիչ խիստ քաղաքականության անհրաժեշտությունը:

<sup>1</sup> ՀՀ Կոստայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2020 թ.-ի ապրիլի 14-ի ՄԴՈ-1522 որոշում, 4.2-րդ կետ, <https://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1522.pdf>

<sup>2</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ մերձավոր ազգական է անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարելի է եզրահանգել, որ՝  
– ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի երաշխավորում յուրաքանչյուրի՝ ընտանիքում բռնությունից պաշտպանված լինելը, սակայն դա ենթադրվում է ՀՀ Սահմանադրության 16-րդ, 25-րդ և այլ հոդվածների համակարգային վերլուծությունից,

– ընտանիքում բռնության կանխարգելման առնչությամբ ազգային օրենսդրությունն ամբողջական չի երաշխավորում ընտանիքում բռնությունից անձանց պաշտպանվածությունը՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքում և իրավական ակտերում հիմնականում շեշտադրելով ֆիզիկական բռնության դեմ պայքարը,

– հանցավոր և ընտանիքում բռնությունները, հիմնականում բնութագրվելով նույն հատկանիշներով, ունեն որոշ տարբերություններ, որոնցից մեկը՝ ընտանիքի անդամի կողմից այն կատարելն է, որը ՀՀ նոր քրեական օրենսգրքով ներկայացված է որպես մերձավոր ազգականի կողմից կատարված, ինչը մասնակիորեն է լուծում ընտանիքում բռնության դեմ քրեաիրավական արդյունավետ պայքարը:

## КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ БОРЬБЫ ПРОТИВ НАСИЛИЯ В СЕМЬЕ

### Аннотация

В статье представлено правовое регулирование одной из насущных проблем общества – насилия в семье, в частности, в контексте конституционно-правовых гарантий. Насилие в семье сопровождается ограничениями различных прав человека и лишениями, а противодействие насилию связано с этими ограничениями и лишениями, что необходимо рассмотреть в свете Конституции РА и принципов права, особо отмечая, что насилие в семье не ограничивается лишь физическим насилием.

**Ключевые слова:** насилие, семья, насилие в семье, лицо, подвергшееся насилию в семье, борьба против насилия в семье, физическое насилие, новый Уголовный кодекс РА.

CONSTITUTIONAL LEGAL GUARANTEES FOR COMBATING  
DOMESTIC VIOLENCE

**Annotation**

The article presents the legal regulation of one of the sensitive topics of the society - domestic violence, in particular, in the context of constitutional legal guarantees. Domestic violence and opposition to this are accompanied by restrictions on various human rights and deprivations, which must be considered in the light of the Constitution of the Republic of Armenia and the principles of law, especially emphasizing that domestic violence is not limited purely to physical violence.

**Keywords:** violence, family, domestic violence, person subjected to domestic violence, combating domestic violence, physical violence, new Criminal Code of the Republic of Armenia.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 հոկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հանրապետության նախագահի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 73-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք, նախագծի համարը – Պ-665-19.06.2020-ՊԻ-011) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 24.03.2021թ.:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածում՝

- 1) 7-րդ մասի 3-րդ կետի «1000» թիվը փոխարինել «3000» թվով.
- 2) 8-րդ մասի 2-րդ կետի «2000» թիվը փոխարինել «6000» թվով:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի 2021 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Օրենքի վիճարկվող դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Հանրապետության նախագահը (այսուհետ՝ Դիմող) գտնում է, որ թեպետ Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրված են կարծիքի արտահայտման ազատությունը և դրա սահմանափակման շրջանակները, միևնույն ժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված են որոշ լրացուցիչ պարտադիր կումուլյատիվ պայմաններ կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումներ նախատեսելու մասով: Մասնավորապես, կարծիքի արտահայտման ազատության օրենքով նախատեսված յուրաքանչյուր իրավաչափ սահմանափակում պետք է համապատասխանի Սահ-

մանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին և 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին:

Դիմողն ընդգծում է, որ յուրաքանչյուր անձի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ամրագրված է նաև մի շարք ունիվերսալ և տարածաշրջանային միջազգային փաստաթղթերում՝ մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն ընդունված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող օրենքի հիմնավորումը որևէ կերպ չի անդրադառնում այն հարցին, թե ինչու գործող կարգավորմամբ սահմանված դրամական փոխհատուցման չափը բավարար չէ Սահմանադրությամբ սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար, հիմնավորման մեջ համապատասխան դատական գործերի էլքերի վերաբերյալ որևէ վերլուծություն իրականացված չէ: Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ վիրավորանքի և զրպարտության համար նախատեսված դրամական փոխհատուցման առավելագույն չափը, որպես կանոն, չի կիրառվում:

Բացի դրանից, Դիմողը հավելում է, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ դեռ 2007 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունած թիվ 1577(2007) բանաձևի կարևոր շեշտադրումներից էր այն, որ զրպարտության և վիրավորանքի համար նախատեսվող փոխհատուցման չափերը պետք է լինեն համաչափ, որպեսզի դրա կիրառման արդյունքում չվտանգեն զանգվածային լրատվության միջոցի բնականոն գործունեությունը, քանի որ արդյունքում կարող է լրջորեն վտանգվել արտահայտվելու ազատությունը:

Արդյունքում, Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող օրենքով նախատեսված փոխհատուցման չափն անհամաչափ բարձր է և առերևույթ չի համապատասխանում Սահմանադրության 42 և 78-րդ հոդվածներին: Մինևն ժամանակ, ըստ Դիմողի, փոխհատուցման սահմանված չափն առերևույթ չի համապատասխանում նաև

Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքին: Այդ առնչությամբ, դիմողը նշում է, որ դրամական փոխհատուցման պարագայում դատավորի համար Օրենքով նախատեսված է ոչ ողջամիտ հայեցողություն համապատասխան դրույթի կիրառման ընթացքում՝ 0 ՀՀ դրամից մինչև 3000000 ՀՀ դրամ՝ վիրավորանքի դեպքում, և 0 ՀՀ դրամից մինչև 6000000 ՀՀ դրամ՝ զրպարտության դեպքում՝ առանց դատական հայեցողության շրջանակներում փոխհատուցման չափը որոշող չափանիշների օրենսդրական հստակեցման:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող), վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումները, գտնում է, որ օրենսդրի կողմից սահմանվել են վիրավորանքի կամ զրպարտության համար փոխհատուցման չափի և անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ: Մասնավորապես, ըստ Պատասխանողի՝ վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցումը չպետք է նույնացնել գույքային վնասի հետ, սակայն այն չի հանդիսանում նաև տույժ կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ. օրենսդիրը հստակորեն տարբերակել է մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց սահմանվող փոխհատուցումը՝ վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասից: Բացի դրանից, օրենսդիրը սահմանել է, որ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանները պետք է հաշվի առնեն կոնկրետ գործի առանձնահատկությունները, այդ թվում՝ վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Պատասխանողը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածով հետապնդվող նպատակ է համարում այն, որ նորմը կոչված է երաշխավորելու խոսքի ազատության անիրավաչափ չարաչափման դրսևորումների դեպքում պատասխանատվության անխուսափելիությունը, ինչպես նաև՝ այն դատարաններին պարտավորեցնում է դատական քննության շրջանակներում հաշվի առնել արար-

քի կատարման հանգամանքները, եղանակը, վիրավորող անձի գույքային դրությունը, արարքի արդյունքում հասցված վնասի բնույթն ու չափը:

Անդրադառնալով վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանված փոխհատուցման առավելագույն չափի փոփոխությանը՝ Պատասխանողը վկայակոչել է Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումն առ այն, որ փոխհատուցման չափը դիտարկվել էր Հայաստանի Հանրապետությունում բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հարաբերակցության տեսանկյունից, ապա՝ արձանագրել, որ նշված հարաբերակցությունը փոփոխության է ենթարկվել 2020 թվականի դրությամբ:

Բացի դրանից, ըստ Պատասխանողի՝ գնահատման առարկա պետք է դառնա օգտագործված միջոցի կամ եղանակի՝ տեղեկատվության արագ և համընդհանուր տարածման հարցը: Ներկայումս որպես տեղեկատվության տարածման, ինչպես նաև հաղորդակցության հիմնական միջոց օգտագործվում է համացանցը, որի միջոցով կատարված հրապարակումների տարածումը շատ ավելի արագ է և հասանելի մեծ թվով անձանց համար, որպիսի պարագայում ենթադրվում է փոխհատուցման ենթակա գումարի ավելի բարձր չափ:

Անդրադառնալով փոխհատուցման ենթակա գումարի որոշման վերաբերյալ դատավորի ոչ ողջամիտ հայեցողությանն առնչվող Դիմողի փաստարկներին՝ Պատասխանողն արձանագրել է, որ ՍԴՈ-997 որոշմամբ Սահմանադրական դատարանն այն համարել է ոչ բացարձակ և սահմանափակման ենթակա՝ թվարկելով որոշակի նախապայմաններ:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սահմանադրական դատարանը կարևորում է անդրադարձ կատարել, մասնավորապես, հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման արդյունքում մարդու արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման առավելագույն չափի բարձրացումը կարծիքի ազատ արտահայտման իրավունքին միջամտության առումով համապատասխանում է որոշակիության և համաչափության սահմանադրական պահանջներին:



**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության կարգավորումների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունը, մարդուն ճանաչելով բարձրագույն արժեք՝ կանխորոշել է պետության պարտականությունը՝ հարգել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները (հոդվ. 3): Այս հիմնարար սկզբունքի հետ անխզելիորեն կապված է մարդու արժանապատվության անօտարելի լինելու սկզբունքը:

Սահմանադրության 3, 23 և 42-րդ հոդվածների կարգավորումների բովանդակությունից բխում է, որ մարդու արժանապատվությունը, լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները: Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման շրջանակը որոշելու նպատակով որոշիչ նշանակություն ունի նաև անձի պատվի և համբավի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը (Սահմանադրության հոդվ. 31, մաս 1): Այսինքն, մարդու արժանապատվության, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունը կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրականացման բովանդակային սահման է:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ երաշխավորելով կարծիքի ազատ արտահայտման իրավունքը, միևնույն ժամանակ, նույն կոնվենցիան նախատեսում է այս իրավունքին միջամտելու հնարավորություն՝ հստակ ամրագրելով թե՛ միջամտության ձևերը՝ «ձևականություններ, պայմաններ, սահմանափակումներ կամ պատժամիջոցներ», թե՛ իրավաչափ նպատակը՝ «պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելը», թե՛ պայման-

ները՝ «նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում» ի շահ վերոգրյալ իրավաչափ նպատակի:

4.2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող դրույթը վերաբերում է կարծիքի ազատ արտահայտման իրավունքի վկայակոչված միջամտության ձևերից մեկի՝ դատարանների կողմից նշանակվող փոխհատուցման չափին: Օրենքի վիճարկվող դրույթը սահմանում է կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման արդյունքում այլ անձանց արժանապատվության, պատվի և բարի համբավի նկատմամբ ոտնձգության հետևանքով վրա հասնող հետևանքները, մասնավորապես՝ վիրավորանքի համար սահմանվում է նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով դատարանի կողմից փոխհատուցում նշանակելու առավելագույն սահման, իսկ զրպարտության դեպքում՝ մինչև 6000-ապատիկի չափով:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասը, իր հերթին, սահմանում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությունը, երաշխավորելով կարծիքի ազատ արտահայտման իրավունքը, այն չի դիտարկում բացարձակ և թույլ է տալիս դրան միջամտություն, որի արտացոլումն էլ հանդիսանում է վիճարկվող օրենքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Սահմանադրական դատարանն իրենց նախադեպային իրավունքում զարգացրել և բազմիցս կիրառել են իրավունքի միջամտության իրավաչափության ստուգման եռատարր թեստը: Այն պահանջում է ցանկացած միջամտություն գնահատել հետևյալ չափանիշների համատեքստում. 1) նախատեսվա ծ է արդյոք միջամտությունն օրենքով, 2) հետապնդու մ է այն արդյոք իրավաչափ նպատակ, 3) ընտրված միջոցը բավարար և անհրաժե շտ է արդյոք ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար:

Սահմանադրության 78-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համար-  
ժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատու-  
թյան նշանակությանը: Իսկ Սահմանադրության 79-րդ հոդվածի  
համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահ-  
մանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափա-  
կումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի,  
որպեսզի անձինք ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան  
վարքագիծ:

**4.3.** Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարա-  
նը վերահաստատում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին  
հոդվածի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմա-  
նադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997  
որոշմամբ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի ոչ իրավա-  
չափ իրացման արդյունքում վրա հասնող փոխհատուցման վերա-  
բերյալ արտահայտված մոտեցումները: Մասնավորապես.

1) «Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանա-  
տվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, հանդիսանում է  
միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը: Նման ձևով  
արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտու-  
թյամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ ան-  
ձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի)  
միջև արդարացի հավասարակշռությունը պայմանավորող գործոն  
է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ զրպարտության համար սահ-  
մանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատ-  
վին ու արժանապատվությանը պատճառված վնասին: Այս առնչու-  
թյամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պա-  
հանջում է, որպեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար  
սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարա-  
բերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնա-  
սի հետ»,

2) «**փոխհատուցման** պահանջն անձի՝ իր պատիվը, արժանա-  
պատվությունը և գործարար համբավն արատավորող գործողու-  
թյուններից դատական կարգով պաշտպանվելու՝ օրենքով նախա-  
տեսված միջոց է»,

3) «**գույքային վնասը**՝ վիրավորանքի կամ զրպարտության հե-  
տևանքով անձի կրած նյութական բնույթի գրկանքներն են, կորուս-  
տը, այդ թվում՝ դատական ծախսերը, խախտված իրավունքների

վերականգնման համար կատարված ողջամիտ ծախսերը, որոնք համապատասխան փաստերով դատարանում ենթակա են հիմնավորման և վերականգնման»,

4) «**փոխհատուցման չափը** որոշում է դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, այդ թվում՝ վիրավորանքի կամ գրպարտության եղանակից և տարածման շրջանակից, ինչպես նաև վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունից»,

5) «**փոխհատուցման, ինչպես և՛ գույքային վնասի** հատուցման հարց դատարանը քննում է բացառապես այն անձի պահանջով, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է»,

6) «**փոխհատուցման չափը** որոշելիս դատարանը հաշվի չի առնում վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով անձին պատճառված գույքային վնասը»,

7) «Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում չպետք է շփոթել գույքային վնասի հետ, մյուս կողմից՝ այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ: Հակառակ պարագայում, ինչպես նշվեց, կիմաստագրկվի գրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը»,

8) «Վիրավորանքի կամ գրպարտության համար սահմանվող փոխհատուցման չափի և անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև համաչափության պահանջը հավասարապես ուղղված է և՛ օրենսդրին, և՛ իրավակիրառողին: Օրենսդրին այս պահանջն առաջադրում է համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանելու խնդիր: (...) Օրենսդիրը ... իրավակիրառողից պահանջում է նաև փոխհատուցման չափը սահմանելիս հաշվի առնել վիրավորանքի կամ գրպարտության եղանակը և տարածման շրջանակը, ինչպես նաև վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունը»,

9) «(...) գույքային դրությունը հաշվի առնելու պահանջը, մասնավորապես, ենթադրում է.

- հաշվի առնել պատասխանողի եկամուտների չափը,
- թույլ չտալ պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար:

Այդ նպատակով է, որ օրենսդրի կողմից ոչ թե փոխհատուցման որևէ որոշակի չափ է սահմանվել, այլ նախատեսվել է մինչև որոշակի մեծություն, որպեսզի գործի հանգամանքներից ելնելով դատարանը կոնկրետացնի փոխհատուցում կիրառելու ենթակա չափը»,

10) «Սահմանադրական դատարանը փոխհատուցման չափի համաչափությունն ապահովելու կարևոր երաշխիք է համարում նաև վիճարկվող հոդվածում փոխհատուցման նվազագույն չափի օրենսդրական ամրագրման բացակայության և առավելագույն չափի ամրագրման առկայության հանգամանքը»:

**4.4.** Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, ըստ որի, «վիճարկվող օրենքի հիմնավորումը որևէ կերպ չի անդրադառնում այն հարցին, թե ինչու գործող կարգավորմամբ սահմանված դրամական փոխհատուցման չափը բավարար չէ Սահմանադրությամբ սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար, հիմնավորման մեջ համապատասխան դատական գործերի էլքերի վերաբերյալ որևէ վերլուծություն իրականացված չէ», Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի չէ վիճարկվող օրենքի սահմանադրականության քննությանն այն հիմնավորմամբ, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է բացառապես Ազգային ժողովը, և Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել Ազգային ժողովի այս կամ այն օրենքի ընդունման համար հիմք ծառայած քաղաքական նկատառումները, եթե ընդունված իրավական ակտը խնդրահարույց չէ սահմանադրականության տեսանկյունից, ինչը նշանակում է, որ Սահմանադրական դատարանը քննության առարկա է դարձնում ընդունված օրենքների սահմանադրականությունը, ոչ թե օրենսդրի շարժառիթներն ու հիմնավորումները:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ դիմողի այն փաստարկներին, համաձայն որոնց՝ վիճարկվող օրենքով նախատեսված պատասխանատվության չափն անհամաչափ բարձր է, այն չի համապատասխանում Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշա-

կիրության սկզբունքին, ինչպես նաև՝ «Դրամական փոխհատուցման պարագայում դատավորի համար Օրենքով նախատեսված է ոչ ողջամիտ հայեցողություն համապատասխան դրույթի կիրառման ընթացքում՝ 0 ՀՀ դրամից մինչև 3000000 ՀՀ դրամ՝ վիրավորանքի դեպքում, և 0 ՀՀ դրամից մինչև 6000000 ՀՀ դրամ՝ զրպարտության դեպքում՝ առանց դատական հայեցողության շրջանակներում փոխհատուցման չափը որոշող չափանիշների օրենսդրական հստակեցման»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-1488 որոշմամբ արձանագրել է. «1) «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

2) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

2016 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ-1270 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակապես սահմանափակվել»:

նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Բացի դրանից, Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԴՈ-780 որոշմամբ արձանագրել է. «... օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»: Այս առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, թեև անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան, այնուամենայնիվ, դրանց չի զրկում «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ ներպետական դատական ատյանները բազմիցս կիրառել են վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվություն նախատեսող քաղաքացիաիրավական նորմերը և արտահայտել, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի բովանդակության որոշակիացմանն ուղղված մի շարք հիմնարար իրավական գաղափարներ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-997 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012թ. որոշումը, թիվ ԵԿԴ/3246/02/11 քաղաքացիական գործով 05.04.2013թ. որոշումը):

Այսպիսով, արձանագրելով, որ սույն գործով վիրավորանքի և զրպարտության միջոցով պատճառված վնասի հատուցման համաչափության խնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունեն Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրենց որոշումներով ու վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումները, մոտեցումներն ու չափանիշները, **Սահմանադրական դատարանը գտնում է, որ փոխհատուցման առավելագույն չափի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու այդ փոխհատուցման որոշակիությունը, ինչպես**

նան իրավաչափ հայեցողություն է ապահովում դատարանի համար յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ ելնելով գործի փաստական հանգամանքներից որոշելու փոխհատուցման չափը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 73-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

5 հոկտեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1612





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
19-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ՝  
«ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ  
ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հոկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում) դիմողի Հանրապետության նախագահի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 73-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 19-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի<sup>1</sup> և հարակից՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»<sup>2</sup> և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»<sup>3</sup> օրենքների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի 2021 թվականի ապրիլի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող օրենքները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) նախատեսված կարգավորումներով Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ՝ նաև ԲԴԽ) տրվում է լիազորություն ստեղծելու դատավորների որոշակի ներքին մասնագիտացում հիմնված, inter alia, գործերի «բարդության» վրա: Առանձին բարդության գործերի ցանկը ենթակա է մշակման ԲԴԽ-ի կողմից: Ընդ որում, դատավորները քննելու են առանձին բարդության գործերն ի լրումն այլ գործերի, և այդ առումով դիմողի համար պարզ չէ, թե դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ինչ նպատակ է հետապնդում նման կարգավորումը: Դիմողը գտնում է, որ «գործի

<sup>1</sup> [http://www.parliament.am/draftreading\\_docs/P-877\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs/P-877_DR2.pdf)  
<sup>2</sup> [http://www.parliament.am/draftreading\\_docs/P-877-1\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs/P-877-1_DR2.pdf)  
<sup>3</sup> [http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12263&Reading=2&reading\\_draft=true](http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12263&Reading=2&reading_draft=true)

բարդություն» եզրույթն ինքնին գնահատողական է, և Սահմանադրական օրենքով նախատեսված չեն օբյեկտիվ չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինեք որոշել առանձին քաղաքացիական, վարչական և քրեական գործերի բարդության աստիճանը: Ըստ դիմողի «առանձին բարդության գործերի ցանկ» հասկացության իրավական բովանդակությունը պարզ չէ, իսկ դրա բացահայտման համար անհրաժեշտ է տվյալ պահի դրությամբ մանրամասն տիրապետել տվյալ գործի նյութերին և դրա փաստական հանգամանքներին, որոնք յուրաքանչյուր դեպքում տարբեր են:

Ըստ դիմողի՝ Սահմանադրական օրենքի վիճարկվող կարգավորումները կարող են հանգեցնել նաև դատավորների միջև գործերի կամայական բաշխմանը, ինչը նահանջ է դատավորների միջև գործերի օբյեկտիվ չափանիշի հիման վրա բաշխման հիմնարար պահանջից:

Վերոգրյալի համատեքստում վերլուծելով վիճարկվող կարգավորումները՝ դիմողը գտնում է, որ նախատեսված իրավակարգավորումների արդյունքում «առանձին բարդության գործեր» քննող դատավորների առանձնացումը, այն պարագայում, երբ գործի բարդությունը հաճախ դինամիկ երևույթ է և կախված է բազմաթիվ գնահատողական գործոններից, որոնք հստակեցնելու փորձ չի արվել Սահմանադրական օրենքով, ինչպես նաև համապատասխան ժամկետում առանձին բարդության գործերը ԲԴԽ-ի սահմանած կարգով վերաբաշխվելու լիազորության Սահմանադրական օրենքով նախատեսելը, անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կարող է առաջացնել հիմնավոր կասկած Սահմանադրական օրենքով նախատեսված մասնագիտացված դատարանների (դատավորների) անկախ և անաչառ դատարան լինելու վերաբերյալ, և խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում:

Դիմողը գտնում է, որ դատավորների կամ դատարանի մասնագիտացումը կարող է իրավաչափ շեղում համարվել դատավորների միասնական կարգավիճակի պահանջից, եթե դա հիմնավոր և արդարացված է նեղ մասնագիտական գիտելիքների առկայության անհրաժեշտությամբ՝ պայմանավորված իրավունքի ոլորտի որոշակի առանձնահատկություններով, մինչդեռ, ըստ դիմողի, «գործի բարդությունը» նշված տրամաբանությունից դուրս է: Դիմողը գտնում է, որ ԲԴԽ-ի կողմից գործերի նման բաշխման իրականացումն անուղղակիորեն կարող է ընկալվել նաև որպես դատավորներին արհեստավարժների և ոչ արհեստավարժների դասակարգում, ինչը

խնդրահարույց է Սահմանադրության 164-րդ հոդվածով ամրագրված դատավորի կարգավիճակի, այդ թվում՝ վերջինիս հեղինակության տեսանկյունից:

Դիմողը նշում է նաև, որ Սահմանադրական օրենքով նախատեսվում է ԲԴԽ-ի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության հարցով ֆիզիկական և իրավաբանական անձանց ներկայացրած դիմումն ընդունելու ցածր շեմ, այն է՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելը: Դիմողը նաև նշում է, որ նման իրավիճակում դատավորը կարող է հայտնվել պատասխանողի դերում որևէ գործով իր ի պաշտոնե լիազորություններն իրականացնելու ընթացքում և հենց այդ գործի շրջանակներում, ինչը խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի, մասնավորապես՝ դատավորի անկախության չափորոշիչների համատեքստում: Բացի դրանից, ըստ դիմողի, ԲԴԽ-ն իրականացնելու է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու և գործով վերջնական որոշում կայացնելու գործառույթները: Այս առումով, դիմողն ընդգծում է, որ ԲԴԽ-ին նման գործիքակազմ տրամադրելը չի բխում այդ մարմնի սահմանադրական կարգավիճակից: Նաև ԲԴԽ-ի կողմից դիմումի նախնական ուսումնասիրություն կատարելու և դիմումն ըստ էության քննելու հանգամանքն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է կասկածներ առաջացնել ԲԴԽ-ի անաչառության վերաբերյալ: Բացի դրանից, Սահմանադրական օրենքի այս կարգավորումներն ուղղակիորեն հանգեցնելու են ԲԴԽ-ի և առանձին դատավորների անհարկի և անհիմն գերծանրաբեռնվածությանը:

Դիմողը, արձանագրելով, որ քրեական դատավարության տեսության հիմնարար դրույթներից հայտնի է, որ խափանման միջոցը պատիժ չէ, իսկ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն չէ, հանգում է այն եզրահանգման, որ կատարվող լրացումների արդյունքում մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նույնիսկ խափանման միջոցի կիրառման հիմքերի բացակայության պայմաններում կարող է կիրառվել խափանման միջոց: Իսկ այն դեպքում, երբ կիրառված է եղել խափանման միջոցը, սակայն, մեղադրյալը չարամտորեն չի կատարում իր պարտականությունները, այդ դեպքում կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել ավելի խստով: Այս համատեքստում դիմողը եզրակացնում է, որ օրենսդիրը

դիտարկում է խափանման միջոցը՝ որպես մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու համար սահմանված պատիժ:

Դիմողն ընդգծում է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքով (այսուհետ նաև Օրենք) հստակեցված չէ, թե որ պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը, հստակորեն բացահայտված չէ «պարտականությունները չարամտորեն չկատարել» եզրույթը և այն, թե ինչպես է որոշվելու պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը: Արդյունքում, դիմողը եզրահանգում է, որ Օրենքի 1-ին հոդվածն առերևույթ խնդրահարույց է Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածների համատեքստում:

Դիմողը, ընդգծելով, որ դատավարական իրավունքների չարաշահման պարագայում դատական սանկցիայի կիրառման ինստիտուտն ունի հիմքեր իրավական տեսության մեջ, այնուամենայնիվ նկատում է, որ այդ առումով կատարվող լրացումները խնդրահարույց են: Մասնավորապես, դիմողը նշում է, որ օգտագործվող եզրույթները խնդրահարույց են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքի համատեքստում: Դիմողն ընդգծում է, որ Օրենքով հստակեցված չեն չափորոշիչները, որոնք պետք է կիրառվեն՝ որոշելու, թե որն է իրավունքի չարաշահումը և երբ այն կարող է համարվել «պարբերական», հստակեցված չէ նաև, թե ինչ ծավալով կամ ինչ չափով կարող է կիրառվել համապատասխան սահմանափակումը:

Դիմողը նշում է նաև, որ Օրենքով սահմանված մի շարք իրավունքների (միջնորդություններ հարուցելու, քրեական գործի նյութերին ծանոթանալու և դրանցից ցանկացած ծավալի տեղեկություն դուրս գրելու դեպքում) սահմանափակումներն առերևույթ խնդրահարույց և անհամաչափ միջոց կարող են լինել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածով ԲԴԽ-ին տրվում է իրավասություն ընտրելու որոշ դատավորների, ովքեր ի լրումն իրենց համապատասխան մասնագիտացման գործերի քննում են նաև առանձին տեսակի գործեր: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական

օրենքով սահմանված առանձին տեսակի գործերի ցանկն սպառիչ չէ, օրենսդիրն առանձին տեսակի գործերի ցանկը, յուրաքանչյուր դատարանի համար նման գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգը սահմանելու իրավասությամբ օժտել է ԲԴԽ-ին:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը համանման մոտեցում է ցուցաբերել նաև առանձին բարդության գործերի դեպքում: Սահմանադրական օրենքով ամրագրելով առանձին բարդության գործերը ԲԴԽ-ի կողմից ընտրված դատավորների կողմից քննելու հնարավորությունը՝ այդ գործերի ցանկը սահմանելու իրավասությամբ օժտել է հենց ԲԴԽ-ին՝ որպես դատարանների և դատավորների անկախության երաշխավոր:

Պատասխանողը նշում է, որ ԲԴԽ-ն օժտված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ, ուստի այդ ակտերը ևս, որպես «օրենք» լայն առումով, պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, այն է՝ ձևակերպված լինեն բավարար աստիճանի հստակությամբ: Ուստի այն պայմաններում, երբ օրենսդիրն առանձին բարդության գործերի ցանկը սահմանելու իրավասությամբ օժտել է ԲԴԽ-ին, առանց ԲԴԽ-ի այդ ցանկը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, չի կարող առանձին խոսք գնալ Սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց լինելու մասին, ուստի, ըստ պատասխանողի, այդ առումով դիմումն անհիմն է:

Պատասխանողը նշում է նաև, որ յուրաքանչյուր դատարանի համար առանձին բարդության գործեր քննող դատավորների թիվը և ընտրության կարգը սահմանում է ԲԴԽ-ն, իսկ առանձին բարդության գործեր քննող ընտրված դատավորների միջև գործերի բաշխումը տեղի է ունենում ԲԴԽ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգով, այլ ոչ թե կամայական կերպով, ինչպես նշել է դիմողը: Ուստի, այս առումով պատասխանողը գտնում է, որ առանձին բարդության գործեր քննող դատավորների (ինչպես առանձին տեսակի գործեր քննող դատավորների) առանձնացումը որևէ կերպ հակասության մեջ չի գտնվում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների հետ, նպատակ ունի նպաստել իրավական որոշակիությանը և դատական իշխանության հեղինակության բարձրացմանը:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ ցանկացած անձ, ով այս կամ այն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառով դիմում կներկայացանի ԲԴԽ դատավորին կարգապահական պատասխանատվության

ենթարկելու հարցով, իսկ ԲԴԽ-ն պարտավոր կլինի գործն ընդունել վարույթ, եթե ապահովված լինի դիմումի ներկայացման ձևական կողմը, պատասխանողը նշում է, որ Սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ դիմումի ձևական պահանջները պահպանված լինելու դեպքում ԲԴԽ-ն ոչ թե այն անմիջապես ընդունում է վարույթ, այլ ընդամենն իրականացնում է նախնական ուսումնասիրում: Դիմումը վարույթ է ընդունվում միայն այն դեպքում, եթե այն ակնհայտ անհիմն չէ կամ առկա չեն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156-րդ հոդվածով նախատեսված դիմումի քննությունը մերժելու այլ հիմքեր:

Անդրադառնալով դիմողի այն մտահոգությանը, որ ԲԴԽ-ի կողմից դիմումի նախնական ուսումնասիրություն կատարելու և դիմումն ըստ էության քննելու հանգամանքն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է կասկածներ առաջացնել ԲԴԽ-ի անաչառության վերաբերյալ, պատասխանողը գտնում է, որ դիմումի նախնական քննությունը և ըստ էության քննությունը երկու տարբեր փուլեր են՝ յուրաքանչյուրը պայմանավորված իր նպատակներով, ուստի նախնական փուլում դիմումի ակնհայտ անհիմն չլինելու վերաբերյալ կարծիքը որևէ պարագայում չի կարող կաշկանդել դատարանին հետագա փուլում դիմումն ըստ էության քննելիս:

Օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությունը դիտարկելով համաչափության սկզբունքի համատեքստում՝ պատասխանողը գտնում է, որ դրանցով նախատեսված սահմանափակումը հետապնդում է լեգիտիմ նպատակ՝ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը, իսկ ընտրված միջոցը պիտանի և անհրաժեշտ է նպատակին հասնելու համար:

Անդրադառնալով դիմողի այն հարցին, թե որ պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը, պատասխանողը նշում է, որ մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները թվարկված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով, ուստի մեղադրյալի վրա չի կարող դրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված պարտականություն:

Ինչ վերաբերում է պարտականությունները չարամտորեն չկատարելուն, պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը որոշելուն, ապա այդ հարցերի պատասխանը, ըստ պատասխանողի, պետք է

տա դատարանը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ հաշվի առնելով մեղադրյալի վարքագիծը և վարույթի առանձնահատկությունները:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը եզրահանգում է, որ Սահմանադրական օրենքը, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքները համահունչ են Սահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ գործով սահմանադրական վերահսկողության օբյեկտն Ազգային ժողովի կողմից ընդունված Հանրապետության նախագահի կողմից չստորագրված օրենքներն են, Սահմանադրական դատարանը սույն որոշման շրջանակներում Ազգային ժողովի ընդունած օրենքների սահմանադրականությանն անդրադարձ է կատարում միայն այն հարցերի սահմաններում, որոնք բարձրացվել են դիմողի կողմից.

- արդյոք ք ԲԴԽ-ի կողմից սեփական հայեցողությամբ վարչական, քաղաքացիական, քրեական մասնագիտացման դատավորներից առանձին բարդության գործեր քննող դատավորներ ընտրելու, ինչպես նաև՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դիմելու վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումները բխում են ԲԴԽ-ի սահմանադրական կարգավիճակից, համապատասխանում են դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակին՝ անկախ և անաչառ դատարանի առկայության ապահովման համատեքստում,

- մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու կամ այն փոփոխելու հնարավորություն նախատեսող դրույթն արդյոք բավարարում է իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի պահանջները,

- անձի կողմից իր դատավարական իրավունքների չարաշահման դեպքում որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը որպես դատավարական սանկցիա կիրառելու վերաբերյալ կարգավորումները համապատասխանում են արդյոք համաչափության և իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքներին:



**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի գործող 21-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ԲԴԽ-ին տրված է իրավասություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլն) գործեր:

Սահմանադրական օրենքի վիճարկվող իրավակարգավորմամբ առաջարկվող մոտեցման պայմաններում ԲԴԽ-ին վերապահվում է առանձին բարդության գործերն առանձնացնելու և դրանք քննող դատավորներին ընտրելու լիազորություն (2-րդ հոդված):

Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության գաղափարն ինքնին ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է բավարարի իրավական որոշակիության սկզբունքին:

Սահմանադրական դատարանը նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքի ապահովումը մեծ կարևորություն է ներկայացնում, ի թիվս այլնի, նաև դատարանների գործունեության կազմակերպման, դատավորների միջև գործերի բաշխման և այդ հարցերում որոշում կայացնող իրավասու մարմինների լիազորությունների օրենսդրական կարգավորմանն առնչվող դեպքերում՝ արդար դատաքննության սահմանադրական սկզբունքի երաշխավորմանն ուղղված բուն կառուցակարգերի արդյունավետության ապահովման նկատառումներից ելնելով:

Վիճարկվող նորմերի համալիր ուսումնասիրման արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանցով, մասնավորապես, չեն սահմանվում կարգավորումներ այն մասին, թե ինչ չափանիշների կիրառմամբ է կոնկրետ գործի ըստ էության քննության մեջ չներգրավված սուբյեկտը (այլ ոչ թե գործը քննող դատարանը/դատավորը) որոշելու գործի բարդության աստիճանը (առավել ևս այն դեպքերում, երբ դեռ չի մեկնարկվել գործի ըստ էության քննությունը), ինչ պահանջների պետք է բավարարեն այն դատավորները, որոնք քննելու են առանձին բարդության գործեր, ինչպես է դա գնահատվելու/որոշվելու:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող դիմումի շրջանակներում վիճարկվող առանձին բարդության գործերով դատավորների ընտրությանն առնչվող կարգավորումների բացերն ու դրանցում առկա անորոշություններն ինքնին խնդրահարույց են իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից, որպիսի պայմաններում, առանձին բարդության գործեր քննող դատավորներին ընտրելու գործընթացը կարող է կրել առավել անորոշ և ոչ կանխատեսելի բնույթ:

«Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ R (94) 12 առաջարկությամբ ներկայացված դիրքորոշումը հանգում է հետևյալին. «Դատավորների մասնագիտական կարիերայի վերաբերյալ բոլոր որոշումները պետք է հենվեն օբյեկտիվ չափանիշների վրա, և դատավորների ընտրությունն ու առաջխաղացումը պետք է հենվեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, բարեվարքությունը, կարողությունները և արդյունավետությունը»: Թիվ R (94) 12 առաջարկությունը հստակեցնում է, որ այս դրույթը կիրառելի է բոլոր անձանց նկատմամբ, որոնք դատական գործառույթներ են իրականացնում, այդ թվում՝ սահմանադրական, քրեական, քաղաքացիական, առևտրային և վարչական իրավունքի գործերով զբաղվող անձանց (սա վերաբերում է նաև ոչ մասնագետ դատավորներին և այլ անձանց, որոնք իրականացնում են դատական գործառույթներ): Ուստի՝ ընդունված տեսակետ է, որ նշանակումները պետք է կատարվեն ելնելով «օբյեկտիվ չափանիշների» վրա հիմնված «արժանիքներից», և որ քաղաքական նկատառումները պետք է անընդունելի լինեն:

Դատավորների միջազգային միության Դատավորի համընդհանուր խարտիայի 3.4-րդ կետում նշվում է հետևյալը. «Գործերի բաշխումը պետք է հիմնված լինի օրենքով նախատեսված այնպիսի օբյեկտիվ կանոնների վրա, որոնց մասին դատավորները նախապես տեղեկացվել են: Գործերի բաշխման վերաբերյալ ցանկացած որոշում պետք է կայացվի թափանցիկության սկզբունքի հիման վրա և լինի վերահսկելի»:

Առանց ծանրակշիռ փաստարկների մատնանշման գործը չպետք է վերցվի դատավորից: Նման փաստարկների գնահատումը պետք է հիմնված լինի օբյեկտիվ չափանիշների վրա, նախատեսված լինի օրենքով և պահպանի դատական համակարգի կողմից իրականացվող թափանցիկ ընթացակարգը»:

Վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը դիտարկելով նաև վերոնշյալ չափանիշների լույսի ներքո՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորների նշանակման ընդհանուր կարգն իրենում ներառում է դատավորներին ներկայացվող միասնական պահանջները, ինչպես և նրանց ընտրության հստակ չափանիշները: **Օրենսդրորեն առհասարակ նախատեսված չեն չափանիշներ առանձին բարդության գործեր առանձնացնելու և դրանց քննության համար դատավորներ ընտրելու իրավասության իրացման համար**, որպիսի անորոշությունը կարող է վտանգի տակ դնել նաև անկախ և անաչառ դատարանի առկայության սահմանադրական պահանջի ապահովումը, քանի որ ինչպես դատարան դիմող սուբյեկտների, այնպես էլ դատավորների համար անկանխատեսելի է դառնում առանձին բարդության գործեր առանձնացնելու և դրանց քննության համար դատավորներ ընտրելու գործընթացը, ինչը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել կամայականությունների վտանգելով անկախ և անաչառ դատաքննության իրականացումը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի գործող կարգավորումների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդրական կարգավորումներում արդեն իսկ առկա են գործի բարդությամբ պայմանավորված որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ «Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխումը» վերտառությամբ 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Բարձրագույն դատական խորհուրդ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Դատավորի դիմումը հիմնավոր համարելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորի անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու կամ նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ նախատեսելու վերաբերյալ դրա համար սահմանելով որոշակի ժամանակահատված, որը չի կարող գերազանցել վեց ամիսը: Դատավորի դիմումի հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել վեց ամիս ժամկետը երկարաձգելու մասին, եթե առանձնակի բարդության գործի քննությունը չի ավարտվել: Իսկ նույն օրենքի 89-րդ հոդ-

վածի 1-ին մասի 28-րդ կետով, ի թիվս ԲԴԽ-ի այլ լիազորությունների, նախատեսվում է գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **առանձնակի բարդության գործեր քննող դատավորների տարանջատումը չի կարող դիտարկվել որպես տարանջատում մասնագիտացման հիմքով:** Այսպես, Սահմանադրական դատարանն իր 2008 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-782 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միևնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավազորության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավա-

սությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն»:

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ դատական համակարգից որոշակի մասնագիտացման կամ տեսակի գործեր քննող դատավորներ առանձնացնելու հնարավորությունը պայմանավորված է իրավունքի տարբեր ճյուղերի ոլորտային առանձնահատկություններով և համահունչ է դատավորի կարգավիճակին վերաբերող սահմանադրաիրավական պահանջներին: Բացի դրանից, «առանձին բարդության գործեր» հասկացության համեմատ «որոշակի մասնագիտացման» կամ «տեսակի» գործերը դասակարգելու համար կիրառվում են օբյեկտիվ չափորոշիչներ (օրինակ՝ պայմանավորված իրավահարաբերությունների սուբյեկտային կազմով, օբյեկտով և այլն):

Մինչդեռ, անորոշության մեծ աստիճան ունեցող «առանձին բարդության գործեր» հասկացությունը չի բավարարում գործերի բաշխման կամ վերաբաշխման կազմակերպման կանխատեսելիության և անաչառության ապահովման համար անհրաժեշտ օբյեկտիվ չափանիշներին ներկայացվող բարձր պահանջներին: Եթե գործերի տեսակի առանձնացման հիմքում առավելապես մասնագիտացման գործոնն է, ապա գործերի բարդությունը կախված է բացառապես կոնկրետ գործի բովանդակությունից, այն վերացական չէ և տեսակային հատկանիշներ չունի: Չկան վերացական բարդ գործեր, կարող են լինել վերացական ծավալուն, բայց ոչ բարդ գործեր: Գործի բարդությունը որոշվում է ամենաշուտն այն ժամանակ, երբ դատավորը գոնե նախապես դրան ծանոթանում է:

Բացի դրանից, միևնույն մասնագիտացման կամ նույն դատարանի դատավորներից առանձին բարդության գործեր քննող դատավորների ընտրությունը/առանձնացումը հանրության կողմից կարող է առավելապես ընկալվել որպես դատավորների դասակարգման դրսևորում, պայմանավորված վերջիններիս ընդհանուր մասնագիտական ունակություններով: Այդպիսի ընկալման համար առկա է նաև օբյեկտիվ նախադրյալ. դատավորի միասնական կարգավիճակին ներկայացվող պահանջները չեն ենթադրում բարդ գործ քննելու ունակություն ունեցող կամ չունեցող դատավորի

մասնագիտական որակ (նկատի չի ունեցվում նեղ մասնագիտացումը):

Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից «առանձին բարդության գործեր» քննող դատավորներ ընտրելու վերաբերյալ վիճարկվող դրույթները կարող են հանգեցնել դատավորների անհիմն տարբերակման, ուստի նաև դատավորի ընդհանուր կարգավիճակի միասնականության սկզբունքի խախտման արդյունքում՝ դատավորների անկախության և արդարադատության շահերի ոտնահարման: Բացի դրանից, անկողմնակալ դիտորդի մոտ կարող է առաջացնել ողջամիտ կասկած՝ մնացած դատավորների ոչ արհեստավարժության վերաբերյալ, ինչն էլ իր հերթին կասկածի տակ կդնի ինչպես դատավորի մասնագիտական հեղինակությունը, նրա անկախ և անաչառ լինելու հանգամանքը, այնպես էլ կնվազեցնի դատական իշխանության հանդեպ հանրային վստահությունը՝ նսեմացնելով ողջ դատական իշխանության հեղինակությունը:

Վերոգրյալից բացի, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որոշակի չէ նաև, **թե ինչ իրավաչափ նպատակ է հետապնդելու ԲԴԽ-ի կողմից գործի բարդության հիմքով դատավորների առանձնացումը**, նկատի ունենալով այն հանգամանքը, որ առանձնակի բարդության գործերը կարող են առկա լինել և՛ տարբեր մասնագիտացման, և՛ տեսակի գործերի շրջանակներում, և գործող իրավակարգավորումներով արդեն իսկ նախատեսված են իրենց վարույթում նման գործեր քննող դատավորների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու վերաբերյալ համապատասխան կանոնակարգումներ:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ վիճարկվող իրավակարգավորումը՝ առանձին բարդության գործեր քննող դատավորներ ընտրելու մասով, չի համապատասխանում դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակին և դրա հետ փոխկապակցված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող անկախության և անաչառության սկզբունքների պահանջներին:

**4.2.** Վիճարկվող Սահմանադրական օրենքով (Հոդված 12. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 148.1-ին հոդված) առաջարկվող կարգավորման համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհուրդը դիմում կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր մասնակցությամբ կոնկրետ գոր-

ծով, եթե առերևույթ առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են սույն օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

Մատնանշված 148.1-ին հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ դիմումն ընդունվում է քննության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգով սահմանված կարգով Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգային որոշմամբ, եթե դիմումն ակնհայտ անհիմն չէ կամ առկա չեն սույն օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված դիմումի քննությունը մերժելու այլ հիմքեր: Այլ կերպ, բոլոր այդ դեպքերում ԲԴԽ-ն պարտավոր է կարգապահական վարույթ հարուցել և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցն ըստ էության քննության առնել:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող կարգավորումներով օրենսդիրն ըստ էության սահմանել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինների մեկտեղման մոտեցումը, որը տարբերվում է գործող կարգավորումներից, ըստ որոնց դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն միայն Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, լիազոր մարմինը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: ՀՀ դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում («Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մաս):

**4.2.1.** Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Վերջինս ենթադրում է, որ Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար: Սահմանադրությամբ ամրագրված են մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն

թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական համարժեք երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

Սահմանադրական նշված հիմնարար սկզբունքները լիարժեքորեն կարող են կյանքի կոչվել ու երաշխավորվել ոչ միայն դատարանների ձևավորման ու դատավորների թեկնածուների ընտրության, նրանց անկախության համար անհրաժեշտ սոցիալական ու նյութական կամ այլ անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքներ սահմանելու, այլ նաև նրանց գործունեությանը միջամտության առումով իր մեջ լուրջ պոտենցիալ պարունակող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի վերաբերյալ արդյունավետ, գործուն, միևնույն ժամանակ հավասարակշռված կանոնակարգումներ սահմանելու միջոցով, որոնց պարագայում կբացառվի կամ նվազագույնի կհասցվի դատավորի գործունեությանն անհարկի, չհիմնավորված կամ թերի հիմնավորված բոլոր տեսակի ազդեցությունները: Նշված խնդիրների մասնակի լուծմանն են ուղղված նաև այնպիսի կարգավորումների նախատեսումը, որոնց պարագայում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ համապատասխան դիմումներին կներկայացվեն հիմնավորվածության կամ ստուգված լինելու հավելյալ որակական պահանջներ՝ այդպիսի դիմումների ֆիլտրացման առավել խիստ չափորոշիչներով:

Ամեն դեպքում անհրաժեշտ է, որ սահմանվեն այնպիսի կառուցակարգեր, որոնց պարագայում հնարավոր կլինի հասնել ողջամիտ հավասարակշռության՝ մի կողմից իր պարտականությունների անբարեխիղճ կատարման կամ խախտման կամ այդպիսի ողջամիտ կասկածի առկայության պարագայում դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության վարույթ նախաձեռնելու գործընթացը չափից ավել չձևականացնելու ու չբարդացնելու, իսկ մյուս կողմից՝ այնպիսի անհարկի միջամտությունները բացառելու հարցում, որոնց իրական միտումը որևէ օբյեկտիվ և իրավական շահով արդարացված չէ կամ որոնց դեպքում դատավորը ստիպված է լինելու զգալի ծավալով ներքաշվել անհարկի, լրացուցիչ ստուգման չենթարկված տեղեկությունների հիմքով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների մեջ ի հաշիվ իր հիմնական սահմանադրական առաքելության արդարադատության իրականացման:



Վերջինս, ի թիվս այլ անհրաժեշտ կանոնակարգումների, ենթադրում է, որ համապատասխան իրավահարաբերություններում ներգրավված սուբյեկտների սպառիչ կազմը, դրանցից յուրաքանչյուրի լիազորություններն ու գործառույթները պետք է սպառիչ և համապարփակ ձևով սահմանված լինեն համապատասխան իրավական ակտով: Ընդ որում, նախորդող պարբերություններում արտահայտված դիրքորոշումներին համահունչ՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումներ/հաղորդումներ ներկայացնելու, կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու տրամաբանորեն փոխկապակցված գործընթացները՝ դատավորների գործունեությանը և անկախությանը միջամտելու ինտենսիվությունը հավասարակշռելու նկատառումներից ելնելով պետք է բաղդատված լինեն և չկենտրոնացվեն նույն սուբյեկտի լիազորությունների տիրույթում:

Այս գործընթացում ներգրավված սուբյեկտներից ԲԴԽ-ի համապատասխան լիազորությունը որոշակիորեն սահմանված է Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում, համաձայն որի՝ Բարձրագույն դատական խորհուրդը լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումներ/հաղորդումներ ներկայացնելու, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման հարցն օրենսդրի լայն հայեցողության շրջանակներում է, որի սահմաններն ուրվագծվում են ինչպես Սահմանադրությամբ ամրագրված վերաբերելի հիմնարար սկզբունքներով, այնպես էլ դրանց բովանդակության բացահայտմանն ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշումներով:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վիճարկվող նորմերով նախատեսվող կարգավորումները Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են նաև այն առումով, որ կոնկրետ դատական գործի քննությունն իրականացնող դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումը կարող է ԲԴԽ ներկայացնել այդ գործով դատավարության մասնակիցներից որևէ մեկը նույնիսկ այն ժամանակահատվածում, երբ տվյալ գործի քննությունը դեռ ընթացքի մեջ է: Այլ կերպ, առավելապես համընկնող ժամանակահատվածի ընթացքում տեղի ունեցող դատավարություններից մեկով (ԲԴԽ-ում) դատավորը հանդես է գալու պատասխանողի կարգավիճակում այն անձի դիմումի հիման վրա հարուց-

ված վարույթով, որի մասնակցությամբ մյուս գործով նա հանդիսանում է որպես գործը քննող դատավոր: Տվյալ դեպքում երկրորդ գործի մասով ուղղակիորեն խաթարվելու է այդ գործով դատավորի անաչառության և անկախության վերաբերյալ վստահությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարության կողմերին՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ նախաձեռնելու համար լրացուցիչ հնարավորություններ նախատեսելն ինքնին խնդրահարույց չէ, պայմանով, որ կնխատեսվեն անհրաժեշտ և բավարար օրենսդրական կառուցակարգեր, ապահովվելու համար, որպեսզի չխաթարվեն դատարանների և դատավորների անկախության հիմնարար սկզբունքները, որն է կերպ չի միջամտվի այլոց արդար դատաքննության հիմնական իրավունքի իրացմանը, կասկածի տակ չի դրվի դատավորի և դատարանի բարձր հեղինակությունը և մասնագիտական ձեռնահասությունը և հաշվի կառնվեն, այդ թվում՝ սույն որոշմամբ արտահայտված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ կանոնակարգումներում սահմանված պաշտպանական լրացուցիչ երաշխիքները դատավորին տրամադրված ոչ թե արտոնություն է, այլ հանրային և, առաջին հերթին՝ արդարադատության շահերի պաշտպանության միջոց, նրանց անկախության ինստիտուցիոնալ երաշխիք:

Ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթներով առաջարկվող կարգավորումները համահունչ չեն Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հետ:

**4.2.2.** Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդն իր՝ 2002 թվականի թիվ 3 կարծիքի մեջ (ENCJ: Minimum Judicial Standards V – Disciplinary proceedings and liability of judges, Report 2014-2015) նշել է, որ դատավորի սխալից կամ դատավորի ոչ իրավաչափ գործողություններից տուժած անձինք պետք է դատավորի դեմ բողոք ներկայացնելու իրավունք ունենան, ինչն էլ կարող է հանգեցնել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման: Ինչպես այն դեպքերում, երբ բողոք են ներկայացնում դատավարության մասնակիցները, այնպես էլ այն դեպքերում, երբ բողոք են ներկայացնում այն անձինք, որոնք անմիջականորեն չեն տուժել դատավորի գործողություններից (այդ թվում՝ անանուն բողոք ներկայացնողները),

պետք է սահմանվեն բողոքների գտման, ֆիլտրացման մեխանիզմներ: Միաժամանակ, բողոք ներկայացնելու իրավունքը չի նշանակում, որ անձը կարող է պարտադիր կերպով կարգապահական վարույթ հարուցելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց բարձրացնել: Վերը նշված գտման մեխանիզմն առավելապես ուղղված է նրան, որ խուսափեն այնպիսի իրավիճակներից, որ դատավորը ներքաշվի կարգապահական գործընթացների մեջ և որքան հնարավոր է արագ մերժվեն չհիմնավորված, ակնհայտ անհիմն բողոքները:

Ըստ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացը բավականաչափ կերպով պետք է իրավական կարգավորման ենթարկված լինի: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր պետություն պետք է նախատեսի իրավասու անձ կամ մարմին, որը պատասխանատու է բողոքների ընդունման, դրանց վերաբերյալ դատավորի դիրքորոշումը լսելու համար, և դրանց լույսի ներքո որոշի կարգապահական վարույթ հարուցելու հարցը, որի դեպքում հարցը փոխանցվում է կարգապահական մարմին:

Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը նշել է նաև, որ մի կողմից դատավորի դեմ ներկայացված բողոքները ստանալու, կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը, մյուս կողմից՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը պետք է իրականացվեն առանձին մարմինների կողմից (դատավորների խորհրդի տարբեր ստորաբաժանում կամ տարբեր մարմինների կողմից)<sup>1</sup>, սակայն դա չի նշանակում, որ պետք է անպայման այս գործառնությունները կատարվեն առանձին հաստատությունների կողմից, կարևոր է, որ անդամը, ով սկզբնական փուլում հանդես է գալիս որպես մեղադրող, հետո արդեն դատաքննության փուլում հանդես չգա որպես դատավոր<sup>2</sup>:

Կիևյան հանձնարարականների համաձայն, որպես կանոն, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնող մարմինները չպետք է նույնը լինեն՝ երաշխավորելու համար վերջինիս անկախությունը: Այս հարցի շուրջ համանման մոտեցում ունի նաև Վենետիկի հանձնաժողովը՝ միաժամանակ մեկ վերապահումով, որը հանգում

<sup>1</sup> Consultative Council of European Judges, Opinion No. 10 (2007) on Council for the Judiciary in the service of society, para. 64. See also Kyiv Recommendations, para. 26.

<sup>2</sup> Report of the Special Rapporteur on the independence of judges and lawyers, A/75/150, 17.06.2020, para 28.

է նրան, որ եթե առանձին մարմին չի ստեղծվում, ապա պետք է ապահովել, որ այդ մարմնի այն անդամները, որոնք ներգրավված են եղել կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում (մեղադրողի, հետաքննողի դերում), դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացին չմասնակցեն (հանդես չգան որպես դատարան)<sup>1</sup>:

Եվրոպական դատարանը գործերից մեկով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն պատճառով, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկող (վերջնական որոշում կայացնող) մարմինը նույնն է եղել կամ առնվազն նույն դատավորներն են եղել այն պատճառաբանությամբ, որ դա այդ մարմնի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կարող է առաջացնել<sup>2</sup>: Ընդ որում, այս սկզբունքը, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում ներգրավված անձը չի կարող մասնակցել կարգապահական պատասխանատվության որոշման գործընթացին, ամրագրված է մի շարք եվրոպական երկրների օրենսդրությամբ<sup>3</sup>:

**4.3.** «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի առնչությամբ դիմողն առանձին հիմնավորումներ չի ներկայացնում: Տվյալ օրենքում լրացումների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջիններս վերաբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ԲԴԽ դիմումներ ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի դրույթաչափերին և վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին, ուստի, փոխկապակցված են սույն որոշման 4.3-րդ կետում ներկայացված դիրքորոշումների հետ:

**4.4.** Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել ավելի խիստով: Դիմողի կարծիքով օրենսդիրը դիտարկում է խափանման միջոցը որպես մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու համար պատիժ, ինչպես նաև

<sup>1</sup> Venice Commission Opinion on the Laws on Disciplinary Liability and Evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, CDL-AD(2015)042, 21 December 2015, para 78.

<sup>2</sup> ECtHR, Kamenos v. Cyprus, application no. 147/07, judgment of 31 October 2017, para 102-110.

<sup>3</sup> See, Note on international standards and good practices of disciplinary proceedings against judges, OSCE ODIHR, Opinion-Nr.: JUD-KAZ/341/2018, 27.12.2018, footnote 52.

Օրենքով հստակեցված չէ, թե որ պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը, հստակորեն բացահայտված չէ «պարտականությունները չարամտորեն չկատարել» եզրույթը և այն, թե ինչպես են որոշվելու պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը:

Սահմանադրական դատարանը հայտնում է, նախ՝ քրեական պատիժը կարող է հանդես գալ միայն որպես քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոց, երկրորդ՝ այն պետք է ամրագրվի միայն քրեական և ոչ թե քրեական դատավարության օրենսգրքում: Հետևաբար, Օրենքով վիճարկվող դրույթը չի կարող դիտարկվել իբրև պատիժ՝ քրեաիրավական իմաստով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, քանի որ մեղադրյալի կողմից իր պարտականությունների չարամտորեն չկատարումը պետք է դիտարկվի ոչ թե որպես խափանման միջոցի կիրառման ինքնուրույն հիմք (որի պարագայում կիրառվող քրեադատավարական խափանման միջոցը կվերածվի միայն քրեադատավարական պատասխանատվության միջոցի՝ կորցնելով իր նպատակային նշանակությունը և որպես հետևանք՝ մեխանիկորեն (ինքնաբերաբար) առաջ կբերի խափանման միջոցի կիրառում (փոփոխում)), այլ խափանման միջոցի օրենքով արդեն իսկ սահմանված (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված) հիմքերի համատեքստում՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի և դրա Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով բացահայտված բովանդակության սահմաններում: Այսպիսի մոտեցման պարագայում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինքնաբերաբար լուծվում են դիմողի կողմից բարձրացվող այն մտահոգությունները, թե որ պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը, և թե ինչպես են որոշվելու պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը:

Ինչ վերաբերում է դիմողի այն դիտարկմանը, թե Օրենքի 1-ին հոդվածում ձևակերպված «պարտականությունները չարամտորեն չկատարել» արտահայտության օգտագործումն ինքնին կարող է խնդրահարույց լինել Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում, ապա այս առումով, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թեև «չարամտորեն» եզրույթի օգտագործումը

վարույթն իրականացնող մարմնին «չարամտությունը» գնահատելու հնարավորություն է ընձեռում, սակայն, դրանից չի կարելի բխեցնել, որ «չարամտորեն» եզրույթի օգտագործումն ինքին խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից:

Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ, Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 և 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սույն գործով կրկին ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում (05.04.2011թ. ՍԴՈ-947): «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (03.05.2016թ. ՍԴՈ-1270, 15.11.2019թ. ՍԴՈ-1488): Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ նշել է նաև, որ հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը:

Վերոշարադրյալի հիման վրա, Սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելուն վերաբերող, Օրենքով նախատեսված կարգավորումները բավարարում են որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի պահանջներին:

4.5. Օրենքով նախատեսվում է որպես դատավարական սանկցիա կիրառել որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը, ըստ որի որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումն անձի կողմից իր դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում դատարանի որոշմամբ դրանց իրականացման պայմանների սահմանումն է (Օրենքի 2 և 3-րդ հոդվածներ): Այս կարգավորումը դիտարկելով համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջների համապատասխանության տեսանկյունից Սահմանադրական դատարանը հայտնում է ներքոշարադրյալը.

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սահմանադրական սկզբունքին, որի համաձայն հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանի այս առնչությամբ տարբեր ժամանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները մանրամասն վերլուծության են ենթարկվել ՄԴՈ-1546 որոշման մեջ, որտեղ Սահմանադրական դատարանն արձանագրել է.

- «... Սահմանադրական դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (expressis verbis):»

- «Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն»:

- «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ

օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը՝ վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա»:

Այս լույսի ներքո գնահատելով Օրենքի 2 և 3-րդ հոդվածով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակում» դատական սանկցիայի ներդրմամբ հետապնդվող նպատակը, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքով հետապնդվում է իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել դատական նիստի բնականոն ընթացքը, որով իսկ նպաստավոր պայմաններ են ստեղծվում վարույթի մասնակիցների Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ դրա բաղադրատարր՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ապահովելու համար:

Օրենսդիրը նախանշված նպատակին հասնելու համար ընտրել է պիտանի միջոց՝ որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակում (այդ իրավունքների իրականացման ժամանակային կամ քանակական պայմանների սահմանման ձևով), որով հնարավոր է հասնել հետապնդվող նպատակին և ապահովել դատական նիստի բնականոն ընթացքը (այդպիսով իսկ՝ վարույթի մասնակիցների արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ դրա բաղադրատարր՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա մի շարք դրույթներ, թեև վարույթի մասնակիցների (մասնավոր մասնակիցների) կողմից իրենց իրավունքների չարաշահմամբ դատավարությունն անհարկի ձգձգումներից կանխելու երաշխիք են (և հետևաբար կարող են դիտարկվել նաև դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու միջոցներ), այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա միջոցները բավարար չեն



նախանշված նպատակին նույն արդյունավետությամբ հասնելու համար: Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կարգավորումներով առկա չեն սահմանափակումներ քրեական գործին կցելու և հետագոտելու համար նյութեր ներկայացնելու, ելույթներ ունենալու և մի շարք այլ հարցերի առումներով, որոնք կարող են վարույթի բնականոն ընթացքի վրա էական ազդեցություն ունենալ վերջինիս անհարկի, չհիմնավորված ձգձգումների առումով: Հետևաբար, օրենսդրի կողմից ընտրված միջոցը՝ Օրենքով ներդրվող դատական սանկցիան, պետք է գնահատել իբրև անհրաժեշտ միջոց ընտրված նպատակին հասնելու համար, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա մյուս վերը մեջբերված առավել մեղմ միջոցները չունենան նախանշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ օրենսդրի կողմից ընտրված միջոցը համարժեք է սահմանափակվող իրավունքին: Մասնավորապես՝ Օրենքով ներդրվող սանկցիայով ոչ թե անձը զրկվում է իր Օրենքի 3-րդ հոդվածի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվող 314.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքներից ընդհանրապես, այլ Օրենքով նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվող 314.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքների որոշակի ժամանակային կամ քանակական սահմանափակման հնարավորություն: Հետևաբար, այդ սահմանափակումներից «դուրս» անձը կարող է իրացնել իր իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը հայտնում է, որ անձի կողմից իր դատավարական իրավունքների չարաշահման դեպքում որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը՝ որպես դատավարական սանկցիա կիրառելը, համապատասխանում է համաչափության սահմանադրաիրավական սկզբունքի պահանջներին:

**4.6.** Դիտարկելով Օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումները իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից՝ հայտնում է հետևյալը.

Էլնելով այն հանգամանքից, որ Օրենքով նախատեսվող «որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակում» դատական սանկցիան կարող է անձի նկատմամբ կիրառվել, (1) երբ անձն իր դատավարական իրավունքները պարբերաբար չարաշահում է, (2) դատարանի որոշմամբ, ապա էլնելով նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրա-

կան օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դրույթներից, ըստ որոնց, դատավորն անհրաժեշտության դեպքում հասկանալի ձևով նախազգուշացնում է դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, ինչպես նաև պարզաբանում դատական սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները, ապա, Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող օրենսդրությամբ առկա են նաև այն երաշխիքները, որոնք ապահովում են դատական սանկցիայի քննարկվող դեպքում «որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակում» դատական սանկցիայի կիրառման կանխատեսելիությունն իրավունքի չարաշահում թույլ տվող անձի համար:

Ինչ վերաբերում է դիմողի այն դիտարկմանը, թե լրացումներով «...հստակեցված չեն չափորոշիչները, որոնք պետք է կիրառվեն որոշելու, թե որն է իրավունքի չարաշահումը», ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրությամբ դատավարական իրավունքների չարաշահում ներկայումս էլ (անգամ առանց Օրենքով նախատեսվող լրացումների) դիտարկվում է իբրև դատական սանկցիա կիրառելու հիմք («Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), իսկ դատարանները նշված հիմքի առկայությունը գնահատելիս, ելնում են ինչպես արդեն իսկ դատական պրակտիկայով ձևավորված, այնպես էլ իրավունքի դոկտրինում տեղ գտած «իրավունքի չարաշահման» հասկացության հատկանիշներից:

Ավելին, Սահմանադրական դատարանը սույն թվականի փետրվարի 12-ի ՍԴՈ-1576 որոշմամբ բացահայտել է հենց դիմողի կողմից բարձրացվող այն «չափորոշիչները», որոնց առկայությամբ արարքը կարող է գնահատվել որպես իրավունքի չարաշահում: Մասնավորապես, նշված որոշմամբ հիմք ընդունելով իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումները՝ արձանագրել է.

«Իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը.

1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը,
2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան,
3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողություններն հանգեցնում

են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձն ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին,

4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին:

Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, երբ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը կամ տվյալ դեպքում՝ ամուսնության իրավունքի նպատակին և ոգուն հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը»:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքում «իրավունքի չարաշահում» հասկացության և հատկանիշների բացահայտված չլինելն ինքն չի կարող գնահատվել իբրև խնդրահարույց իրավական որոշակիության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը հայտնում է, որ սույն որոշման 4.5-րդ կետում արված եզրահանգումներն ամբողջությամբ վերաբերելի են նաև դիմողի կողմից բարձրացվող «պարբերաբար» եզրույթի որոշակիության առնչությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 73-րդ հոդվածները Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 19-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և հարակից՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքները «Հայաստանի Հանրապետության դատական

օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 2-րդ, 9-19-րդ հոդվածների, 20-րդ հոդվածի 2 և 4-րդ մասերի, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի մասով ճանաչել Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասին հակասող:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

12 հոկտեմբերի 2021 թվականի  
ՄԴՈ-1613



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2021 թվականի սեպտեմբերի 13-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 19 հոկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
Կառավարության ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Ա. Ֆիդանյանի,  
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021  
101

տարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի հուլիսի 22-ի N 1175-Ս որոշմամբ 2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի հուլիսի 28-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի հուլիսի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագիրը (այ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

սուիետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման հարցերում համագործակցության զարգացման նպատակով:

**2.** Համաձայնագրի առարկան է էլեկտրոնային տարբերակով տեղեկատվական փոխգործակցության կազմակերպումը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գործող միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնց կատարման համար իրավասու մարմիններ են սահմանվել Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարությունը:

Վերոհիշյալ իրավասու մարմինները որոշում են տեղեկատվական փոխգործակցության ապահովման համար լիազորված ստորաբաժանումների ցանկը և այդ մասին տեղեկացնում միմյանց (Հոդված 2, պարբերություն 4):

Կողմերի իրավասու մարմինների տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվելու է Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված տեխնիկական արձանագրությունների հիման վրա, ինչպես նաև Կողմ պետությունների ազգային օրենսդրությանը և կողմերի մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերին համապատասխան:

Համաձայնագրի շրջանակներում չի իրականացվում Կողմ պետությունների պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փոխանակում:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն իրականացնի էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակում՝ օգտագործելով տեղեկատվական համակարգեր, ծրագրային տեխնիկական միջոցներ, և (կամ) Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնին տրամադրի հասանելիություն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի վարույթում գտնվող տեղեկատվական համակարգերի ռեսուրսներին (այսուհետ՝ տեղեկատվական համակարգեր) (Հոդված 1, պարբերություն 3),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն աջակցի տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվության անվտանգության, ամբողջականության և հավաստիության ապահովմանը (Հոդված 1, պարբերություն 4),

- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կորոշի տեղեկատվական փոխգործակցության ապահովման համար լիազորված ստորաբաժանումները և կտեղեկացնի Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինն Հայաստանի Հանրապետության լիազորված ստորաբաժանումների ցանկի մասին (Հոդված 2, պարբերություն 4),

- ապահովել, որ Համաձայնագրի դրույթների իրականացման համար Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի լիազորված ստորաբաժանումները Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնի լիազորված ստորաբաժանումների հետ մշակեն տեղեկատվական և տեխնոլոգիական փոխգործակցության տեխնիկական արձանագրություններ, որտեղ կսահմանվեն տեղեկատվության փոխանակման նպատակները, տեղեկատվության պաշտպանության կարգը, էլեկտրոնային եղանակով փոխանցվող և ստացվող տեղեկությունների ցանկը, ժամկետները, տեխնոլոգիան, դրանց փոխանցման, պահպանման և ոչնչացման կարգը, տեխնիկական միջոցների տեղադրման, կապուղիների շահագործման հանձնման և դրանց սպասարկման ժամանակացույցը (Հոդված 3, պարբերություններ 1 և 2),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնին էլեկտրոնային եղանակով տրամադրի և ստանա իր վարույթում առկա տեղեկատվությունը, և/կամ համաձայն տեխնիկական արձանագրությունների՝ տեղեկատվական համակարգերի ռեսուրսների անհատույց հասանելիությունը՝ իրենց կողմից համաձայնեցված ծավալով, ինչպես նաև ամրագրի տեղեկատվության տրամադրումը, ձեռքբերումը և ոչնչացումը (Հոդված 4, պարբերություն 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն ամրագրի Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնի հասանելիությունն իր տեղեկատվական համակարգերի ռեսուրսներին (Հոդված 4, պարբերություն 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն ապահովի Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերվող տեղեկատվության անվտանգությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների և այն միջազ-



գային պայմանագրերի, որոնց մասնակից է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (Հոդված 4, պարբերություն 1),

- երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից կօգտագործվի բացառապես ծառայողական նպատակներով և առանց տեղեկատվությունը տրամադրած Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնի նախնական գրավոր համաձայնության՝ չի փոխանցվի երրորդ կողմին (Հոդված 4, պարբերություն 1),

- երաշխավորել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տեղեկատվական անվտանգության պահանջների և տեղեկատվական համակարգերում աշխատանքի կանոնների պահպանումը (Հոդված 4, պարբերություն 1),

- ապահովել, որ անդրսահմանային կապուղիներով փոխանցվող տեղեկատվության պաշտպանությունն իրականացվի տեղեկատվական փոխգործակցության տեխնիկական արձանագրություններին համապատասխան, երաշխավորելով, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կապահովի տրամադրվող տեղեկատվության ամբողջականությունը, հավաստիությունը և արդիականությունը (Հոդված 4, պարբերություններ 3 և 4),

- ապահովել, որ տեղեկատվական համակարգերը վարող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տեղեկատվության պահպանումը և ոչնչացումն իրականացվի տեխնիկական արձանագրություններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան, այդ թվում նաև Համաձայնագրի գործունեության դադարեցումից հետո (Հոդված 5),

- ինքնուրույն կրել Համաձայնագրի իրականացմանն ուղղված ծախսերը (Հոդված 7):

**4.** Համաձայն Համաձայնագրի 6-րդ հոդվածի՝ տեղեկատվական անվտանգության պահանջների և տեղեկատվական համակարգերում աշխատանքի կանոնների խախտումներ հայտնաբերելու դեպքերում, տեղեկատվություն տրամադրող Կողմ պետության իրավասու մարմինն իրավունք ունի դադարեցնել տեղեկատվությունը ստացող Կողմ պետության իրավասու մարմնի հասանելիությունը տեղեկատվական համակարգերին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին

և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. 2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 հոկտեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1614



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 13-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
19-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1614 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

ցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հոկտեմբերի 19-ի ՄԴՈ-1614 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 19-ի ՄԴՈ-1614 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում էմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1614 որոշմամբ 2021 թվականի մայիսի 13-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության ներ-

քին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարու-

<sup>1</sup> Համանուն իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի

իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանն ղիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտու-

թյան մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարա-



վորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Մահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Մահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Մահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Մահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Մահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Մահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Մահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Մահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Մահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Մահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Մահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Մահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Մահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրա-

դառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ) պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում ան-

հասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Մահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ սվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Մահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

19 հոկտեմբերի 2021 թվականի



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ  
ԶԿԱՆՈՆԱԿԱՐԳՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԻ ԵՎ ՏՎՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հոկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1335-Ա որոշմամբ հավանություն է տվել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը ՀՀ կառավարության՝ 2021 թվականի օգոստոսի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է Մոսկվայում 2020 թվականի փետրվարի 3-ին՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում միասնական ցանկում չընդգրկված, ինչպես նաև միասնական ցանկում ընդգրկված, սակայն դրանց կապակցությամբ տեխնիկական կանոնակարգեր չընդունված արտադրանքի շրջանառության կար-

գր և անվտանգության ապահովման կանոնները սահմանելու նպատակով<sup>1</sup>:

Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:

2. Համաձայնագրով սահմանվում են Միության շրջանակներում այն արտադրանքի շրջանառության կարգը և անվտանգության ապահովման կանոնները, որն ընդգրկված չէ արտադրանքի միասնական ցանկում, որի նկատմամբ Միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ (այսուհետ՝ միասնական ցանկ), ինչպես նաև այն արտադրանքի շրջանառության կարգը և անվտանգության ապահովման կանոնները, որն ընդգրկված է միասնական ցանկում, որի մասով, սակայն, Միության տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել կամ ուժի մեջ չեն մտել բացառությամբ Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված արտադրանքի:

Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դրա դրույթները չեն կիրառվում, մասնավորապես՝ պաշտպանության և անվտանգության շահերի ապահովման համար, այդ թվում՝ պետական պաշտպանական պատվերով մատակարարվող, պաշտպանական արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կազմող կամ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան պահպանվող, սահմանափակ հասանելիություն ունեցող այլ տեղեկատվության շարքին դասվող տեղեկությունների պաշտպանության նպատակներով օգտագործվող արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), այն արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), որի վերաբերյալ տեղեկությունները պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) են կազմում, այն արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) և օբյեկտների, որոնց համար սահմանվում են ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում ան-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միացել է «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրով, որը ՀՀ կողմից վավերացվել է Ազգային Ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ (ՄԴՈ-1175):



վտանգության ապահովման հետ կապված պահանջներ, ինչպես նաև նշված արտադրանքի և օբյեկտների նախագծման (ներառյալ հետազննությունը), կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման, ուտիլիզացման, թաղման գործընթացների, ինչպես նաև օգտագործված արտադրանքի, դեղամիջոցների, բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) նկատմամբ:

Համաձայնագիրը չի տարածվում սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցների կիրառման հետ կապված իրավահարաբերությունների վրա:

**3.** Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի անվտանգությունն ապահովվում է իրավաբանական անձանց կամ որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված ֆիզիկական անձանց, նրանց լիազորված ներկայացուցիչների, այդ թվում՝ արտադրողների, արտադրողների կողմից լիազորված անձանց ու արտադրանքի արտադրությունը և (կամ) իրացումն իրականացնող ներմուծողների կողմից արտադրանքի կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում (նախագծման (ներառյալ հետազննությունը), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահպանման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման ժամանակ), անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան հաշվի առնելով Համաձայնագիրը:

Վտանգավոր արտադրանքը Միության շրջանակներում շրջանառության մեջ դնելու և դրա շրջանառության համար պատասխանատվությունը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրության համապատասխան:

**4.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխարարձության հիման վրա, ստանձնում է մասնավորապես հետևյալ պարտավորությունները.

ա) ապահովել, որ Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի մշակման (նախագծման) դեպքում կիրառվեն տեխնիկական այնպիսի լուծումներ, որոնք թույլ են տալիս սահմանել արտադրանքի անվտանգությունն ապահովող հատկությունները (ցուցանիշները, բնութագրերը), անհրաժեշտության դեպքում նախատեսվեն հնարավոր ռիսկերից պաշտպանություն ապահովող

անվտանգության համակարգեր (տարրեր), և (կամ) ներկայացվեն արտադրանքի շահագործման (օգտագործման, կիրառման) անվտանգ պայմանների մասին տեղեկություններ, այդ թվում՝ առանձնապես խոցելի սպառողների առանձին կատեգորիաների համար, որոնց համար այդ արտադրանքի շահագործումը (օգտագործումը, կիրառումը) կարող է ռիսկ պարունակել (Հոդված 4, կետ 1),

բ) ապահովել Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի արտադրության դեպքում անվտանգության կանոնների (ցուցանիշների, բնութագրերի) կայունությունը այդ արտադրանքի մշակման (նախագծման) ժամանակ սահմանված մակարդակով (Հոդված 4, կետ 2),

գ) ապահովել Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի Միության շրջանակներում շրջանառության դեպքում արտադրանքի անվտանգության կանոնների (ցուցանիշների, բնութագրերի) պահպանումը այդ արտադրանքի մշակման (նախագծման) և արտադրման ժամանակ սահմանված մակարդակով՝ հաշվի առնելով պիտանելիության ժամկետը (ծառայության ժամկետը) (Հոդված 4, կետ 3),

դ) ապահովել, որ միասնական ցանկում չընդգրկված արտադրանքի, ինչպես նաև միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով, որի նկատմամբ ՀՀ օրենսդրության համապատասխան անվտանգության պարտադիր պահանջներ սահմանված չեն, արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը) հիմք ընդունի արտադրանքի բնութագրերի հաշվարկման անհրաժեշտությունը (ներառյալ դրա բաղադրությունը), փաթեթվածքին ներկայացվող պահանջները, դրա շահագործման (օգտագործման, կիրառման) հրահանգի (ձեռնարկի) և, անհրաժեշտության դեպքում, դրա մոնտաժման, գործարկման, կարգավորման, և փորձարարական գործարկման հրահանգի առկայությունը, տվյալ արտադրանքն այլ արտադրանքի հետ համատեղ օգտագործելու հնարավորության մասին տեղեկատվության կամ հիմնավորված ենթադրությունների առկայության դեպքում՝ այլ արտադրանքի վրա տվյալ արտադրանքի ազդեցության մասին տեղեկությունները (Հոդված 5, կետ 1, ենթակետեր «ա», «բ»),

ե) ապահովել, որ միասնական ցանկում չընդգրկված արտադրանքի, ինչպես նաև միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով, որի

նկատմամբ ՀՀ օրենսդրության համապատասխան անվտանգության պարտադիր պահանջներ սահմանված չեն, արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը) հիմք ընդունի ձեռք բերողին (սպառողին) արտադրանքի և դրա մակնշման մասին տեղեկություններ, ինչպես նաև դրա շահագործման (օգտագործման, կիրառման), ուտիլիզացման վերաբերյալ հրահանգ և (կամ) այլ ցուցումներ տրամադրելու, այդ թվում՝ տվյալ արտադրանքի վերաբերյալ այլ տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը (ներառյալ առանձին դեպքերում պիտանելիության ժամկետում (ծառայության ժամկետում) դրա օգտագործման վերաբերյալ ուղեցույցները և (կամ) սահմանափակումները, ինչպես նաև հնարավոր այն ռիսկերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք կարող են պարունակել արտադրանքի մոնտաժը, կարգաբերումը, շահագործումը (օգտագործումը, կիրառումը)) և, անհրաժեշտության դեպքում, այդ ռիսկերի վերացման ուղիները, արտադրանքը ոչ ըստ նշանակության կիրառելու հնարավորության մասին հիմնավորված ենթադրությունները, երբ այդ կիրառումը կարող է ռիսկ պարունակել, ինչպես նաև սպառողների առանձին կատեգորիաների (երեխաների, հղի կանանց, կերակրող մայրերի, հաշմանդամների) կողմից արտադրանքի շահագործման (օգտագործման, կիրառման) մասին տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը (Հոդված 5, կետ 1, ենթակետեր «գ», «դ», «ե»),

զ) երաշխավորել, որ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը) կապահովի Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի անվտանգությունը, դրա համապատասխանությունը մակնշման մեջ հայտարարված հատկություններին և արտադրողի կողմից ձեռք բերողին (սպառողին) տրամադրված հիմնական սպառողական հատկությունների և արտադրանքի անվտանգության վերաբերյալ տեղեկություններին (արտադրողի կողմից սահմանված արտադրանքի պիտանելիության ժամկետի (ծառայության ժամկետի) ընթացքում արտադրողի կողմից սահմանված շահագործման (օգտագործման, կիրառման) վերաբերյալ ուղեցույցները (նշումները) և (կամ) սահմանափակումները պահպանելու պայմանով) (Հոդված 5, կետ 2),

ե) ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի շահագործման (օգտագործման, կիրառման) անվտանգությունն ապահովվելու, դա պահպանելու, փոխադրելու և ուտիլիզացնելու նպատակներով վաճառողը (ներմուծողը) պահպա-

նի արտադրողի կողմից սահմանված պայմանները և ձեռք բերողին (սպառողին) տեղեկացնի դրանց մասին, այդ թվում՝ արտադրանքն ուղեկցող փաստաթղթերում, դրա մակնշման մեջ դրանք ներառելու միջոցով կամ այլ եղանակով (Հոդված 5, կետ 4),

ը) ուղարկել Եվրասիական տնտեսական հանձնաժողով Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված արտադրանքի նկատմամբ անվտանգության պարտադիր պահանջների, նշված պահանջներին այդ արտադրանքի համապատասխանության գնահատման ձևերի մասին, ինչպես նաև այդ արտադրանքի (նշելով այդ արտադրանքի անվանումները և անվտանգության պարտադիր պահանջներ սահմանող փաստաթղթերը) համապատասխանության գնահատում իրականացնող մարմինների մասին տեղեկությունները (Հոդված 6, կետ 2, պարբերություն 1),

թ) տեղեկացնել Անդամ պետություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի համար շրջանառության մեջ դնելու կանոնների և անվտանգության պարտադիր պահանջների սահմանման մասին, որի մասով Միության տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել կամ ուժի մեջ չեն մտել, ոչ ուշ, քան նշված նորմերն ուժի մեջ մտնելու օրվանից 180 օրացուցային օր առաջ (Հոդված 6, կետ 3),

ժ) միասնական ցանկում չընդգրկված արտադրանքի, ինչպես նաև միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով, որի մասով, սակայն, Միության տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել կամ ուժի մեջ չեն մտել և ՀՀ օրենսդրությանը համապատասխան անվտանգության պարտադիր պահանջներ չեն սահմանվել, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, վտանգավոր արտադրանքի հայտնաբերման դեպքում միջոցներ կիրառել դրա շրջանառության հետ կապված վնաս հասցնելը կանխելու ուղղությամբ (այդ թվում՝ վտանգավոր արտադրանքն առգրավելու և հետ կանչելու ուղղությամբ) (Հոդված 7, կետ 1),

ի) ապահովել արտադրանքի անվտանգության մշտադիտարկման անցկացումը, այդ թվում՝ իրականացնելով վտանգավոր արտադրանքի շրջանառության հետ կապված վնաս հասցնելու հայտնաբերված դեպքերի և մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի և (կամ) առողջության վրա բացասաբար անդրադառնալու և (կամ) դրանց վնաս հասցնելու ռիսկի աստիճանի վերաբերյալ տեղեկու-

թյունների հավաքում ու վերլուծություն՝ ՀՀ օրենսդրության համապատասխան (Հոդված 7, կետ 2, պարբերություն 1):

5. Անդամ պետությունների միջև սույն Համաձայնագրի կիրառման և (կամ) մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով սահմանված կարգով:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 հոկտեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1615



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ  
ՉԿԱՆՈՆԱԿԱՐԳՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԻ ԵՎ ՏՎՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1615 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՍԴՈ-1615 որոշմամբ որոշել է, որ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

քի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՍԴՈ-1615 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրավերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1615 որոշմամբ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգվող արտադրանքի շրջանառության կարգի և տվյալ արտադրանքի անվտանգության ապահովման կանոնների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չէմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված

<sup>1</sup> Համանուն իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:



**Էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարան

նում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանն դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանը

րանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանի դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանի դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանի դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանի դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանի դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանի դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակեր-

պությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ), ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն**՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինեք արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դի-

**մողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանա-*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

լու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

28 հոկտեմբերի 2021 թվականի





ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ  
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 նոյեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի՝ Հանրապետության նախագահի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Զուլհալյանի, Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

թյան և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը (ՀՕ-195-Ն, այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին:

Օրենքի «Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ»:

Օրենքի վիճարկվող դրույթը՝ 40-րդ հոդվածի 3-րդ մասը, Օրենքում լրացվել է 2018 թվականի հունիսի 21-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 9-ին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-344-Ն օրենքով: Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը հղում է կատարում Օրենքի 35.1-ին հոդվածին, որը նույնպես Օրենքում լրացվել է վերը նշված ՀՕ-344-Ն օրենքով:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2021 թվականի մարտի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի բացատրությունը, վերլուծելով Սահմանադրության համապատասխան իրավակարգավորումները և վիճարկվող ու օրենսդրության վերաբերելի այլ դրույթներ, ինչպես նաև գործում առկա մյուս նյութերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողի պնդմամբ՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասն առ-

երևույթ հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 57-րդ հոդվածի 2-րդ մասին, իսկ իրավա-կիրառ պրակտիկայում որոշակի մեկնաբանության հետևանքով նաև Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին:

Դիմողն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է պայմանագրային զինձառայողին զինվորական պաշտոնից ազատելու դեպքերը (հիմքերը), մինչդեռ հիշյալ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում այն լրացվել է վիճահարույց 3-րդ մասով, որի համաձայն, ըստ դիմողի «Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել սոսկ քաղաքական հայեցողությամբ առանց պաշտոնից ազատման Օրենքով սահմանված հիմքերի առկայության»:

Վկայակոչելով Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը և 79-րդ հոդվածը դիմողը նշում է, որ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը պետք է սահմանված լինեն օրենքով, քանզի որոշակի իրավական հետևանքի վրա հասնելու համար անհրաժեշտ է համապատասխան փաստակազմի առկայություն, որը կարող է լինել և՛ կոնկրետ դեպքերի փաստի տեսքով, և՛ որոշակի պայմանների առկայության դեպքում՝ հայեցողական, սակայն այդպիսի փաստակազմը պետք է համապատասխանի Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին:

Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմն իրավական և մեկնաբանության չափանիշների տեսանկյունից հակասում է Սահմանադրությամբ սահմանված որոշակիության սկզբունքի պահանջներին և չի կարող մեկնաբանվել որպես «օրենքով նախատեսված դեպք», քանի որ տվյալ դրույթով նախատեսվում է օրենքով սահմանված դեպքերի բացակայության պարագայում կամայական որոշմամբ պաշտոնից ազատելու հնարավորություն առանց որևէ փաստակազմի կամ պայմանների վրա հասնելու անհրաժեշտության շարադրման:

Դիմողի կարծիքով աշխատանքից ազատման հիմքերն օրենքով նախատեսված լինելու պայմանը բխում է նաև Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից, մինչդեռ վիճարկվող դրույթում անտեսվել են Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 57-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերա-

տիվ պահանջները, ինչպես նաև 79-րդ հոդվածում ամրագրված՝ իրավական որոշակիության սկզբունքի պահանջը:

Հղում կատարելով Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին և «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասին՝ դիմողը նշում է, որ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման ժամկետը, Սահմանադրության համաձայն, պետք է լինի որոշակի, իսկ օրենսդիրը, հստակեցնելով սահմանադրական այս պահանջը, ամրագրել է պաշտոնավարման հնգամյա ժամկետ:

Վերլուծելով Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ դիմողը եզրակացնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքում կիրառելի չէ և այնքանով, որքանով չի սահմանում հստակ բացառություն ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքի համար, խնդրահարույց է նաև Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 133-րդ հոդվածը, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը, Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի 1857-Ն որոշման 1-ին կետը, նշում է, որ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնն ընդգրկվում է զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում, և սահմանադիրը, ի տարբերության Սահմանադրությամբ հիշատակված այլ պաշտոնների, հիշյալ պաշտոնի դեպքում սպառիչ չի ամրագրել այն բոլոր դեպքերը, երբ վերջինիս պաշտոնավարումը դադարում է՝ հնարավորություն ընձեռելով օրենսդիրին նախատեսել նման դեպքերը:

Վերլուծելով վիճարկվող նորմը՝ պատասխանողը գտնում է, որ օրենսդիրն ամրագրել է վարչապետի հայեցողական լիազորությունը Հանրապետության նախագահին առաջարկել զինվորական պաշտոնից ազատել բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին, որպիսի կարգավորումն ամբողջությամբ համահունչ է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ամրագրված «օրենքով սահմանված դեպք» հասկացությանը:

Պատասխանողը պնդում է, որ վիճարկվող օրինադրույթի որոշակիությունը բնավ խնդրահարույց չէ, այն ձևակերպված է հստակ, դրանում չեն օգտագործվում գնահատողական հասկացություններ, որպիսի պայմաններում դիմումում մատնանշված փաստարկներն առարկայագուրկ են:

Անդրադառնալով Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասով և Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումների փոխհարաբերակցությանը՝ պատասխանողը գտնում է, որ պաշտոնյայի՝ որոշակի ժամկետով նշանակվելը դեռևս չի նշանակում, որ նրա պաշտոնավարումը չի կարող դադարել մինչև նշված ժամկետի ավարտը: Սահմանադրությամբ հիշատակվող բոլոր պաշտոնյաների դեպքում Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված են կառուցակարգեր, որոնց կյանքի կոչվելու դեպքում համապատասխան պաշտոնյայի լիազորությունները դադարում են մինչև նրա պաշտոնավարման ժամկետի լրանալը:

Պատասխանողն անհիմն է համարում նաև դիմողի այն պնդումը, որ «...Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասով գլխավոր շտաբի պետի, որպես զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ներկայացուցչի, մասով սահմանվում են հատուկ նորմեր՝ ի համեմատ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմերի»: Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակի նշվում է, որ գլխավոր շտաբի պետը նշանակվում է օրենքով սահմանված ժամկետով, մինչդեռ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով նման կամ որևէ ժամկետի հարց, առհասարակ, չի շոշափվում, հետևաբար՝ տվյալ դեպքում առկա չէ կոլիզիա և, ըստ այդմ, ընդհանուր և հատուկ նորմի հարաբերակցության հարց:

Պատասխանողը նշում է. «...Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը վերաբերում է բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողներին, որոնցից մեկն է գլխավոր շտաբի պետը, հետևաբար՝ նշված նորմում գլխավոր շտաբի պետի ազատման դեպքը որպես բացառություն նշելուց ձեռնպահ մնալն օրենսդրի կամքի արտահայտման արդյունք է գլխավոր շտաբի պետի ազատման դեպքն Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման շրջանակներում ներառելը նաև հանդիսացել է օրենսդրի ուղղակի կամքը»:

Պատասխանողի պնդմամբ՝ հիմնագուրկ են նաև պնդումներն առ այն, որ Հանրապետության նախագահը չունի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու լիազորություն, քանզի նման լիազորությունն ուղղակի իր ամրագրումն է ստացել Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում: Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 155-րդ հոդվածով սահմանվում են զինված ուժերի ենթակայության, դրանց նպատակների, կիրառմանն առնչվող կարգավորումներ, և Հանրապետության նախագահի կողմից գլխավոր շտաբի պետի նշանակման մասին հիշատակումը նշված հոդվածի 3-րդ մասում ամենևին չի նշանակում, որ գլխավոր շտաբի պետի նշանակման և ազատման հարաբերությունները հանդիսանում են Սահմանադրության 155-րդ հոդվածի կարգավորման առարկա:

Պատասխանողն ընդգծում է, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ գլխավոր շտաբի պետին օրենքով նախատեսված ժամկետով նշանակելու կարգավորման ներմուծումը զինված ուժերի քաղաքական հարցերում չեզոքություն պահպանելու երաշխիք է: Հատկանշական է, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադիրը ցանկացել է կոնկրետ պաշտոնյաների համար ստեղծել քաղաքական չեզոքության պահպանման երաշխիքներ, ապա պաշտոնավարման ժամկետը հստակ ամրագրվել է Սահմանադրությամբ: Սույն պարագայում գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատման դեպքերը Սահմանադրությամբ նախատեսված չեն, փոխարենը դրա սահմանումը պատվիրակվել է օրենսդրին, որն էլ սահմանված է «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում: Այս կապակցությամբ պատասխանողը նշում է. «... թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ներկայացուցիչների և մասնավորապես զինված ուժերի անմիջական հրամանատար հանդիսացող գլխավոր շտաբի պետի կողմից քաղաքական չեզոքության պահանջի խախտումը, օրենսդրությամբ նախատեսված վերջինիս նման դեպքում զբաղեցված պաշտոնից կարճ ժամանակահատվածում ազատելու կառուցակարգը բացարձակ անհրաժեշտություն է երկրի անվտանգության ապահովման տեսանկյունից»:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է Հանրապետության նախագահի ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման լիազորության իրացման հիմնախնդրին՝ պայմանավորված այն իրողությամբ, որ դիմողի գնահատ-

մամբ՝ առկա օրենսդրական իրավակարգավորումները բավարար չափով որոշակի, ընկալելի և կանխատեսելի չեն, քանզի չեն ամրագրում հիշյալ պաշտոնատար անձին պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը, իսկ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով, որ գլխավոր շտաբի պետին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը «օրենքով սահմանված ժամկետով», չի նախատեսում պաշտոնավարման այդ ժամկետը չլրացած գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա է համարում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասության Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելով Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 79-րդ հոդվածի, 133-րդ հոդվածի 1-ին մասի և 155-րդ հոդվածի 3-րդ մասի լույսի ներքո:

Սույն գործով վիճարկվող դրույթի՝ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) ո՞րն է սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող Սահմանադրության 14-րդ հոդվածի հիմնարար նշանակությունը պաշտպանության ոլորտի իրավական կարգավորման ինստիտուտների, հատկապես զինված ուժերի ղեկավարման համար,

2) որո՞նք են երկրի պաշտպանության իրականացման առանձնահատկությունները, պաշտպանական ոլորտի կառավարման մակարդակները և զինված ուժերի ու կառավարման սկզբունքները,

3) որո՞նք են զինված ուժերի ղեկավարման, զինվորական ծառայության հայեցակարգային հիմքերն ու յուրահատկությունները, դրանցով պայմանավորված սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները,

4) որո՞նք են զինվորական ծառայության իրավական ինստիտուտի սահմանադրական հիմունքներ հանդիսացող Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթների նորմատիվ բովանդակությունը, դրանց համակարգային և տրամաբանական կապերը,

5) արդյո՞ք վիճարկվող դրույթում առկա է սահմանադրական իմաստով անորոշություն, ինչպես նաև օրենսդրական բաց գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հարցում:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին բացահայտել սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող Սահմանադրության 14-րդ հոդվածի իրավադրույթների հիմնարար նշանակությունը պաշտպանության ոլորտի իրավական կարգավորման համատեքստում:

Պետության պաշտպանության և անվտանգության համակարգի բաղադրատարրը կազմող զինված ուժերի կազմակերպման, գործունեության և այլ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցության մեջ առաջնային նշանակություն ունեն ոլորտի իրավական ապահովման միջուկը ձևավորող սահմանադրական նորմերը: Սահմանադրաիրավական համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա հարաբերությունների կարգավորմանն ուղղակիորեն վերաբերող իրավադրույթները տարրալուծված են դրա առանձին կառուցվածքային մասերում՝ որպես սահմանադրական կարգի հիմունքներ, պետական մարմինների լիազորություններ (կամ իրավասության մաս) կամ մարդու իրավունքների ենթահիստիտուտներ, մասնավորապես՝ զինված ուժերը և պաշտպանությունը (Սահմանադրության 1-ին գլուխ, 14-րդ հոդված), հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (Սահմանադրության 2-րդ գլուխ, 76-րդ հոդված), պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը (Սահմանադրության 4-րդ գլուխ, 118-րդ հոդված), ռազմական դրությունը (Սահմանադրության 4-րդ գլուխ, 119-րդ հոդված), Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում (Սահմանադրության 5-րդ գլուխ, 133-րդ հոդված), զինված ուժերը (Սահմանադրության 6-րդ գլուխ, 155-րդ հոդված) և այլն: Թվարկված իրավադրույթներից Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել այն իրավակարգավորումները, որոնք ուղղակիորեն վերաբերում կամ առնչվում են սույն գործով վիճարկվող զինված ուժերի ղեկավարման իրավական ինստիտուտին՝ որպես այդպիսին դիտարկելով Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի 14-րդ հոդվածը, հատկապես դրա 1-ին և 2-րդ մասերը:

Սահմանադիրը Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» առաջին գլխում նախատեսել է զինված ուժերի ստեղծման նպատակները (սոցիալական առաքելությունը) և դրանց



կարգավիճակի որոշ տարրերն ամրագրող հատուկ հոդված, որի հիմքում դրված է զինված ուժերի կարգավիճակի, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական հայեցակարգը, և որի տեսլականը հիմնված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների կոշտ սահմանազատման վրա:

Սահմանադրության 14-րդ հոդվածը պարունակում է սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար կարևոր ուղենիշային նշանակություն ունեցող երեք հիմնադրույթ. 1) զինված ուժերի սահմանադրական գործառույթները (առաքելությունը), 2) զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը, 3) զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

Ձինված ուժերի սահմանադրական գործառույթներն են՝ ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը, որոնց համապատասխան սահմանադրական մի շարք իրավադրույթներ կարգավորում են զինված ուժերի կառավարման և կիրառման հարաբերությունները:

Ձինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքից հետևում է, որ դրանք պետք է չմասնակցեն քաղաքականությանը և քաղաքական պայքարին, չմիջամտեն քաղաքական գործընթացներին, ինչի երաշխիքը դրանց ապաքաղաքականացումն է:

Ապաքաղաքականացման նպատակն է զինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվ ներգործության շրջանակից և, նախևառաջ, այս կամ այն կուսակցության կամ քաղաքական կազմակերպության քաղաքական ազդեցությունից: Որպես այդ պահանջի երաշխիք՝ զինված ուժերում արգելվում է քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, վերջիններիս կառույցների ստեղծումը, քաղաքական քարոզչությունը, այդ թվում նաև՝ ընտրական, իսկ զինվորականներին արգելվում է անդամագրվել քաղաքական կազմակերպություններին:

Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մասի մեկ այլ իրավադրույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են:

«Քաղաքացիական վերահսկողություն» հասկացությունը ձևավորվել է զինվորական/քաղաքացիական բաժանման համատեքստում:

տում և առաջին հերթին ենթադրում է ժողովրդավարական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ, երբ դրանք ղեկավարվում են բարձրագույն պետական իշխանության կողմից, որը մասնակցում է զինված ուժերի կառավարմանը, ժողովրդավարական ճանապարհով ազդում է դրանց վրա՝ իշխանությունների բաժանման սկզբունքի և ռազմական կառավարման ներդաշնակ գույակցության վրա կառուցված նպատակային պետաիրավական ինստիտուտների միջոցով:

Պետաիրավական իմաստով քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի ղեկավարումն ու կառավարումն է քաղաքացիների ազատ կամահայտնության ճանապարհով ձևավորված ժողովրդավարական իշխանության կողմից, հակառակ դեպքում՝ զինված ուժերը կարող են ձեռք բերել ինքնուրույնության որոշակի աստիճան և ծանրակշիռ ազդեցություն ունենալ պետության քաղաքականության վրա, վտանգել ժողովրդավարությանը:

ԵԱՀԿ-ի 1994 թվականի «Անվտանգության ռազմաքաղաքական առումներին վերաբերող կանոնագիրքը»<sup>1</sup>, կարգավորելով նախկինում պետության ներքին իրավագործությանը պատկանող հարցերը, դրա ընդունման նպատակ է համարում բոլոր ուժային կառույցների նկատմամբ վերահսկողությունն անկախ, օրինական և ժողովրդական ճանապարհով ընտրված ինստիտուտներին հանձնելը: Այդ փաստաթուղթը պարտադրում է, որ բոլոր ուժային կառույցները, որոնք ներառված են ազգային անվտանգության ու պետության պաշտպանության համակարգում, պարտավոր են պահպանել օրինականության, ժողովրդավարության, չեզոքության, մարդու և քաղաքացու իրավունքների հարգանքի սկզբունքները, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Հիշյալ փաստաթուղթը ժողովրդավարական վերահսկողությունը զինվորականների ու ռազմականացված բոլոր տեսակի ծառայությունների նկատմամբ դիտարկում է որպես կայունության ու անվտանգության անփոխարինելի տարր:

Քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի քաղաքականացման կանխման հուսալի միջոց է, որի գործուն ազդեցության

<sup>1</sup>Այս փաստաթուղթը մշակվել է ԵԱՀԿ-ի շրջանակներում 1992-1994թթ.: Այն որպես խորհրդատվական ակտ հավանության է արժանացել 52 պետությունների կողմից ԵԱՀԿ-ի բուդապեշտյան խորհրդակցությունում 1994թ. դեկտեմբերին, իսկ 1995թ. հունվարի 1-ից ձեռք է բերել քաղաքականապես պարտադրող փաստաթղթի նշանակություն:

շնորհիվ դրանք չեզոք են մնում քաղաքական պայքարի բոլոր մասնակիցների նկատմամբ:

Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական համակարգերում կիրառում են վերահսկողության հատուկ ձևեր՝ քաղաքացիական գլխավոր հրամանատար, որն իրավասու է ազատել բարձրագույն հրամանատարական պաշտոնյաներին որպես քաղաքականության և վերահսկողության հաստատման միջոց. պաշտպանության նախարարի և մի շարք զինվորական պաշտոններում քաղաքականապես չեզոք քաղաքացիական անձանց նշանակումը. պաշտպանության նախարարության կառուցումը և գործառնություններում համալիրության (քաղաքացիական/զինվորական) սկզբունքով. զինված ուժերի կառուցվածքային հարցերի և կադրային առաջխաղացման իրավագործությունը քաղաքացիական իշխանությունների վերապահելը. ռազմական բյուջեի ընդունման քաղաքացիական իշխանության մենաշնորհը, հատկացված միջոցների ծախսման նկատմամբ խստագույն հսկողության ընթացակարգը և այլն:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ երկրի պաշտպանության գործառնության իրականացման համակարգում գլխավոր դերակատարը զինված ուժերն են, որոնց կառավարման բարձրագույն մակարդակը ռազմավարական մարմիններն են (Ազգային ժողով, Կառավարություն, Հանրապետության նախագահ, Անվտանգության խորհուրդ), որոնց հաջորդում են զինված ուժերի կառավարման օպերատիվ մակարդակի գործառնության մարմինները (գլխավոր շտաբ, պաշտպանության նախարարություն և այլն):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ընդհանուր իրավասության պետական կառավարման սահմանադրական համակարգը կառուցված է իշխանությունների բաժանման և այլ սահմանադրական սկզբունքների հիմքով և կոչված է ապահովելու պաշտպանական համակարգի պատշաճ ռազմաքաղաքական, ռազմաիրավական և այլ առումներով ղեկավարումը, կառավարումը և կարգավորումը: Երկրի պաշտպանության գործառնության իրականացման կառուցակարգում, բարձրագույն ռազմավարական մարմիններից հետո, կառավարման հաջորդ կարևոր մարմինը զինված ուժերի գլխավոր շտաբն է՝ որպես զինված ուժերի օպերատիվ կառավարման բարձրագույն մարմին: «Հայաստանի Հանրա-

պետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրության»<sup>1</sup> 9-րդ կետի համաձայն՝ գլխավոր շտաբի նպատակը զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ռազմական բաղադրիչի ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն ապահովելն է, իսկ 10-րդ կետի համաձայն՝ գլխավոր շտաբի խնդիրներից է, մասնավորապես, Օրենքով սահմանված զինված ուժերի խնդիրների կատարման ապահովումը:

Այսպիսով զինված ուժերում բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններ զբաղեցնող անձինք պետական քաղաքականությունն անմիջականորեն կենսագործողներն են, որպիսի պայմաններում տվյալ պաշտոններում կոնկրետ անձանց նշանակման և ազատման հարցում գործադիր իշխանությունը՝ որպես ռազմական կառավարման վերին մակարդակի կառավարման հավաքական սուբյեկտ, պետք է ունենա և Սահմանադրությամբ ամրագրված կարգով իրավունք ունի նշանակելու և ազատելու հրամանատարական նշված կազմի պաշտոնյաներին: Հիշյալ իրավագործությունը համահունչ է սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքին: Այդ իրավագործությունը պայմանավորված է նաև երկրի պաշտպանության ռազմավարական առաջնահերթություններից բխող կադրային արդյունավետ քաղաքականությամբ, որն անխուսափելիորեն, բացի զինվորական արհեստավարժությունից, ենթադրում է նաև քաղաքացիական իշխանությունների հայեցողություն: Սահմանադրությունը Հանրապետության պաշտպանության ոլորտի պետական քաղաքականությունը՝ պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումը և իրականացումը, պետության ռազմական անվտանգության համակարգի բնականոն գործունեության ապահովումը, Հանրապետության զինված ուժերի ղեկավարումը վերապահում է Կառավարությանը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ռազմական կառավարման բոլոր մակարդակները՝ սկսած մարտական խնդիրներ լուծող զորամիավորումներից, ռազմաօպերատիվ կառավարման մարմիններից ու իշխանությունների

<sup>1</sup>«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունը» հաստատվել է Կառավարության 2019թ. հուլիսի 4-ի թիվ 922-Լ որոշմամբ:

բաժանման սկզբունքով կառուցված ռազմավարական կառավարում իրականացնող ընդհանուր իրավասության պետական մարմիններից, կազմում են երկրի պաշտպանության գործառույթի կառավարման միասնական կառուցակարգը, որը ն՝ կառավարման, ն՝ ծառայողական առումներով կառուցվում ու գործում է խիստ կենտրոնացվածության, խստագույն զինվորական կարգապահության, ենթակայության, անընդհատության և մի շարք այլ յուրահատուկ սկզբունքներով: Դրանում քաղաքացիական իշխանության ընդհանուր իրավասության մարմինները Սահմանադրության ուժով իրավագոր են իրականացնելու ոչ միայն քաղաքացիական վերահսկողություն, այլ նաև ունեն ռազմական կառավարման անմիջական, Սահմանադրությամբ ամրագրված իրավասություն և լիազորություններ՝ ներառյալ զինվորականադրային քաղաքականության հարցերում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 14-րդ հոդվածի՝ որպես սահմանադրական կարգի հիմունքի բովանդակությունից բխում է, որ զինված ուժերը՝ իբրև հատուկ կազմակերպվող, կառավարվող և գործող կառույց, ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը հատուկ ձևերով ու մեթոդներով, սակայն դրանք ինքնավար չեն, այլ կազմում են ռազմական կառավարման միասնական համակարգի մասնագիտացված, քաղաքականապես չեզոք տարրը, գործում են Սահմանադրությամբ սահմանված և իշխանությունների բաժանման ու ռազմական կառավարման սկզբունքների ներդաշնակ զուգատեղմամբ գործող, ռազմավարական բարձրագույն կառավարում իրականացնող ընդհանուր իրավասության պետական մարմինների ենթակայության ներքո, գտնվում են նրանց քաղաքական վերահսկողության տակ, որի դրսևորման տարրերից է նաև բարձրագույն հրամանատարական զինվորական ծառայության պաշտոնների նշանակման և ազատման սահմանադրական իրավագորությունը:

**4.2.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել երկրի պաշտպանության իրականացման և իրավական կարգավորման առանձնահատկությունները, անդրադառնալ պաշտպանական ոլորտի կառավարման մակարդակներին և զին-

ված ուժերի կարգավորման ու կառավարման սկզբունքներին, որոնք ելակետային նշանակություն ունեն գինվորական ծառայության սահմանադրական բովանդակության բացահայտման համար:

Երկրի պաշտպանությունը պետության գլխավոր խնդիրներից է և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն («Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետության սահմանադրական այլ գործառույթների համակարգում պաշտպանության գործառույթն ունի համապետական, համասոցիալական, մշտական բնույթ, և դրա կենսագործման կառուցակարգին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք ելակետային նշանակություն ունեն պաշտպանական ոլորտի սահմանադրական կարգավորման առարկայի (հարաբերությունների շրջանակի), այդ հարաբերությունների սահմանադրական ու ընթացիկ օրենսդրական կարգավորման յուրահատկությունների ու բովանդակության իմաստավորման ու գնահատման համար: Այդ առանձնահատկություններից էականներն են՝

1. Պաշտպանության գործառույթի կառավարման օբյեկտը և առարկան երկրի ռազմական պաշտպանության ու դրա հետ կապված հասարակական հարաբերություններն են, որոնք իրենց բնույթով էականորեն տարբերվում են հասարակական այլ հարաբերություններից: Բացի դրանից, պաշտպանության գործառույթի իրականացման կառուցակարգում յուրահատուկ գործառութային կառույց է պետության գինված ուժերը, որոնք՝ որպես յուրօրինակ կերպով կազմակերպված ներգործության ուժ, խստորեն առանձնացված են պետական այլ կառույցներից, իրականացնում են յուրահատուկ նպատակներ, ինչով պայմանավորված ունեն խիստ կենտրոնացված և ստորակարգային կառուցվածք:

2. Երկրի պաշտպանության գործառույթի իրականացման մենաշնորհային սուբյեկտը պետությունն է: Սահմանադրության և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը հիմք է տա-

լիս առաջ քաշել պաշտպանության գործառույթի ձևավորման ու իրականացման սուբյեկտների հետևյալ շրջանակը՝ օրենսդիր մարմինը, Կառավարությունը, Հանրապետության նախագահը, Անվտանգության խորհուրդը, գործադիր իշխանության մարմինները, պետության զինված կազմակերպությունը, որը ներառում է զինված ուժերը և այլ զորքերը: Պաշտպանական գործառույթի բնույթը պահանջում է գործողությունների մշտական ու միասնական, համակարգված ու կենտրոնացված իրականացում, դրա կենսագործման նպատակային, երաշխավորված կառուցակարգ, ինչը կարող է ապահովել միայն պետությունը՝ զերծ պահելով այն տատանումներից ու վայրիվերումներից:

3. Պաշտպանության կառավարումը բազմամակարդակ է, իսկ պաշտպանության գործառույթն իրականացնելիս կիրառում են օրենքով ամրագրված և՛ համընդհանուր, և՛ ներգործության օբյեկտով պայմանավորված հատուկ՝ ռազմական բնույթի ձևեր ու մեթոդներ: Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգին բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ զինված ուժերը ձեռք են բերում էական քաղաքական դերակատարություն, ինչից և առաջանում է բանակի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրման, դրա քաղաքական չեզոքության և դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովման անհրաժեշտությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ երկրի պաշտպանության գործառույթի բովանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի վարման սկզբունքներով ու մեթոդներով:

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պաշտպանության ոլորտում կառավարումը դասակարգում է ըստ մակարդակի՝ որպես այդպիսիք համարելով ա) ընդհանուր իրավասության պետական մարմինների կառավարումը (օրենսդիր մարմին, Կառավարություն, Անվտանգության խորհուրդ, վարչապետ), բ) պաշտպանության ոլորտի հատուկ իրավասության մարմնի կառավարումը (պաշտպանության նախարարություն), գ) պաշտպանության ոլորտի լիազորություններ ունեցող պետական ու տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող կառավարումը, դ) պաշտպանական ոլորտում տեղական ինքնակա-

ռավարման մարմինների կառավարումը, ե) զինված ուժերի անմիջական կառավարումը (գլխավոր շտաբ՝ շտաբի պետի ղեկավարությամբ), ինչպես նաև զինվորական կառավարման այլ մարմինները:

Զինված ուժերի և զորամիավորումների գործառնությունների սկզբունքներ են համարվում մշտական բարձր մարտական պատրաստվածությունը, բարձր ակտիվությունը, զորքերի մարտունակության մշտական պահպանումը և ժամանակին վերականգնումը, անընդհատ ու անշեղ կառավարումը, նպատակների ու դրված խնդիրների նվաճման անշեղ ձգտումը և այլն, որոնց համապատասխանում են զինված ուժերի կառավարմանը ներկայացվող պահանջները՝ անընդհատություն, օպերատիվություն, կայունություն և գաղտնիություն և այլն: Այդ պահանջներին համապատասխանող զինված ուժերի և զորամիավորումների կառավարման սկզբունքներ են միանձնությունը, կառավարման կենտրոնացումը, բարձր կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանատարի անհատական պատասխանատվությունը, իրադրության իմացությունը, խորը վերլուծությունը, կանխատեսումը, համառությունը և այլն: Թվարկված սկզբունքները ռազմական գործունեության ընդհանուր կանոններ են, որոնք որոշում են զինված ուժերի սոցիալական էությունը, դրանց կազմակերպման և գործունեության հիմնական հարցերը (գործառնությունը, կառուցվածքը, լիազորությունները և այլն), արտացոլվում են ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերում, հետևաբար ընկած են պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, և՛ մարտավարական, և՛ բարձրագույն պետական կառավարման մակարդակում:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ռազմական կառավարման համակարգի բոլոր մակարդակների կառուցման նորմատիվ հիմքերը սահմանված են պաշտպանական ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ: Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ սկզբունքները ելակետային են ոչ միայն երկրի պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական նորմերի համախումբը սահմանելու, այլև դրանք մեկնաբանելու և կիրառելու ընթացքում:

**4.3.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ զինվորական ծառայության իրավական ինստիտուտի հայեցակարգային հիմքերին ու առանձնահատկություններին՝ պարզելու այն պատճառները և գործոնները, որոնք պայմանավորել են դրա սահմանադրական կարգավորման նորմատիվ բովանդակությունը:



Պետական ծառայությունը կոչված է ապահովելու պետական գործունեության տարաբնույթ ոլորտներում պետական կառավարման խնդիրների լուծումը: Իր բնույթով լինելով միասնական պետական ծառայությունը տարբերակված է մասնագիտացված տեսակների՝ ըստ պետության գործունեության տարբեր ուղղությունների և դրանց առջև կանգնած խնդիրների: Ջինվորական ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որն ունի վառ արտահայտված բացառիկ առանձնահատկություններ՝ ծառայության նշանակվելու, ծառայության անցնելու և դադարելու կարգերով, և դրանցով իսկ արմատականորեն տարբերվում է «պետական ծառայություն» ընդհանուր հասկացությունից:

Ինչպես ռազմական կառավարման, այնպես էլ զինվորական ծառայության (կազմակերպման, անցկացման, դադարման) իրավական կանոնների հիմքում ընկած են զինված ուժերի կազմակերպման ու գործունեության յուրահատուկ սկզբունքները: Պետության ռազմական կազմակերպության կողմից երկրի պաշտպանության խնդրի լուծումը կառավարման հատուկ սկզբունքներով, ռազմական ձևերով ու մեթոդներով ենթադրում է ինչպես դրա մեջ մտնող մարմինների ու կազմակերպությունների գործառնությունները, այնպես էլ դրանցում ընդգրկված անձանց զինվորական ծառայության միջոցով պարտականությունների կատարման հատուկ կարգ:

Ջինվորական ծառայությունը՝ որպես գործունեության հատուկ տեսակ, այժի է ընկնում իր առանձնահատուկ հատկանիշով, մասնավորապես՝ այն իրականացվում է պետության կողմից հիմնադրված ռազմական կազմակերպությունում (զինված ուժերում և այլ գորքերում), որը կոչված է մասնակցելու ռազմական գործողություններին՝ ռազմական մեթոդների և զինված պայքարի միջոցների կիրառմամբ: Այլ կերպ ասած՝ զինվորական ծառայությունն օրենքով սահմանված գործունեության տեսակ է, որն իրականացվում է պետության ռազմական կազմակերպությունում ու մարմիններում, լուծում է երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության խնդիրները՝ հատուկ ռազմական ձևերով ու մեթոդներով՝ երկիրը պաշտպանության պատրաստելու և պաշտպանելու նպատակով:

Պետական ծառայության հատուկ տեսակների առանձնահատկությունները պայմանավորված են վերջինների կողմից լուծվող խնդիրներով և կատարվող գործառնություններով: Պետական ծառայության բոլոր հատուկ տեսակներին՝ ներառյալ զինվորական ծառայությանը, բնութագրական են հետևյալ հատկանիշները. լուծվող խն-

դիրների և կատարվող գործառույթների յուրահատկությունը. ծառայության կազմակերպման հատուկ սկզբունքների առկայությունը. հաճախ ռիսկի հետ զուգակցված ծառայության հատուկ պայմանները. մասնագիտական յուրահատկության առկայությունը. Ծառայողական հատուկ պարտականությունները. ծառայողների պաշտոնական գործառույթների, ծառայության պայմանների առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ կարգապահական կանոնագրքերի և կանոնադրությունների առկայությունը. Ծառայության ընդունվելու, անցնելու, հատուկ կոչումներ շնորհելու, փորձաշրջանի, ատեստացիայի և դադարման հատուկ պայմանները և կարգը. ծառայողների հատուկ իրավական կարգավիճակը, իրավական պատասխանատվության որոշ տեսակների ենթարկելու հատուկ կարգը, հատուկ ապահովությունը (ներառյալ՝ վճարումը, արտոնությունները, հագուստը, տարբերանշանները) և այլն:

Պաշտպանական ոլորտի յուրահատկություններով պայմանավորված՝ զինվորական ծառայությանը, բացի վերը նշված տարբերակիչ հատկություններից, բնութագրական են նաև միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ՝ ծառայական փոխհարաբերությունների բնույթի, դրանց ծագման, անցկացման և դադարման կարգի և այլ հարցերով: Զինվորական ծառայության տարբերությունների և առանձնահատկությունների օբյեկտիվ հիմքով պայմանավորված՝ յուրահատուկ են նաև զինվորական ծառայության իրավական կարգավորման, կազմակերպման ու անցկացման սկզբունքները, որոնք, լինելով ընդհանուր, հատուկ և բացառիկ ղեկավար գաղափարների ամբողջական համակարգ, պետք է ապահովեն զինվորական ծառայության խնդիրների լուծումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական ծառայության ընդհանուր սկզբունքները ռազմական ծառայության ոլորտում ամբողջությամբ չեն գործում, այլ ունեն իրենց դրսևորման առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտի առջև դրված խնդիրներով ու կատարվող գործառույթներով:

Ինչպես և ռազմական կառավարման դեպքում՝ կառավարման ընդհանուր սկզբունքներից, այնպես էլ զինվորական ծառայության ոլորտում հանրային ծառայության ընդհանուր իրավական սկզբունքներից բխող կանոններից արվում են իրավաբանական և փաստական բացառություններ՝ պայմանավորված զինվորական ծառայության յուրահատկություններով: Զինվորական ծառայության հատուկ սկզբունքները բնութագրում են զինվորական ծառայությունը

որպես պետական ծառայության հատուկ տեսակ, և ենթակա են կիրառման դրա բոլոր ոլորտների նկատմամբ: Այդ սկզբունքներն են՝ զինվորական ծառայության կարգավորման հրամայական (հմպերատիվ) բնույթը, զինվորական ծառայության և զինծառայողների կենտրոնացված կառավարումը, լրիվ ու հետևողական միանձնյա կառավարումը, խստագույն զինվորական կարգապահությունը, զինծառայողների միջև փոխհարաբերությունների ենթակայությունը (սուբորդինացիա), անընդհատությունը, առավել օպերատիվությունն ու շարժունությունը, զինծառայողների խստացված իրավական պատասխանատվությունը:

Սահմանադրական դատարանը, 2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-991 որոշմամբ անդրադառնալով ընդհանրապես աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս անձանց իրավական տարբեր կարգավիճակների սահմանման խնդրին՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, ընդգծել է առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքերի հնարավորությունը, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում: Եթե այս մոտեցումն ընդունելի է աշխատանքային իրավունքի ոլորտում, ապա այն լրիվ ընդունելի է զինվորական ծառայության ոլորտի համար, հետևաբար՝ դրա իրավական հատուկ կարգավորումներն ունեն օբյեկտիվ և արդարացված հիմքեր, ինքնին խնդրահարույց չեն և համահունչ են Սահմանադրությամբ ամրագրված զինված ուժերի առաքելությանը, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության էությանը:

Այսպիսով զինվորական ծառայության ոլորտում գործում է զինվորական ծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքը՝ կապված հայրենիքի պաշտպանության խնդրին, իրենց հատուկ պարտականությունների իրականացման հետ:

**4.4.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ զինվորական ծառայության իրավական ինստիտուտի սահմանադրական դրույթների իրավական բովանդակությանը, հատկապես Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթների նորմատիվ բովանդակության, դրանց համակարգային, տրամաբանական կապերի բացահայտմանը:

Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է զինվորական ծառայության ենթահինստիտուտներից մեկի՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման և ազատման հարաբերությունները կարգավորող կարևորագույն դրույթ. «1. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը»:

Զինվորական ծառայողներին բնորոշ են լիազորությունների ծավալի տարբերություններ՝ կախված զբաղեցրած պաշտոնից ու շնորհված զինվորական կոչումից և մի շարք այլ հատկանիշներից, հետևաբար՝ անհրաժեշտ է նրանց ծառայողական հարաբերություններում հաստատել հստակ սահմանված կարգ: Այս հանգամանքն առաջ է բերում զինծառայողների հիմնավորված պաշտոնական դասակարգման անհրաժեշտություն: Դասակարգման չափանիշներն են զինվորական ծառայության տեսակները, զինծառայողների ծառայողական-իրավական վիճակը, զինծառայողների պաշտոնական դրությունը կամ լիազորությունների բնույթը, զինվորական ծառայության անցնելու հիմքերը և այլն:

«Բարձրագույն հրամանատարական կազմ» իրավական հասկացությունն ածանցված է զինծառայության պաշտոնների հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի դասակարգումից, որը զինվորական ծառայության դասակարգման հանրաճանաչ և իրավաբանորեն ամրագրված տարբերակներից է, ունի օբյեկտիվ և արդարացված հիմքեր: Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի՝ զինվորական ծառայության պաշտոնները դասակարգվում են երկու կազմերի՝ հրամանատարական (բարձրագույն, ավագ, միջին, կրտսեր խմբերով) և ոչ հրամանատարական (բարձրագույն սպայական, ավագ սպայական, կրտսեր սպայական, ավագ ենթասպայական, կրտսեր ենթասպայական, շարքային խմբերով):

Զինվորական ծառայության իրավական հինստիտուտի սահմանադրական հիմունքների մեջ կարևորագույն տեղ ունի գլխավոր շտաբի պետի պաշտոնին վերաբերող մեկ այլ իրավադրույթ, որն ամրագրված է Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում. «3. Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահ-

մանված ժամկետով: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին»:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության տրամաբանական բաղդատման արդյունքում կարելի է ստանալ դրա նորմատիվ բովանդակության տարրերը կազմող հետևյալ իրավադրույթները.

ա) զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է,

բ) ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին,

գ) զինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով:

Այս երեք իրավադրույթներից սահմանադրաիրավական վեճի լուծման համար հիմնարար և կողմնորոշիչ նշանակություն ունի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նշանակմանը վերաբերող իրավադրույթը, որը, սակայն, ինքնին չունի կարգավորիչ ինքնուրույնություն: Այդ իրավադրույթը սերտ համակարգային, տրամաբանական և բովանդակային կապի մեջ է գտնվում Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված և զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակմանը և ազատմանը վերաբերող իրավադրույթի հետ, որն ավելի ընդհանուր իրավակարգավորում է: Համաձայն հիշյալ դրույթի բարձրագույն հրամանատարական կազմի բոլոր պաշտոնյաները նշանակվում և ազատվում են Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Գլխավոր շտաբի պետը զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնյա է, ընդ որում՝ ամենաբարձր պաշտոնատար անձը, որը պաշտպանության նախարարության զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկն ամրագրող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1857-Ն որոշմամբ համարվում է բարձրագույն հրամանատարական սպայական կազմի առաջին պաշտոնը:

Հետևաբար՝ տրամաբանորեն գլխավոր շտաբի պետին պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը կատարվում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին համապատասխան, իսկ այդ դրույթը ենթադրում է զինված ուժերի գլխավոր շտաբի պետի և նշանակման, և՛ ազատման իրավասություն:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված իրավադրույթների հարաբերակցությունը: Իրավանորմերի և դրանցում ամրագրված իրավադրույթների հարաբերակցության որոշման հիմքում ընկած են նորմերի (իրավադրույթների) որոշակի չափանիշներով դասակարգումները: Իրավունքի նորմերի և իրավադրույթների ընդհանուրի, հատուկի և բացառիկի բաժանման ճանաչողական ու գործնական-կիրառական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավական գործ լուծելիս պետք է, նախ՝ դեկլարվել և ընդհանուր, և հատուկ, և բացառիկ նորմերով, երկրորդ՝ հատուկ և բացառիկ նորմերը ընդհանուր նորմերին դուրս են մղում իրավակիրառման գործընթացից:

Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթի և 155-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության տրամաբանական հարաբերակցությունը չի կարող լինել ընդհանուր-հատուկ-բացառիկի իրավակարգավորիչ կապ, որովհետև դրանցով կարգավորվող հարաբերությունները չեն պատկանում այլ սեռերի և նույնիսկ նույն սեռի այլ տեսակների. երկու իրավադրույթներն էլ վերաբերում են գլխավոր շտաբի պետի նշանակման և ազատման հարաբերությանը, և դրանց միջև չկա որևէ հակասություն, բովանդակային շեղում կամ բացառում, այլ ընդամենը սուբյեկտային կազմի կոնկրետացում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորումը չի շեղվում կամ չի բացառում 133-րդ հոդվածի 1-ին մասը, այլ կոնկրետացնում (լրացնում) է ընդհանուր իրավադրույթի բովանդակությունը մեկ հարցում՝ գլխավոր շտաբի պետի նշանակման, ընդ որում՝ ոչ թե կարգի, այլ պաշտոնի նշանակման ժամկետի հարցով:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը կրկնում է 133-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանուր բնույթ ունեցող բովանդակությունը գլխավոր շտաբի պետի որպես բարձրագույն հրամանատարական կազմի մեջ մտնող պաշտոնյայի վերաբերյալ. գլխավոր շտաբի պետին՝ որպես ամենաբարձր զինվորական պաշտոնատար անձի, նշանակում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Այս լիազորությունը համահունչ է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը՝ բարձրագույն հրամանատարական կազմի

զինվորական պաշտոնյաների նշանակման մասով, հետևաբար՝ այն չի կարելի համարել հատուկ կամ բացառիկ իրավադրույթ: Ինչ վերաբերում է գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հարցին, ապա դրա կարգավորման իրավական հիմքը Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասն է: Այսպիսով՝ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում Հանրապետության նախագահի կողմից զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորությունը բառացիորեն սահմանված չլինելը չի կարելի դիտարկել որպես Հանրապետության նախագահի՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորության բացառում:

Սահմանադրական դատարանը, կարևորելով 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «օրենքով սահմանված ժամկետ» ձևակերպման իրավական նշանակությունը սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար, անհրաժեշտ է համարում բացահայտել դրա իրավական իմաստը սահմանադրի իրական կամքի տեսանկյունից:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը, մասամբ վերարտադրելով 133-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, իր բնույթով տրամաբանական կրկնաբանություն է, որը պարունակում է միայն մեկ կոնկրետացում (լրացում)՝ գլխավոր շտաբի պետի նշանակումը «օրենքով սահմանված ժամկետով»:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված «օրենքով սահմանված ժամկետ» բանաձևի նշանակությունն ըմբռնելու համար հիմնարար նշանակություն ունեն սույն գործով որոշման վերոգրյալ 4.1, 4.2, 4.3 կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց «օրենքով սահմանված ժամկետ» իրավական հասկացությունն ամրագրելիս սահմանադիրը երբեք չէր կարող դրա բովանդակության մեջ դնել զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ամենաբարձր պաշտոնատար անձ համարվող գլխավոր շտաբի պետի պաշտոնի անփոփոխելիության և անձեռնմխելիության, պաշտոնավարման նվազագույն ժամկետային երաշխավորման իմաստը: Ընդհակառակը՝ ռազմական կառավարման բոլոր մակարդակների և զինվորական ծառայությանը բնորոշ առանձնահատուկ սկզբունքների գաղափարակողմնորոշիչ ազդեցության ու ելակետային կարգավորիչ իրավական նշանակության շրջանակներում այդ ժամկետը պետք է հասկանալ որպես պաշտոնավարման՝ օրենքով

սահմանված առավելագույն ժամկետ, ինչը չի կարող բացառել գլխավոր շտաբի պետին այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը:

Հիշյալ սահմանադրական բանաձևի ներկայացված իմաստը համահունչ է ռազմական ոլորտի կազմակերպման ու գործունեության սկզբունքներին: Նման մեկնաբանությունը համահունչ է նաև երկրի պաշտպանության՝ որպես պետության առաջնային գործառույթի արդյունավետ իրականացման, ինչպես նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության շահերին: Հակառակ տրամաբանությունը կենսական իրավիճակներում, հատկապես պատերազմի ժամանակ կարող է հանգեցնել փաստական և իրավաբանական անհեթեթության այն դեպքերում, երբ և՛ ռազմավարական, և՛ մարտավարական առումներով փոփոխված ռազմական իրադրությունը հանգեցնի անհամապատասխանության գլխավոր շտաբի պետի պաշտոն զբաղեցնող անձի և իրավիճակից բխող պահանջների հետ:

Վերոշարադրյալը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրակացնելու, որ դիմողի այն պնդումը, որ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասից և 155-րդ հոդվածի 3-րդ մասից, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասից բխում է, որ Հանրապետության նախագահն իրավասու չէ պաշտոնից ազատել պաշտոնավարման ժամկետը չլրացած ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, հիմնված չէ ոչ սահմանադրական նորմերի ոգու, ոչ էլ բառացի իմաստի վրա: Վկայակոչված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման համար նախատեսելով հնգամյա ժամկետ, չի ենթադրել, որ այդ ժամկետը չի կարող ընդհատվել զինված ուժերում պետական իշխանության պաշտպանական, կադրային քաղաքականության փոփոխման կամ այլ իրավաչափ նկատառումներից ելնելով:

**4.5.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով և 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված իրավադրությունների հայեցակարգային, համակարգային, ձևական-տրամաբանական մեկնաբանության արդյունքում ստացված իրավական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021



բովանդակությունը համադրել Օրենքի վիճարկվող դրույթի՝ 40-րդ հոդվածի 3-րդ մասի հետ և գնահատել դրանք դիմողի կողմից Բարձրացված օրենսդրական բացի վերաբերյալ իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

Օրենքի՝ «Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը» վերտառությամբ 40-րդ հոդվածը սահմանում է պայմանագրային զինծառայողներին պաշտոնից ազատման հիմքերը և ազատող սուբյեկտների շրջանակը (40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնից կարող է ազատվել Օրենքով սահմանված ընդհանուր հիմքերով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված են բարձրագույն հրամանատարական կազմին վերաբերող երկու առանձին իրավակարգավորումներ:

1. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով (հղում կատարելով 35.1-ին հոդվածում սահմանված պայմանագրային զինվորական ծառայողներին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնին նշանակելու կարգին): Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են նույն կարգով: Այս իրավակարգավորումն ընդհանուր կարգավորման համատեքստում սուբյեկտային կազմի հատկանիշով հատուկ իրավադրույթ է, այսինքն՝ վերաբերում է միայն բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում նշանակվող պայմանագրային զինծառայողներին:

2. «Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են օրենքով սահմանված ընդհանուր հիմքեր, թե ո՛չ»: Այս իրավակարգավորումն ընդհանուր իրավակարգավորման համատեքստում բացառիկ բնույթ ունի, որովհետև նախատեսում է կանոն, որը շեղվում է ընդհանուր իրավադրույթներից, տվյալ դեպքում՝ պայմանագրային զինվորական ծառայողին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելու ընդհանուր իրավական հիմքերից՝ սահմանելով նրանց վերաբերող բացառություն. նրանք կարող են ազատվել պաշտոնից նաև առանց

օրենքով սահմանված ընդհանուր հիմքերի առկայության: Դրա հիմքում կարող են ընկած լինել բազմաթիվ գործոններ՝ ռազմաքաղաքական, կադրային-որակական, վստահության կորուստ, քաղաքական չեզոքության խախտում և այլն:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում առկա «օրենքով նախատեսված դեպքեր» բառակապակցությունը չի բացառում, որ այդպիսի ազատման հիմքերի շարքում կարող է լինել ռազմաքաղաքական և այլ գործոններով պայմանավորված՝ պաշտոնից ազատումը: Ստացվում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված՝ անկախ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելը ևս ամրագրված է օրենքով, ուստի այս առումով դիմողի մտահոգությունն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ, առաջին վիճարկվող դրույթում սահմանված իրավակարգավորումն ինքնին պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու հիմք է, երկրորդ՝ այդ հիմքը գործում է ի լրումն Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի, երրորդ՝ այդ հիմքը գործում է բացառապես բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնների նկատմամբ՝ հաշվի առնելով զինված ուժերի և զինվորական ծառայության առանձնահատկությունները, պետության համար պաշտոնյաների տվյալ կազմի հատուկ կարևորությունը:

Ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարության ռազմական նպատակահարմարությունով պայմանավորված հայեցողությունը ևս ազատման օրենքով սահմանված հիմք է, որը ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված՝ իրավաչափ է ու սահմանադրական: Ոչ իրավաչափ և հակասահմանադրական կլիներ հակառակ լուծումը և ըմբռնումը նաև պաշտպանական ոլորտի օբյեկտիվ օրինաչափություններին հակասելու պատճառով:

Այսպիսով՝ վիճարկվող իրավակարգավորումը կամայական ու սուբյեկտիվ չէ, այլ թելադրված է երկրի պաշտպանության կառավարման ու կարգավորման առանձնահատուկ սկզբունքներով, ունի օբյեկտիվ հիմքեր, հետևաբար՝ դրան բնորոշ են իրավաչափությունը և դրանով պայմանավորված սահմանադրականությունը:

Դիմողի կարծիքով Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասում առկա է օրենքի բաց այն առումով, որ դրանում չի սահմանվում բարձրա-

գույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման որևէ հիմք: Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշմամբ նշել է, որ օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներով հիմնավորվում է, որ քննարկվող գործով վեճի առարկա հանդիսացող բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման օրենքով սահմանված հիմքի բացակայության վերաբերյալ փաստարկն անհիմն է: Քննության առարկա հիմքը սահմանված է օրենքով, և այն կարելի է որակել որպես ռազմական կառավարման բարձրագույն ղեկավարության իրավաչափ հայեցողություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասում առկա է ոչ թե օրենքի բաց, այլ օրենսդրի հստակ կամահայտնություն:

Վերոգրյալի լույսի ներքո ակնհայտ է, որ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի պահանջին համահունչ՝ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը՝ նույն հոդվածի 3-րդ մասում հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները, պաշտոնից ազատող սուբյեկտին իրավունք վերապահելով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատել նաև անկախ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի առկայության:

Մինչև նույն ժամանակ, օրենսդիրը, Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով» նախադասությամբ ամրագրված դրույթին համապատասխան, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի որպես բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող անձի համար նախատեսում է գուտ այդ պաշտոնի առանձնահատկությամբ, պետական համակարգում նրա զբաղեցրած տեղով ու նշանակությամբ պայմանավորված՝ վարչապետի նախաձեռնությամբ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատման այլ ընդհանուր հիմքերից տարբերվող հիմքեր:

Վերոգրյալից բխում է, որ անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ տեսակի աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքն աշխատանքից (գրադեցրած պաշտոնից) ազատելու ինչ հիմքեր է նախատեսում, օրենսդիրը, կենսագործելով Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով» նախադասությամբ ամրագրված պահանջը, առանձին պաշտոնների համար նախատեսում է գուտ այդ պաշտոնների առանձնահատկությամբ, պետական համակարգում դրանց գրադեցրած տեղով ու նշանակությամբ պայմանավորված՝ պաշտոնից ազատման այլ հիմքեր: Այս վերլուծության հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը համապատասխանում է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ելնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից բերված պատճառաբանությունը, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը հակասահմանադրական է և կիրառելի չէ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման դեպքում, անհիմն է, իսկ սույն գործով վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին: Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված «օրենքով սահմանված ժամկետը» պետք է հասկանալ որպես պաշտոնավարման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետ, ինչը չի բացառում այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը:

**4.6.** Ելնելով այն հանգամանքից, որ դիմող կողմը վիճարկվող իրավադրույթները խնդրահարույց է համարում նաև իրավական որոշակիության առումով, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ վերլուծության ենթարկել գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավադրույթներն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

Իրավական որոշակիության առումով դիմողի հիմնական հարցադրումն այն է, որ օրենսդիրը վիճարկվող օրինադրույթով նախատեսել է, որ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել առանց պաշտոնից ազատման՝ օրենքով սահմանված դեպքերի (հիմքերի) առ-

կայության: Դիմողի մտահոգությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը Հանրապետության նախագահին վերապահում է լիազորություն վարչապետի առաջարկությամբ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնում նշանակել և ազատել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով, և այս համատեքստում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաներին պաշտոնից հայեցողաբար ազատումը պատշաճ հիմք չէ, հետևաբար ծառայությունից անհիմն, այսինքն օրենքով չսահմանված հիմքով ազատում:

Սահմանադրության «Որոշակիության սկզբունքը» վերտառությամբ 79-րդ հոդվածը սահմանում է. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և, հատկապես, վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը: Բացի դրանից, հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի կենսագործումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357): Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նոր-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021  
165

մեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176, ՄԴՈ-1449).

« ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

(...)

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2016 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրությունների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1452):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» («The Sunday Times v. The United Kingdom», application no. 6538/74, 26/04/79, § 49): Բացի դրանից, Եվրոպական դատարանը նշել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փո-

փոխվող հանգամանքներին: Հետևաբար՝ շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioc v. Moldova», application no. 61513/00, 21/12/2004):

Սահմանադրության 79-րդ հոդվածի բառացի իմաստի և Սահմանադրական դատարանի վերոհիշյալ դիրքորոշումների համադրված վերլուծությունից բխում է, որ բավարար չափով որոշակիությունն այն իրավիճակն է, երբ իրավահարաբերության մասնակիցների համար հստակ է, թե իրենց նկատմամբ որ իրավադրույթներն են կիրառվում, դրանց իրավական բովանդակությունը բավարար չափով հասկանալի ու որոշակի է և տեղիք չի տալիս տարաբնույթ մեկնաբանման կամ չի առաջացնում շփոթ, արդյունքում՝ իրավունքի կրողներն ի վիճակի են դրսևորելու համապատասխան վարքագիծ, ինչպես նաև կանխատեսելու իրենց վերաբերող իրավական պահանջների կատարման կամ դրանք իրենց նկատմամբ կիրառելու հետևանքները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշատակված իրավական դիրքորոշումների բովանդակությունից ակնհայտ է, որ բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնին նշանակվող անձի համար հստակ է, թե որոնք են իրեն պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու օրենսդրական հիմքերը և կարգը, այդ իրավադրույթները բավարար չափով հասկանալի ու որոշակի են, իսկ դրանք իր նկատմամբ կիրառելու հետևանքները, այդ թվում՝ նաև հայեցողաբար ծառայությունից ազատվելը, կանխատեսելի են:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթները բավարար չափով որոշակի են, հետևաբար՝ դրանք համապատասխանում են Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը  
**Ո Ր Ո Շ Ե Ց 8.**

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

2 նոյեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1616





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ՄԴՈ-1616 ՈՐՈՇՄԱՆ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2021 թվականի նոյեմբերի 2-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՄԴՈ-1616 որոշմամբ որոշել է. «1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 2-ի ՄԴՈ-1616 որոշման (այսուհետ՝ Որոշում) **պատճառաբանական մասի** վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021  
169

բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) վարչապետի առաջարկությամբ Հանրապետության նախագահի կողմից ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման օրենսդրական կարգավորումներում այդ պաշտոնից ազատման կոնկրետ դեպքեր չսահմանելու պարագայում, ինչպես նաև «օրենքով սահմանված ժամկետով» սահմանադրական պահանջի համատեքստում՝ պաշտոնավարման այդ ժամկետը չլրացած նույն պաշտոնատար անձին այդ պաշտոնից հնարավոր ոչ իրավաչափ ազատելու վերաբերյալ սահմանադրաիրավական խնդրի լուծման նպատակով, կարծում եմ՝ Սահմանադրական դատարանը գործի ելքի համար պետք է պարզեր, մասնավորապես, Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորությամբ օժտված լինելու պայմաններում

1) վիճարկվող դրույթը Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ի մասի զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո սահմանելու կարգավորման տրամաբանության մեջ համահոս լինել և արդյոք զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը ազատելու դեպքերի ու կարգի շրջանակում զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հիմքերի մասով բացառություն չնախատեսելուն՝ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության տեսանկյունից,

2) վիճարկվող դրույթում Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ի մասի կարգավորման շրջանակում՝ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման և «օրենքով սահմանված ժամկետով» սահմանադրական պահանջի պահպանման, ինչպես նաև զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման տարբերակված մոտեցման մասով առկա է արդյոք բավարար օբյեկտիվ հիմք կամ հետապնդվում է արդյոք իրավաչափ նպատակ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին և 155-րդ հոդվածի 3-րդ մասերին համապատասխանության տեսանկյունից,

3) վիճարկվող դրույթում զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը՝ ան-

կախ օրենքով սահմանված հիմքերից, համահունչ է արդյոք Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենքով զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման դեպքեր ու կարգ սահմանելու սահմանադրական պահանջին:

2. Հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը Որոշման 4-րդ կետում քննության առարկա հարցադրումների և պատճառաբանական մասի շրջանակում պետք է գնահատեր վիճարկվող դրույթի իրավակիրատական պրակտիկան հատկապես Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխանության տեսանկյունից:

Միաժամանակ, պահպանելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը Որոշման 4-րդ կետում քննության առարկա հարցադրումների և պատճառաբանական մասի շրջանակում պետք է գնահատեր վիճարկվող դրույթը՝ վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 35.1-ին հոդվածի և 40-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության մեջ:

3. «Օրենքով սահմանված ժամկետով» և «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» սահմանադրական պահանջների համատեքստում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին, մասնավորապես՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումների սահմանադրականության գնահատման հարցը պետք է դիտարկվեր ոչ թե Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին անմիջականորեն համապատասխանության առումով, այլ Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի նորմատիվային բովանդակության բացահայտման համատեքստում կարող էր միայն գնահատվել վիճարկվող դրույթի սահմանադրականությունը՝ Սահմանադրության 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին, 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին՝ համապատասխանության տեսանկյունից այն շեշտադրմամբ, որ

ա) սահմանդիրը երաշխավորել է զինված ուժերի ապաքաղաքականացվածությունը,

բ) զինված ուժերը գտնվում են Կառավարության ենթակայության ներքո,

գ) առկա են հանրային ծառայության ոլորտի և աշխատանքային իրավահարաբերություններում զինված ուժերի ծառայողների մասով որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են այդ ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովման սահմանադրական առաքելությամբ:

Հետևաբար Սահմանադրական դատարանի կողմից վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը պետք է բխեցվեր Սահմանադրության 14-րդ հոդվածի և 155-րդ հոդվածի 1-ին մասի էությունից:

4. Ելնելով Սահմանադրության 14-րդ հոդվածի և 155-րդ հոդվածի 1-ի մասի կարգավորումների առանձնահատկությունից կարծում եմ՝ վիճարկվող դրույթը չպետք է ընկալվեր ավելի նեղ իմաստով, մասնավորապես զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելու հայեցողությունը պայմանավորելով «ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարության ռազմական նպատակահարմարությունով» (Որոշման 4.5 կետ): Այդպիսի մեկնաբանման դեպքում Սահմանադրության 14-րդ հոդվածի, 133-րդ հոդվածի 1-ին մասի, 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 155-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի բովանդակությունը տարբերման կհանգեցնի:

5. Որոշման 4.1-4.5-րդ կետերից հետևում է, որ վիճարկվող դրույթի և սահմանադրական նորմերի համակարգային փոխկապակցվածության շրջանակներում պետք է համապատասխան հետևություն արվեր, թե զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման և «օրենքով սահմանված ժամկետով» սահմանադրական պահանջի պահպանման պայմաններում զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելը Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ի մասի կարգավորման համատեքստում և Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին և 155-րդ հոդվածի 3-րդ մասերին համապատասխանության տեսանկյունից պարունակել է արդյոք բավարար օբյեկտիվ հիմք և հետապնդել իրավաչափ նպատակ, ինչը առավել փաստարկված բովանդակություն կհաղորդեր ինչպես Որոշման պատճառաբանական մասի իրավական դիր-

քորոշումների շարադրանքին, այնպես էլ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելուն առնչվող իրավակարգավորումների բովանդակային առանձնահատկությունների բացահայտմանն ու ներքին հակասության հաղթահարմանը:

Սահմանադրական դատարանի քննության առարկա դրույթի և այդ դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված իրավակարգավորումների, ինչպես նաև Որոշման 4.1-4.5-րդ կետերով արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգային ուսումնասիրությունը վկայում է, որ Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ի մասով ամրագրված՝ զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո սահմանելու կարգավորման պարագայում սահմանադիրը չէր կարող դրա բովանդակության մեջ բացառություն նախատեսել զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հիմքերի մասով, հակառակ դեպքում դա կհանգեցնեք վերջինիս պաշտոնի անփոփոխելիության կամ անձեռնմխելիության կամ պաշտոնավարման նվազագույն ժամկետային երաշխավորման իմաստագրկմանը:

6. Հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը Որոշման պատճառաբանական մասի շրջանակում պետք է գնահատեր նաև վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկան՝ հատկապես Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով Հանրապետության նախագահին վերապահված լիազորությունների իրականացման շրջանակում՝ նկատի ունենալով, որ Հանրապետության նախագահը Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով օրենքով սահմանված դեպքերում համապատասխան ակտով ձևակերպված զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմին, այդ թվում՝ գլխավոր շտաբի պետին զինվորական պաշտոնից ազատելու վերաբերյալ առաջարկությունն իր առարկություններով կարող է վերադարձնել վարչապետին, և եթե վերջինս չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

7. Որոշման պատճառաբանական մասում անհրաժեշտ էր իրավական դիրքորոշման շրջանակում կատարել հետևյալ շեշտադրումը, որ մինչև Ազգային ժողովի կողմից օրենսդրական կարգա-

վորումներում համապատասխան հստակեցումներ կատարելը՝ «օրենքով սահմանված ժամկետով» սահմանադրական պահանջի համատեքստում՝ պաշտոնավարման ժամկետը չլրացած նույն պաշտոնատար անձին վարչապետի առաջարկությամբ Հանրապետության նախագահի կողմից այդ պաշտոնից ազատելու պրակտիկան պետք է առաջնորդվեր այն տրամաբանությամբ, որ այդ ակտը պետք է լիներ պատճառաբանված, ինչի պարագայում միայն հնարավոր կլիներ իրականացնել պաշտոնազրկումը:

Ամփոփելով գտնում եմ, որ որոշման պատճառաբանական մասում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պետք է դիտարկելի դառնար ոչ թե Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին անմիջականորեն համապատասխանության տեսանկյունից, այլ Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի նորմատիվային բովանդակության շրջանակում, նախ՝ պետք է բացահայտվեր վիճարկվող նորմի սահմանադրաիրավական իմաստը, ապա՝ այդ նորմի սահմանադրականությունը գնահատվեր Սահմանադրության 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին, 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության համատեքստում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

12 նոյեմբերի 2021 թվականի



**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ  
40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1616  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 2-ի «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1616 որոշման վերաբերյալ:

**Սույն գործով հատուկ կարծիքը ներկայացնում ենք՝ հիմք ընդունելով 2021 թվականի նոյեմբերի 2-ին Սահմանադրական դատարանի դատավորների կողմից քվեարկված և ընդունված ՍԴՈ-1616 որոշման (նախագծի) տեքստը, որը կցվում է որպես հավելված:**

ՍԴՈ-1616 որոշման հիմքում դրված մոտեցումներն ու եզրահանգումները, ինչպես նաև որոշման եզրափակիչ մասը մեզ համար անընդունելի են:

ՍԴՈ-1616 որոշման մեջ տեղ են գտել այնպիսի դատողություններ, գնահատականներ, որոնք բնութագրական չեն Սահմանադրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

կան դատարանի որոշումներին, ստեղծում են զինված ուժերի կողմից քաղաքական, հակաժողովրդավարական գործունեությամբ զբաղվելու կարծեցյալ ձգտումների, ինչպես նաև սույն գործով վեճի առարկայի հետ խիստ ընդհանրական առնչություն ունեցող, այլընտրանքային տեսական և քվազիփիլիսոփայական ուղղվածության տպավորություն, ունեն ներքին հակասություններ, չեն գտնվում սահմանադրական, անգամ օրենսդրական, կարգավորումներից բխող իրավական հասկացությունների տիրույթում:

1. Մեր կարծիքով՝ սույն գործով վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս Սահմանադրական դատարանը պետք է պարզեր հետևյալ հանգամանքները.

1) վիճարկվող դրույթը համահո լնչ է արդոք զինված ուժերի ապաքաղաքականացվածության սահմանադրական սկզբունքին.

2) վիճարկվող դրույթը սահմանափակո՞ւմ է արդոք հանրային ծառայության պաշտոններում պաշտոնավարելու իրավունքը, խախտո՞ւմ է արդոք այդ պաշտոններից անհիմն ազատելու արգելքը և ապահովո՞ւմ է արդոք անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր հիշյալ իրավունքների արդյունավետ իրականացման համար.

3) եթե վիճարկվող դրույթը սահմանափակում է հանրային ծառայության պաշտոններում պաշտոնավարելու իրավունքը, ապա համաչա՞փ է արդոք այդ սահմանափակումը.

4) զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման հարցում տարբերակված մոտեցումն ունի՞ արդոք օբյեկտիվ հիմք և հետապնդո՞ւմ է արդոք իրավաչափ նպատակ, թե՞ խտրական է.

5) վիճարկվող դրույթում զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատումը՝ անկախ օրենքով սահմանված հիմքերից, համապատասխանո՞ւմ է արդոք օրենքով զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման դեպքեր սահմանելու սահմանադրական պահանջին:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Սահմանադրական դատարանի կողմից քննության առարկա պետք է դառնար «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 40-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը և գնահատվեր դրա համապատասխանությունը Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 29, 49, 75 և 78-րդ հոդվածների, ինչպես նաև 133-րդ հոդվածի 1-ին մասի և 155-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:



2. Սույն գործով քննության առարկայի շրջանակներում անհրաժեշտ էր պարզել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սահմանադրական կարգավիճակը, Կառավարության և Հանրապետության նախագահի հետ նրանց փոխհարաբերությունների սահմանադրական հիմքերը: Այսպես.

2.1. Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի՝ 14-րդ հոդվածում սահմանվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սահմանադրական գործառույթները և կարգավիճակի առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը (Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մաս):

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են (Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սահմանադրության 155-րդ հոդվածում (Սահմանադրության՝ Կառավարությանը վերաբերող 6-րդ գլխում) սահմանվում է, որ զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են (Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասություն): Զինված ուժերի ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը՝ Անվտանգության խորհրդի կողմից սահմանված՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում (Սահմանադրության 155-րդ հոդվածի 2-րդ մաս): Սահմանադրությամբ սահմանվում են նաև զինված ուժերի ենթակայության այլ ընդհանուր հիմքեր: Ըստ այդմ՝ զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը՝ գլխավոր շտաբի պետը, ոչ պատերազմական ժամանակ ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասություն և 4-րդ մաս):

Սահմանադրությունը կարգավորում է նաև զինված ուժերի և այլ զորքերի կազմավորման կարգի առանձին, սահմանադրի կողմից առավել կարևորված հարաբերություններ: Այսպես՝ զինված ուժերի բնագավառում Հանրապետության նախագահի լիազորություններն ամրագրող՝ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում

սահմանվում է, որ Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, **օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը**: Իսկ Մահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում՝ որպես Մահմանադրության 133-րդ հոդվածի համեմատ հատուկ նորմ, սահմանվում է գլխավոր շտաբի պետի նշանակման կարգը, ըստ որի՝ նրան վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ **օրենքով սահմանված ժամկետով**:

«Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը նշանակվում է հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնում»: Ընդամին Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1857-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկում զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնն ամրագրված է որպես առաջին հրամանատարական բարձրագույն սպայական կազմի պաշտոն:

Հիմք ընդունելով Մահմանադրության վերոհիշյալ նորմերի բովանդակությունը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ.

1) Մահմանադրությամբ սահմանվում են զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի հիմքերը և սահմանադրական գործառույթները, այսինքն՝ սահմանվում է զինված ուժերի գոյության կառուցակարգային երաշխիքը, զինված ուժերի գործառույթները տարանջատվում են գործադիր իշխանության այլ մարմինների գործառույթներից, ամրագրվում են զինված ուժերի ենթակայության, կառավարման հիմունքները.

2) զինված ուժերը տարանջատվում են քաղաքական իշխանությունից՝ Կառավարությունից և նրա կազմի մեջ մտնող պաշտպանության նախարարից.

3) Հայաստանի Հանրապետությունում՝ որպես խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող պետությունում, թե՛ պաշտպանության ոլորտի պետական քաղաքականության մշակումը, թե՛ զինված ուժերի կառավարումն իրականացվում են **կոլեգիալ հիմունքներով**՝ համապատասխանաբար Անվտանգության խորհրդի և Կառավարության կողմից.

4) զինված ուժերի անմիջական և մասնագիտական ղեկավարումն իրականացնում է գլխավոր շտաբի պետը, քաղաքական ղեկավարումը՝ ոչ պատերազմական ժամանակ՝ պաշտպանության նախարարը, իսկ պատերազմի ժամանակ՝ վարչապետը՝ որպես զինված ուժերի գերագույն հրամանատար:

5) զինված ուժերի սահմանադրական գործառույթներից բխում է զինված ուժերի ապաքաղաքականացվածությունը: Զինված ուժերն իրականացնում են **մասնագիտական գործունեություն**:

6) զինված ուժերի ապաքաղաքականացվածության սահմանադրական սկզբունքը, մի կողմից՝ պահանջում է, որ զինված ուժերը չմիջամտեն քաղաքական գործընթացներին, իրենց սահմանադրական գործառույթներն իրականացնեն մասնագիտական հիմունքներով՝ քաղաքական ուժերի հարաբերակցությունից անկախ, լինեն անկողմնակալ քաղաքական հարցերում, մյուս կողմից՝ զինված ուժերի կազմավորումը պետք է հիմնված լինի հանրային ծառայության համակարգային սկզբունքների վրա՝ բացառելով քաղաքական նպատակահարմարությունը և քաղաքական հայեցողությունը զինված ուժերի կազմավորման, համալրման, զինված ուժերի զին-ծառայողների պաշտոններում նշանակվելու և ազատվելու հարցերում:

7) զինված ուժերի հրամանատարական կազմին դասվող զինվորական ծառայողները՝ **ծառայության մասնագիտական առանձնահատկություններով** հանդերձ, ներառյալ՝ զինվորական աստիճանակարգության առանձնահատկությունները, ունեն **միասնական իրավական կարգավիճակ**:

8) զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը զինված ուժերի հրամանատարական կազմի, այսինքն՝ զինված ուժերի մաս է, ուստի զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմին դասվող զինվորական ծառայողները պետք է ունենան զինված ուժերի ծառայողին ներհատուկ իրավական կարգավիճակ՝ ծառայության մասնագիտական առանձնահատկություններով հանդերձ:

9) զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմին դասվող զինվորական ծառայողների նշանակման և ազատման ընդհանուր կարգի սահմանումը Սահմանադրության մակարդակում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական ծառայողներին դուրս չի դնում հանրային ծառայության համակարգից, տվյալ դեպքում՝ պետական ծառայության հատուկ տեսակ հանդիսացող

զինվորական ծառայության շրջանակներից, չի ենթադրում քաղաքական, անձնային կամ որևէ այլ հայեցողություն՝ զինվորական ծառայության անցնելու և դրանից ազատելու տեսանկյունից, և բացառում է որևէ քաղաքական միջամտություն զինված ուժերի կազմավորման և համալրման հարցում:

10) Սահմանադրության մակարդակում զինված ուժերի գլխավոր շտաբի պետի՝ որպես զինված ուժերի ամենաբարձր պաշտոնատար անձի համար **օրենքով սահմանված կոնկրետ ժամկետով** նշանակելու մասին պահանջի ամրագրումը նպատակաուղղված է, մի կողմից՝ զինված ուժերը քաղաքական ազդեցությունից զերծ պահելուն, մյուս կողմից՝ փորձառու, արհեստավարժ զինվորական ծառայողներին զինված ուժերի ամենաբարձր պաշտոնում պաշտոնավարելու հնարավորություն ընձեռնելուն, որով պետք է կանխվի նաև զինված ուժի բարձրագույն պաշտոնատար անձի սերտաձուլման քաղաքական իշխանության հետ, և ենթադրում է, որ **այդ ժամկետում նա պետք է ունենա պաշտոնավարման, այն է՝ պաշտոնից քաղաքական, անձնային կամ որևէ այլ հայեցողական հիմքով ազատումը, ինչպես նաև կամայական ազատումը բացառող օրենսդրական և գործնական երաշխիքներ:**

Այսպիսով՝ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը, տրամադրելով անսահմանափակ հայեցողություն բարձրագույն հրամանատարական կազմին ազատելու հարցում, խախտում է Սահմանադրության 14-րդ հոդվածով երաշխավորված՝ զինված ուժերի քաղաքական չեզոքության պահանջը, քանի որ նրանց պաշտոնավարումը կախվածության մեջ է դնում գործող քաղաքական իշխանության նկատմամբ լոյալությունից:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակային ծանրաբեռնվածության ամբողջ իմաստը հենց այն է, որ գլխավոր շտաբի պետի պարագայում պաշտոնանկության համար բացառվի որևէ քաղաքական հայեցողություն:

**2.2.** Հարկ է նշել, որ Սահմանադրությամբ զինվորական ծառայությանը վերաբերելի դրույթները համահունչ են Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին, ինչպես նաև հանրային ծառայության կայունության սկզբունքին:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի բովանդակությանը: Ըստ այդմ՝

1) հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը՝ իր սահմանադրական ձևակերպման շրջանակներում, որևէ սահմանափակման ենթակա չէ, սակայն այն կանոնակարգող մանրամասները պետք է սահմանվեն օրենքով (Սահմանադրության 49-րդ հոդվածի երկրորդ նախադասություն), (ՄԴՈ-1488)։

2) Սահմանադրության 49-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորված է հանրային ծառայության անցնելու իրավունքը, իսկ դա իրականացնելու համար օրենսդիրը պարտավոր է ապահովել ընդհանուր հիմքեր՝ **բացառելով որևէ խտրականություն** (ՄԴՈ-1488)։

3) ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էապես տարբերվել միմյանցից կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից (ՄԴՈ-1488)։

4) ընդհանուր հիմունքներով **հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք** (ՄԴՈ-1488)։

5) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն պետք է իրականացվի **ոչ խտրական հիմքերով**՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, թե ոչ, և անկախ որևէ այլ հանգամանքից, որը **օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով չի հանգեցնում նրա պաշտոնավարման իրավունքին իրավաչափ միջամտության** (ՄԴՈ-1507)։

6) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ **հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, լինի համաչափ** (ՄԴՈ-1507)։

7) հանրային ծառայությունը կարգավորող օրենքներում չպետք է ամրագրվեն սոսկ քրեական հետապնդման հարուցման փաստով պայմանավորված այնպիսի հավելյալ սահմանափակումներ,

որոնք, մի կողմից՝ **դուրս են հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությունից**, մյուս կողմից՝ չունեն առարկայական արդարացում հատուկ օրենքում (ՄԴՈ-1507):

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, մեր կարծիքով, վերաբերելի էին նաև սույն գործի շրջանակներում քննության առարկային, ի մասնավորի՝ հանրային ծառայության համակարգում հանրային ծառայողի պաշտոնավարմանը չարդարացված, անհամաչափ և կամայական բոլոր այլ միջամտություններից պաշտպանելու առումով, որով միայն կարող էր ապահովվել համապատասխան հիմնական իրավունքի արդյունավետ իրականացումը՝ Սահմանադրության 49-րդ և 75-րդ հոդվածների պահանջների հիման վրա:

Հարկ է նկատել, որ զինվորական ծառայության համար՝ որպես հանրային ծառայության հատուկ տեսակի, սահմանադրական կարգավորումներն այս մասով առանձնահատկություններ չեն սահմանում, ուստի Սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները հավասարապես տարածվում են նաև զինվորական ծառայության վրա:

Վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ անհրաժեշտ ենք համարում հավելել, որ.

1) հանրային ծառայողի, ներառյալ զինվորական ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ **հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում.**

2) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն, լինի դա օրենսդրական կարգավորման միջոցով, թե գործնականում, չի կարող իրականացվել **կամայական հիմքերով**՝ անկախ որևէ հանգամանքից.

3) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին միջամտությունը պետք է լինի միայն օբյեկտիվ հիմքով և հետապնդի իրավաչափ նպատակ.

4) օբյեկտիվ հիմքով իրականացվող միջամտությունը հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին **պետք է լինի համաչափ, ընդամին՝ հանրային ծառայողի պաշտոնավարման հարկադիր դադարեցումը վերջին միջոցն է.**

5) հանրային ծառայությանը վերաբերող օրենքներում չպետք է ամրագրվեն, մի կողմից՝ **հանրային ծառայության ընդհանուր հա-**

ՍԱՐՅԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

մակարգի տրամաբանությանը հակասող, մյուս կողմից՝ հատուկ օրենքներում առարկայական արդարացում չունեցող կարգավորումներ:

Հանրային ծառայության համակարգը՝ հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակին հատուկ առանձնահատկություններով հանդերձ, միասնական համակարգ է, որը հիմնված է հանրային ծառայողների ընդհանուր կարգավիճակի միասնականության սկզբունքի վրա: Ոչ իրավաչափ կարգավորումները կամ իրավակիրառ պրակտիկան կարող են խաթարել հանրային ծառայության համակարգի գործունակությունը: Հանրային ծառայողների խմբերի կամ ենթախմբերի միջև առարկայական չափանիշներով չարդարացված որևէ տարբերակում հակահամակարգային է և դրանով նույնպես հակասում է Սահմանադրությանը, հատկապես՝ խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին:

**2.3.** Սահմանադրության՝ «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում իրավական դիրքորոշումներ է արտահայտել անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ: Ըստ այդմ՝

1) պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՄԴՈ-731):

2) Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում **օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում**: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրակա-

նության: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881)։

3) խտրականությունն առկա է այն դեպքում, երբ **նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում**, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224)։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն **համադրելի իրավիճակներում գտնվող անձանց** նկատմամբ վերաբերմունքի միջև։

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել։ Մասնավորապես իր վճիռներից մեկում (Andrejeva v. Latvia (GC 18.02.2009, 55707/00, § 81) դատարանը նշել է, որ տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին։

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանի կողմից անհրաժեշտաբար պարզման ենթակա պետք է լիներ, թե սույն գործով վիճարկվող դրույթում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական ծառայողներին ազատելու հարցում տարբերակված մոտեցումն ունի՞ արդյոք օբյեկտիվ հիմք, հետապնդում է արդյոք իրավաչափ նպատակ և արդյոք ք համաչափ է։

**2.4.** Մեր գնահատմամբ՝ զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավական կարգավիճակը սույն գործով վեճի առարկա հանդիսացող հարցում միասնական է՝ անկախ տարբեր խմբերի զինծառայողների աստիճանակարգությունից և ծառայության առանձնահատկություններից։ Այդ միասնականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զինվորական ծառայությունը հանրային ծառայության այնպիսի հատուկ տեսակ է, որն իրականացվում է մասնագիտական, այլ ոչ թե քաղաքական կամ այլ հիմունքներով։



Հրամանատարական բոլոր զինծառայողներն ունեն միասնական իրավական կարգավիճակ՝ անկախ աստիճանակարգությունից: Նրանք իրենց ծառայությունն իրականացնում են մասնագիտական հիմունքներով: Ուստի զինվորական ծառայողների պատկանելիությունը հրամանատարական կազմին արդեն իսկ նրանց միավորող օբյեկտիվ հատկանիշ է, ընդ որում՝ առանձնանում են կրտսեր, միջին և բարձրագույն խմբերը՝ ինչպես և էության մեջ հանրային ծառայության բոլոր այլ բնագավառներում և մակարդակներում:

Զինված ուժերում հանրային ծառայությունը Սահմանադրության ուժով տարանջատվում է պաշտպանության նախարարությունում հանրային ծառայությունից: Դա պայմանավորված է զինված ուժերի գլխավոր շտաբի և պաշտպանության նախարարության բարձրագույն պաշտոնատար անձանց գործառույթների էական տարբերությամբ: Եթե գլխավոր շտաբի խնդիրները մասնագիտական են, ապա պաշտպանության նախարարը և նրա տեղակալներն ապահովում են պաշտպանության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը և քաղաքական պատասխանատվություն են կրում դրա համար:

Հանրային ծառայությունը հիմնվում է միասնական սկզբունքների վրա՝ ճյուղային առանձնահատկություններով պայմանավորված անհատականացմանը զուգահեռ:

Սահմանադրության 49-րդ հոդվածով է պայմանավորված հանրային ծառայության միասնականությունը. ընդհանուր հիմունքներով **հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքից ածանցվում է պաշտոնավարելու և պաշտոնից ազատվելու հիմքերի սկզբունքային ընդհանրությունը**, որը ենթադրում է, որ հանրային ծառայությունից ազատվելու հիմքերի դեպքում՝ անհատականացման բավարար աստիճանի ապահովմանը զուգահեռ, չի կարող այնպիսի տարբերակում դրվել հանրային ծառայողների տարբեր խմբերի միջև, առավել ևս նույն տեսակի հանրային ծառայություն իրականացնող ծառայողների տարբեր խմբերի միջև, որով կխախտվեն հանրային ծառայության՝ մասնագիտական հիմունքներով գործունեություն իրականացնելու, արհեստավարժության սկզբունքները: Դա կլինի հակահամակարգային մոտեցում և կարող է հանգեցնել ամբողջ հանրային ծառայության համակարգի կազմաքանդման: Մյուս կողմից՝ ընտրական և քաղաքական գործընթացներով, իսկ առանձին դեպքերում կարգավիճակային՝ սահմանադրորեն լեգիտիմացված էական տարբերություններով (օրինակ

անկախության պատվիրանով) պայմանավորվում է մի շարք հանրային պաշտոնների չներառումը նեղ իմաստով հանրային ծառայության համակարգի մեջ: Որոշ դեպքերում հանրային պաշտոնները պետք է զբաղեցվեն քաղաքական հիմունքներով: Իսկ դա, իր հերթին, բացառում է մասնագիտական հիմունքներով գործունեություն իրականացնելու, արհեստավարժության սկզբունքների կիրառությունն այդ պաշտոններում ընտրվելու, նշանակվելու կամ այդ պաշտոններից ազատվելու կարգավորումների նկատմամբ: Հետևապես՝ մի կողմից՝ հանրային ծառայության, մյուս կողմից՝ հանրային ծառայության մեջ չմտնող պաշտոններն ստանձնելու, դրանցում պաշտոնավարելու և դրանցից ազատվելու հիմքերի և կարգի տարանջատումը բացառում է այդ հիմքերի և կարգի տարրերի կիրառումը հանրային ծառայողների և հանրային պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց նկատմամբ: Դա նշանակում է, որ հանրային ծառայողների ընտրությունը և նրանց ազատումը պետք է հիմնվեն մասնագիտական չափանիշների վրա, իսկ այլ պաշտոնատար անձանց ընտրությունը, առանձին բացառություններով հանդերձ (դատավորներ, դատախազներ, քննիչներ և այլն)՝ քաղաքական և այլ նպատակահարմարության, անգամ կուսակցական-թիմային հիմունքներով:

Հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային ծառայության հիմնական սկզբունքների թվում են նաև արժանիքահեն կարիերային առաջընթացի վրա հիմնված **հանրային ծառայության կայունությունը** (12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), **հանրային ծառայողի պաշտպանվածությունը մասնագիտական գործունեությանը չհամապատասխանող միջամտությունից** (12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ), **հանրային ծառայողի արհեստավարժությունը** (12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ):

Հանրային ծառայության կայունությունը, հանրային ծառայողի պաշտպանվածությունը քաղաքական միջամտություններից և արհեստավարժությունը համահունչ են Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1488 և ՄԴՈ-1507 որոշումներում արտահայտված՝ վերը հիշատակված հիմնարար իրավական դիրքորոշումների էությանը. ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում **պաշտոնավարելու իրավունքին**, որը, իր հերթին, ենթադրում է **օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատելու արգելք, խտրական հիմքերով հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին միջամտության անթույլատրելիություն, հանրային ծառայության ընդհանուր**

համակարգին հակասող կարգավորումների, հատուկ օրենքում առարկայական արդարացում չունեցող սահմանափառումների բացառում:

«Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված **պետական ծառայության տեսակ է**: Ջինվորական ծառայության կայունության, մասնագիտական հիմունքներով գործունեություն իրականացնելու, քաղաքական միջամտություններից զինծառայողների պաշտպանվածության սկզբունքներն արտացոլվել են հիշյալ օրենքի մի շարք դրույթներում, հատկապես Օրենքի՝ պայմանագրային զինծառայողներին զինվորական պաշտոնից ազատելու հարցերը կարգավորող 40-րդ հոդվածի 1-ին մասում: Ըստ այդմ՝ սահմանվում են պայմանագրային զինծառայողներին զինվորական պաշտոնից ազատելու հիմքերը: Նույն հոդվածի սույն գործով վիճարկվող դրույթում՝ 3-րդ մասում, պայմանագրային զինծառայողների թվից առանձնացվում են բարձրագույն հրամանատարական կազմի զինծառայողները, որոնց զինվորական պաշտոնից ազատումը օրենսդիրը թույլատրում է թե՛ վերը նշված հիմքերով, թե՛ առանց այդ հիմքերի, այսինքն **առանց որևէ հիմքի**:

Մեր կարծիքով՝ պայմանագրային զինծառայողների՝ զինվորական պաշտոնից ազատման հարցում նման տարբերակումը չունի որևէ առարկայական արդարացում (օբյեկտիվ հիմք), չի հետապնդում իրավաչափ նպատակ, հակասում է հանրային, դրա տարատեսակ՝ պետական և վերջինիս տեսակ զինվորական ծառայության համակարգային տրամաբանությանը, իր էությանը խտրական մոտեցում է բարձրագույն հրամանատարական կազմի զինծառայողների նկատմամբ:

Հարկ է ընդգծել, որ նաև Օրենքով որպես զինվորական ծառայության կազմակերպման սկզբունք, ի թիվս այլնի, ամրագրված է խտրականության արգելումը (4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Բոլոր պայմանագրային զինծառայողները պետական ծառայողներ են, իսկ հրամանատարական կազմի պայմանագրային զինծառայողներն իրենց ծառայությունն իրականացնելիս ունեն նույն իրավական կարգավիճակը, ինչ մյուս զինծառայողները՝ հրամանատարական կազմին առնչվող ծառայության առանձնահատկություններով հանդերձ: Ակնհայտ է նաև, որ բարձրագույն հրամանատարական կազմին դասվող զինվորական ծառայողները նույն հրամա-

նատարական կազմի մաս են կազմում, ունեն նույն իրավական կարգավիճակը, պարզապես այլ զինձառայողներից և, հատկապես՝ միջին և կրտսեր հրամանատարական կազմի ծառայողներից տարբերվում են իրենց **մասնագիտական գործառույթների բարդության և դրանով պայմանավորված պատասխանատվության առավել բարձր աստիճանով**: Այս տարբերությունները կարգավիճակային չեն, ամբողջովին տեղավորվում են հանրային ծառայության համակարգային տրամաբանության մեջ, ուստի չունեն որևէ օբյեկտիվ հիմք, առավել ևս որևէ պարագայում չեն կարող հիմք հանդիսանալ առանց որևէ հիմքի պաշտոնից ազատման համար:

Բացի դրանից, բարձրագույն հրամանատարական կազմին պատկանելիությունը բացառում է քաղաքական ազդեցության հնարավորությունը նաև այդ կազմի վրա, ուստի պահանջում է այդ կազմի զինձառայողների պաշտոնավարման երաշխավորում: Դա նշանակում է, որ քաղաքական կամ անձնային հայեցողությամբ բարձրագույն հրամանատարական կազմի զինձառայողներին զինվորական պաշտոնից ազատումը չի կարող հետապնդել և չի հետապնդում Սահմանադրությամբ նախատեսված, այսինքն՝ իրավաչափ նպատակ:

Հարկ է նշել, որ, մասնավորապես՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայության, ոստիկանությունում ծառայության, քրեակատարողական ծառայության, փրկարար ծառայության հետ կապված հարաբերություններ սահմանող օրենքներով համապատասխան ծառայողներին առանց օրենքով սահմանված որևէ հիմքի ազատելու օրենսդրական հնարավորություն նախատեսված չէ:

Այսպիսով՝ սույն գործով վիճարկվող դրույթում սահմանված՝ **զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի զինձառայողներին առանց օրենքով սահմանված որևէ հիմքի զինվորական պաշտոնից ազատելու օրենսդրական հնարավորությունը, մեր կարծիքով, հակասում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին**:

**2.5.** Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը նշանակում և ազատում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ, **օրենքով սահմանված դեպքերում և կարգով**:

Սահմանադրության հիշյալ նորմի վերլուծությունից, ի թիվս այլնի, միանշանակ հետևում է, որ միայն օրենքի մակարդակում

պետք է սահմանվեն զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման դեպքերը և կարգը, ինչպես նաև այդ դեպքերը և կարգը պետք է սահմանվեն պոզիտիվ կարգավորումների միջոցով՝ բավարարելով նաև Սահմանադրության մյուս, մասնավորապես՝ որոշակիության և համաչափության սկզբունքների պահանջները:

**Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման դեպքերը և կարգն օրենքում չնախատեսելը չի կարող դիտարկվել որպես հիմք կամ կարգ՝ Սահմանադրության իմաստով, ուստի այդ առումով օրենսդիրը չունի որևէ հայեցողություն:**

**Որևէ դեպք չնախատեսելը ոչ մի մեկնաբանությամբ չի կարող դիտարկվել որպես Սահմանադրությամբ նախատեսված ազատման դեպքերը օրենքով սահմանելու պահանջի կատարում: Սահմանադրության տեսանկյունից այդպիսի դեպքերը պետք է բավարար հստակությամբ նկարագրվեն օրենքում:**

Բարձրագույն հրամանատարական կազմում ընդգրկված անձի համար հստակ ու որոշակի պետք է լինի, որ օրենքով նախատեսված դեպքերով նկարագրված վարքագծից ձեռնպահ մնալու պարագայում իր համար օրենքով սահմանված ժամկետով պաշտոնավարումը երաշխավորված է: Այս սկզբունքը կոչված է զերծ պահելու կառավարման խորհրդարանական համակարգին բնորոշ քաղաքական իշխանությունների արագ փոփոխման արդյունքում զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի փոփոխությունից՝ դրանով իսկ ապահովելով բարձրագույն հրամանատարական կազմի պրոֆեսիոնալիզմը, կայունությունը, քաղաքական չեզոքությունը, իսկ վերջնարդյունքում՝ պետության պաշտպանունակությունը:

Եթե առանց որևէ դեպքի, հիմքի՝ քաղաքական իշխանությունն իրավասու լինի ազատելու բարձրագույն հրամանատարական կազմին, ապա դժվար չէ նկատել, որ բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնն այս մասով կդառնա քաղաքական այնպիսի պաշտոն, ինչպիսին է նախարարի կամ փոխնախարարի պաշտոնը, որում նշանակելու և ազատելու հիմքում քաղաքական հայեցողությունն է<sup>1</sup>:

<sup>1</sup> Սույն գործով Հայաստանի Հանրապետության փաստաբանական պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնն իր կարծիքում, մասնավորապես, նշում է, որ Օրենքի վիճարկվող 40-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասի Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին, 139-րդ հոդվածի 3-րդ մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանությունը խնդրահարույց է: Փաստաբանական պալատը, ի թիվս այլնի, նշում է, որ «Զինված

Սահմանադրության վերոհիշյալ կարգավորումից հետևում է զինվորական ծառայությունը, այդ թվում՝ բարձրագույն հրամանատարական կազմի ծառայությունը մասնագիտական հիմունքներով իրականացնելու պահանջը, որը բացառում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման և ազատման հարցում քաղաքական, անձնային և ցանկացած այլ հայեցողություն:

Սահմանադրական դատարանի՝ արդեն իսկ վկայակոչած ՄԴՈ-1507 որոշումն օրենսդրից, ի թիվս այլնի, պահանջում է, որ հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ **հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում:**

Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի զինծառայողներին զինվորական պաշտոնից ազատելը, համաձայն Օրենքի վիճարկվող դրույթի, կարող է իրականացվել մյուս պայմանագրային զինծառայողների ազատման հիմքերով կամ առանց դրանց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճի առարկան չի վերաբերում հիշյալ հիմքերի բովանդակությանը, Սահմանադրական դատարանը պետք է գնահատեր ոչ թե այդ հիմքերի, այլ այդպիսիք չսահմանելու սահմանադրականությունը, քանի որ օրենսդիրը ոչ թե չի նախատեսել հանրային ծառայողների կոնկրետ խմբին դասվող անձանց պաշտոնավարման հարկադիր դադարեցման հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, այլ թույլ է տվել այդ անձանց պաշտոնավարման հարկադիր դադարեցում առանց որևէ հիմքի՝ սոսկ քաղաքական, անձնային կամ որևէ այլ նպատակահարմարությունից ելնելով:

**Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազա-**

ուժերի և այլ գործերի բարձրագույն հրամանատարական կազմին օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակելը և ազատելը իր հերթին ուղղակիորեն բխում է Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մասից, այն է՝ *Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են: Նշված նորմի սահմանումն ինքնանպատակ չէ, այլ երաշխիքն է այն բանի, որ վերոգրյալ պաշտոններին նշանակված անձինք քաղաքական իշխանության փոփոխման պայմաններում շարունակեն պաշտոնավարել (դրանք զինվորական, այսինքն՝ մասնագիտական ծառայության, այլ ոչ թե քաղաքական պաշտոններ են)*՝ դրանով իսկ ապահովելով զինված ուժերի սահմանադրական առաքելության լիարժեք ու անխափան իրականացումը՝ ՀՀ պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը քաղաքական պրոցեսներից անկախ: Վերջիններին նշանակելու և ազատելու դեպքեր չսահմանելը, այսինքն՝ այդ հարցում կամայականություն դրսևորելն ինքնին կհանգեցնի տվյալ պաշտոնների քաղաքականացման»:

տումը հասկապես քաղաքական նպատակադրմամբ ոչ միայն հակասում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին, այլև վտանգում է զինված ուժերի կողմից իրենց սահմանադրական գործառույթների պատշաճ կատարումը, քանի որ դա կարող է խաթարել հենց զինված ուժերի ապաքաղաքականացվածության սկզբունքը, որը դասվում է սահմանադրական կարգի հիմունքների շարքին:

Զինված ուժերի ներգրավումը քաղաքականության մեջ կարող է դրսևորվել ոչ միայն զինված ուժերի կամ հանրային իշխանության այլ մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության միջոցով, այլև զինված ուժերում պաշտոնների նշանակումը և ազատումը քաղաքականացնելու միջոցով:

Օրենքի ուժով զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ազատման համար հիմքերի բացառման իրավական հնարավորությունը նույնական է օրենքով այդպիսի հիմքեր չնախատեսելուն, մինչդեռ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում սահմանադրի կողմից գործածված՝ «օրենքով սահմանված դեպքեր» բառակապակցությունը պահանջում է օրենքում ազատման հիմքերի ուղղակի ամրագրում:

Այսպիսով՝ վերոհիշյալ առումով ևս սույն գործով **վիճարկվող դրույթը, մեր գնահատմամբ, հակասում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին:**

**2.6.** Հարկ է նկատել, որ հանրային ծառայությունից հանրային ծառայողի կամքին հակառակ ազատելը սահմանափակում է Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված հիմնական իրավունքի բովանդակային ծավալում ներառվող՝ (հետագա) պաշտոնավարման և կամայական հիմքերով պաշտոնից ազատվելուց պաշտպանության սուբյեկտիվ հանրային իրավունքները: Ընդամին՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի ուժով օրենսդիրը պարտավոր էր ապահովել նաև այս **հիմնական իրավունքի իրականացման համար** անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1507 որոշումն օրենսդրից, ի թիվս այլնի, պահանջում է, որ հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ **հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, լինի համաչափ:**

Հանրային ծառայողին առանց որևէ հիմքի պաշտոնից ազատելու օրենսդրական հնարավորությունն օրենսդրական կամայականության դրսևորում է, քանի որ թույլ է տալիս անտեսել հանրային ծառայողի մասնագիտական կարողությունները, դրանով, ըստ էության, կասկածի տակ դնել նրա վաստակը, հաշվի չառնել նրա կողմից որևէ վարքագծի կանոնի խախտումը և դրանում նրա մեղքի աստիճանը, ինչպես նաև բոլոր այլ **առարկայական հանգամանքները**՝ նախապատվությունը տալով պաշտոնից ազատողի քաղաքական, անձնային կամ այլ սուբյեկտիվ նախընտրություններին<sup>1</sup>: Այլ կերպ՝ հանրային ծառայողի հարկադիր ազատումն անկախ նրա վարքագծից և անկախ որևէ այլ **օբյեկտիվ հիմքից**, ինչը նշանակում է, որ այդպիսի ազատման նպատակն ակնհայտորեն իրավաչափ չէ, հետևապես՝ հանրային ծառայողի պաշտոնավարման հարկադիր դադարեցումը՝ որպես նրա պաշտոնավարման իրավունքի՝ օրենքով նախատեսված սահմանափակում, չի հետապնդում Սահմանադրությամբ սահմանված նպատակ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ քաղաքական, անձնային կամ այլ հայեցողությունը որևէ օրենքով չի կարող նախատեսվել որպես առարկայական չափանիշ, ուստի չի կարող դրանով արդարացվել:

Լինելով Սահմանադրության 49-րդ հոդվածով ապահովված՝ օրենքով նախատեսված ընդհանուր հիմունքներով զբաղեցված պաշտոնում հետագա պաշտոնավարման իրավունքի առավել ինտենսիվ սահմանափակում՝ նման օրենսդրական միջամտությունը, մեր կարծիքով, ակնհայտորեն **հակասում է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքին՝ այդ սկզբունքի հենց առաջին բաղադրիչի՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակի տեսանկյունից:**

Բացի դրանից, հիշյալ հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդիրը հանրային ծառայողների առանձին խմբի՝ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի համար ոչ միայն չի նախատեսել **անհրաժեշտ կազմակեր-**

<sup>1</sup> Մարդու իրավունքների պաշտպանն սույն գործով վիճարկվող դրույթի վերաբերյալ իր կարծիքում, մասնավորապես, նշում է, որ «...վիճարկվող կարգավորման պայմաններում ստացվում է այնպես, որ պետությունը տարիներ շարունակ բարձրագույն հրամանատարական խմբի զինվորական պաշտոնների համար պատրաստում է կադրեր, օգնում նրանց ձեռք բերել անհրաժեշտ փորձ, հմտություններ, հոգեբանական որակներ և այլ հատկանիշներ, նրանց նշանակում է նշված պաշտոններին միևնույն ժամանակ նախատեսելով առանց որոշակի հիմքերի վերջիններին զինվորական ծառայությունից ազատելու հնարավորություն ընձեռող օրենսդրական կարգավորում: Այդ կերպ, զինված ուժերը կարող են կորցնել բարձր որակավորում ունեցող բանիմաց կադրեր, որոնց փոխարինման հարցում պրակտիկայում կարող են առաջանալ դժվարություններ»:



**պական կառուցակարգեր և ընթացակարգեր**, այլև հնարավոր է դարձրել առանց օրենքով սահմանված որևէ հիմքի և պատճառաբանության հանրային ծառայողի պաշտոնավարումը նրա կամքին հակառակ դադարեցնելը, ինչը, մեր կարծիքով, **հակասում է Սահմանադրության 75-րդ հոդվածին:**

2.7. Փաստելով, որ զինված ուժերի կողմից իրենց սահմանադրական գործառույթների պատշաճ իրականացումն ուղղակիորեն կապված է քաղաքական և մասնագիտական չափանիշներով չպայմանավորված այլ միջամտություններից զինված ուժերի պաշտպանվածության և պաշտպանության ապահովման հետ, գտնում ենք, որ այդ հարցում էական դերակատարում պետք է ունենան հանրային իշխանության բոլոր այն մարմինները, որոնք օժտված են քաղաքական մարմիններին հակակշռելու սահմանադրական գործառույթներով: Դատական իշխանության մարմիններից գատ այդ հարցում կենտրոնական նշանակություն ունի Հանրապետության նախագահի կողմից իր սահմանադրական գործառույթների պատշաճ իրականացումը, առանց որի Սահմանադրությամբ նախատեսված զսպումների և հակակշռների տարբերակված կառուցվածքը, հետևապես՝ նաև իշխանությունների բաժանման հիմնարար սահմանադրական սկզբունքը, իսկ վերջնարդյունքում՝ ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքները, այսինքն՝ նաև սահմանադրական կարգը կարող են վտանգվել:

Գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ Հանրապետության նախագահն այս կամ այն ակտն գնահատում է Սահմանադրությանն առերևույթ հակասող, ապա դրան պետք է հաջորդի Հանրապետության նախագահի կողմից այդ ակտի սահմանադրականության վիճարկումը Սահմանադրական դատարանում, մինչդեռ Հանրապետության նախագահի կողմից, ինչպես երևում է գործի նյութերից, որդեգրվել է լիովին այլ մոտեցում:

Այսպես՝ հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանրապետության նախագահը 2021 թվականի փետրվարի 27-ին վարչապետին է վերադարձրել Օնիկ Գասպարյանին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը՝ իր առարկություններով: Հանրապետության նախագահը, մասնավորապես, նշել է. «Սահմանադրությամբ, ինչպես նաև «Պաշտպանության մասին» օրենքով գլխավոր շտաբի պետին օրենքով նախատեսված ժամկետից ավելի վաղ ժամկետում պաշտոնից ազատելու հիմքեր և կարգ նախատեսված

չեն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու վերաբերյալ հրամանագիրը առերևույթ չի համապատասխանում Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին»:

Այնուհետև վարչապետը գրավոր հայտնել է, որ Հանրապետության նախագահի առարկությունները չի ընդունում՝ իր հիմնավորումներով: Հանրապետության նախագահը որոշել է չընդունել առաջարկվող հրամանագիրը և չի դիմել Սահմանադրական դատարան:

Իր 2020 թվականի մարտի 31-ի ՄԴՈ-1518 որոշման մեջ Սահմանադրական դատարանն անդրադարձել է խորհրդարանական պետությունում Հանրապետության նախագահի կարգավիճակին, նրա գործառույթներին, լիազորություններին և նրա դերին՝ զսպումների և հակակշիռների համակարգում:

Հիշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների բնույթին և տեսակներին՝ Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը գնահատելով որպես ինքնուրույն հայեցողական լիազորություն:

Ի թիվս այլնի Սահմանադրական դատարանն իր հիշյալ որոշման մեջ հանգել է հետևյալ եզրակացության. «Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթը, իր հերթին, ենթադրում է, որ Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառույթն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև **պետք է կարողանա, նախևառաջ, կանխել դրանց ի հայտ գալը**՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով»:

Իհարկե, Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը Հանրապետության նախագահի ինքնուրույն հայեցողական լիազորություն է: Մյուս կողմից՝ այդ և այլ վերաբերելի լիազորությունների միջոցով **պետք է ապահովվի, այլ ոչ թե խաթարվի Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու իր սահմանադրական առանցքային գործառույթի պատշաճ իրականացումը, որով և նա դառնում է օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին զսպող և հակակշռող էական դերակատար:**

Հետևապես՝ Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունն իրականացնելիս նրա հայեցողությունն իրեն սպառում է այն ժամանակ, երբ Հանրապետության նախագահը հայտարարում է այն մասին, որ իր մոտ արդեն ձևավորվել է որևէ հարցի սահմանադրականության վերաբերյալ դիրքորոշում: Ընդամին՝ այն ժամանակ, երբ այդ դիրքորոշումն իր արտացոլումն է ստանում Հանրապետության նախագահի որևէ գործողության մեջ՝ ի լուր հանրության կամ հանրային իշխանության այլ մարմինների, Հանրապետության նախագահը սպառում է Սահմանադրական դատարան դիմելու իր հայեցողությունը, և Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը, ըստ էության, փոխակերպվում է պարտադիր լիազորության:

Այլ կերպ՝ Հանրապետության նախագահն ամբողջովին ինքնուրույն, առանց որևէ ուղղորդման, գերծ պահելով իրեն որևէ ճնշումից, պետք է գա համոզման, որ այն իրավական ակտը կամ դրա նախագիծը, որն իրեն ներկայացվել է, հակասում է Սահմանադրությանը: Ավելին՝ անգամ այդ դեպքում, քանի դեռ նա իր աշխատակազմի շրջանակներից դուրս որևէ կերպ պաշտոնապես չի ազդարարել այդ մասին, դա որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել և չի կարող կաշկանդել իրեն: Սակայն այն դեպքում, երբ դա արվել է իր կողմից, Հանրապետության նախագահը պարտավոր է դիմել Սահմանադրական դատարան, քանի որ դա արդեն իսկ կաշկանդում է իրեն: Ազատորեն ձևավորված իր իսկ կամաարտահայտությանը հակառակ գործելը չի տեղավորվում հանրային իշխանության որևէ մարմնի կամ որևէ պաշտոնատար անձի սահմանադրական կարգավիճակի և դրանից ածանցվող պաշտոնեական հեղինակության սահմաններում: Դա առավել ևս վերաբերում է Հանրապետության նախագահին, որն առանցքային դերակատար է հակակշիռների և զսպումների համակարգում:

Սահմանադրությունը որևէ կերպ չի կարող արտոնել կամ խթանել հանրային իշխանության հեղինակագրկումը, որով կարող է խաթարվել վստահությունը հանրային իշխանության նկատմամբ: Ուստի Հանրապետության նախագահի պաշտոնն ստանձնած անձն իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս պետք է գործի իր պաշտոնի հեղինակության հաշվառմամբ՝ այն սեփական գործողություններով չխաթարելու միտումով: Ընդամին՝ Հանրապետության նախագահը, ի տարբերություն քաղաքական բնույթ ունեցող գործադիր (բացառությամբ անկախ և ինքնավար մարմինների) և օրենսդիր իշխանության մարմինների, քաղաքական պատասխա-

նատվություն չի կրում, և նրա նկատմամբ չի կարող կիրառվել քաղաքական-հանրային ճնշումների պրակտիկան:

Անընդունելի է Հանրապետության նախագահի ինքնուրույն հայեցողական լիազորությունների այնպիսի մեկնաբանությունը, որի միջոցով Հանրապետության նախագահը հրաժարվում է իր սահմանադրական գործառույթների իրականացումից կամ դրանք մասնակի է իրականացնում՝ ինչով և ինչպես էլ որ դա պատճառաբանվի:

Այն դեպքերում, երբ Հանրապետության նախագահն ինքն է իր ցույց դնում Սահմանադրությանն սպառնացող վտանգները, առավել ևս դրանք գնահատում է որպես առերևույթ, նա իրավասու չէ չգործադրելու իր հայեցողական լիազորությունները ճիշտ այնպես, ինչպես որ ոչ մի դեպքում իրավասու չէ չիրականացնելու իր պարտադիր լիազորությունները:

Իսկ եթե Հանրապետության նախագահը որևէ վտանգ գնահատում է որպես սպառնալիք սահմանադրական կարգին, Սահմանադրական դատարան դիմելու նրա հայեցողությունը դառնում է սուսկ «ձևական» ըստ էության վերածվելով պարտադիր լիազորության:

Հանրապետության նախագահն իր թե՛ պարտադիր և թե՛ հայեցողական լիազորությունները չի կարող մեկնաբանել և կիրառել այնպես, որ խաթարվի իր սահմանադրական գործառույթների, հատկապես Սահմանադրության պահպանմանը հետևելու բուն էությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը Սահմանադրական դատարանի կողմից պետք է ճանաչվեր Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 29, 49, 75 և 78-րդ հոդվածներին, ինչպես նաև 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող և անվավեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ  
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

12 նոյեմբերի 2021 թ.

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
**Սահմանադրական դատարանի դատավորներ**  
**Հրայր Թովմասյանի և Արևիկ Պետրոսյանի**  
**2021 թվականի նոյեմբերի 12-ի հատուկ կարծիքի**

Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 2-ին  
Սահմանադրական դատարանի դատավորների կողմից  
քվեարկված և ընդունված որոշման (նախագծի) տեքստը

**ՆԱԽԱԳԻԾ**



**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝**  
**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ**  
**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 նոյեմբերի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի, (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի՝ Հանրապետության նախագահի,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Ջուլհակյանի, Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2021 թվականի մարտի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

**1. Վիճարկվող դրույթի համառոտ նկարագրությունը**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը (ՀՕ-195-Ն, այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին:

Օրենքի «Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ»:

Օրենքի վիճարկվող դրույթը՝ 40-րդ հոդվածի 3-րդ մասը օրենքում լրացվել է 2018 թվականի հունիսի 21-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 9-ին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

զինձառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-344-Ն օրենքով: 40-րդ հոդվածի 3-րդ մասը հղում է կատարում Օրենքի 35.1 հոդվածին՝ սահմանելով, որ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինձառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է Օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Ընդ որում, 35.1 հոդվածով Օրենքում լրացվել է 2018 թվականի հունիսի 21-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 9-ին ուժի մեջ մտած վերը նշված ՀՕ-344-Ն օրենքով:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի բացատրությունները, վերլուծելով Սահմանադրության համապատասխան իրավակարգավորումները և վիճարկվող ու օրենսդրության վերաբերելի այլ դրույթները, ինչպես նաև գործում առկա մյուս նյութերը (Մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ փաստաբանական պալատի դիրքորոշումները)՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**:

## 2. Դիմողի փաստարկները և դիրքորոշումը

Դիմողի պնդմամբ՝ «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասն առերևույթ հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 57-րդ հոդվածի 2-րդ մասին, իսկ իրավակիրառ պրակտիկայում որոշակի մեկնաբանության հետևանքով նաև Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին:

Դիմողն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է պայմանագրային զինձառայողին պաշտոնից ազատելու **դեպքերը (հիմքերը)**, մինդեռ հիշյալ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում այն լրացվել է վիճահարույց 3-րդ մասով, որի համաձայն՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել սուկ քաղաքական հայեցողությամբ՝ առանց պաշտոնից ազատման Օրենքով սահմանված հիմքերի առկայության:

Վկայակոչելով Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը և 79-րդ հոդվածը՝ դիմողը նշում է, որ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը պետք է սահմանված լինեն օրենքով, քանզի որո-

շակի իրավական հետևանքի վրա հասնելու համար անհրաժեշտ է համապատասխան փաստակազմի առկայություն, որը կարող է լինել և՛ կոնկրետ դեպքերի փաստի տեսքով, և՛ որոշակի պայմանների առկայության դեպքում՝ հայեցողական, սակայն այդպիսի փաստակազմը պետք է համապատասխանի Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի պայմաններին:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիմքով՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմը իրավական և մեկնաբանության չափանիշների տեսանկյունից հակասում է իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին և չի կարող մեկնաբանվել որպես «օրենքով նախատեսված դեպք», քանի որ տվյալ դրույթով նախատեսվում է օրենքով սահմանված դեպքերի բացակայության պարագայում կամայական որոշմամբ պաշտոնից ազատելու հնարավորություն՝ առանց որևէ փաստակազմի կամ պայմանների վրա հասնելու անհրաժեշտության շարադրման:

Դիմողի կարծիքով, աշխատանքից ազատման հիմքերն օրենքով նախատեսված լինելու պայմանը բխում է նաև Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից, մինդեռ վիճարկվող դրույթում անտեսվել է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 57-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ պահանջը, ինչպես նաև 79-րդ հոդվածում ամրագրված՝ որոշակիության սկզբունքի պահանջը, և վիճարկվող իրավադրույթում ազատման հիմքեր նախատեսված չեն:

Հղում կատարելով Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին և «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասին՝ դիմողը նշում է, որ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման ժամկետը, Սահմանադրության համաձայն, պետք է լինի որոշակի, իսկ Օրենսդիրը, հստակեցնելով սահմանադրական այս պահանջը, ամրագրել է պաշտոնավարման հնգամյա ժամկետ:

Վերլուծելով Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի ՄԴՈ-1518 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ դիմողը հանգում է եզրակացության, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքում կիրառելի չէ, և այնքանով, որքանով չի սահմանում հստակ



բացառություն ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքի համար, խնդրահարույց է նաև Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում:

**3. Պատասխանողի փաստարկները և դիրքորոշումը**

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 133-րդ հոդվածը, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը, Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի 1857-Ն որոշման 1-ին կետը, նշում է, որ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնն ընդգրկվում է զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում, և սահմանադիրը, ի տարբերության Սահմանադրությամբ հիշատակված այլ պաշտոնների, հիշյալ պաշտոնի դեպքում սպառիչ չի ամրագրել այն բոլոր դեպքերը, երբ վերջինիս պաշտոնավարումը դադարում է հնարավորություն ընձեռելով օրենսդրին նախատեսել նման դեպքերը:

Վերլուծելով վիճարկվող նորմը՝ պատասխանողը գտնում է, որ օրենսդիրն ամրագրել է վարչապետի հայեցողական լիազորությունը Հանրապետության նախագահին առաջարկել զինվորական պաշտոնից ազատել բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին, որն ամբողջությամբ համահունչ է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքով սահմանված դեպք» հասկացությանը:

Պատասխանողը պնդում է, որ վիճարկվող օրինադրույթի որոշակիությունը, բնավ, խնդրահարույց չէ, այն ձևակերպված է հստակ, դրանում չեն օգտագործվում գնահատողական հասկացություններ, որպիսի պայմաններում դիմումում մատնանշված փաստարկներն առարկայագուրկ են:

Անդրադառնալով Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասով և Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումների փոխհարաբերությանը՝ պատասխանողը գտնում է, որ պաշտոնյայի որոշակի ժամկետով նշանակվելը դեռևս չի նշանակում, որ նրա պաշտոնավարումը չի կարող դադարել մինչև նշված ժամկետի ավարտը: Սահմանադրությամբ հիշատակվող բոլոր պաշտոնյաների դեպքում Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված են կառուցակարգեր, որոնց կյանքի կոչվելու դեպք

քում համապատասխան պաշտոնյայի լիազորությունները դադարում են մինչև նրա պաշտոնավարման ժամկետը լրանալը:

Պատասխանողն անհիմն է համարում նաև դիմողի այն պնդումը, որ «Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասով գլխավոր շտաբի պետի, որպես զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ներկայացուցչի, մասով սահմանվում են հատուկ նորմեր՝ ի համեմատ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմերի»: Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակի նշվում է, որ գլխավոր շտաբի պետը նշանակվում է օրենքով սահմանված ժամկետով, մինչդեռ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով նման կամ որևէ ժամկետի հարց առհասարակ չի շոշափվում, հետևաբար՝ տվյալ դեպքում առկա չէ կոլիզիա և, ըստ այդմ, ընդհանուր և հատուկ նորմի հարաբերակցության հարց:

Պատասխանողը նշել է, որ «Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը վերաբերում է բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողներին, որոնցից մեկն է գլխավոր շտաբի պետը, հետևաբար՝ նշված նորմում գլխավոր շտաբի պետի ազատման դեպքը, որպես բացառություն նշելուց ձեռնպահ մնալը օրենսդրի կամքի արտահայտման արդյունք է՝ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքը Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման շրջանակներում ներառելը նաև հանդիսանում է օրենսդրի ուղղակի կամքը»:

Պատասխանողի պնդմամբ՝ հիմնազուրկ են նաև պնդումներն առ այն, որ Հանրապետության նախագահը չունի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու լիազորություն, քանզի նման լիազորությունն ուղղակի իր ամրագրումն է ստացել Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում: Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 155-րդ հոդվածով սահմանվում են զինված ուժերի ենթակայության, դրանց նպատակների, կիրառմանն առնչվող կարգավորումներ և Հանրապետության նախագահի կողմից գլխավոր շտաբի պետի նշանակման մասին հիշատակումը նշված հոդվածի 3-րդ մասում ամենևին չի նշանակում, որ գլխավոր շտաբի պետի նշանակման և ազատման հարաբերությունները հանդիսանում են Սահմանադրության 155-րդ հոդվածի կարգավորման առարկա:

Պատասխանողն ընդգծում է, որ 2015 թվականի Սահմանադրությամբ գլխավոր շտաբի պետին օրենքով նախատեսված ժամկետով նշանակելու կարգավորման ներմուծումը զինված ուժերի՝ քաղա-

քական հարցերում չեզոքություն պահպանելու երաշխիք է: Հատկանշական է, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադիրը ցանկացել է կոնկրետ պաշտոնյաների համար ստեղծել քաղաքական չեզոքության պահպանման երաշխիքներ, ապա պաշտոնավարման ժամկետը հստակ ամրագրվել է Սահմանադրությամբ: Մույն պարագայում գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատման դեպքերը Սահմանադրությամբ նախատեսված չեն, փոխարենը դրա սահմանումը պատվիրակվել է օրենսդրին, որն էլ սահմանված է «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում: Այս կապակցությամբ պատասխանողը նշում է. «... թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ներկայացուցիչների և մասնավորապես զինված ուժերի անմիջական հրամանատար հանդիսացող գլխավոր շտաբի պետի կողմից քաղաքական չեզոքության պահանջի խախտումը, օրենսդրությամբ նախատեսված վերջինիս նման դեպքում զբաղեցված պաշտոնից կարճ ժամանակահատվածում ազատելու կառուցակարգը բացարձակ անհրաժեշտություն է երկրի անվտանգության ապահովման տեսանկյունից»:

#### **4. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները և պարզման ենթակա հանգամանքները**

Մույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է Հանրապետության նախագահի՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման լիազորության իրացման հիմնախնդրին՝ պայմանավորված այն իրողությամբ, որ դիմողի գնահատմամբ՝ առկա օրենսդրական իրավակարգավորումները բարարար չափով որոշակի, հստակ, հասանելի և կանխատեսելի չեն, քանզի չեն ամրագրում հիշյալ պաշտոնատար անձին պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը, իսկ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով, որ գլխավոր շտաբի պետին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը «օրենքով սահմանված ժամկետով», չի նախատեսում պաշտոնավարման այդ ժամկետը չլրացած պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա է համարում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը և դրա համապատասխանու-

թյունը Սահմանադրությանը գնահատում է Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 57 հոդվածի 2-րդ մասի, 79 հոդվածի, 133-րդ հոդվածի 1-ին մասի և 155 հոդվածի 3-րդ մասի հիման վրա:

Սույն գործով վիճարկվող դրույթի՝ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի, սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) ո՞րն է սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող Սահմանադրության 14-րդ հոդվածի հիմնարար նշանակությունը պաշտպանության իրավական կարգավորման ինստիտուտների, հատկապես զինվորական ծառայության համար,

2) որո՞նք են երկրի պաշտպանության իրականացման (կառավարման) առանձնահատկությունները, պաշտպանական ոլորտի կառավարման մակարդակները և զինված ուժերի կարգավորման ու կառավարման սկզբունքները,

3) որո՞նք են զինվորական ծառայության իրավական ինստիտուտի հայեցակարգային հիմքերն ու յուրահատկությունները, դրանցով պայմանավորված սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները,

4) որո՞նք են զինվորական ծառայության իրավական ինստիտուտի սահմանադրական հիմունքներ հանդիսացող Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթների նորմատիվ բովանդակությունը, դրանց համակարգային և տրամաբանական կապերը,

5) արդյո՞ք առկա է սահմանադրական իմաստով անորոշություն վիճարկվող դրույթում, ինչպես նաև օրենսդրական բաց զլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հարցում:

**6. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**6.1.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին վեր հանել սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող Սահմանադրության 14-րդ հոդվածի իրավադրույթների հիմնարար նշանակությունը պաշտպանության իրավական կարգավորման բոլոր ինստիտուտների, ներառյալ զինվորական ծառայության համար:

Պետության պաշտպանական գործառույթի բաղադրատարրը կազմող զինված ուժերի կազմակերպման, գործունեության և այլ

հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցության մեջ առաջնային նշանակություն ունեն ոլորտի իրավական ապահովման միջուկը կազմող սահմանադրական նորմերը: Սահմանադրության տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանական հարաբերությունների կարգավորմանն **ուղղակիորեն վերաբերող** իրավադրույթները տարալուծված են դրա առանձին կառուցվածքային մասերում, որպես սահմանադրական կարգի հիմունքներ, պետական մարմինների լիազորություններ (կամ իրավասության մաս) կամ մարդու իրավունքների ենթաինստիտուտներ, մասնավորապես՝ զինված ուժերը և պաշտպանությունը (14-րդ հոդված, 1-ին գլուխ), հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (76-րդ հոդված, 2-րդ գլուխ), պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը (118-րդ հոդված, 4-րդ գլուխ), ռազմական դրությունը (119-րդ հոդված, 4-րդ գլուխ), Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում (133-րդ հոդված, 5-րդ գլուխ), զինված ուժերը (155-րդ հոդված, 6-րդ գլուխ) և այլն: Թվարկված իրավադրույթներից սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել այն իրավակարգավորումները, որոնք ուղղակիորեն վերաբերում կամ առնչվում են սույն գործով վիճարկման առարկա հանդիսացող զինվորական ծառայության իրավական ինստիտուտին, որպես այդպիսին դիտարկելով «Սահմանադրական կարգի հիմունքներ» 1-ին գլխի 14-րդ հոդվածը, հատկապես դրա 1-ին և 2-րդ մասերը:

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» առաջին գլխում նախատեսել է զինված ուժերի ստեղծման նպատակները (սոցիալական առաքելությունը), դրանց կարգավիճակի որոշ տարրերն ամրագրող հատուկ հոդված, որի հիմքում դրված է զինված ուժերի կարգավիճակի, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական հայեցակարգը, և որի տեսլականը հիմնված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների կոշտ սահմանազատման վրա:

Սահմանադրության 14-րդ հոդվածը պարունակում է սույն սահմանադրական իրավական վեճի լուծման համար կարևոր ուղենիշային նշանակություն ունեցող երեք հիմնադրույթ. 1) զինված ուժերի սահմանադրական գործառույթները (առաքելությունը), 2) զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը, 3) զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

Զինված ուժերի սահմանադրական գործառույթներն են՝ ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը, որին համապատասխան սահմանադրական մի շարք իրավադրույթներ կարգավորում են զինված ուժերի կառավարման և կիրառման հարաբերությունները:

Զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքից հետևում է, որ դրանք քաղաքական հարցերում պետք է պահպանեն չեզոքություն, չմասնակցեն քաղաքականությանը և քաղաքական պայքարին, չմիջամտեն քաղաքական գործընթացներին, որի երաշխիքը դրա ապաքաղաքականացումն է:

Ապաքաղաքականացման նպատակն է զինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվ ներգործության շրջանակից, և ամենից առաջ այս կամ այն կուսակցության կամ քաղաքական կազմակերպության քաղաքական ազդեցության տակից: Որպես այդ պահանջի երաշխիք զինված ուժերում արգելվում է քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, վերջիններիս կառույցների ստեղծումը, քաղաքական քարոզչությունը, այդ թվում նաև ընտրական, իսկ զինվորականներին արգելվում է անդամագրվել քաղաքական կազմակերպություններին: Այսպիսով, զինված ուժերի կազմակերպման ազատական տեսլականը ենթադրում է հասարակական փոխհամաձայնություն, ըստ որի քաղաքականությունը զինվորականների զբաղմունքը չէ, իսկ դրա հիմնական երաշխիքներից է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մասի մեկ այլ իրավադրույթի համաձայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Զինված ուժերը լինելով փակ, ստորակարգությամբ կազմակերպված պետական ծառայողների զինված ամբողջություն, կարիք ունի քաղաքացիական վերահսկողության, քանի որ իր ուժային ունակությունները կարող է օգտագործել ընդդեմ ժողովրդավարության, ներառյալ իշխանությունը նվաճելու կամ քաղաքական ուժերին օժանդակելու նպատակով: Հետևաբար, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը կարևոր նշանակություն ունի ժողովրդավարության համար:

«Քաղաքացիական վերահսկողություն» հասկացությունը ձևավորվել է զինվորական/քաղաքացիական բաժանման համատեքստ-

տում և առաջին հերթին ենթադրում է ժողովրդավարական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ, երբ դրանք ղեկավարվում են բարձրագույն պետական իշխանության կողմից, այսինքն՝ պետության ղեկավարությունը մասնակցում է զինված ուժերի կառավարմանը, ժողովրդավարական ճանապարհով ազդում է դրավրա՝ իշխանությունների բաժանման սկզբունքի և ռազմական կառավարման ներդաշնակ գուգակցության վրա կառուցված նպատակային պետաիրավական ինստիտուտների միջոցով:

Պետաիրավական իմաստով քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի ղեկավարում ու կառավարումն է քաղաքացիների ազատ կամահայտնության ճանապարհով ձևավորված ժողովրդավարական իշխանության կողմից, հակառակ դեպքում բանակը կարող է ձեռք բերել ինքնուրույնության շատ բարձր աստիճան և ծանրակշիռ ազդեցություն ունենալ պետության քաղաքականության վրա, վտանգել ժողովրդավարությունը:

ԵԱՀԿ-ի 1994 թվականի «Անվտանգության ռազմաքաղաքական առումներին վերաբերող կանոնագիրքը»<sup>1</sup> կարգավորելով նախկինում պետության ներքին իրավագործությանը պատկանող հարցերը, դրա ընդունման նպատակ է համարում բոլոր ուժային կառույցների նկատմամբ վերահսկողությունն անկախ, օրինական և ժողովրդական ճանապարհով ընտրված ինստիտուտներին հանձնելը: Այդ փաստաթուղթը պարտադրում է, որ բոլոր ուժային կառույցները, որ ներառված են ազգային անվտանգության ու պետության պաշտպանության համակարգում պարտավոր են պահպանել օրինականության, ժողովրդավարության, չեզոքության, մարդու և քաղաքացու իրավունքների հարգանքի սկզբունքները, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Այդ փաստաթուղթը ժողովրդավարական վերահսկողությունը զինվորականների ու ռազմականացված բոլոր տեսակի ծառայությունների նկատմամբ դիտարկում է որպես կայունության ու անվտանգության անփոխարինելի տարր:

Քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի քաղաքականացման կանխման հուսալի միջոց է, որի գործուն ազդեցության

<sup>1</sup> Այդ փաստաթուղթը մշակվել է ԵԱՀԿ-ի շրջանակներում 1992-1994 թթ.: Այն որպես խորհրդատվական ակտ հավանության է արժանացել 52 պետությունների կողմից ԵԱՀԿ-ի բուդապեշտյան խորհրդակցությունում 1994 թ. դեկտեմբերին, իսկ 1995 թ. հունվարի 1-ից ձեռք է բերել քաղաքականապես պարտադրող փաստաթղթի նշանակություն:

շնորհիվ դրանք չեզոք են մնում քաղաքական պայքարի բոլոր մասնակիցների նկատմամբ: Միաժամանակ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է զինված ուժերում արհեստավարժ զինվորականների իրավասությանը վերապահված հատուկ, ինքնավար, քաղաքականությունից զերծ մասնագիտական ոլորտների առկայություն (մարտական պատրաստվածություն, զենքի տարբեր տեսակների կիրառման հմտությունների յուրացում և այլն): Այդպիսով, քաղաքացիական իշխանության գործունեությունը զինված ուժերում հասցվում է նվազագույնի, ինչը զինվորականներին հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել զինված ուժերի **օգտագործման կարգը**՝ սահմանադրական առաքելության շրջանակներում: Դրանով իսկ զինված ուժերն ունենում են նշանակալի ինքնավարություն օպերատիվ և մարտավարական մակարդակներում, պայմանով, որ նրանք քաղաքականության և ռազմավարության հարցերում անվերապահորեն կենթարկվեն քաղաքացիական իշխանություններին:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական /ժողովրդավարական/ համակարգերում կիրառում են **վերահսկողության հատուկ ձևեր**՝ քաղաքացիական գլխավոր հրամանատար, որն իրավասու է ազատել բարձրագույն հրամանատարական պաշտոնյաներին որպես քաղաքականության և վերահսկողության հաստատման միջոց, պաշտպանության նախարարի և մի շարք այլ զինվորական պաշտոններում ըստ հնարավորության քաղաքականապես չեզոք քաղաքացիական անձանց նշանակումը. պաշտպանության նախարարության կառուցումը և գործառնություններում համալիրության (քաղաքացիական/զինվորական) սկզբունքով. զինված ուժերի կառուցվածքային հարցերի և կադրային առաջխաղացման իրավագործությունը քաղաքացիական իշխանությունների վերապահելը. ռազմական բյուջեի ընդունման քաղաքացիական իշխանության մենաշնորհը, հատկացված միջոցների ծախսման նկատմամբ խստագույն հսկողության ընթացակարգը և այլն:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ երկրի պաշտպանության գործառնության իրականացման համակարգում գլխավոր տարրը և օբյեկտը զինված ուժերն են, որոնց կառավարման բարձրագույն մակարդակը ռազմավարական մարմիններն են /Ազգային



ժողով, կառավարություն, Հանրապետության նախագահ, Անվտանգության խորհուրդ/, որոնց հաջորդում են զինված ուժերի կառավարման օպերատիվ մակարդակի գործառնության մարմինները /գլխավոր շտաբ, պաշտպանության նախարարություն և այլն/:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ընդհանուր իրավասության պետական կառավարման սահմանադրական համակարգը կառուցված է իշխանությունների բաժանման և այլ սահմանադրական սկզբունքների հիմքով և կոչված է ապահովելու պաշտպանական համակարգի պատշաճ ռազմաքաղաքական, ռազմաիրավական և այլ առումներով ղեկավարումը, կառավարումը և կարգավորումը: Երկրի պաշտպանության գործառնության իրականացման կառուցակարգում, բարձրագույն ռազմավարական մարմիններից հետո, կառավարման հաջորդ կարևոր մարմինը զինված ուժերի գլխավոր շտաբն է, որպես զինված ուժերի օպերատիվ կառավարման բարձրագույն մարմին: «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրության»<sup>1</sup> 9-րդ կետի համաձայն՝ Գլխավոր շտաբի նպատակը զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ռազմական բաղադրիչի ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն ապահովելն է, իսկ 10-րդ կետի համաձայն՝ Գլխավոր շտաբի խնդիրներից է, մասնավորապես, օրենքով սահմանված զինված ուժերի խնդիրների կատարման ապահովումը:

Այսպիսով, զինված ուժերում բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններ զբաղեցնող անձինք պետական քաղաքականությունն անմիջականորեն կենսագործողներն են, որպիսի պայմաններում տվյալ պաշտոններում կոնկրետ անձանց նշանակման և ազատման հարցում գործադիր իշխանությունը որպես ռազմական կառավարման վերին մակարդակի կառավարման հավաքական սուբյեկտ պետք է ունենա և Մահմանադրությամբ ամրագրված կարգով իրավունք ունի նշանակելու և ազատելու հրամանատարական նշված կազմի պաշտոնյաներին: Այդ իրավագործությունը համահունչ է սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունը» հաստատվել է Կառավարության՝ 2019 թ. հունիսի 4-ի թիվ 922-Լ որոշմամբ:

զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքին: Այդ իրավագործությունը պայմանավորված է նաև երկրի պաշտպանության ռազմավարական առաջնահերթություններին և բխող կադրային արդյունավետ քաղաքականությամբ, որն, անխուսափելիորեն, բացի զինվորական արհեստավարժությունից ենթադրում է նաև քաղաքացիական իշխանությունների հայեցողություն: Ի վերջո Սահմանադրությունը Հանրապետության պաշտպանության ոլորտի պետական քաղաքականությունը պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանում և իրականացումը, պետության ռազմական անվտանգության համակարգի բնականոն գործունեության ապահովումը, Հանրապետության զինված ուժերի ղեկավարումը վերապահում է կառավարությանը:

Սահմանադրական դատարանը անհարաժեշտ է համարում ընդգծել, որ ռազմական կառավարման բոլոր մակարդակները՝ սկսած մարտական խնդիրներ լուծող գորամիավորումներից, ռազմաօպերատիվ կառավարման մարմիններից ու իշխանությունների բաժանման սկզբունքով կառուցված ռազմավարական կառավարում իրականացնող ընդհանուր իրավասության պետական մարմինները կազմում են երկրի պաշտպանության գործառույթի կառավարման կուռ կառուցակարգը, որը և՛ կառավարման, և՛ զինվորաձառայական առումներով կառուցվում ու գործում է խիստ կենտրոնացվածության, հետևողական միանձնության և խստագույն զինվորական կարգապահության, անվերապահ ենթարկվածության, անընդհատության և մի շարք այլ յուրահատուկ սկզբունքներով: Դրանում քաղաքացիական իշխանության ընդհանուր իրավասության մարմինները Սահմանադրության ուժով իրավագոր են իրականացնելու ոչ միայն քաղաքացիական վերահսկողություն, այլ նաև ունեն ռազմական կառավարման անմիջական, Սահմանադրությամբ հիմնագրված իրավասություն և լիազորություններ, ներառյալ զինվորակադրային քաղաքականության հարցերում: Զինված ուժերն ինքնավար կառույցներ չեն, իսկ քաղաքացիական սահմանադրական իշխանություններն անհամաչափ կամ անհարկի միջամտություն իրականացնողներ:

**Ամփոփելով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 14-րդ հոդվածի որպես սահմանադրական կարգի հիմունքի բովանդակությունից բխում է, որ զինված ուժերը**

որպես հատուկ կազմակերպվող, կառավարվող և գործող կառույց ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը հատուկ ձևերով ու մեթոդներով, սակայն դրանք ինքնավար չեն, այլ կազմում են ռազմական կառավարման կուռ համակարգի մասնագիտացված, քաղաքականապես չեզոք տարրը, ենթարկված են Սահմանադրությամբ սահմանված և իշխանությունների բաժանման ու ռազմական կառավարման սկզբունքների ներդաշնակ գուգատեղմամբ գործող, ռազմավարական բարձարագույն կառավարում իրականացնող ընդհանուր իրավասության պետական մարմիններին, գտնվում են նրանց քաղաքական վերահսկողության տակ, որի դրսևորման տարրերից է նաև բարձարագույն հրամանատարական զինվորական ծառայության պաշտոնների նշանակման և ազատման սահմանադրական իրավագործությունը:

**6.2.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել երկրի պաշտպանության իրականացման (կառավարման) և իրավական կարգավորման առանձնահատկությունները, անդրադառնալ պաշտպանական ոլորտի կառավարման մակարդակներին և զինված ուժերի կարգավորման ու կառավարման սկզբունքներին, որոնք ելակետային նշանակություն ունեն զինվորական ծառայության սահմանադրական բովանդակության համար:

Երկրի պաշտպանությունը պետության հասարակական գլխավոր խնդիրներից է և իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն («Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս):

Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ պետության սահմանադրական այլ գործառույթների համակարգում պաշտպանության գործառույթն ունի համապետական, համասոցիալական,

մշտական բնութ, և դրա կենսագործման կառուցակարգին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք ելակետային նշանակություն ունեն պաշտպանական ոլորտի սահմանադրական կարգավորման առարկայի (հարաբերությունների շրջանակի), այդ հարաբերությունների սահմանադրական ու ընթացիկ օրենսդրական կարգավորման յուրահատկությունների ու բովանդակության իմաստավորման ու գնահատման համար: Այդ առանձնահատկություններից էականներն են՝

1. Պաշտպանության գործառույթի կառավարման օբյեկտը և առարկան երկրի ռազմական պաշտպանության ու դրա հետ կապված հասարակական հարաբերություններն են, որոնք իրենց բնույթով էականորեն տարբերվում են հասարակական այլ հարաբերություններից: Բացի այդ պաշտպանության գործառույթի իրականացման կառուցակարգում **յուրահատուկ գործառութային կառույց է պետության ռազմական կազմակերպությունը**, որը, որպես յուրօրինակ կերպով կազմակերպված ներգործության ուժ, խստորեն առանձնացված է պետական այլ կառույցներից, իրականացնում է յուրահատուկ նպատակներ, ինչով պայմանավորված ունի ինստ կենտրոնացված և ստորակարգային կառուցվածք, զինվորական ծառայության բազմաքանակ համակազմ, զենքի զանազան տեսակներ և այլն:

2. **Երկրի պաշտպանության գործառույթի իրականացման մենաշնորհային սուբյեկտը պետությունն է:** Սահմանադրության և «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշել պաշտպանության գործառույթի ձևավորման ու իրականացման սուբյեկտների հետևյալ շրջանակը՝ օրենսդիր մարմինը, կառավարությունը, նախագահը, դատարանները, անվտանգության խորհուրդը, գործադիր իշխանության մարմինները, պետության զինված կազմակերպությունը, որը ներառում է իրենում զինված ուժերը և այլ զորքերը: Պաշտպանական գործառույթի բնույթը պահանջում է գործողությունների մշտական ու միասնական, համակարգված ու կենտրոնացված իրականացում, դրա կենսագործման նպատակային, երաշխավորված կառուցակարգ, ինչը կարող է ապահովել միայն պետությունը, զերծ պահելով այն տատանումներից ու վայրիվերումներից:

3. Պաշտպանության կառավարումը **բազմամակարդակ է**, իսկ պաշտպանության գործառույթն իրականացնելիս կիրառում են օրենքով ամրագրված և՛ համընդհանուր, և՛ ներգործության օբյեկ-

տով պայմանավորված հատուկ՝ **ռազմական բնույթի ձևեր ու մեթոդներ**: Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգին բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ զինված ուժերը ձեռք են բերում էական քաղաքական դերակատարություն, ինչից և առաջանում է բանակի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրման, դրա քաղաքական չեզոքության և դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովման անհրաժեշտությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ երկրի պաշտպանության գործառույթի բովանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի վարման սկզբունքներով:

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պաշտպանության ոլորտում կառավարումը դասակարգում է ըստ մակարդակի, որպես այսպիսիք համարելով՝ ա) ընդհանուր իրավասության պետական մարմինների կառավարումը (օրենսդիր մարմին, կառավարություն, անվտանգության խորհուրդ, ՀՀ վարչապետ), բ) պաշտպանության ոլորտի հատուկ իրավասության մարմնի կառավարումը (պաշտպանության նախարարություն), գ) պաշտպանության ոլորտի լիազորություններ ունեցող պետական ու տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող կառավարումը, դ) պաշտպանական ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը, ե) զինված ուժերի անմիջական կառավարումը (գլխավոր շտաբ՝ շտաբի պետի ղեկավարությամբ), ինչպես նաև զինվորական կառավարման այլ մարմինները:

**Զինված ուժերի և զորամիավորումների գործառութավորման** սկզբունքներ են համարվում մշտական բարձր մարտական պատրաստվածությունը, բարձր ակտիվությունը, **վճռականությունը և անընդհատությունը**, գործողությունների հանկարծակիությունը, զորամասերի և կրակի արագ տեղաշարժը (մանևրը), մարտի համակողմանի ապահովումը, զորքերի մարտունակության մշտական պահպանումը և ժամանակին վերականգնումը, **անընդհատ ու անշեղ կառավարումը**, նպատակների ու դրված խնդիրների նվաճման անշեղ ձգտումը և այլն, որոնց համապատասխանում են զինված ուժերի կառավարմանը ներկայացվող պահանջները՝ **անընդհատություն, օպերատիվություն**, կայունություն և գաղտնիություն և այլն:

Այդ պահանջներին համապատասխանող զինված ուժերի և զորամիավորումների կառավարման սկզբունքներ են **միանձնությունը, կառավարման կենտրոնացումը**, բարձր կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանատարի անհատական պատասխանատվությունը, իրադրության իմացությունը, խորը վերլուծությունը, կանխատեսումը, համառությունը և այլն: Թվարկված սկզբունքները ռազմական գործունեության ընդհանուր նպատակահարմար կանոններ են, որոնք որոշում են զինված ուժերի սոցիալական էությունը, դրանց կազմակերպման և գործունեության հիմնական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն), արտացոլվում են ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերում, հետևաբար ընկած են պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, և՛ մարտավարական, և՛ բարձրագույն պետական կառավարման մակարդակում:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ռազմական կառավարման համակարգի բոլոր մակարդակների կառուցման նորմատիվ հիմքերը սահմանված են պաշտպանական ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ: Մինչույն ժամանակ, սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վերոբերյալ սկզբունքները ելակետային են ոչ միայն երկրի պաշտպանության իրավական նորմերի համախումբը սահմանելու, այլև դրանք մեկնաբանելու և կիրառելու ընթացքում:

**6.3.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ զինվորական ծառայության իրավական ինստիտուտի հայեցակարգային հիմքերին ու յուրահատկություններին, պարզելու այն պատճառները և գործոնները, որոնք պայմանավորել են դրա սահմանադրական կարգավորման նորմատիվ բովանդակությունը:

Պետական ծառայությունը կոչված է ապահովել պետական գործունեության տարաբնույթ ոլորտներում պետական կառավարման խնդիրների լուծումը: Այն իր բնույթով լինելով միասնական պետական ծառայությունը տարբերակված է մասնագիտացված տեսակների՝ ըստ պետության գործունեության տարբեր ուղղություններ և դրանց առջև կանգնած խնդիրների: Զինվորական ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որն ունի վառ արտահայտված բացառիկ առանձնահատկություններ՝ ծառայության նշանակվելու,

ծառայության անցնելու և դադարելու կարգերով, և դրանով իսկ արմատականորեն տարբերվում է «պետական ծառայություն», «պետական ծառայող» ընդհանուր հասկացություններից:

Ինչպես ռազմական կառավարման, այնպես էլ զինվորական ծառայության (կազմակերպման, անցկացման, դադարման) իրավական կանոնների հիմքում ընկած են զինված ուժերի կազմակերպման ու գործունեության յուրահատուկ սկզբունքները: Պետության ռազմական կազմակերպության կողմից երկրի պաշտպանության խնդրի լուծումը կառավարման հատուկ սկզբունքներով, ռազմական ձևերով ու մեթոդներով ենթադրում է ինչպես դրա մեջ մտնող մարմինների ու կազմակերպությունների գործառնությունները, այնպես էլ դրանցում ընդգրկված անձանց զինվորական ծառայության միջոցով պարտականությունների կատարման հատուկ կարգ:

Զինվորական ծառայությունը որպես գործունեության հատուկ տեսակ աչքի է ընկնում իր յուրահատուկ հատկանիշով, մասնավորապես՝ այն իրականացվում է պետության կողմից հիմնադրված ռազմական կազմակերպությունում (զինված ուժերում և այլ զորքերում), որը կոչված է մասնակցելու ռազմական գործողություններին՝ ռազմական մեթոդների և զինված պայքարի միջոցների կիրառմամբ: Այլ կերպ ասած, զինվորական ծառայությունն օրենքով սահմանված գործունեության տեսակ է, որն իրականացվում է պետության ռազմական կազմակերպությունում (զինված ուժերում և այլ զորքերում) ու մարմիններում, լուծում է երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության խնդիրները՝ հատուկ ռազմական ձևերով ու մեթոդներով՝ երկիրը պաշտպանության պատրաստելու և պաշտպանելու նպատակով:

Քաղաքացիական հանրային ծառայությունից պետական ծառայության հատուկ տեսակների ամենից ընդհանուր տարբերությունները պայմանավորված են վերջինների կողմից լուծվող խնդիրներով և կատարվող գործառնություններով: Պետական ծառայության բոլոր հատուկ տեսակներին, ներառյալ զինվորական ծառայությանը բնութագրական են հետևյալ հատկանիշները. լուծվող խնդիրների և կատարվող գործառնությունների յուրահատկությունը. ծառայության կազմակերպման հատուկ սկզբունքների առկայությունը. հաճախ ռիսկի հետ զուգակցված ծառայության հատուկ պայմանները. մասնագիտական յուրահատկության առկայությունը. ծառայական հատուկ

պարտականությունները. ծառայողների պաշտոնեական գործառույթների, ծառայության պայմանների առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ կարգապահական կանոնադրքերի և կանոնադրությունների առկայությունը. ծառայության ընդունվելու, անցնելու, հատուկ կոչումներ շնորհելու, փորձաշրջանի, ատեստացիայի և դադարման հատուկ պայմաններ և կարգ. ծառայողների հատուկ իրավական կարգավիճակը, իրավական պատասխանատվության որոշ տեսակների ենթարկելու հատուկ կարգը, հատուկ ապահովությունը (ներառյալ վճարումը, արտոնությունները, հագուստը, տարբերանշանները) և այլն:

Պաշտպանական ոլորտի յուրահատկություններով պայմանավորված զինվորական ծառայությանը, բացի վերը նշված տարբերիչ հատկություններից, բնութագրական են նաև միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ ծառայական փոխհարաբերությունների բնույթի, դրանց ծագման, անցկացման և դադարման կարգի և այլ հարցերով: Զինվորական ծառայության տարբերությունների և առանձնահատկությունների օբյեկտիվ հիմքով պայմանավորված՝ յուրահատուկ են նաև զինվորական ծառայության իրավական կարգավորման, կազմակերպման ու անցկացման սկզբունքները, որոնք, լինելով **ընդհանուր, հատուկ և յուրահատուկ** ղեկավար գաղափարների ամբողջական համակարգ, պետք է ապահովեն զինվորական ծառայության խնդիրների լուծումը:

**Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական ծառայության ընդհանուր սկզբունքները ռազմական ծառայության ոլորտում չեն գործում լրիվ ու ամբողջական, այլ ունեն իրենց դրսևորման առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտի առջև դրված խնդիրներով ու կատարվող գործառույթներով:**

Ինչպես և ռազմական կառավարման դեպքում՝ կառավարման ընդհանուր սկզբունքներից, այնպես էլ զինվորական ծառայության ոլորտում, հանրային ծառայության ընդհանուր իրավական սկզբունքներից բխող կանոններից արվում են իրավաբանական և փաստական բացառություններ՝ պայմանավորված զինվորական ծառայության յուրահատկություններով: Զինվորական ծառայության հատուկ սկզբունքները բնութագրում են զինվորական ծառայությունը որպես պետական ծառայության հատուկ տեսակ և ենթակա են կիրառման դրա բոլոր ոլորտների նկատմամբ: Այդ սկզբունք-



ներն են՝ զինվորական ծառայության կարգավորման հրամայական (ինպերատիվ) բնույթը, զինվորական ծառայության և զինծառայողների կենտրոնացված կառավարումը, լրիվ ու հետևողական միանձնյա կառավարում, խստագույն զինվորական կարգապահություն, զինծառայողների միջև փոխհարաբերությունների ենթակայություն (սուբորդինացիա), անընդհատություն, առավել օպերատիվություն ու շարժունություն, զինծառայողների ուժեղացված իրավական պատասխանատվություն:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-991 որոշմամբ անդրադառնալով ընդհանրապես աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս անձանց իրավական տարբեր կարգավիճակների սահմանման խնդրին՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, ընդգծել է առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքերի հնարավորությունը, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում: Եթե այս մոտեցումն ընդունելի է աշխատանքային իրավունքի ոլորտում, ապա այն լրիվ ընդունելի է զինվորական ծառայության ոլորտի համար, հետևաբար դրա իրավական հատուկ կարգավորումներն ունեն օբյեկտիվ և արդարացված հիմքեր, ինքնին խնդրահարույց չեն, և համահունչ են Սահմանադրությամբ ամրագրված զինված ուժերի առաքելությանը, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության էությանը:

Այսպիսով, զինվորական ծառայության ոլորտում գործում է զինվորական ծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքը՝ կապված հայրենիքի պաշտպանության խնդրի, իրենց հատուկ պարտականությունների իրականացման հետ: Զինվորական և այլ հատուկ ծառայությունների կարգավորման այս մոտեցումը որդեգրել են նաև խնդրո առարկա հարցին վերաբերող միջազգային պարտադիր և խորհրդատվական փաստաթղթերը:

**6.4.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ զինվորական ծառայության իրավական ինստիտուտի սահմանադրական դրույթների իրավական բովանդակությանը, հատ-

կապես Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթների նորմատիվ բովանդակության, դրանց համակարգային, տրամաբանական կապերի բացահատմանը:

Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է զինվորական ծառայության ենթահինստիտուտներից մեկի՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման և ազատման հարաբերությունները կարգավորող կարևորագույն դրույթ. «1. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը»:

Զինվորական ծառայողների բազմամարդ սոցիալական խմբին բնորոշ է լիազորությունների ծավալի տարբերություններ կախված զբաղեցրած պաշտոնից ու շնորհված զինվորական կոչումից և մի շարք այլ հատկանիշներից, հետևաբար անհրաժեշտ է նրանց ծառայական հարաբերություններում հաստատել հստակ սահմանված կարգ: Այս հանգամանքը առաջ է բերում զինծառայողների հիմնավորված պաշտոնական դասակարգման անհրաժեշտություն: Դասակարգման չափանիշներ են հանդիսանում զինվորական ծառայության տեսակները, զինծառայողների ծառայական-իրավական վիճակը, զինծառայողների պաշտոնական դրությունը կամ լիազորությունների բնույթը, զինվորական ծառայության անցնելու հիմքերը և այլն:

«Բարձրագույն հրամանատարական կազմ» իրավական հասկացությունն ածանցված է զինծառայության պաշտոնների հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի դասակարգումից, որը զինվորական ծառայության դասակարգման հանրաճանաչ և իրավաբանորեն ամրագրված տարբերակներից է, ունի օբյեկտիվ և արդարացված հիմքեր: Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի՝ զինվորական ծառայության պաշտոնները դասակարգվում են երկու կազմերի՝ **հրամանատարական** (բարձրագույն, ավագ, միջին, կրտսեր խմբերով) և **ոչ հրամանատարական** (բարձրագույն սպայական, ավագ սպայական, կրտսեր սպայական, ավագ ենթասպայական, կրտսեր ենթասպայական, շարքային խմբերով):

Զինվորական ծառայության իրավական ինստիտուտի սահմանադրական հիմունքների մեջ կարևորագույն տեղ ունի գլխավոր շտաբի պետի պաշտոնին վերաբերող մեկ այլ իրավադրույթը, որն

ամրագրված է Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում.  
 «3. Ջինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը օրենքով սահմանված ժամկետով: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին»:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության տրամաբանական բաղդատման արդյունքում կարելի է ստանալ դրա նորմատիվ բովանդակության տարրերը կազմող հետևյալ իրավադրույթները.

ա) զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է,

բ) ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին,

գ) զինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով:

Այս երեք կարևորագույն իրավադրույթներից սահմանադրական իրավական վեճի լուծման համար հիմնարար և կողմնորոշիչ նշանակություն ունի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նշանակմանը վերաբերող իրավադրույթը, որը, սակայն ինքնին չունի կարգավորիչ ինքնուրույնություն: Այդ իրավադրույթը սերտ համակարգային, տրամաբանական և բովանդակային կապի մեջ է գտնվում Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված և զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակմանը և ազատմանը վերաբերող իրավադրույթի հետ, որն ավելի ընդհանուր և ընդհանրացված իրավակարգավորում է: Համաձայն դրա՝ բարձրագույն հրամանատարական կազմի բոլոր պաշտոնյաները նշանակվում և ազատվում են **Հանրապետության նախագահի կողմից վարչապետի առաջարկությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով**: Գլխավոր շտաբի պետը զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնյա է, ընդ որում ամենաբարձր պաշտոնատար անձը, որը պաշտպանության նախարարության զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկն ամրագրող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1857-Ն որոշմամբ համարվում է բարձրագույն հրամանատարական սպայական կազմի առաջին պաշտոնը:

Հետևաբար, տրամաբանորեն գլխավոր շտաբի պետին պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը կատարվում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին համապատասխան, իսկ այդ դրույթը ենթադրում է զինված ուժերի գլխավոր շտաբի պետի և նշանակման, և ազատման լիազորություն:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված իրավադրույթների հարաբերակցությունը: Ընդհանրապես իրավանորմերի և դրանցում ամրագրված իրավադրույթների հարաբերակցության որոշման հիմքում ընկած են նորմերի (իրավադրույթների) որոշակի չափանիշներով դասակարգումները: Իրավունքի նորմերի և իրավադրույթների ընդհանուրի, հատուկի և բացառիկի բաժանման ճանաչողական ու գործնական-կիրառական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավական գործ լուծելիս պետք է, **նախ**, դեկլարվել և ընդհանուր, և հատուկ, և բացառիկ նորմերով, **երկրորդ**՝ հատուկ և բացառիկ նորմերը ընդհանուր նորմերին դուրս են մղում իրավակիրառման գործընթացից:

Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթի և 155-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության տրամաբանական հարաբերակցությունը չի կարող լինել ընդհանուր-հատուկ-բացառիկի իրավակարգավորիչ կապ, որովհետև դրանցով կարգավորվող հարաբերությունները չեն պատկանում այլ սեռերի և նույնիսկ նույն սեռի այլ տեսակների. երկու իրավադրույթներն էլ վերաբերում են գլխավոր շտաբի պետի նշանակման և ազատման հարաբերությանը, և դրանց միջև չկա որևէ հակասություն, բովանդակային շեղում կամ բացառում, այլ ընդամենը սուբյեկտային կազմի կոնկրետացում: Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորումը չի շեղվում կամ չի բացառում 133-րդ հոդվածի 1-ին մասը, այլ ընդամենը կոնկրետացնում (լրացնում) է ընդհանուր իրավադրույթի բովանդակությունը մեկ հարցում՝ գլխավոր շտաբի պետի նշանակման, ընդ որում ոչ թե կարգի, այլ պաշտոնի նշանակման ժամկետի հարցով:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը նախ կրկնում է 133-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանուր բնույթ ունեցող բովանդակությունը գլխավոր շտաբի պետի

որպես բարձրագույն հրամանատարական կազմի մեջ մտնող պաշտոնյայի վերաբերմամբ. գլխավոր շտաբի պետին որպես ամենաբարձր զինվորական պաշտոնատար անձի նշանակում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Այս լիազորությունը լրիվ համահունչ է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը, բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաների նշանակման մասով: Հետևաբար այն չի կարելի համարել հատուկ կամ բացառիկ իրավադրույթ: Ինչ վերաբերում է գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հարցին, ապա դրա կարգավորման իրավական հիմքը Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասն է: Այսպիսով, Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում Հանրապետության նախագահի կողմից զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորությունը տառացիորեն սահմանված չլինելը՝ երբեք չի կարելի դիտարկել որպես Հանրապետության նախագահի՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորության բացառում:

Սահմանադրական դատարանը, կարևոր համարելով 155-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «օրենքով սահմանված ժամկետ» ձևակերպման իրավական նշանակությունը սույն սահմանադրական իրավական վեճի լուծման համար, անհրաժեշտ է համարում վեր հանել դրա իրավական իմաստը սահմանադրի իրական կամքի տեսանկյունից:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը, մասամբ վերարտադրելով 133-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, իր բնույթով տրամաբանական կրկնաբանություն է, որը պարունակում է միայն մեկ կոնկրետացում (լրացում)՝ գլխավոր շտաբի պետի նշանակումը «օրենքով սահմանված ժամկետով»:

Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությամբ ամրագրված «օրենքով սահմանված ժամկետ» բանաձևի նշանակությունն ըմբռնելու համար հիմնարար նշանակություն ունեն սույն գործով որոշման վերոգրյալ 6.1, 6.2, 6.3 կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց «օրենքով սահմանված ժամկետ» իրավական բանաձևն ամրագրելիս սահմանդիրը երբեք չէր կարող դրա բովանդակության մեջ դնել զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ամենա-

բարձր պաշտոնատար անձ համարվող գլխավոր շտաբի պաշտոնի անփոփոխելիության և անձեռնմխելիության, պաշտոնավարման նվազագույն ժամկետային երաշխավորման իմաստը: Ընդհակառակը՝ ռազմական կառավարման բոլոր մակարդակների և զինվորական ծառայությանը բնորոշ առանձնահատուկ սկզբունքների գաղափարակողմնորոշիչ ազդեցության ու ելակետային կարգավորիչ իրավական նշանակության շրջանակներում այդ ժամկետը պետք է հասկանալ որպես պաշտոնավարման օրենքով սահմանված առավելագույն ժամկետ, ինչը չի կարող բացառել այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը:

Հիշյալ սահմանադրական բանաձևի վերը բերված իմաստը, նախ, համահունչ է ռազմական ոլորտի կազմակերպման ու գործունեության սկզբունքներին: Նման մեկնաբանությունը համահունչ է նաև երկրի պաշտպանության որպես պետության առաջնային գործառույթի արդյունավետ իրականանացման և Հայրենիքի պաշպանության, ինչպես նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության շահերին: Հակառակ տրամաբանությունը կենսական իրավիճակներում, հատկապես պատերազմական ժամանակ, կարող է հանգեցնել փաստական և իրավաբանական անհեթեթության, այն դեպքերում, երբ և՛ ռազմավարական, և՛ մարտավարական առումներով փոփոխված ռազմական իրավիճակը հանգեցնի անհամապատասխանության գլխավոր շտաբի պետի և իրավիճակից բխող պահանջների հետ:

Արված վերլուծությունները Սահմանադրական դատարանին հիմք են եզրակացնելու, որ դիմողի այն պնդումը, որ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասից և 155-րդ հոդվածի 3-րդ մասից, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասից բխում է, որ Հանրապետության նախագահին իրավասու չէ պաշտոնից ազատել պաշտոնավարման ժամկետը չլրացած ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, հիմնված չէ ո՛չ սահմանադրական նորմերի ոգու, ո՛չ էլ տառացի իմաստի վրա: Վկայակոչված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, օրենսդիրը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման համար նախատեսվելով հնգամյա ժամկետ, չի ենթադրել, որ հիշյալ ժամկետը չի կարող ընդհատվել

զինված ուժերում պետական իշխանության պաշտպանական, կադրային քաղաքականության փոփոխման կամ այլ իրավաչափ նկատառումներից ելնելով:

**6.5.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասով և 155-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունով ամրագրված իրավադրույթների հայեցակարգային, համակարգային, ձևական-տրամաբանական մեկնաբանության արդյունքում ստացված իրավական բովանդակությունը համադրել Օրենքի վիճարկվող դրույթի 40-րդ հոդվածի 3-րդ մասի հետ և գնահատել դրանք դիմողի կողմից բարձրացված օրենսդրական բացի վերաբերյալ իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

Օրենքի 40-րդ հոդվածը, որի վերտառությունն է՝ «Պայմանագրային զինձառայողին զինվորական պաշտոնից ազատելը», նախ, սահմանում է պայմանագրային զինձառայողներին պաշտոնից ազատման հիմքերը և ազատող սուբյեկտների շրջանակը (40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինձառայողը զինվորական պաշտոնից կարող է ազատվել Օրենքով սահմանված ընդհանուր հիմքերով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված են բարձրագույն հրամանատարական կազմին վերաբերող երկու առանձին իրավակարգավորումներ:

1. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինձառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով (հղում կատարելով 35.1-րդ հոդվածում սահմանված պայմանագրային զինվորական ծառայողներին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնին նշանակելու կարգին): Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են նույն կարգով: Այս իրավակարգավորումը ընդհանուր կարգավորման համատեքստում սուբյեկտային կազմի հատկանիշով հատուկ իրավադրույթ է, այսինքն՝ վերաբերում է միայն բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում նշանակվող պայմանագրային զինձառայողներին:

2. «Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից առկա են օրենքով սահմանված ընդհանուր հիմքեր, թե ոչ»: Այս իրավակարգավորումը ընդհանուր իրավակարգավորման համատեքստում բացառիկ բնույթ ունի, որովհետև նախատեսում է կանոն, որը շեղվում է ընդհանուր իրավադրույթներից, տվյալ դեպքում պայմանագրային զինվորական ծառայողին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելու ընդհանուր իրավական հիմքերից, սահմանելով նրանց վերաբերող բացառություն. նրանք կարող են ազատվել պաշտոնից նաև առանց օրենքով սահմանված ընդհանուր հիմքերի առկայության: Դրա հիմքում կարող են ընկած լինել բազմաթիվ գործոններ՝ ռազմաքաղաքական, կադրային-որակական, վստահության կորուստ, քաղաքական չեզոքության խախտում և այլն:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում առկա «օրենքով նախատեսված դեպքեր» բառակապակցությունը չի բացառում, որ այդպիսի ազատման հիմքերի շարքում կարող է լինել ռազմաքաղաքական և այլ գործոններով պայմանավորված՝ ազատումը պաշտոնից: Այդպիսի հիմքը օրենքով նախատեսված լինելու դեպքում այն չի կարող դիտարկվել որպես օրենքով ազատման հիմքի չնախատեսում:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ, **առաջին**, վիճարկվող դրույթում սահմանված իրավակարգավորումն, ինքնին, նույնպես պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու հիմք է, **երկրորդ**, այդ հիմքը գործում է ի լրումն Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի, **երրորդ**, այդ հիմքը գործում է բացառապես բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնների նկատմամբ՝ հաշվի առնելով զինված ուժերի և զինվորական ծառայության առանձնահատկությունները, պետության համար պաշտոնյաների այդ կազմի հատուկ կարևորությունը:

Ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարության ռազմական նպատակահարմարությունով պայմանավարված հայեցողությունը ևս ազատման օրենքով սահմանված հիմք է, որը ոլորտի բնապատմական առանձնահատկություններով պայմանավորված իրավաչափ է ու սահմանադրական: Ոչ իրավաչափ և հակասահմանադրական կլինեք հակառակ լուծումը և ըմռնումը, պաշտ-



պանական ոլորտի օբյեկտիվ օրինաչափություններին հակասելու պատճառով:

**Այսպիսով վիճարկվող իրավակարգավորումը կամայական ու սուբյեկտիվ չէ, այլ թելադրված է երկրի պաշտպանության կառավարման ու կարգավորման առանձնահատուկ սկզբունքներով, ունի օբյեկտիվ հիմքեր, հետևաբար դրան բնորոշ են իրավաչափությունը և դրանով պայմանավորված սահմանադրականությունը:**

Դիմողի կարծիքով, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասում առկա է օրենքի բաց այն առումով, որ դրանում չի սահմանվում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման որևէ հիմք: Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ Սահմանադրական դատարանն իր 04.09.2019 թվականի ՄԴՈ-1476 որոշմամբ նշել է, որ օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաբերյալ իրավական դիրքորոշումներով արդեն հիմնավորվեց, որ սույն գործով վեճի առարկա հանդիսացող բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման օրենքով սահմանված հիմքի բացակայությունն անհիմն ենթադրություն է: Այդ հիմքը սահմանված է օրենքով և այն կարելի է որակել որպես ռազմական կառավարման բարձրագույն ղեկավարության իրավաչափ հայեցողություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասում առկա է ոչ թե օրենքի բաց, այլ օրենսդրի հստակ կամահայտնություն:

Այսպիսով, արված վերլուծությունից ակնհայտ է, որ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի պահանջին համահունչ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը՝ նույն հոդվածի 3-րդ մասում, հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները, պաշտոնից ազատող սուբյեկտին իրավունք վերապահելով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատել նաև անկախ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի առկայության:

Մինչև նույն ժամանակ, օրենսդիրը, Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «աշխատանքից ազատման հիմքերը սահման-

վում են օրենքով» նախադասությամբ ամրագրված դրույթին համախառնախան, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, որպես բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող անձի համար նախատեսում է զուտ այդ պաշտոնի առանձնահատկությամբ, պետական համակարգում դրա զբաղեցրած տեղով ու նշանակությամբ պայմանավորված՝ Հանրապետության վարչապետի նախաձեռնությամբ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատման այլ ընդհանուր հիմքերից տարբերվող հիմքեր:

Վերոգրյալից բխում է, որ անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ տեսակի աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքն աշխատանքից (զբաղեցրած պաշտոնից) ազատելու ինչ հիմքեր է նախատեսում, օրենսդիրը, կենսագործելով Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով» նախադասությամբ ամրագրված պահանջը, առանձին պաշտոնների համար նախատեսում է զուտ այդ պաշտոնների առանձնահատկությամբ, պետական համակարգում դրանց զբաղեցրած տեղով ու նշանակությամբ պայմանավորված՝ պաշտոնից ազատման այլ հիմքեր: Այս վերլուծության հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը համապատասխանում է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ելնելով սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումներից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից բերված պատճառաբանությունը, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը հակասահմանադրական է և կիրառելի չէ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման դեպքում՝ առարկայագուրկ է, իսկ սույն գործով վիճարկվող դրույթը չի հակասում Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին: Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված «օրենքով սահմանված ժամկետը» պետք է հասկանալ որպես պաշտոնավարման օրենքով սահմանված առավելագույն ժամկետ, ինչը չի բացառում այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը:

6.6. Ելնելով այն հանգամանքից, որ դիմող կողմը վիճարկվող իրավադրույթները խնդրահարույց է համարում նաև իրավական որոշակիության առումով, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ վերլուծության ենթարկել գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավադրույթներն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

Իրավական որոշակիության առումով դիմողի հիմնական հարցադրումն այն է, որ օրենսդիրը, վիճարկվող օրինադրույթով նախատեսել է, որ Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել առանց պաշտոնից ազատման օրենքով սահմանված դեպքերի (հիմքերի) առկայության: Դիմողի մտահոգությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասը Հանրապետության նախագահին վերապահում է լիազորություն վարչապետի առաջարկությամբ զինված ուժերի և այլ զորքերի Բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնում նշանակել և ազատել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով, և այս համատեքստում Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաներին պաշտոնից հայեցողաբար ազատումը պատշաճ հիմք չէ, ուրմեն ծառայությունից անհիմն, այսինքն՝ օրենքով չսահմանված հիմքով ազատում:

Սահմանադրության «Որոշակիության սկզբունքը» վերաառությամբ 79-րդ հոդվածը սահմանում է. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը: Բացի այդ հիշյալ

սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի կենսագործումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357): Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176, ՄԴՈ-1449):

« ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը կանխատեսելու, թե ինչպիսին կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում: /.../ Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 03.05.2016 թ. ՄԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝

նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1452):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (The Sunday Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, § 49): Բացի դրանից, Եվրոպական դատարանը նշել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioac v. Moldova», application no. 61513/00, 21/12/2004):

Սահմանադրության 79-րդ հոդվածի տառացի իմաստի և Սահմանադրական դատարանի նախադեպային դիրքորոշումների համադրված վերլուծությունից բխում է, որ բավարար չափով որոշակիությունն այն իրավիճակն է, երբ կիրառման ենթակա նորմի հասցեատերերի համար հստակ է, թե իրենց նկատմամբ որ իրավադրույթներն են կիրառվում, դրանց իրավական բովանդակությունը բավարար չափով հասկանալի ու որոշակի է և տեղիք չի տալիս տարաբնույթ մեկնաբանման կամ չի առաջացնում շփոթ, արդյունքում հասցեատերերն ի վիճակի են դրսևորելու համապատասխան վարքագիծը, ինչպես նաև կանխատեսելու իրենց վերաբերող իրավական պահանջների կատարման կամ դրանք իրենց նկատմամբ կիրառելու հետևանքները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչ այժմ արտահայտված իրավական դիրքորոշումների բովանդակային համատեքստից ակնհայտ է, որ բարձագույն հրամանատարական կազմի պաշտոնին նշանակվող անձի համար հստակ է, թե որոնք են իրեն պաշտոնի նշանակելու և ազատելու օրենսդրական հիմքերը և կար-

գը, այդ իրավադրույթները բավարար չափով հասկանալի ու որոշակի են, իսկ դրանք իր նկատմամբ կիրառելիս՝ հետևանքները, այդ թվում նաև հայեցողաբար ծառայությունից ազատվելը, կանխատեսելի:

**Ամփոփելով վերը շարադրվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթները բավարար չափով որոշակի են, հետևաբար դրանք համապատասխանում են Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա.ԴԻԼԱՆՅԱՆ**

2 նոյեմբերի 2021 թվականի  
ՄԴՈ-



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 նոյեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40, 61 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պաշտոնատար

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից:

Օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է.

«3. 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը»:

Վիճարկվող նորմում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է 2021 թվականի մայիսի 18-ի թիվ ՎԴ/9599/05/19 վարչական գործով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողի պնդմամբ խնդիրն այն է, որ «...Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ից 4-րդ կետերով նշված անձանց, միևնույն աշխատանքային ստաժի առկայության պայմաններում, կենսաթոշակ նշանակելու համար սահմանված են ակնհայտ տարբերակված պայմաններ, որոնք պայմանավորված են բացառապես այդ անձանց ծննդյան տարեթվով»:



Դիմողը նշում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձինք սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի հարցում գտնվում են համադրելի իրավիճակում 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված այն անձանց հետ, որոնք իրականացնում են միևնույն պետական ծառայությունը՝ նպաստելով պետության առջև դրված խնդիրների իրականացմանը՝ կատարելով միևնույն գործառնությունները, իսկ միևնույն աշխատանքային ստաժի առկայության պայմաններում նշված անձանց միջև օրենսդրի կողմից սահմանված տարբերակված մոտեցումը կարող է հիմնավորվել բացառապես որևէ իրավաչափ նպատակի առկայությամբ, մինչդեռ, ըստ դիմողի, այն որևէ կերպ հիմնավորված չէ, և արդյունքում խախտվում է խտրականության արգելքի սկզբունքը:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ վիճարկվող կարգավորման սուբյեկտ հանդիսացող անձինք համադրելի իրավիճակում են գտնվում հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձանց հետ, ըստ այդմ՝ արդարացված չէ և որևէ հիմնավորում առկա չէ նրանց նկատմամբ օրենսդրի կողմից տարբերակված վերաբերմունքի դրսևորման համար, ինչի արդյունքում վեճի առարկա կարգավորումը հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև ընդհանուր հավասարությանը:

Դիմողի կարծիքով Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում սահմանված տարիքային սահմանափակումը՝ որպես սահմանադրորեն ամրագրված նպատակին հասնելու միջոց, չի համապատասխանում համաչափության սկզբունքին, մասնավորապես տարբերակված պայմանի կիրառումը չի համարվում այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց այնքանով, որ հանգեցնում է 1974 թվականից հետո ծնված անձանց կենսաթոշակի իրավունքի իրացման ոչ համաչափ սահմանափակման՝ ի տարբերություն Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում, ինչպես նաև 2-րդ կետում նշված սուբյեկտների:

Միաժամանակ ըստ դիմողի՝ վիճահարույց դրույթով սահմանված կարգավորման պարագայում 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձինք զրկվում են նախկին օրենսդրական կարգավորումների արդյունքում ձեռք բերված երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու օրինական ակնկալիքից:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը գտնում է, որ օրենսդրի կողմից նվազագույն համապատասխան տարիք սահմանելն ինքնանպատակ չէ և պայմանավորված է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ: Մասնավորապես ըստ պատասխանողի՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված հանրային ծառայողները «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին համապատասխան կատարում են սոցիալական վճարներ և, հետևաբար՝ ձեռք են բերում կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք: Այսինքն ի տարբերություն մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված հանրային ծառայողների՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված հանրային ծառայողների կենսաթոշակը բաղկացած է երկու հիմնական կենսաթոշակներից, որոնցից մեկը կուտակային կենսաթոշակն է, ինչով էլ պայմանավորված է դատախազների համար հատուկ կենսաթոշակի նվազագույն տարիքը մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելը սահմանելը: Արդյունքում՝ պատասխանողը 1974 թվականի հունվարի 1-ից հետո և մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված դատախազների կենսաթոշակի նշանակման համար նվազագույն տարիք սահմանելու տարբերակված մոտեցման դրսևորման իրավաչափ նպատակ է դիտարկել պարտադիր կուտակային կենսաթոշակի ներդրմամբ կենսաթոշակային համակարգի միասնականության ապահովումը:

Պատասխանողը հաջորդիվ նշում է, որ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործառույթների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ օրենսդիրը սահմանել է կենսաթոշակի իրավունք չնախատեսելով նվազագույն համապատասխան տարիք, ինչը չի կարող դիտարկվել խտրականության արգելքի և օրենքի առջև ընդհանուր հավասարության խախտում:

Անդրադառնալով վիճարկվող կարգավորման արդյունքում անձի սեփականության իրավունքի խախտմանը՝ պատասխանողը գտնում է, որ տվյալ դեպքում Օրենքով թվարկված են բոլոր պայմանները, որոնց առկայությունը պարտադիր է կենսաթոշակի իրավունքը ծագելու համար, ուստի՝ անձը չի կարող ունենալ սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք, եթե վերջինս կենսաթոշակի իրավունքի ծագման նախադրյալներից որևէ մեկը չի բավարարում:

Կենսաթոշակային համակարգի միասնականացման պատճառաբանությամբ պատասխանողը գտնում է նաև, որ վիճարկվող

կարգավորումը համապատասխանում է Սահմանադրությամբ սահմանված համաչափության սկզբունքին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյոք Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այնքանով, որքանով դատախազի պաշտոնից ազատված անձի կենսաթոշակի նշանակման պայման է համարվում վերջինիս՝ մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելը, խաթարվում են օրենքի առջև ընդհանուր հավասարության ու խտրականության արգելքի սկզբունքները:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն որոշմամբ չի անդրադառնալու վիճարկվող կարգավորման սեփականության սահմանադրական իրավունքին և համաչափության սահմանադրական սկզբունքին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի պաշտպանության առարկան սահմանափակվում է արդեն իսկ օրինական հիմքով ձեռք բերած սեփականության կամ օրինական ակնկալիքի պաշտպանությամբ, մինչդեռ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում չի հիմնավորվում, որ անձը նախկինում ունեցել է վիճարկվող կարգավորմամբ սահմանված կենսաթոշակի օրինական ակնկալիք, որից զրկվել է, հետևաբար՝ հիմնական իրավունքի բացակայության պարագայում ինքնանպատակ է դառնում այդ իրավունքի սահմանափակման գնահատումը՝ համաչափության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Անձի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է Սահմանադրության 3-րդ գլխի 83-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում գնահատման առարկա է դարձրել և բացահայտել ոչ միայն սոցիալական ապահովության իրավունքի բովանդակությունն ու էությունը, այլ նաև դրա բաղադրատարր հանդիսացող կենսաթոշակի իրավունքը (մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր 01.07.2021թ. ՍԴՈ-1605, 04.03.2021թ. ՍԴՈ-1580, 16.07.2019թ. ՍԴՈ-1475, 21.06.2019թ. ՍԴՈ-1463, 14.02.2019թ. ՍԴՈ-1443, 06.12.2016թ. ՍԴՈ-1326, 29.11.2016թ. ՍԴՈ-1325, 16.09.2016թ. ՍԴՈ-1302, 07.07.2015թ. ՍԴՈ-1224, 14.10.2014թ. ՍԴՈ-1167, 02.04.2014թ. ՍԴՈ-1142, 14.12.2012թ. ՍԴՈ-1061, 02.10.2012թ. ՍԴՈ-1050, 11.10.2011թ. ՍԴՈ-991, 04.05.2010թ. ՍԴՈ-881, 10.02.2010թ. ՍԴՈ-865, 29.01.2008թ. ՍԴՈ-731, 15.01.2008թ. ՍԴՈ-723, 23.10.2007թ. ՍԴՈ-716, 04.10.2006թ. ՍԴՈ-649 որոշումներում անդրադարձել է կենսաթոշակային հարաբերությունների բովանդակությանը և համապատասխան կարգավորումներին):

Մասնավորապես, Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշման մեջ նշված է, որ «... «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ /հոդվ. 1/, խտրականությունը բացառող հանգամանք /հոդվ. 14.1/, աշխատողի շահի դրսևորում /հոդվ. 32/, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ /հոդվ. 37/, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ /հոդվ. 48/, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ /հոդվ. 89/: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոշակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, որոնք իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը:

Սոցիալական ապահովության իրավունքի, այդ թվում՝ կենսաթոշակի իրավունքի բովանդակության կանխորոշումը ոչ թե ենթա-

դրում է օրենսդիր մարմնի հայեցողությունն օրենքով այդ իրավունքը երաշխավորել կամ չերաշխավորել, այլ վերջինս ունի պարտականություն սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորող իրավական ակտ ընդունել՝ հատկորոշելով միայն իրավունքի բովանդակությունը, ծավալը, իրացման պայմանները և այլն:

Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի հուլիսի 12-ի ՄԴՈ-1475 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ թեև Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի սոցիալական ապահովության, մասնավորապես կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը չպետք է խախտի Սահմանադրության պահանջները, մասնավորապես, այն պետք է լինի որոշակի, կանխատեսելի, չհակասի իրավահավասարության, խտրականության արգելքի սկզբունքներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով ձևավորված չափանիշների համաձայն՝ «... սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը, ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], կետ 61; Andrejeva v. Latvia [GC], կետ 83; Moskal v. Poland, կետ 61):

Անդրադառնալով կենսաթոշակի իրավունքին (այդ թվում՝ հատուկ կարգով նշանակվող) Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի մայիսի 4-ի ՄԴՈ-881 որոշման մեջ նշել է. «Կենսաթոշակային ապահովության իրավունքը (...) և բավարար կենսա-

մակարդակի իրավունքը (...), թեպետև իրենց բնույթով դասվում են սոցիալական իրավունքների շարքին, այնուամենայնիվ, դրանք տարբեր իրավունքներ են, վերաբերում են տարբեր կատեգորիայի անձանց, և այդ իրավունքները Սահմանադրությամբ տարանջատված են: (...) կենսաթոշակային ապահովության իրավունքը վերապահված է հասարակության սոցիալապես առավել խոցելի խմբերին: Օրենսդիրն այդ խմբերի ներկայացուցիչներին դիտարկում է որպես աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ ունեցողներ, որոնք դրա հետևանքով չեն կարող սեփական աշխատանքով իրենց և իրենց ընտանիքների համար ապահովել բավարար կենսամակարդակ: Դրա հետևանքով պետությունն իր սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով նշված խմբերի համար սահմանել է կենսաթոշակային ապահովության իրավունք: Կենսաթոշակային իրավունքի նպատակն անձի համար ոչ թե բավարար, այլ նվազագույն կենսամակարդակ ապահովելն է»:

Կենսաթոշակի իրավունքը դիտարկելով օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի շրջանակներում՝ Սահմանադրական դատարանն իր 2008 թվականի հունվարի 29-ի ՄԴՈ-731 որոշմամբ նշել է, որ այս սկզբունքի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները:

Սոցիալական ապահովության իրավունքի իրացման ծավալներն ու պայմանները կարող են տարբերակված լինել՝ կախված սոցիալական մի շարք կարևոր հանգամանքներից, որպիսի մոտեցումը տվյալ ոլորտում ոչ միայն իրավաչափ է, այլ նաև անհրաժեշտ: Մինչև նույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ իրավական կարգավորման տարբերակումը չպետք է հանգեցնի սոցիալական ապահովության որակի փոփոխության:

Սոցիալական ապահովության իրավունքին, այդ թվում՝ կենսաթոշակի իրավունքի իրացման համար տարբերակումներին, ինչպես նաև համապատասխան պայմաններ նախատեսելու իրավաչափության հարցին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր 2019 թվականի հունիսի 18-ի ՄԴՈ-1463 որոշմամբ՝ գտնելով, որ «սոցիալական ապահովության ոլորտում, հաշվի առնելով Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքը՝ փոխկապակցված Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների հետ, պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, այդ թվում՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա՝ միննույն ժամանակ այդ սահմաններում գործադրելով Սահմանադրությամբ կանխորոշված հնարավոր ջանքերը՝ սոցիալական ապահովության մակարդակը հետևողականորեն բարելավելու ուղղությամբ: Այս ոլորտում հանրային իշխանության մարմինների գործունեության սահմանադրականության գնահատումը ենթադրում է պետության նման հայեցողության և նրա սոցիալ-տնտեսական հնարավորությունների հաշվառման անհրաժեշտություն»:

Ամփոփելով վերոգրյալը Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կենսաթոշակի իրավունքն ունի ծագման իր նախադրյալներն ու օրինական հիմքերը, որոնք, ըստ էության, գտնվում են օրենսդիր մարմնի հայեցողության ներքո՝ որոշակի սահմանափակումներով հանդերձ. ընդ որում՝ ասվածը բխում է նաև Սարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով ձևավորված չափանիշներից, համաձայն որոնց՝ «(...) սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը, ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ

չէ՛ ողջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], կետ 61; Andrejeva v. Latvia [GC], կետ 83; Moskal v. Poland, կետ 61): Մեկ այլ գործով դատարանը կարևորել է, որ «Չնայած 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը չի կարող սահմանափակել պետության ազատությունը սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում վճարվող գումարի չափի կամ տեսակի ընտրության հարցում, կարևոր է նաև ստուգել արդյոք դիմումատուի սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գումար ստանալու իրավունքը խախտվել է այնպես, որ հանգեցրել է նրա կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը» (Stec and Others v. The United Kingdom [GC], կետ 53, Wieczorek v. Poland, կետ 57):

Սույն դեպքում վիճարկվող կարգավորմամբ հատուկ կենսաթոշակ է նախատեսված դատախազի պաշտոնից ազատված այն անձանց համար, որոնք բավարարում են հետևյալ երեք նախապայմանները.

- 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը,
- դատախազի պաշտոնից ազատվել են անձնական դիմումի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալու հիմքերով:

Այսինքն՝ օրենսդիրը, հիմք ընդունելով որոշակի (սույն դեպքում՝ դատախազության համակարգում) աշխատանքի առանձնահատկություններն ու բնույթը, երաշխավորելով Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսված անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանել է նվազագույն համապատասխան տարիք և մասնագիտական աշխատանքային ստաժի առկայություն այդ իրավունքն իրացնելու համար: Հետևաբար՝ նվազագույն համապատասխան տարիքը, ի թիվս այլ պայմանների, դատախազի նկատմամբ հատուկ կենսաթոշակ նշանակելու նախապայման է: Ըստ այդմ՝ վիճարկվող կարգավորմամբ սահմանվել է հատուկ կենսաթոշակի նշանակման համար որոշակի նախապայման (նվազագույն տարիք), որպիսին ինքնին, իր գոյությամբ չի խաթարում որևէ սահմանադրական նորմ: Այլ կերպ ասած՝ ընդհանրապես կենսաթոշակի իրավունքի ծագման հիմքում որոշակի նվազագույն տարիքային շեմի սահմանումը թույլատրելի է, և որևէ սահմանադրական նորմի ուժով նման նախապայման սահմանելու արգելք առկա չէ, սակայն միաժամանակ սահմանված նախապայ-



մանն արդեն բովանդակային առումով ենթակա է գնահատման առանձին սահմանադրական նորմերի լույսի ներքո այն հաշվառմամբ, որ նախապայմանի սահմանման արդյունքում չպետք է խաթարվի որևէ սահմանադրական նորմի էություն:

Սահմանադրական դատարանը, գնահատման առարկա դարձնելով որոշակի տարիքային շեմի սահմանմամբ պայմանավորված խտրականության արգելքի խախտումը, արձանագրել է. «(...) խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ: Խնդրո առարկա իրավիճակում չի կարող արձանագրվել նման վիճակ, քանզի խոսքը վերաբերում է ոչ թե նույն իրավական կարգավիճակի շրջանակներում՝ տարիքով պայմանավորված խտրականությանը, այլ տարբեր իրավական կարգավիճակ ունենալու հիմքով անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքներին և պարտականություններին, այսինքն՝ իրավական հիմնավորում ունեցող օբյեկտիվ պայմաններին» (07.07.2015 թ., ՄԴՈ-1224):

4.2. Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 29-ի ՄԴՈ-1605 որոշմամբ արձանագրվել է, որ դատախազի պաշտոնում երկարամյա ծառայության առկայության պարագայում անձի սոցիալական ապահովության, տվյալ դեպքում՝ Օրենքով նախատեսված կենսաթոշակի իրավունքի իրացմանն ուղղված մոտեցումները պետք է համահունչ լինեն նրա նկատմամբ իրականացվող սոցիալական քաղաքականության ընդհանուր դրույթներին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 5-րդ կետով սահմանել է.

«5. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որպեսզի.

(...)

դ. Դատախազներն ապահովված լինեն աշխատանքի ողջամիտ պայմաններով, ներառյալ՝ իրենց առանցքային դերին համաչափ վարձատրությամբ, պաշտոնավարման և կենսաթոշակի պայմաններով, ինչպես նաև պատշաճ կենսաթոշակային տարիքով, և այս բոլոր պայմանները կարգավորվեն օրենքով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ դատախազի կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև դատախազի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (գոհվելու) դեպքում դատախազի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (65-րդ հոդված):

Դատախազին Օրենքով նախատեսված կենսաթոշակ նշանակելու ընդհանուր պայմանները նախատեսված են Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն որի՝ նույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով:

Վերոգրյալից հետևում է, որ ի տարբերություն Օրենքի վիճարկվող (անցումային) դրույթի՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ եթե անձը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, դատախազի պաշտոնից ազատվել է անձնական դիմումի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալու հիմքերով, սակայն ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո, ապա նա կարող է հավակնել միայն Օրենքի ընդհանուր կարգավորմամբ նախատեսված կենսաթոշակ ստանալու իրավունքին:

Ինչպես նշել է Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի փետրվարի 2-ի ՍԴՈ-1443 որոշմամբ, Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց առնչությամբ իրականացվող պետության սոցիալական քաղաքականությունը, մասնավորապես, վեճի առարկային առնչվող կենսաթոշակի իրավունքի իրացման ոլորտում, ի թիվս այլնի, ունի այն առանձնահատկությունը, որ առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց համար, ելնելով նրանց կարգավիճակի կամ գործառույթների առանձնահատկություններից, օրենսդիրը սահմանել է ավելի բարձր սոցիալական երաշխիքներ և առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք:

Տվյալ դեպքում վիճարկվող կարգավորումը վերաբերում է դատախազի պաշտոնից ազատված անձանց կենսաթոշակին, որն ըստ էության ենթադրում է հատուկ պայմաններով կենսաթոշակ: Օրենսդիրը, հիմք ընդունելով կոնկրետ (տվյալ դեպքում՝ դատախազության համակարգում) աշխատանքի առանձնահատկությունները և բնույթը, երաշխավորելով Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսված անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանել է համապատասխան նախապայմաններ, որոնցից մեկը նրա մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու պայմանն է:

Վերոշարադրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ի թիվս այլնի, դատախազի պաշտոնից ազատված անձին հատուկ կենսաթոշակի նշանակումը մինչև վերջինիս 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու հանգամանքով պայմանավորելը խնդրահարույց չէ սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի տեսանկյունից:

**4.3.** Անդրադառնալով այն հարցին, թե հատուկ կենսաթոշակ նշանակելիս դատախազի պաշտոնից ազատված անձի՝ մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու պայմանի նախատեսման արդյունքում խախտվու մ է արդյոք խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքը Սահմանադրական դատարանն արձանագրում է. Սահմանադրության «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանված է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելման սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (29.01.2008թ., ՍԴՈ-731).

- Մահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (04.05.2010թ., ՄԴՈ-881):

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (07.07.2015թ., ՄԴՈ-1224):

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող կարգավորմամբ խտրականության արգելքի խախտման հարցին՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում առկա է խտրականության արգելքի պաշտպանված հիմքի առկայություն: Մասնավորապես՝ ըստ էության օրենսդիրը կենսաթոշակի իրավունքի ծագման նախապայմաններում դրսևորել է տարբերակված մոտեցում՝ պայմանավորված տարիքի հիմքով:

Գնահատելով վիճարկվող կարգավորմամբ խտրականության արգելքի խախտման հնարավորությունը՝ Մահմանադրական դատարանը գտնում է, որ պետք է պարզել համադրելի իրավիճակում գտնվող անձանց հանդեպ վերաբերմունքի տարբերության առկայությունը կամ բացակայությունը: Քննարկվող դեպքում իրավիճակի համադրելիության տեսանկյունից խոսքը մի դեպքում դատախազի պաշտոնից ազատված անձանց մասին է, մյուս դեպքում՝ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձանց, որոնց նկատմամբ կենսաթոշակը նշանակվում է տարբեր նախապայմաններով:

Անդրադառնալով դատախազի և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակին՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք՝ ակնհայտորեն և էականորեն տարբերվում են: Մասնավորապես թեպետ և՛ դատախազները, և՛ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք համարվում են

քրեական հետապնդման մարմիններ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ), այդուհանդերձ, նրանք կարգավիճակով չեն նույնանում (Սահմանադրության 176-րդ և 178-րդ հոդվածներ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետ, 55-րդ հոդվածի 1-ին մաս, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված և այլն), իսկ միայն ինքնավար պաշտոնի հատկանիշով դրանք չենք կարող գնահատվել որպես համադրելի պաշտոններ:

Ըստ այդմ՝ դատախազն ու հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չեն կարող նույնացվել և համարվել նույն իրավական կարգավիճակում գտնվող անձինք, մինչդեռ Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելք հանդիսացող նորմի պաշտպանության առարկան տարածվում է նույն իրավական կարգավիճակում կամ համադրելի կարգավիճակում գտնվող անձանց վրա: Այլ կերպ սույն դեպքում դատախազն ու հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չեն կարող համարվել նույն իրավական կարգավիճակն ունեցող և համադրելի իրավիճակում գտնվող անձինք, ինչի արդյունքում բացառվում է վիճարկվող կարգավորմամբ խտրականության արգելքին հակասությունն առ այն, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակը դուրս է խտրականության արգելքի առարկայական պաշտպանության ոլորտից:

Անդրադառնալով վիճարկվող կարգավորմամբ սահմանված՝ մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված դատախազների՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված դատախազների համադրելիությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ըստ էության, գործ ունենք նույն իրավական կարգավիճակն ունեցող նույն խմբին պատկանող դատախազի պաշտոնից ազատված անձանց հետ, որոնց կենսաթոշակի իրավունքի ծագման փաստը օրենսդրի կողմից տարբերակվել է ըստ վերջիններիս տարիքի, և ինչպես դիմողն է իրավացիորեն նկատել մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձինք սոցիալական ապահովության, մասնավորապես կենսաթոշակ ստանալու իրավունքի հարցում գտնվում են համադրելի իրավիճակում 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված այն անձանց հետ, որոնք իրականացնում են միևնույն պետական ծառայությունը՝ կատարելով միևնույն գործառույթները: Այնուամենայնիվ, այս պարագայում ևս պետք է նկատի ունենալ, որ նույն իրավական կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի ուղղակի խտրա-

կանություն, այսինքն՝ օրենսդրի կողմից տարբերակումը պետք է ուղղված լինի խտրականության արգելքով պաշտպանվող որևէ հիմքին: Այլ կերպ ասած՝ նույն իրավական կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին խոսք կարող է լինել, եթե տարբերակված մոտեցումը պայմանավորված է կոնկրետ և հստակ հատկանիշով, որն էլ խտրականության արգելքի պաշտպանության առարկա է: Այսինքն՝ սույն դեպքում անհրաժեշտ է հիմնավորել, որ վիճարկվող իրավակարգավորման սուբյեկտների՝ մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձանց նկատմամբ «առավել բարենպաստ վերաբերմունքը» պայմանավորված է որոշակի հատկանիշով (ծննդյան փաստով, տարիքով) ի տարբերություն 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձանց, մինչդեռ քննարկվող իրավիճակում առկա չէ որևէ հիմնավորում, որ օրենսդիրը, կախված անձանց հենց տարիքային հատկանիշից, նպատակ է հետապնդել տարբերակված մոտեցում կամ վերաբերմունք դրսևորել դատախազի պաշտոնից ազատված անձանց կենսաթոշակի իրավունքի ծագման նախապայմանները սահմանելիս: Այլ կերպ ասած՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձանց նկատմամբ «նվազ բարենպաստ» վերաբերմունքի և հենց 1974 թվականին ծնված լինելու միջև որևէ պատճառահետևանքային կապ առկա չէ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ 1974 թվականի ընտրությունն ապահովում է անցումային փուլի բնականոն հաղթահարումը, բացի դրանից, հանդիսանում է հատուկ կենսաթոշակի իրավունքի ծագման հատուկ պայման, հակառակ պարագայում կստացվի, որ տարիքով պայմանավորված որևէ իրավունքի ծագումը միշտ ենթադրում է խտրականություն այլ տարիքային խմբի անդամների համեմատությամբ, ինչի արդյունքում իրավակարգավորումը առարկայազուրկ կդառնա: Ընդ որում՝ սույն դեպքում ոչ թե 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձանց կենսաթոշակի իրավունքը չի երաշխավորվում, այլ ընդհակառակը՝ այն երաշխավորված է Օրենքով, սակայն վիճարկվող նորմով սահմանված հատուկ պայմաններով կենսաթոշակի իրավունքի կրողներ են միայն մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված դատախազի պաշտոնից ազատված անձինք:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ միայն մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված դատախազի պաշտոնից ազատված անձանց «հատուկ պայմաններով» կենսաթոշակի իրավունքի կրողներ համարելը ոչ թե պատահական նվազագույն տա-

րիքի ընտրության արդյունք է, այլ, ինչպես իր բացատրությունում նշել է սույն գործով պատասխանողի Ազգային ժողովի ներկայացուցիչը, բխում է ընդհանուր կենսաթոշակային ոլորտի հարաբերությունների կարգավորման համատեքստից: Մասնավորապես «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում սոցիալական վճարներ են կատարում՝

1) 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը:

2) մինչև 1974 թվականը ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը, եթե նույն օրենքով սահմանված կարգով ներկայացրել են նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դիմում (այսուհետ՝ կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում) (...): Նույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (...) մասնակիցը կարող է օրենքով սահմանված կարգով տնօրինել իր կուտակային կենսաթոշակը՝ անկախ պետական կենսաթոշակը ստանալու փաստից:

Վկայակոչված կարգավորումները տեղայնացնելով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, այդ թվում՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձինք, համարվում են պարտադիր սոցիալական վճարներ կատարող անձինք՝ ի տարբերություն մինչև 1974 թվականը ծնված վարձու աշխատողների, որոնց պարագայում սոցիալական վճարները կատարվում են անձի կամարտահայտության հիման վրա: Արդյունքում՝ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված դատախազի պաշտոն զբաղեցնող անձինք ոչ միայն պետական կենսաթոշակի իրավունքի կրողներ կհանդիսանան, այլ նաև կուտակային կենսաթոշակի ի տարբերություն մինչև 1974 թվականը ծնված դատախազի պաշտոն զբաղեցնող անձանց, որոնք ըստ էության պետական կենսաթոշակի իրավունքի կրողներ են: Այս ամբողջից հետևում է, որ վիճարկվող կարգավորմամբ հատուկ կենսաթոշակ ստանալու պայման հանդիսացող տարիքային շեմը բխում է ոլորտը կարգավորող օրենսդրության հարացույցից, այն անցումային դրույթ է և փաստորեն հանդիսանում է ժամանակավոր կարգավորող նորմ, որի նպատակը, ըստ պատասխանողի, կենսաթոշակային ոլորտի կարգավորման միասնականության ապահովումն է:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին կենսաթոշակի նշանակումը, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, խտրականության արգելքի խախտում չէ՝ ի համեմատություն նույն պահանջները բավարարող 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձանց:

**4.4.** Սահմանադրական դատարանը, անդրադառնալով օրենքի առջև հավասարության սկզբունքին, իր 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշմամբ արտահայտել, այնուհետև բազմիցս (ՍԴՈ-947, ՍԴՈ-1124, ՍԴՈ-1262, ՍԴՈ-1326) վերահաստատել է այն իրավական դիրքորոշումը, որ «(...) օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ (...) կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»: Ապա վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «(...) օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը երաշխավորում է միևնույն խմբի (կատեգորիայի) սուբյեկտների նկատմամբ հավասար իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրում և չի բացառում օբյեկտիվ հիմքերով առանձնացված զանազան խմբերին (կատեգորիաներին) պատկանող անձանց նկատմամբ տարբերվող վերաբերմունքի ամրագրումը: Հիշյալ սահմանադրական սկզբունքը կարող է խաթարվել միայն հավասար իրավական կարգավիճակ ունեցող և հավասար իրավական դաշտում գործող սուբյեկտների նկատմամբ իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքում, որը կարտահայտվի նրանցից մեկին կամ մի քանիսին որևէ ողջամիտ իրավական հիմնավորում չունեցող արտոնության կամ բարենպաստ վերաբերմունքի տրամադրմամբ» (22.02.2021թ., ՍԴՈ-1577 որոշում):

Ընդ որում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը



գտել է, որ «ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների իրականացման դեպքում խտրականության չենթարկվելու իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ պետությունը չի ցուցաբերում տարբերակված վերաբերմունք զգալիորեն տարբեր իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ» (Thlimmenos v. Greece, կետ 44):

Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ գնահատման առարկա է դարձրել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում հատկորոշված սուբյեկտների իրավական կարգավիճակն ու դրանց համադրելիությունը, ըստ այդմ՝ արձանագրվել է, որ դատախազի պաշտոնից ազատված անձինք և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձինք տարբեր իրավական կարգավիճակներ ունեն և համադրելի չեն, հետևաբար՝ օրենսդիրը վիճարկվող կարգավորմամբ մասնավորեցրել է կենսաթոշակի իրավունքի ծագման պայմանները՝ դրսևորելով տարբերակված մոտեցում:

Տվյալ դեպքում պետությունը, սոցիալական քաղաքականության ոլորտում ունենալով թույլատրելի լիազորություն, իրացրել է այն տարբեր խմբի անձանց համար սահմանելով կենսաթոշակի իրավունքի ծագման տարբեր պայմաններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 նոյեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1617



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1086-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ,  
ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 236-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ,  
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1992 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի  
«ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԿԱԽ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԻՑ) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԽԵՂՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՎՆԱՍՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 579 ՈՐՈՇՄԱՆ, ՀՀ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի «ԿՅԱՆՔԻՆ  
ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ՝  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՃԱՆԱԶՎԱԾ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՄ ՄՆԱՆԿ  
ՃԱՆԱԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՔ ՏՈՒԺՈՂԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 914-Ն ՈՐՈՇՄԱՆ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 նոյեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՊԵՎՍԿԻ Դ ♦ 4(104)2021

տրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Կառավարության,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» թիվ 579 որոշման, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Քաղաքացիական օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Քաղաքացիական օրենսգրքի «Վնասների հատուցումն իրավաբանական անձը դադարելու դեպքում» վերտառությամբ 1086-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները:

2. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Օրենքով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վճարները կապիտալացնելու այլ դեպքեր»:

Վերոնշյալ դրույթն ընդունման պահից փոփոխության և կամ լրացման չի ենթարկվել:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Աշխատանքային օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2004 թվականի դեկտեմբերի 14-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

Աշխատանքային օրենսգրքի՝ «Վնասի հատուցումը կազմակերպության լուծարման դեպքում» վերտառությամբ 236-րդ հոդվածով սահմանվում է.

«Կազմակերպության լուծարման դեպքում աշխատողին պատճառված վնասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ենթակա է հատուցման»:

Վերոնշյալ դրույթն ընդունման պահից փոփոխության և կամ լրացման չի ենթարկվել:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության<sup>1</sup> այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» թիվ 579 որոշումը (այսուհետ՝ նաև ՀՀ կառավարության թիվ 579 որոշում) ՀՀ կառավարության կողմից ընդունվել, ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել և ուժի մեջ է մտել 1992

<sup>1</sup> [www.arlis.am](http://www.arlis.am) պաշտոնական կայքում նշված է «առողջապահության»:

թվականի նոյեմբերի 15-ին:

Վերոնշյալ որոշմամբ սահմանվում են ընդհանուր դրույթներ աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին, ինչպես նաև փոխհատուցման ենթակա վնասի չափի որոշման, վնասի փոխհատուցման գումարի վճարման կարգի վերաբերյալ կարգավորումներ:

Վերոնշյալ որոշմամբ հաստատված կանոնների 7-րդ կետը լրացվել և հետագայում խմբագրվել է ՀՀ կառավարության համապատասխանաբար՝ 09.07.1997թ. թիվ 258 և 25.06.2004թ. թիվ 1040-Ն որոշումներով:

ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1094-Ն որոշմամբ որոշվել է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության թիվ 579 որոշմամբ սահմանված կանոնների 16-րդ կետը:

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշումը (այսուհետ նաև՝ ՀՀ կառավարության թիվ 914-Ն որոշում) ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2009 թվականի հուլիսի 23-ին, ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել 2009 թվականի օգոստոսի 12-ին և ուժի մեջ է մտել 2009 թվականի օգոստոսի 29-ին:

Վերոնշյալ որոշմամբ ամրագրվում են դրույթներ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում, Քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն, երկրորդ հերթով, իսկ իրավաբանական անձին սնանկ ճանաչելու դեպքում՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված պահանջների բավարարման համար անհրաժեշտ գումարների հաշվարկման, կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգի վերաբերյալ:

Ընդունման պահից վերոնշյալ որոշման մեջ փոփոխություններ չեն կատարվել:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2021 թվականի մարտի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, վերլուծելով սույն գործին առնչվող իրավական ակտերը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

**1. Դիմողի դիրքորոշումները**

Սույն դիմումով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը դիմողը դիտարկել է Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի բովանդակության, դրա սահմանափակման համար սահմանադրական և միջազգային երաշխիքների, Սահմանադրությամբ ամրագրված համաչափության, խտրականության արգելքի սկզբունքների, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրական պահանջների ապահովման համատեքստում:

Վերլուծելով քաղաքացիական և աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև Կառավարության համապատասխան որոշումներով աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ ամրագրված կարգավորումները՝ դիմողը նշում է, որ դրանցով լուծում չեն ստացել այն դեպքերը, երբ կազմակերպության լուծարման դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

Դիմողը նշում է, որ սույն գործով բարձրացված խնդրի լուծումն ապահովող դրույթը ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետի համաձայն՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:

Արդյունքում՝ տվյալ փոփոխության հետևանքով փոխհատուցում ստանալու երաշխիքը, դիմողի համոզմամբ, վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(104)2021

կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Քաղաքացիական և աշխատանքային օրենսդրության, ինչպես նաև կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցմանն առնչվող ենթաօրենսդրական իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում դիմողը գտնում է, որ «...կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած անձանց վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացման համար բացակայում են անհրաժեշտ իրավական կառուցակարգեր: Մասնավորապես, ներպետական օրենսդրությունն այնքանով, որքանով չի ամրագրում լուծարված կազմակերպության կապիտալացված վճարները չբավարարելու դեպքում տուժողին պատճառված վնասի փոխհատուցման հնարավորությունը և պետության հանդիպակաց պարտականությունը, առաջ է բերում սահմանադրական մի շարք պահանջների չպահպանման հարց»:

Վիճարկվող իրավակարգավորումները դիտարկելով սեփականության իրավունքի և դրա սահմանափակման իրավաչափության համատեքստում՝ դիմողը նշում է, որ կազմակերպության լուծարման դեպքում, երբ բացակայում են անհրաժեշտ միջոցները, վնասի հատուցմանն առնչվող ներպետական կարգավորումները չեն բխում անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի էությունից ու բովանդակությունից, ինչպես նաև այդ իրավունքի պաշտպանությունը երաշխավորելու հանրային իշխանության սահմանադրաիրավական հանձնառության էությունից: Բացի դրանից, ապահովված չէ արդար հավասարակշռությունը հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Սույն գործով բարձրացված խնդիրը դիտարկելով վնասի հատուցման իրավունքի համատեքստում՝ դիմողը նշում է, որ վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացման համար գործուն կառուցակարգերի բացակայության հետևանքով խաթարվում է Սահմանադրությամբ ամրագրված այն պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հռչակվել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը:

Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում է դրսևորվում, որը պայմանավորված է

այն հանգամանքով, որ պատճառված վնասի համար պատասխանատու ճանաչված կազմակերպությունները լուծարվել են տարբեր ժամանակաշրջաններում:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը խնդրում է որոշել վիճարկվող իրավակարգավորումների համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով քաղաքացիական և աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցմանն առնչվող իրավական ակտերով չեն սահմանվում գործուն իրավական կառուցակարգեր՝ ուղղված կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն:

**2. Պատասխանողների դիրքորոշումները**

**2.1. Ազգային ժողովի դիրքորոշումները**

Պատասխանողը նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական պրակտիկային համահունչ ներպետական օրենսդրությամբ ամրագրվել են բոլոր անհրաժեշտ և բավարար կառուցակարգերը՝ ապահովելու աշխատողի՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը, ուստի՝ վիճարկվող դրույթների՝ Սահմանադրության 60, 75, 78 և 81-րդ հոդվածներին հակասելու վերաբերյալ դիմողի պնդումներն անհիմն են:

Վիճարկվող դրույթները դիտարկելով խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում՝ պատասխանողը նշում է, որ զարգացող հասարակական հարաբերություններին ընդառաջ իրականացվող օրենսդրական փոփոխությունների հետևանքով միննույն հարաբերությունները կարգավորող նորմերը տարբեր ժամանակներում կարող են տարբեր լինել, որը, սակայն, խտրականություն կամ տարբերակված մոտեցում չի կարող դիտարկվել ինչպես մինչ այդ փոփոխությունը գոյություն ունեցող, այնպես էլ դրանից հետո առաջացող իրավահարաբերությունների մասնակիցների նկատմամբ: Ուստի՝ ըստ պատասխանողի՝ դիմողի այն դիրքորոշումը, որ օրենսդրական նախկին և ներկա կարգավորումները բովանդակում են տարբեր իրավական լուծումներ՝ այդպիսով հանգեցնելով խտրական մոտեցման, անընդունելի է, քանի որ նման տրամաբանության դեպքում կստեղծվի մի իրավիճակ, երբ զարգացող հասարա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(104)2021



կական հարաբերությունների պահանջներով պայմանավորված այս կամ այն իրավանորմի փոփոխությունն անհնար կդառնա:

Ամփոփելով իր դիրքորոշումները պատասխանողը եզրահանգում է, որ վիճարկվող իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 29, 60, 75, 78 և 81-րդ հոդվածներին:

**2.2. Կառավարության դիրքորոշումները**

Ըստ պատասխանողի սոցիալական ապահովության ոլորտում պետության պարտականությունների իրագործման հարցում պետության հայեցողության թույլատրելի շրջանակներում՝ ՀՀ կառավարությունը 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշման ընդունմամբ իրավաչափորեն հրաժարվել է այն մոտեցումից, որի համաձայն կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման և կապիտալացված միջոցների անբավարարության դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:

Պատասխանողը նշում է, որ 1992 թվականին, երբ նոր էր ձևավորվում շուկայական տնտեսությունը, և ձևավորվում էին իրավաբանական անձինք, պետությունը որդեգրել էր մոտեցում, համաձայն որի պատրաստ էր հատուցելու այդ իրավաբանական անձանց կողմից պատճառված վնասը դրանց լուծարման դեպքում: Մակայն հետո, երբ տնտեսությունը զարգացավ, Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեցին բազմաթիվ իրավաբանական անձինք, որոնք ակտիվորեն գործունեություն էին ծավալում, Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց այն մոտեցումից, որի համաձայն կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման և կապիտալացված միջոցների անբավարարության դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Նշված փոփոխությունը իրավաչափ էր այն առումով, որ պետությունը փոփոխված սոցիալ-տնտեսական պայմաններում ևս մեկ անգամ գնահատեց իր հնարավորությունները, դրանք համադրեց քննարկվող երաշխիքի սահմանման անհրաժեշտության հետ և դրսևորեց իր մոտեցումը՝ սոցիալական քաղաքականության տեսանկյունից:

Վերոգրյալի համատեքստում վերլուծելով վիճարկվող իրավակարգավորումները՝ պատասխանողը գտնում է, որ պետությունն ունի հստակ կառուցակարգեր իրավաբանական անձի լուծարման դեպքում վերջինիս կողմից պատճառված վնասները հատուցելու

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

համար և այդ ոլորտում իրավաչափորեն որդեգրել է հստակ քաղաքականություն:

Պատասխանողը նշում է նաև, որ լուծարված կազմակերպության կապիտալացված վճարները բավարար չլինելու դեպքում պետության կողմից դրանց վճարումը չի մտնում սոցիալական ապահովության պաշտպանության առարկայի մեջ, օրենսդրի հայեցողությանն է վերապահվում նշված խնդրի կարգավորումը՝ ելնելով ոլորտում պետական քաղաքականության նպատակներից և առաջնահերթություններից, ֆինանսական միջոցների առկայությունից և դրանց արդյունավետ օգտագործումից: Ընդ որում՝ պատասխանողի կարծիքով այս գործառույթների իրականացման համար օրենսդրին և Կառավարությանը վերապահված հայեցողության գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից, հետևաբար՝ պատասխանողի համոզմամբ դիմումով վիճարկվող դրույթների իրավակարգավորումներն ամբողջությամբ համապատասխանում են սոցիալական ապահովության ոլորտում պետության պարտականությունների իրագործման հարցում պետության հայեցողության թույլատրելի շրջանակներին, և այս առումով առկա չէ վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդիր:

Վիճարկվող իրավակարգավորումները դիտարկելով խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում՝ պատասխանողը նշում է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին վնասի հատուցման իրավունքի պահպանումը միայն այն անձանց համար, որոնք այդ իրավունքն արդեն իսկ ձեռք էին բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա, չի կարող դիտարկվել Սահմանադրության 29-րդ հոդվածում նշված որևէ հիմքի ներքո, ինչպես նաև իր բնույթով չի կարող դասվել Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված «անձնական» կամ «սոցիալական» բնույթի հանգամանքների շարքին:

Անդրադառնալով վիճարկվող դրույթների՝ սեփականության իրավունքին համապատասխանության հարցին՝ պատասխանողն արձանագրում է, որ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պետական միջոցների հաշվին պատճառված վնասի հատուցում ստանալու լեգիտիմ ակնկալիքներ չէին կարող ունենալ այն անձինք, որոնք մինչ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշման ուժի մեջ մտնելը ձեռք չէին բերել այդ իրավունքը, հետևաբար՝ սույն սահմանադրաիրավական վեճի շրջա-

նակներում չկա սեփականության իրավունքով պաշտպանության ենթակա իրավաչափ շահ:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը եզրահանգում է, որ վիճարկվող իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 29, 60, 75, 78 և 81-րդ հոդվածներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Հաշվի առնելով այն, որ դիմողը վիճարկվող դրույթների և նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը վիճարկում է աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ արդյունավետ կարգավորումների բացակայության տեսանկյունից, մասնավորապես՝ նշելով, որ դրանցով լուծում չեն ստացել այն դեպքերը, երբ կազմակերպության լուծարման դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար, Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում վիճարկվող՝ Քաղաքացիական և Աշխատանքային օրենսգրքերի համապատասխան հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 579 և թիվ 914-Ն որոշումներով հաստատված կանոնակարգերի սահմանադրականությունը կզնահատի միայն լուծարվող իրավաբանական անձանց միջոցների անբավարարության դեպքում աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացման տեսանկյունից:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

- արդյոք վիճարկվող դրույթներով նախատեսված՝ աշխատողների՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ կարգավորումները համահունչ են Սահմանադրությամբ նախատեսված՝ անձի՝ աշխատավայրում դժբախտ պատահարների և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքին, և արդյոք այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար վիճարկվող դրույթներով նա-

խատեսված են անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ բացառելով օրենսդրական բացի առկայությունը,

- արդյոք վիճարկվող դրույթներով նախատեսված աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ կարգավորումները չեն խախտում անձանց՝ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքը,

- արդյոք վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորումները չեն խախտում խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 579 որոշմամբ հաստատված կանոնակարգով՝ մինչև ՀՀ կառավարության 22.07.2004 թ. թիվ 1094-Ն որոշմամբ փոփոխություն կատարելը, նախատեսվում էր աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասների՝ պետական բյուջեից փոխհատուցման հնարավորություն:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերտառությամբ 3-րդ գլխի շրջանակներում, ի թիվս այլնի, ամրագրվում է նաև սոցիալական ապահովության իրավունքը (հոդված 83), որով, մասնավորապես, սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սահմանադրությունն ամրագրել է անձի սոցիալական ապահովության իրավունքը՝ դրանում ներառելով նաև աշխատավայրում դժբախտ պատահարների դեպքում սոցիալական ապահովություն ստանալու իրավական հնարավորությունը, մինևույն ժամանակ դրա ամրագրման պայմանների և կարգի սահմանումը վերապահել է օրենսդրին:

Սահմանադրությամբ հիմնական իրավունքների և ազատությունների և տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում

րում օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների տարանջատումը ենթադրում է դրանց ապահովման տարբեր ռեժիմների առկայություն, որի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել Սահմանադրական դատարանը նշելով, մասնավորապես, հետևյալը.

«...2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կառուցված է մարդու հիմնական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների (Սահմանադրության գլուխ 2-րդ) ու տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքների ու պետության քաղաքականության հիմնական նպատակների հստակ տարանջատման մոտեցման վրա (Սահմանադրության գլուխ 3-րդ): Վերջիններիս Սահմանադրությամբ տրամադրվում է ամրագրման և պաշտպանության այլ ռեժիմ ու պարտադիրություն. պետություններն ապահովում են օրենսդրական երաշխիքներն ու պետության սոցիալական նպատակները միայն իրենց հնարավորությունների շրջանակում» (12.06.2019 թ., ՍԴՈ-1419):

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր պատշաճ միջոցներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունմամբ:

Այսինքն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների ամրագրումն ու տարանջատումը հիմնական իրավունքներից և ազատություններից վկայում է այն մասին, որ պետությունը, հավասարապես կարևորում է այդ ոլորտներում օրենսդրական անհրաժեշտ երաշխիքների ամրագրումն ու կենսագործումը: Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանը 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշմամբ դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է»: Այսինքն՝ սոցիալական ապահովության, այդ թվում՝ աշխատավայրում դժ-

բախտ պատահարների դեպքում սոցիալական ապահովության իրավական երաշխիքների ամրագրումն իրեն սոցիալական հոշակած պետության պարտականությունն է, իսկ այդպիսի երաշխիքներ ամրագրող օրենսդրական կարգավորումները պետք է լինեն հնարավորինս հստակ և որոշակի՝ ապահովելով խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետության պարտականությունն է սահմանել պատշաճ կառուցակարգեր՝ աշխատողների՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասների արդյունավետ փոխհատուցման համար, ինչը կարող է դրսևորվել ինչպես պետական բյուջեից փոխհատուցում վճարելով, այնպես էլ այնպիսի իրավակարգավորումներ նախատեսելու միջոցով, որոնք կապահովեն փոխհատուցում ստանալու անձի հնարավորությունը:

**4.2.** Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1325 որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ «... Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը» վերտառությամբ 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթա-

ցակարգեր»: Չնայած օրենսդրական կանոնակարգման տվյալ սահմանադրական պահանջն անմիջականորեն վերաբերում է հիմնական իրավունքներին և ազատություններին, սակայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված երաշխիքները նույնպես պետք է բավարարեն արդյունավետության սահմանադրական պահանջը»:

Սահմանադրության երրորդ գլուխը նվիրված է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների ամրագրմանը: Վերոնշյալ ոլորտներում օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը հանգում է հետևյալին. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ սոցիալական ապահովության ոլորտում, հաշվի առնելով Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքը՝ փոխկապակցված Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների հետ, պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, այդ թվում՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա՝ մինչև ժամանակ այդ սահմաններում գործադրելով Սահմանադրությամբ կանխորոշված հնարավոր ջանքերը՝ սոցիալական ապահովության մակարդակը հետևողականորեն բարելավելու ուղղությամբ» (18.06.2019 թ., ՍԴՈ-1463):

**4.3.** Քաղաքացիական օրենսգրքի «Վնասների հատուցումն իրավաբանական անձը դադարելու դեպքում» վերտառությամբ 1086-րդ հոդվածով ամրագրվում են ինչպես իրավաբանական անձի վերակազմակերպման, այնպես էլ լուծարման դեպքերում վնասների հատուցման առանձնահատկությունները՝ սահմանելով, որ

«1. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները:

2. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն

օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Օրենքով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վճարները կապիտալացնելու այլ դեպքեր»:

Վերոնշյալ դրույթներն ամբողջությամբ բխում են Քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից, իսկ հիշատակված հոդվածով նախատեսված կարգավորումներն առողջությանը պատճառված վնասների փոխհատուցման համար անհրաժեշտ կառուցակարգեր են:

Ինչ վերաբերում է Աշխատանքային օրենսգրքին, ապա հարկ է նշել, որ վերջինս՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակ, ի թիվս այլնի, նախատեսում է վնասի հատուցում ստանալու իրավունքը (38-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետ): Ընդ որում՝ Աշխատանքային օրենսգիրքը անդրադառնում է նաև կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում վնասի հատուցման հարցին՝ նշելով, որ վնասը հատուցելու պարտավորություն ունեցող կազմակերպության վերակազմակերպման դեպքում վնասի հատուցման պարտավորությունը փոխանցվում է իրավահաջորդության կարգով՝ փոխանցման ակտին կամ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան (235-րդ հոդված), իսկ կազմակերպության լուծարման դեպքում աշխատողին պատճառված վնասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ենթակա է հատուցման (236-րդ հոդված): Այսինքն՝ վնասի փոխհատուցման հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, սակայն չի բացառվում, որ կարգավորվեն նաև այլ օրենքներով:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների կենսագործման նկատառումներից ելնելով՝ ՀՀ կառավարության թիվ 579 և թիվ 914-Ն որոշումներով հաստատվել են աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման, ինչպես նաև կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգերը:



Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վիճարկվող կարգավորումներն ուղղված են ապահովելու աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում կրած վնասի հատուցման իրավունքի իրացմանը, ուստի այդ տեսանկյունից սահմանադրականության խնդիր չեն հարուցում:

**4.4.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը վիճարկվող դրույթների սահմանադրականությունը դիտարկում է գլխավորապես գործուն իրավական կառուցակարգերի բացակայության համատեքստում, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը դիտարկել նաև օրենսդրական բացի լույսի ներքո:

Սահմանադրական դատարանը նախկինում բազմիցս անդրադարձել է օրենսդրական բացի հիմնահարցին: Ըստ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանության

1) «Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը» (14.09.2010 թ., ՍԴՈ-914),

2) «Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը» (08.04.2014 թ., ՍԴՈ-1143),

3) «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է» (05.02.2010 թ., ՍԴՈ-864):

Վերոնշյալից բխում է, որ օրենսդրական բացի առկայության մասին խոսք լինել չի կարող բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրության մեջ առկա են համապատասխան իրավական երաշխիքներ կոնկրետ իրավունքի իրացման համար:

Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ, նախ վիճարկվող իրավակարգավորումներով արդեն իսկ նախատեսվում են իրավական երաշխիքներ անձի աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում կրած վնասների հատուցում ստանալու իրավունքի իրականացման համար՝ մասնավորապես՝ փոխհատուցման պարտականությունը իրավաբանական անձի իրավահաջորդին փոխանցելով կամ լուծարվող իրավաբանական անձի միջոցները կապիտալացնելու ճանապարհով:

Մյուս կողմից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ «Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված անձին հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է անկախ աշխատանքային ստաժի տևողությունից: Սահմանվում է նաև, որ հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսվում է, որ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով մահացած անձի ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներիին աշխատանքային կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ մահացած անձի աշխատանքային ստաժի տևողությունից:

Հաշվի առնելով, որ սոցիալական ապահովության ոլորտում պետությունն օժտված է հայեցողության լայն շրջանակով և ցանկացած երաշխիք տրամադրում է իր հնարավորությունների սահմաններում՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում տրամադրված երաշխիքների՝ օրենսդրի կողմից ընտրված ծավալը չի կարող դառնալ սահմանադրականության առարկա և դիտարկվել որպես օրենսդրական բաց:

Մինևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրության զարգացումը պետք է ընթանա այն ուղղությամբ, որ սոցիալական ապահովության, այդ թվում՝ աշխատավայրում դժբախտ պատահարների արդյունքում աշխատողների կրած վնասների հատուցման իրավունքի արդյունավետ իրացման

համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովումն ունենա առավել ամբողջական և համակարգային երաշխավորվածություն:

**4.5.** Սահմանադրության «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

Սեփականության և սոցիալական ապահովության իրավունքներին սերտորեն առնչվում է առանձնակի կարևորություն ունեցող՝ գույքային բարիքի միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը: Իր որոշումներում Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է այս իրավունքին: Մասնավորապես 2015 թվականի դեկտեմբերի 1-ի ՍԴՈ-1238 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը նշել է. «Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել (...) սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ...»:

2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն ընդգծել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1326 որոշմամբ արձանագրել է, որ «...սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքն անձի մոտ ծագում է երկու պարագայում, երբ.

- անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,
- անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի (Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի, 07.05.2002 թ.)՝ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը: Եվրոպական դատարանի վճիռների համաձայն՝ «պահանջի իրավունքը ևս կարող է համարվել «սեփականություն» Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով, եթե հիմնավորապես հաստատվել է, որ այդ պահանջը ենթակա է կատարման»:

Դիտարկելով սույն գործով վիճարկվող իրավական ակտերը վերոգրյալի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության թիվ 579 որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք ունեն այն անձինք, որոնք աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում վնասներ են կրել մինչև 2004 թվականի համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելը, իսկ այդ փոփոխությունից հետո վնաս կրած անձինք չունեն սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք, ուստի՝ այդ մասով սեփականության իրավունքի պաշտպանության խնդիր առկա չէ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ և՛ աշխատանքային, և՛ քաղաքացիաիրավական օրենսդրության շրջանակներում ամրագրված են ինչպես կազմակերպության վերակազմակերպման, այնպես էլ լուծարման դեպքում վնասի հատուցման իրավունքի իրացման կառուցակարգերը, իսկ վնասի հատուցման տրամադրման և համապատասխան վճարների կապիտալացման կարգի մանրամասները նախատեսվում են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Նման պայմաններում այն անձինք, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվում աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում, օժտված են վերոնշյալ իրավական կարգավորումների հիմքով պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքով:

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ կառավարության վիճարկվող թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշ-

մամբ կատարված փոփոխության ուժի մեջ մտնելը աշխատավայրում աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:

**4.6.** Սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ կենսագործման համար կարևոր է դրա իրացման պայմանների ամրագրումն առանց խտրականության, ուստի Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը դիտարկել խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում:

Մահմանադրության «խտրականության արգելքը» վերառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի վերաբերյալ Մահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները (29.01.2008 թ., ՄԴՈ-731),

- Մահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում (04.05.2010 թ., ՄԴՈ-881),

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (07.07.2015 թ., ՄԴՈ-1224):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես՝ իր վճիռներից մեկում (Andrejeva v. Latvia (GC 18.02.2009, 55707/00) Եվրոպական դատարանը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ռոջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ խտրականության առկայության գնահատման համար անհրաժեշտ է փաստել նույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ այնպիսի տարբերակված մոտեցման մասին, որը չունի ռոջամիտ արդարացում և չի հետապնդում իրավաչափ նպատակ, մինչև նույն ժամանակ, այդ մոտեցման արդյունքում տեղի է ունենում անձի իրավունքների սահմանափակում կամ զրկում, կամ որևէ մեկին տրվում է առավելություն մյուսի նկատմամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից խտրականության արգելքի սկզբունքին անհամապատասխանությունը դիտարկվում է գլխավորապես այն համատեքստում, որ ՀՀ կառավարության թիվ 579 որոշման մեջ 2004 թվականի հունիսի 22-ին կատարված փոփոխությունից հետո, ի տարբերություն մինչ այդ գործող իրավակարգավորումների, աշխատավայրում դժբախտ պատահարների արդյունքում տուժած անձինք զրկված են պետական բյուջեից փոխհատուցում ստանալու իրավական հնարավորությունից:

Վիճարկվող դրույթները և իրավական ակտերը խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում դիտարկելիս Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խտրականության գնահատման համար պետք է տարանջատել երկու խումբ անձանց.

անձինք, որոնք աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում կրել են վնաս և ձեռք են բերել սոցիալական ապահովության իրավունք մինչև 2004 թվականի համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտելը, և անձինք, որոնք նույն իրավունքը ձեռք են բերել 2004 թվականի համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո:

Այդ իսկ պատճառով խտրականության առկայության մասին կարող է խոսվել այն պարագայում, երբ մինչև 2004 թվականի փոփոխությունն ուժի մեջ մտնելը սոցիալական ապահովության իրավունք ձեռք բերած անձին հնարավորություն չտրվի օգտվել մինչ այդ փոփոխությունը եղած իրավական հնարավորությունից, այն է՝ կապիտալացված միջոցների անբավարարության կամ բացակայության դեպքում փոխհատուցում ստանալ պետական բյուջեի հաշվին: Այնուամենայնիվ, բոլոր այն դեպքերում, երբ փոփոխությունից առաջ և հետո ընկած ժամանակահատվածում սոցիալական ապահովության իրավունք ձեռք բերած անձանց նկատմամբ դրսևորվում է այդ ժամանակահատվածին համապատասխան օրենսդրական կարգավորմամբ առկա մոտեցում, խտրականությունը բացակայում է, քանի որ տվյալ պարագայում խոսքը տարբեր կարգավիճակում գտնվող անձանց մասին է, ուստի՝ նրանց նկատմամբ տարբերակված մոտեցումը չի կարող դիտարկվել որպես խտրականություն:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ զարգացող հասարակական հարաբերությունները մշտապես առաջադրում են համապատասխան օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն, սակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենսդրական փոփոխության արդյունքում իրավական մի հնարավորության վերացումը կամ մեկ այլ հնարավորությամբ փոխարինումը պետք է հանգեցնի խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքի խախտմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելը աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:

4. ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

30 նոյեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1618





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 295-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 դեկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ Ա. Վարդևանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների՝ դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

րորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ նաև՝ Քրեական դատավարության օրենսգրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Քրեական դատավարության օրենսգրքի «Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը» վերստառությամբ 31-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝

1) հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ.

2) մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ.

3) մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից.

4) մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է.

5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին.

6) մեղադրյալի հետ կնքվել է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

2. Քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը և դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:

3. Այս հիմքով գործի վարույթը կասեցնելու՝ դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարվում կամ մերժվում

են դատարանի որոշմամբ, որը կայացման պահից տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

4. Քրեական գործով վարույթը կարող է կասեցվել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո:

5. Քրեական գործով վարույթը կասեցվում է՝ մինչև այն կասեցնելու հիմք ծառայած հանգամանքները վերացնելը: Դրանց վերացումից հետո այն վերսկսվում է դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ:

6. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացվելուց հետո:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է համագործակցությունը դադարեցվելուց կամ մեղադրյալի կողմից մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող փաստական տվյալներ ձեռք բերելուց հետո»:

Նշված հոդվածի վիճարկվող դրույթը, մասնավորապես 1-ին մասի 3-րդ կետը փոփոխությունների ու լրացումների չի ենթարկվել:

Քրեական դատավարության օրենսգրքի «Որոշում՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին» վերտառությամբ 295-րդ հոդվածը սահմանում է.

«1. Եթե մեղադրյալը թաքնվել է, կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, կամ հիվանդացել է ծանր հիվանդությամբ, կամ օգտվում է քրեական հետապնդման անձեռնմխելիությունից, կամ գործում է անհաղթահարելի ուժ, որը բացառում է դատական նիստին նրա մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև սույն օրենսգրքի 31 հոդվածով նախատեսված այլ դեպքերում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում գործի վարույթը կասեցնելու մասին:

Ընդ որում, եթե գործի վարույթը կասեցվում է քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվելու հիմքով, ապա սույն օրենսգրքով իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով լուծում է տվյալ անձին անձեռնմխելիությունից զրկելու և խափանման միջոցը փոխելու հարցը:

2. Վարույթը կարող է կասեցվել նաև մի քանի մեղադրյալներից մեկի նկատմամբ, պայմանով, որ դա չի սահմանափակում նրա պաշտպանության իրավունքը»:

Քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի 1-ին մասը 25.05.06 ՀՕ-91-Ն օրենքով լրացվել է հետևյալ պարբերությամբ, որը և վիճարկվում է. «Ընդ որում, եթե գործի վարույթը կասեցվում է քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվելու հիմքով, ապա սույն օրենսգրքով իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով լուծում է տվյալ անձին անձեռնմխելիությունից զրկելու և խափանման միջոցը փոխելու հարցը»:

Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածը այլ փոփոխությունների ու լրացումների չի ենթարկվել:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի 2021 թվականի սեպտեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1. Դիմողի դիրքորոշումները**

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ նաև Դիմող), վերլուծելով Սահմանադրության 96-րդ հոդվածի իրավակարգավորումները, ինչպես նաև Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1476 որոշումը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև ՄԻԵԴ) համապատասխան վճռով ներկայացրած դիրքորոշումները և դրանց լույսի ներքո անդրադառնալով Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորմանը, արձանագրում է, որ նշված դրույթում օգտագործվում է «կարող է» եզրույթը, որով քննիչին, դատախազին, դատարանին վերապահվում է քրեական վարույթը կասեցնելու հայեցողական լիազորություն անգամ անձի (մեղադրյալի/որպես մեղադրյալ ներգրավելու ենթակա անձի) անձեռնմխելիությամբ օժտված լինելու պայմաններում, ինչը, ըստ Դիմողի, հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածին: Դիմողը նկատում է, որ այդ դրույթի «...սահմանադրաիրավական բովանդակությունը պետք է բացառապես պահանջի և ենթադրի ոչ թե հայեցողություն այլ պարտադիր կատարման ենթակա լիազորություն մինչդատական վարույթում՝ քննիչի, դատախազի, իսկ դատական վարույթում դատարանի՝ այն է «քրեական գործի կասեցում»...»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 4(104)2021

Դիմողը գտնում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածին: Այս առումով Դիմողը նկատում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը «...պարտավորություն է նախատեսում անձին անձեռնմխելիության զրկման հարցով գործողություններ ձեռնարկելու...», ինչը, ըստ դիմողի, հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածին, քանի որ դատարանն իր վարույթում գտնվող գործով անձեռնմխելիությունից զրկելու հարցով Ազգային ժողով դիմելու լիազորությամբ օժտված չէ և նույնիսկ նման լիազորություն ունենալու պարագայում, եթե դատարանը նշված հարցով դիմեր Ազգային ժողովին, ապա կվերածվեր քրեական հետապնդման մարմնի: Ավելին, Դիմողն արձանագրում է, որ դատարանի վարույթում գտնվող գործով հիշյալ հարցով Ազգային ժողովի համաձայնությունն ստանալու գործիքակազմ առկա չէ՝ նկատի ունենալով, որ դատախազությունը նույնպես «...չի կարող նման գործողություն կատարել, քանի որ գործը չի գտնվում իր վարույթում և սահմանափակված է կողմերի մրցակցության սկզբունքով»:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) արձանագրում է, որ պատգամավորի և պատգամավորի թեկնածուի անձնական անձեռնմխելիության ծավալները նույնն են, և որ «... չի կարող քրեական հետապնդում հարուցվել կամ ազատությունից զրկում ենթադրող խափանման միջոց ընտրվել առանց Սահմանադրությամբ նախատեսված մարմնի համաձայնության...»: Միննույն ժամանակ, պատասխանողը նկատում է, որ Սահմանադրության 96-րդ հոդվածը վերաբերելի չէ այն դեպքերին «...երբ անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել կամ վերջինս զրկվել է ազատությունից մինչև պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը»:

Պատասխանողն ընդգծում է, որ Սահմանադրությամբ նախատեսված չէ «պատգամավորի թեկնածուի (ում նկատմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ կիրառվել է ազատությունից զրկում ենթադրող հարկադրանքի միջոց) կողմից պատգամավորական մանդատ ստանալուց հետո հարուցված քրեական հետապնդումը կամ կիրառված՝ ազատությունից զրկումը ենթադրող հարկադրանք»:

քի միջոցը շարունակելու հարցով Ազգային ժողովի համաձայնությունը ստանալու որևէ պահանջ...»:

Ավելին, ըստ Պատասխանողի՝ նման պայմաններում Ազգային ժողովի կողմից վերջինիս անձեռնմխելիության հարցը քննարկելն ուղղակիորեն կհակասեր Սահմանադրության 6-րդ հոդվածին:

Անդրադառնալով Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրության 96-րդ հոդվածին ենթադրյալ հակասության հարցին՝ Պատասխանողը նշում է, որ վիճարկվող դրույթը չի կարող դիտարկվել պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի հետ հակասության համատեքստում՝ նկատելով, որ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը վերաբերում է գործի վարույթը կասեցնելուն, այլ ոչ թե պատգամավորի անձեռնմխելիությունը հաղթահարելու հարցով Ազգային ժողովին դիմելուն:

Պատասխանողը, անդրադառնալով Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի և Սահմանադրության 96-րդ հոդվածի ենթադրյալ հակասության հարցին, նշում է, որ վիճարկվող հոդվածը «որևէ կերպ չի կարող դիտարկվել պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի հետ հակասության համատեքստում»: Ավելին, Պատասխանողի պնդմամբ՝ թեև Դիմողը եզրահանգել է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգում անձին անձեռնմխելիությունից զրկելու հարցը դատախազի կողմից չի կարող լուծվել, այնուամենայնիվ, Դիմողը չի հիմնավորել, թե դատախազի կողմից այդ հարցը լուծելու դեպքում ինչպես է սահմանափակվում կողմերի մրցակցության սկզբունքը:

### 3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակում Քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով պատգամավորն անձեռնմխելիությամբ պաշտպանվում է մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը հարուցված քրեական հետապնդման հետագա շարունակությունից,

2) արդյոք անձի, մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը, ազատությունից զրկված լինելու պարագայում, պատգամավորի

կարգավիճակ ձեռք բերելուց հետո ազատությունից զրկված վիճակում մնալը (ազատությունից զրկման շարունակումը, պահպանումը)՝ առանց Ազգային ժողովի համաձայնության, հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասին:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1. Սահմանադրության 96-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար:

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

Սահմանադրական հիշյալ կարգավորումների շրջանակում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած հիշատակված հոդվածի «Պատգամավորի անձեռնմխելիությունը» վերտառությանը, դրանով սահմանվում են պատգամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող երաշխիքներ՝ պատգամավորի ինդեմնիտետը (անպատասխանատվությունը (non-liability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մաս) և պատգամավորի անձեռնմխելիությունը (inviolability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ընդ որում՝ ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի՝ իր պատգամավորական գործունեության արդյունավետ իրականացումը բացառելով պատգամավորի գործունեությունից բխող հայտնած կարծիքի կամ Ազգային ժողովում քվեարկության համար քրեական պատասխանատվությունն ընդհանրապես, հետևաբար նաև և քրեական հետապնդումը: Սակայն պատգամավորի՝ իր գործունեության շրջանակներում, իր գործունեությունից բխող կարծիքի համար «արտաքին» պատասխանատվության բացառումն ամենևին չի ենթադրում պատասխանատվության բացառում ընդհանրապես, և հատկապես՝ չի բացառում «ներքին» պատասխանատվությունը:

կարգապահական պատասխանատվությունը տարատեսակ սանկցիաների տեսքով:

Ինչ վերաբերում է պատգամավորի անձեռնմխելիությանը, ապա վերջինիս տրամադրվում է որոշակի պաշտպանություն իր գործառույթների հետ չկապված արարքների համար քրեական հետապնդման հարուցումից: Միաժամանակ, դրանով տրվում է պաշտպանություն պատգամավորին ազատությունից զրկելու դեպքերի համար:

Հիշյալ սահմանադրական երաշխիքների տարանջատումը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն ունի: Այսպես օրինակ, եթե ինդեմնիտետի դեպքում քրեական պատասխանատվությունը բացառվում է պատգամավորի իր գործունեությունից բխող, դրա շրջանակներում հայտնաձև կարծիքի համար կամ պատգամավորական գործունեության շրջանակներում կատարած քվեարկության համար, ապա պատգամավորի անձեռնմխելիության դեպքում ոչ թե բացառվում է քրեական պատասխանատվությունը, այլ դրանով պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման, վերջինիս ազատությունից զրկելու բարդացված ընթացակարգ է սահմանվում՝ չբացառելով պատգամավորի և՛ քրեական պատասխանատվությունը, և՛ քրեական հետապնդման հնարավորությունը, և՛ ազատությունից զրկելը:

Բացի դրանից, եթե ինդեմնիտետի դեպքում նրան տրվող պաշտպանությունը չունի ժամանակային որևէ սահմանափակում, ապա պատգամավորի անձեռնմխելիության դեպքում այդպիսի պաշտպանությունն անձին տրվում է պատգամավորի լիազորությունների ժամկետով:

Պատգամավորի կարգավիճակը պայմանավորող վերոնշյալ սահմանադրական երաշխիքներն ապահովում են պաշտպանության տարբեր շրջանակ ու տարբեր ժամկետներ և հետապնդում իրավաչափ նպատակներ՝ ապահովելով՝

- 1) պատգամավորի անկախությունը անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով ներկայացուցչական մանդատով օժտված անձի համար իր լիազորություններն արդյունավետ կերպով իրականացնելու համար՝ նրան զերծ պահելով «արտաքին» (գործադիր իշխանության, քաղաքական հակառակորդների և այլոց) հետապնդումներից և/կամ անհիմն, քաղաքականապես մոտիվացված մեղադրանքի հնարավորությունից,



2) Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր իշխանության մարմնի անկախությունը,

3) Ազգային ժողովի բնականոն գործունեությունը:

**4.2.** Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ ինդեմնիտետի և պատգամավորի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների վերաբերյալ հիշյալ դիրքորոշմանը խիստ հարող մոտեցումներ են որդեգրել ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (տե՛ս, օրինակ, Kart v. Turkey գործով 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, application no. 8917/05 § 91), այնպես էլ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) (տե՛ս CDL-AD(2014)011 զեկույցի<sup>1</sup> (այսուհետ՝ Ջեկույց), 7-րդ, 22-րդ, 152-րդ կետերը):

Պատգամավորի կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող սահմանադրական երկու երաշխիքների իրավաչափ նպատակները վերհանելուն զուգահեռ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հնարավոր վտանգներին, մասնավորապես՝ պատգամավորի անձեռնմխելիությունը չարաշահելու և այն առանձին անձի արտոնության վերաճելու վտանգներին: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ հենց այդ ռիսկերի հաշվառմամբ է, որ ներկա ժամանակներում զարգացած ժողովրդավարական համակարգ ունեցող մի շարք երկրներում հստակ միտում է ընդգծվում ընդհանրապես հրաժարվել կամ խիստ նեղացնել պատգամավորի՝ իր գործառույթների հետ չկապված անձեռնմխելիության ինստիտուտը: Դա հիմնավորվում է գլխավորապես նրանով, որ այն նպատակներին, որոնք ապահովվում են նշված ինստիտուտի միջոցով, ներկա ժամանակներում կայացած իրավական համակարգերում հնարավոր է հասնել այլ միջոցներով:

Այս առնչությամբ հատկանշական են Վենետիկի հանձնաժողովի կողմից կատարված հետևյալ դիտարկումները, ըստ որի՝ «Հաստատված ժողովրդավարական համակարգում քիչ հավանական է, որ կառավարությունը փորձի հարձակվել խորհրդարանի՝ որպես ինստիտուտի աշխատանքի վրա՝ չհիմնավորված քրեական մեղադրանքներ առաջադրելով նրա անդամների դեմ, և եթե այդպիսի բան էլ կատարվի, ապա խորհրդարանը՝ իբրև ինստիտուտ, որպես կանոն ունենում է շատ ավելի լավ և ավելի արդյունավետ պաշտպանության միջոցներ, քան քրեական հետապնդման անձեռնմխե-

<sup>1</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e)

լիությանն ապավինելն է: Բացի այդ, ցանկացած լավ գործող ժողովրդավարական համակարգերում առկա են նաև իրավական և քաղաքական նորմեր և ստանդարտներ, որոնք արդյունավետ կերպով խոչընդոտում են քաղաքական մեծամասնությանը քրեաիրավական համակարգն առանձին քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ չարաշահելուց: Դատական իշխանության և դատախազական մարմինների անկախության և անկողմնակալության կանոններն ու սկզբունքներն այս առումով շատ ավելի կարևոր և արդիական են, քան պատգամավորների անձեռնմխելիության մասին հին կանոնները» (CDL-AD(2014)011 գեկույցը, 153-րդ կետ):

Վերոգրյալը, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի եզրահանգմամբ չի վկայում այն, որ պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտը ներկա ժամանակներում կորցրել է իր արդիականությունն ընդհանրապես: Եթե հաստատված, կայացած ժողովրդավարության երկրներում պատգամավորի անձեռնմխելիության հետապնդվող նպատակին հնարավոր է լինում հասնել հստակ կայացած համակարգերի շնորհիվ, ապա բոլորովին այլ է հարցը զարգացող կամ նոր ժողովրդավարության երկրներում, որտեղ համակարգերը հստակ կայացած չեն, և չի բացառվում, որ քրեական հետապնդումը կիրառվի իբրև քաղաքական ընդդիմախոսներին ճնշելու գործիք:

Այս առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը կատարել է նաև հետևյալ արձանագրումը. «Որոշ երկրներում, որոնք դեռ անցումային փուլում են դեպի իրական ժողովրդավարություն, կամ որտեղ ժողովրդավարությունը դեռևս համեմատաբար նոր է և փխրուն, առկա է փորձ, երբ ոստիկանության կամ դատախազության լիազորություններն օգտագործվել են քաղաքական հակառակորդներին, այդ թվում՝ խորհրդարանի անդամներին վարկաբեկելու, պատժելու կամ ոչնչացնելու համար: Եվ ոչ միշտ է լինում այնպես, որ յուրաքանչյուր պետությունում դատական իշխանությանը կարելի է վստահել անկախ գործել և գործադրի կողմից չափազանց ազդեցության տակ չլինել: Խորհրդարանի անդամները և հատկապես ընդդիմության անդամները որոշ երկրներում կարող են խոցելի լինել անհիմն իրավական մեղադրանքների ձևով քաղաքական ոտնձգությունների նկատմամբ...» (Զեկույցի 154-րդ կետ):

Մյուս կողմից, սակայն, հենց այդ «նոր ժողովրդավարության երկրներում» նույն համակարգերի ոչ կայացած լինելու պատճառով էլ մեծանում է պատգամավորական անձեռնմխելիությունը չարաշահելու վտանգը. «Միևնույն ժամանակ, - նշվում է Վենետիկի հանձ-

նաժողովի մեջբերված զեկույցում,- հաճախ նոր ժողովրդավարություններն են առավել ենթակա քաղաքական կոռուպցիայի և ծայրահեղական խորհրդարանականների կողմից անձեռնմխելիության չարաշահմանը ժողովրդավարությանը սպառնալու նպատակով: Այսպիսով, պատգամավորական անձեռնմխելիության պարադոքսը կայանում է նրանում, որ այն կարող է ծառայել ինչպես ժողովրդավարական զարգացումը խթանելուն, այնպես էլ այն քայքայելուն» (Ձեկույցի 29-րդ կետը):

Նման իրավիճակում Սահմանադրական դատարանի եզրահանգմամբ առաջանում են առանցքային հետևյալ խնդիրները.

մի կողմից՝ պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի շնորհիվ ապահովել պատգամավորի, խորհրդարանի անկախությունը, խորհրդարանի անխափան գործունեությունը (քանի որ այլ համակարգերը, որոնք կարող էին որպես միջոց ծառայել նպատակին հասնելու համար ամբողջապես կայացած չեն),

իսկ մյուս կողմից՝ դա իրականացնել այն կերպ և այնպիսի հավասարակշիռ մոտեցմամբ, որ հենց պատգամավորի անձեռնմխելիությունն ինքնին չխախտի այլոց իրավունքները, չհանդիսանա նույն խորհրդարանի հեղինակությունը սասանող գործոն:

Այսպիսով խորհրդարանի գործունեությունն անհարկի «արտաքին» միջամտությունից պատշաճ ապահովման ցանկացած անկարողություն վտանգ է ներկայացնում ժողովրդավարական սահմանադրական համակարգի համար: Եվ հակառակը, պատգամավորական մանդատի չարաշահումներից քաղաքացիների իրավունքների, ինչպես նաև խորհրդարանի՝ իբրև ինստիտուտի պաշտպանության ապահովման անկարողությունը խորհրդարանի հանդեպ վստահության խաթարման վտանգ է ներկայացնում և վտանգի տակ դնում նրա լեգիտիմությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող սահմանադրական երկու երաշխիքներն ունեն հանրային-իրավական նշանակություն, հստակ (վերոհիշատակված) նպատակներ և ուղղված են հանրային շահերի պաշտպանության ապահովմանը, ուստի այդ երաշխիքները չեն հանդիսանում և որևէ կերպ չեն կարող ընկալվել (մեկնաբանվել) իբրև առանձին անձանց վերապահված անձնական արտոնություն կամ առավելություն: Եվ նման ընկալման բացառումը ոչ միայն կհակադրվի քննարկվող երաշխիքների նպատակային նշանակությանը հանգեցնելով դրանց հանրային-իրավական նշանակության խեղ-

մանր, այլև կխաթարի իրավունքի գերակայությունը՝ հանգեցնելով Սահմանադրության 28-րդ հոդվածով երաշխավորված օրենքի առջև ընդհանուր հավասարության խախտմանը, ինչպես նաև որոշ դեպքերում՝ համապատասխան հանգամանքների առկայության պայմաններում առաջ կբերի դատական պաշտպանության և արդար դատական քննության իրավունքների անհամաչափ սահմանափակումներ (Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներ):

**4.3.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պատգամավորի քրեական հետապնդման անձեռնմխելիության չարաշահումը, դրա անձնական արտոնության կամ առավելության վերաճումը կարող են վտանգել նաև անձանց արդար դատական քննության և դատական պաշտպանության իրավունքը: Հիշյալ եզրահանգումը բխում է հետևյալ մի շարք հանգամանքների համակցությունից.

**առաջին՝** պատգամավորի անձեռնմխելիությունը կանոնակարգող սահմանադրական դրույթում (Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մաս) որոշակիացված չէ այն հանցագործությունների շրջանակը, որոնցով պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս անհրաժեշտ է Ազգային ժողովի համաձայնությունը: Տվյալ հոդվածի կարգավորումներն այնպիսին են, որ պատգամավորի անձեռնմխելիությունը տարածվում է, ըստ էության, բոլոր հանցագործությունների համար քրեական հետապնդման հարուցման դեպքերի վրա՝ առանց հանցագործությունների շրջանակի որևէ սահմանափակման:

**Երկրորդ՝** թեև Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հնարավորություն՝ Ազգային ժողովի համաձայնությամբ, սակայն, արդեն օրենսդրական կարգավորման մակարդակում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով սահմանելով պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու կարգը, դրանով չի նախատեսվում հստակ որոշակիացված և օբյեկտիվ որևէ չափանիշ և հիմք, որի հիման վրա Ազգային ժողովը պետք է որոշում կայացնի պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու կամ չզրկելու հարցով, որպիսի պայմաններում, հաշվի առնելով Ազգային ժողովի քաղաքական մարմին լինելու հանգամանքը, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը լուծվում է առավելապես քաղաքական տարատեսակ շարժառիթների հիման վրա:

**Երրորդ**՝ հանգամանքը, որ հենց պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի հանրային-իրավական նշանակությամբ պայմանավորված օրենսդրությամբ բացակայում է պատգամավորի պատգամավորական անձեռնմխելիությունից հրաժարվելու հնարավորությունը:

**Չորրորդ**՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն չտալու մասին Ազգային ժողովի որոշման կայացման դեպքում այդ որոշումը, ըստ էության, փաստացի ունենում է անժամկետ իրավական հետևանքներ (քանի որ օրենսդրության մեջ բացակայում է այդպիսի որոշման իրավական հետևանքների ժամանակային սահմանափակումը (օրինակ՝ պատգամավորի պաշտոնավարման ժամկետով), մյուս կողմից՝ նախատեսված չեն նաև հստակ կառուցակարգեր այդպիսի որոշման հետևանքները հաղթահարելու և քրեական հետապնդման հարուցման և վարույթի հետագա ընթացքն ապահովելու առումով, որպիսի պայմաններում ստացվում է, որ պատգամավորի քրեական հետապնդման անձեռնմխելիությունը չհաղթահարելու պարագայում Ազգային ժողովի կողմից համաձայնություն չտալու որոշման դեպքում քրեական հետապնդումը (վարույթը) ոչ թե որոշակի ժամկետով, այլ փաստացի ընդհանրապես կարող է անհնարին դառնալ):

Եվ այս համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իբրև քրեական հետապնդման բացառող հանգամանք է դիտարկվում իրավասու մարմնի կողմից պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում ենթադրյալ հանցանք կատարած անձին անձեռնմխելիությունից չզրկելը (հոդված 12, մաս 1, կետ 6):

**Հինգերորդ**՝ այն, որ սահմանափակված չեն անձի պատգամավոր վերընտրվելու հնարավորությունները, և որպես հետևանք առկա է այդպիսով անձեռնմխելիության շարունակության հետագա հնարավորություն: (Այս համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր առանձին վճիռներում կատարել է հետևյալ արձանագրումը, որ պատգամավորի նկատմամբ ցանկացած քրեական գործի կասեցումը նրա պատգամավորական մանդատի ընթացքում կհանգեցնի բողոքարկվող արարքների կատարման և քրեական գործի հարուցման միջև ժամանակի զգալի ընդմիջման, դրանք անորոշ կամ անկանխատեսելի դարձնելով, հատկապես ապացույցների առումով: Մեկ այլ համատեքստում, Մարդու իրա-

վունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ բողոքի քննության համար պահանջվող ժամանակը կարող է կասկածի տակ դնել դրա արդյունավետությունը (*Ganci v. Italy*, application no. 41576 / 98 գործով 2003թ. հոկտեմբերի 30-ին կայացրած վճիռը, § 30, *Tsalkitzis v. Greece* application no. 11801/04 գործով 2006թ. նոյեմբերի 16-ին կայացրած վճիռը, § 50)):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ պատգամավորի անձեռնմխելիությունն իր նպատակային նշանակությանը ծառայելու, մինևույն ժամանակ պատգամավորի անձեռնմխելիությունից բխող վտանգները գսպելու և, մասնավորապես՝ դրա առանձին անձանց վերապահված անձնական արտոնության կամ առավելության վերաճումը բացառելու համար Սահմանադրական դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտը կանոնակարգող նորմերը (այդ թվում՝ նաև սահմանադրական նորմերը) խիստ նեղ մեկնաբանություն և կիրառություն ստանան՝ որպես արդյունք ապահովելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշիռ պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համանման մոտեցում է որդեգրվել թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (տե՛ս, օրինակ, *Syngelidis v. Greece* 2010 թվականի փետրվար 11-ի application no. 24895/07 գործով վճիռը, §44-46, *Tsalkitzis v. Greece* 2006թ. նոյեմբերի 16-ի application no. 11801/04 գործով վճիռը, §49), թե՛ Վենետիկի հանձնաժողովի կողմից: Վենետիկի հանձնաժողովն իր Ձեկույցում ընդգծելով, որ անձեռնմխելիության կանոններն ազգային սահմանադրական իրավունքի անհրաժեշտ մաս չեն (մասնավորապես՝ Ձեկույցի 156-րդ կետ), նաև նկատել է, որ այն երկրներում, որտեղ առկա են քրեական գործերով պատգամավորների անձեռնմխելիության կանոններ, դրանք չպետք է շեղվեն իրենց բուն նպատակից, հետևաբար՝ դրանք պետք է մեկնաբանվեն ու կիրառվեն սահմանափակ ձևով (Ձեկույցի 157-րդ, 158-րդ, 185-րդ կետեր): Ավելին, Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է նաև, որ անձեռնմխելիության վերաբերյալ այդ կանոնները պետք է գործնականում չկիրառվեն, քանի դեռ կոնկրետ գործում դրանք կիրառելու հիմնավոր պատճառներ չկան (Ձեկույցի 158-րդ կետ):

**4.4.** Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բացակայում է հստակ և ուղիղ կապը պատգամավորի խորհրդարանական գործունեության և հարուցված քրեական հետապնդման միջև, ապա պատգամավորն անձեռնմխելիությամբ չպետք է պաշտպանված լինի

քրեական հետապնդման շարունակումից, հակառակ դեպքում կխեղձվի անձեռնմխելիության հանրային-իրավական նշանակությունը, և այն կվերածվի կոնկրետ անձի արտոնության կամ առավելության:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և հետագայում այդ անձի կողմից պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու միջև ընկած ժամանակային խզումն ինքնին վկայում է անձի նկատմամբ հարուցված (իրականացվող) քրեական հետապնդման և պատգամավորի խորհրդարանական գործունեության կապի բացակայության մասին, և նման պայմաններում, ելնելով պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն անձնական արտոնության չվերաճելու և այն կանոնակարգող նորմերը խիստ նեղ մեկնաբանելու (կիրառելու) մոտեցումից, քրեական հետապնդում հարուցելուց հետո անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը. նման պարագայում քրեական հետապնդման շարունակությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով:

Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու և նրա՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու միջև ժամանակային խզումն ինքնին վկայում է իրականացվող հետապնդման և պատգամավորի խորհրդարանական գործունեության կապի բացակայության մասին, դրանից ամեննին նույն կերպ չի կարող բխեցվել այն, որ ժամանակային այդ խզմամբ ինքնաբերաբար ապահովվում է նաև Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր իշխանության մարմնի անկախությունը և դրա անխափան բնականոն գործունեությունը: Քանի որ նույնիսկ նման իրավիճակում չի բացառվում, որ տեղ գտնի անձի իրավունքների այնպիսի սահմանափակում (օրինակ՝ անձը կալանավորվի), որով փաստացի բացառվի պատգամավորի կարգավիճակ ձեռք բերած անձի խորհրդարանական գործունեության հնարավորությունն ընդհանրապես որպես հետևանք հանգեցնելով Ազգային ժողովի աշխատանքի խաթարմանը, վտանգելով Ազգային ժողովի անկախությունն ընդհանրապես:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների շրջանակում սահմանադիրը տարբերակել է պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը

պաշտպանություն քրեական հետապնդման հարուցումից և պաշտպանություն ազատության զրկումից, այն հնարավոր համարելով միայն Ազգային ժողովի համաձայնությամբ՝ բացառությամբ Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված որոշակի դեպքերի:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարցը տրամազծորեն հակառակ լուծում պետք է ստանա քննարկվող դեպքում. այն պարագայում, երբ նույնիսկ անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք է բերել քրեական հետապնդման հարուցումից հետո, և մինչ այդ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը, ապա բոլորովին այլ է հարցի լուծումն արդեն անձի՝ պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո նրան ազատությունից զրկելու պարագայում. տվյալ դեպքում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերից բացի, մնացած բոլոր դեպքերում անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռքբերելն անհրաժեշտաբար պայմանավորում է, որ վերջինիս ազատությունից զրկելու (իսկ մինչ այդ կարգավիճակի ձեռքբերելը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ ազատությունից զրկելը շարունակելու, այն պահպանելու) համար անվերապահորեն պետք է Ազգային ժողովի համաձայնությունը, որի բացակայությունը բացառում է պատգամավորի կարգավիճակ ունեցող անձին ազատությունից զրկելու հնարավորությունը:

Ներկայացվածի հակառակ մոտեցման պարագայում կարող է վտանգվել Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և Ազգային ժողովի անկախությունը, ինչն ուղղակիորեն կհակասի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով պատգամավորին տրված պաշտպանությանը՝ պատգամավորի կարգավիճակում գտնվող անձին ազատությունից զրկելը դարձնելով ոչ իրավաչափ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատգամավորը, բացի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառիկ դեպքերից, չի կարող զրկվել ազատությունից (իսկ մինչ կարգավիճակի ձեռքբերումը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո շարունակել ազատությունից զրկված մնալ), եթե Ազգային ժողովը տվյալ հարցով չի տվել իր համաձայնությունը. Ազգային ժողովից բացի որևէ այլ մարմին



իրավասու չէ հաղթահարել պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը:

**4.5.** Հիմնվելով սույն որոշման նախորդ կետում կատարված եզրահանգումների վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ պատգամավորի կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող անձեռնմխելիությունը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված վարույթի կասեցման ինստիտուտները որոշ դեպքերում միմյանց հետ կարող են փոխկապակցված լինել, սակայն դրանք ոչ բոլոր դեպքերում են փոխպայմանավորող. ա) ինչպես հնարավոր է անձեռնմխելիությամբ պատգամավորին տրվող պաշտպանության հաղթահարումն առանց քրեական վարույթը կասեցվելու, բ) այնպես էլ հնարավոր է քրեական վարույթի կասեցումը որևէ այլ հիմքով չկապված (պատգամավորի) անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության հաղթահարման հետ:

Վերոգրյալը, սակայն, ամենևին չի ենթադրում, որ բացառվում է երրորդ իրավիճակի առկայությունը, այն է՝ քրեական վարույթի կասեցումը պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության հաղթահարման համար:

Հետևաբար՝ հիշատակված երեք իրավաչափ իրավիճակների առանձնացման լույսի ներքո գնահատման ենթարկելով Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի այն կարգավորումը, որով քննիչին, դատախազին, դատարանին վերապահվում է քրեական վարույթի կասեցման հայեցողական լիազորություն, այդ թվում՝ Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա կարգավորումն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի առաջացնում, քանի որ վարույթի նշված մասնակիցների՝ վարույթի կասեցման հայեցողական լիազորությունից ինքնաբերաբար չի բխում և չի կարող բխեցվել քրեական հետապնդման անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության հաղթահարման հարցով Ազգային ժողովին դիմելու կամ չդիմելու՝ իրավասու մարմնի հայեցողական լիազորությունը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ քրեական վարույթի կասեցված լինելը կամ չլինելը, անձի անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը հաղթահարված չլինելու պարագայում, որևէ կերպ չի նշանակում վարույթն իրականացնող մարմնի լիազորություն կատարել գործողություններ (կայացնել որոշումներ), որոնք ուղղակիորեն

ներազդում են պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության վրա: Հակառակը կնշանակի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջի խախտում՝ պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը դարձնելով ոչ իրական:

4.6. Սահմանադրական դատարանը, կատարված վերլուծությունների արդյունքների համատեքստում անդրադառնալով Դիմողի հարցադրումներին, արձանագրում է.

1) Դիմողի պնդումները, թե «...նշված դրույթի (Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի) սահմանադրաիրավական բովանդակությունը պետք է բացառապես պահանջի և ենթադրի ոչ թե հայեցողություն, այլ պարտադիր կատարման ենթակա լիազորություն մինչդատական վարույթում՝ քննիչի, դատախազի, իսկ դատական վարույթում՝ դատարանի, այն է՝ «քրեական գործի կասեցում», և որ «...հակառակը ուղղակիորեն կհակասի ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածին» հիմնավոր չեն,

2) դիմումի շրջանակներում (ներքին հակասականությամբ) բարձրացվող մեկ այլ՝ Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի ենթադրյալ օրենսդրական բացի հարցը ինքնաբերաբար լուծվում է.

վերոնշյալ դիրքորոշումների շրջանակում Սահմանադրական դատարանի եզրահանգմամբ վերանում է դիմումում տեղ գտած այն մտահոգությունների վտանգը, թե վիճարկվող դրույթի խափանման միջոցի փոփոխման պարտադիր վավերապայման կամ կառուցակարգ չնախատեսելու հետևանքով քննիչի, դատախազի, դատարանի կողմից վարույթը կասեցված լինելու դեպքում, հնարավոր է անտեսվի Սահմանադրության 96-րդ հոդվածի պահանջը, և որ հնարավոր է պատգամավորի անձեռնմխելիությամբ օժտված անձը, լինելով կալանավորված «...քրեական գործի վարույթը կասեցվի և անձը շարունակի մնալ կալանավորված, քանի որ չկա խափանման միջոցը անհապաղ վերացնելու պարտականություն՝ ելնելով անձեռնմխելիության իրավական կարգավիճակից»: Իրավակիրառ պրակտիկայում Սահմանադրական դատարանի վերոհիշյալ դիրքորոշումներով առաջնորդվելու դեպքում կբացառվի նաև նման խնդրի առաջացման վտանգը:

Ընդ որում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս դիրքորոշմանը համահունչ կարգավորումներ են տեղ գտել նաև Քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ

մատուցում, համաձայն որի՝ «...Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին»: Նման կարգավորման պայմաններում, անձեռնմխելիությունից օգտվող անձի, մասնավորապես՝ պատգամավորի կալանավորումը (ազատությունից զրկելը) հնարավոր է դառնում միայն պատգամավորի՝ անձեռնմխելիությամբ տրված այդ պաշտպանությունը հաղթահարված լինելու պարագայում, այլ կերպ ասած՝ պատգամավորի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար անհրաժեշտ է հավելյալ պայմանի, այն է՝ անձեռնմխելիության տրվող այդ պաշտպանության հաղթահարված լինելու առկայությունը:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Դիմողի այն դիրքորոշմանը, որ «...եթե քրեական գործը գտնվում է դատարանի վարույթում, չկա որևէ գործիքակազմ Ազգային ժողովից համաձայնություն ստանալու, քանի որ Դատախազությունը չի կարող նման գործողություն կատարել...» գործը դատախազության վարույթում չգտնվելու պատճառով, իսկ դատարանն էլ, նախ չունի այդպիսի լիազորություն, բացի դրանից, նման հարցով Ազգային ժողով դիմելու պարագայում դատարանը կվերածվի քրեական հետապնդման մարմնի: Այդ առնչությամբ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ

1) դատարանի վարույթում գործը գտնվելու համար կամ պետք է արդեն իսկ հաղթահարված լինի անձի՝ պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող քրեական հետապնդման հարուցումից պաշտպանությունը, կամ էլ անձի նկատմամբ քրեական հետապնդումը հարուցված պետք է լինի նախքան պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը, որի դեպքում անձի նկատմամբ քրեական հետապնդման շարունակության համար ընդհանրապես Ազգային ժողովի համաձայնությունը ստանալու անհրաժեշտությունը բացակայում է (անձը այդ պարագայում անձեռնմխելիությամբ չի պաշտպանվում քրեական հետապնդման հետագա շարունակությունից),

2) պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող մեկ այլ պաշտպանության համատեքստում՝ պատգամավորի՝ միայն Ազգային ժողովի համաձայնությամբ ազատությունից զրկվելու դեպքում, անկախ այն հանգամանքից՝ գործը գտնվում է դատական, թե մինչդատական վարույթում, Ազգային ժողովին դիմում է գլխավոր դատախազը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ վերոգրյալն ուղղակիորեն բխում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի, Քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի, 136-րդ հոդվածի 2-րդ մասի համադրված վերլուծությունից:

Վերոհիշյալը հիմք է տալիս Սահմանադրական դատարանին արձանագրելու, որ այն բոլոր դեպքերում, երբ դատական վարույթներում անհրաժեշտություն առաջանա պատգամավորի կարգավիճակում գտնվող անձին կալանավորելու, ապա վերջինիս կալանավորման պայմանն ապահովելու, այն է՝ անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը հաղթահարված լինելու առումով, գլխավոր դատախազը նման միջնորդագրով պետք է դիմի Ազգային ժողով: Ընդ որում՝ այն դեպքում, երբ դատախազն ինքն է միջնորդում դատարանին պատգամավորի կարգավիճակ ունեցող անձին կալանավորելու, ապա նման միջնորդություն դատարան ներկայացնելուց առաջ գլխավոր դատախազն արդեն իսկ միջնորդագրով պետք է ստացած լինի Ազգային ժողովի պատգամավորին ազատությունից զրկելու համաձայնությունը:

Իսկ այն դեպքում, երբ դատարանն ինքն է գործի քննության ընթացքում հանգում այն եզրակացության, թե պատգամավորի կարգավիճակում գտնվող անձի նկատմամբ կոնկրետ դեպքում պետք է կալանավորումն ընտրվի իբրև խափանման միջոց, ապա մի կողմից պատգամավորի անձեռնմխելիությամբ տրվող՝ ազատությունից զրկելու պաշտպանությունը հաղթահարված չլինելու պարագայում, մյուս կողմից՝ դատարանի այդպիսի հարցով Ազգային ժողով դիմելու լիազորություն չունենալու պարագայում, երրորդ կողմից՝ այդ պատգամավորի կալանավորման հատուկ պայմանի բացակայության պայմաններում գործող օրենսդրական կարգավորումներից պետք է բխեցնել, որ դատարանն այդ դեպքում պետք է վարույթը կասեցնի Քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով:

Այդ հիմքով վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելու պարագայում, ելնելով վերոնշյալ իրավակարգավորումների տրամաբանությունից, գլխավոր դատախազն ի պաշտոնե պարտավոր է համապատասխան միջնորդագրով դիմել Ազգային ժողով՝ պատգամավորին ազատությունից զրկելու համաձայնությունը ստանալու համար: Այդպիսի համաձայնություն տալու կամ չտալու որոշման կայացման դեպքում վարույթը պետք է վերսկսվի, և ըստ այդմ՝ լուծվի անձին կալանավորելու կամ չկալանավորելու հարցը:

4.7. Օրենսդրական վերոնշյալ նորմերի հիման վրա կատարված համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 295-րդ հոդվածի 1-ին մասի «...եթե գործի վարույթը կասեցվում է քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվելու հիմքով, ապա սույն օրենսգրքով իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով լուծում է տվյալ անձին անձեռնմխելիությունից զրկելու և խափանման միջոցը փոխելու հարցը» ձևակերպման մեջ տեղ գտած «ապա սույն օրենսգրքով իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով լուծում է տվյալ անձին անձեռնմխելիությունից զրկելու և խափանման միջոցը փոխելու հարցը» նախադասությունը պետք է ընկալվի՝ իրավասու մարմնի, կոնկրետ դեպքում՝ գլխավոր դատախազի կողմից սահմանված կարգով պատգամավորին կալանավորելու (ազատությունից զրկելուն համաձայնություն տալու) հարցով Ազգային ժողով դիմելու պարտականություն: Նման մեկնաբանության պարագայում բացառվում է նաև Քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի և Սահմանադրության 96-րդ հոդվածի՝ Դիմողի կողմից բարձրացված թվացյալ հակասության հնարավորությունը:

4.8. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իրավակիրառական պրակտիկան (մասնավորապես՝ ՄԴ/0066/01/21, ՄԴ1/0060/01/21, ԵԴ/0886/01/21 քրեական գործերով) զարգացել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին հակառակ տրամաբանությամբ, ըստ որի՝ անձի մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռքբերելը ազատությունից զրկված լինելու պարագայում պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նրան հետագա ազատությունից զրկելը պահպանելու, ազատությունից զրկելը շարունակելու համար Ազգային ժողովի համաձայնություն ստանալը անհրաժեշտություն չի համարվել: Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակիրառական պրակտիկան չի բխում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը այն մեկնաբանությամբ, որ

ա) քննիչի, դատախազի, դատարանի՝ վարույթի կասեցման հայեցողական լիազորությունից չի բխում քրեական հետապնդման անձեռնմխելիությամբ պատգամավորին տրվող պաշտպանության հաղթահարման հարցով Ազգային ժողովին դիմելու իրավասու մարմնի՝ գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունը,

բ) պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը հաղթահարված չլինելու պարագայում քրեական վարույթը չկասեցնելը որևէ կերպ չի նշանակում (ենթադրում) վարույթն իրականացնող մարմնի լիազորություն կատարելու գործողություններ (կայացնելու որոշումներ), որոնք ուղղակիորեն ներագրում են պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության վրա,

գ) անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ: Պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձը, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող գրկվել ազատությունից այլ կերպ, քան Ազգային ժողովի համաձայնությամբ:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

7 դեկտեմբերի 2021 թվականի  
ՄԴՈ-1619



**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ  
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 295-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՄԴՈ-1619  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՄԴՈ-1619 որոշման (այսուհետ՝ ՄԴՈ-1619 որոշում) վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ սույն գործի քննության շրջանակները, ըստ էության, կանխորոշվել են նաև Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՄԴԱՈ-242 աշխատակարգային որոշմամբ (այսուհետ՝ ՄԴԱՈ-242 աշխատակարգային որոշում) և 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԴԱՈ-251 աշխատակարգային

որոշմամբ (այսուհետ՝ ՄԴԱՌ-251 աշխատակարգային որոշում), և դրանք ՄԴՌ-1619 որոշման հետ փոխկապակցված են, ուստի սույն հատուկ կարծիքով կանդրադառնանք նաև այդ աշխատակարգային որոշումներին:

ՄԴՌ-1619 որոշումը մեզ համար ընդունելի է այն ամրագրման մասով, որ «անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ: Պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձը, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող զրկվել ազատությունից այլ կերպ, քան Ազգային ժողովի համաձայնությամբ»: Այս մասով Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության մեկնաբանության վերաբերյալ մեր կողմից ներկայացված իրավական դիրքորոշումները ՄԴՌ-1619 որոշման մեջ իրացվել են:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ հիմնավոր չենք համարում ինչպես ՄԴԱՌ-242 և ՄԴԱՌ-251 աշխատակարգային որոշումներով, այնպես էլ ՄԴՌ-1619 որոշմամբ սույն գործի քննության շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև ՄԴՌ-1619 որոշման մեջ Սահմանադրության, մասնավորապես, 96-րդ հոդվածի ադճատված, հատվածական մեկնաբանությունը: Այսպես՝

1. Սահմանադրական դատարանը, 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՄԴԱՌ-218 աշխատակարգային որոշմամբ (այսուհետ՝ ՄԴԱՌ-218 աշխատակարգային որոշում), հաշվի առնելով, որ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի<sup>1</sup> և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի<sup>2</sup> հիման վրա քննության ընդունված գործերը<sup>3</sup> վերաբերում են նույն հարցին, որոշել է՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահ-

<sup>1</sup> 2021 թվականի սեպտեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված հիշյալ դիմումով Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը խնդրել է որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցերը:

<sup>2</sup> 2021 թվականի սեպտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված հիշյալ դիմումով Մարդու իրավունքների պաշտպանը ևս խնդրել է որոշել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցը:

<sup>3</sup> Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա գործն ընդունվել է քննության Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի ՄԴԱՌ-194 աշխատակարգային որոշմամբ, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիմա վրա գործն ընդունվել է քննության Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՄԴԱՌ-217 աշխատակարգային որոշմամբ:



մանադրական օրենքի 41-րդ հոդվածի՝ այդ գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում (2021 թվականի դեկտեմբերի 6-ին): Սակայն գրեթե մեկ ամիս անց ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշմամբ գործերը միավորելու մասին ՄԴԱՌ-218 աշխատակարգային որոշումն ուժը կորցրած է ճանաչվել<sup>1</sup>:

Գործերը միավորելու մասին ՄԴԱՌ-218 աշխատակարգային որոշումն ուժը կորցրած ճանաչելը հիմնավոր չենք համարում, քանի որ, նախ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի համաձայն Սահմանադրական դատարանն իրավասու է միայն գործերը միավորելու: Սահմանադրական դատարանն իրավասու չէ միավորված գործերն առանձնացնելու, իսկ գործերը միավորելու մասին աշխատակարգային որոշումն իրավական տեխնիկայի կիրառմամբ (ընդ որում՝ առանց իրավական հիմքի) ուժը կորցրած ճանաչելը ոչ այլ ինչ է, քան միավորված գործերի փաստացի առանձնացում: Այս առումով հատկանշական է նաև, որ Սահմանադրական դատարանը ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշման մեջ չի վկայակոչել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի որևէ լիազորող դրույթ, և այդ որոշումը պատճառաբանված չէ: Ըստ այդմ՝ ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստացի ինքն իրեն հայտնել է անհամաձայնություն արձանագրելով, որ գործերը միավորելու մասին ՄԴԱՌ-218 աշխատակարգային որոշումը սխալ է կայացրել, ինչն ուղղում է<sup>2</sup>:

**Գտնում ենք, որ ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշմամբ միավորված գործերի փաստացի առանձնացմամբ խաթարվել է դատարանի նույն նիստում նույն հարցին վերաբերող գործերի միավորված, բազմակողմանի, լրիվ, արդյունավետ քննության ապահովումը, ըստ այդմ՝ խաթարվել է նաև Սահմանադրական դատարանում վարույթի առանցքային սկզբունքներից մեկի՝ գործի հանգամանքների ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրացումը:**

Վերոհիշյալ սկզբունքի իրացմամբ Սահմանադրական դատարանն ապահովում է սահմանադրական վեճի լուծումն ամբողջ ծավալով՝ սահմանադրականության հարցի բոլոր ասպեկտների հաշ-

<sup>1</sup> Թե՛ ՄԴԱՌ-218 և թե՛ ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշումներն ընդունվել են գործով զեկուցող Սահմանադրական դատարանի դատավոր Աշոտ Խաչատրյանի միջնորդությունների հիման վրա:

<sup>2</sup> Ի դեպ, հարկ է նշել, որ, մինչև ՄԴԱՌ-242 աշխատակարգային որոշման ընդունումը, Սահմանադրական դատարանի իրավական պրակտիկայում առկա չի եղել միավորված գործերի փաստացի առանձնացման որևէ դեպք և համապատասխան աշխատակարգային որոշում:

վառմամբ, կաշկանդված չլինելով դիմողի (դիմողների) բարձրացրած հարցադրումներով, ներկայացրած փաստերով և փաստարկներով, ենթադրյալ հակասահմանադրականության առումով վկայակոչած Սահմանադրության կոնկրետ հոդվածներով՝ քանզի վերջնադրոյունքը սահմանադրական արդարադատության իրականացմամբ Սահմանադրության գերակայության ապահովումն է:

Հիմնավոր չենք համարում նաև ՄԴԱՌ-251 աշխատակարգային որոշմամբ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրության 6, 79 և 96-րդ հոդվածներին համապատասխանության մասով և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրության 6, 79 և 96-րդ հոդվածներին համապատասխանության մասով կարճելը:

Գտնում ենք, որ սույն սահմանադրական վեճի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների միջև գոյություն ունի համակարգային փոխկապակցվածություն, և դրանց սահմանադրականության հարցը պետք է լուծվեր ՄԴՌ-1619 որոշմամբ՝ ելնելով սահմանադրական վեճն ամբողջ ծավալով լուծելու վերը նշված հիմնավորումներից: Այս համատեքստում նաև անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 22-ի ՄԴԱՌ-194 աշխատակարգային որոշմամբ սույն գործը նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի մասով քննության է ընդունել ոչ թե դիմողի կողմից վկայակոչված Սահմանադրության կոնկրետ հոդվածներին, այլ ընդհանուր Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար: Ուստի և ՄԴԱՌ-251 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրության 6, 79 և 96-րդ հոդվածներին համապատասխանության մասով

ՍԱՐՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՎՈՐ ♦ 4(104)2021

և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրության 6, 79 և 96-րդ հոդվածներին համապատասխանության մասով կարճելը չի կարող չզնահատվել որպես գործի քննության շրջանակների անհիմն սահմանափակում: Առնվազն հարց կարող է առաջանալ եթե նաև այդ դրույթների մասով գործը քննության է ընդունվել ընդհանուր Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար, սակայն կարճվում է Սահմանադրության կոնկրետ վկայակոչված հոդվածներին համապատասխանության մասով, ապա Սահմանադրության չվկայակոչված հոդվածներին համապատասխանության մասով Սահմանադրական դատարանը պետք է կայացնեք ըստ էության որոշում, որը, սակայն, ՄԴՈ-1619 որոշմամբ չի կայացվել:

Այնքանով, որքանով ՄԴԱՈ-251 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթի կարճված մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցը կարող է հետագայում դառնալ Սահմանադրական դատարանում քննության առարկա, իսկ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցը քննության է ընդունվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա և, ինչպես արդեն նշել ենք, այդ գործը սույն գործից փաստացի առանձնացվել ու քննվելու է Սահմանադրական դատարանի այլ դատական նիստում (2022 թվականի մարտի 22-ին), ուստի այդ դրույթների սահմանադրական բովանդակության մեկնաբանության մասով նախապես սույն հատուկ կարծիքում դիրքորոշումներ չենք հայտնում:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՄԴԱՈ-251 աշխատակարգային որոշման մեջ, մեր կարծիքով, առկա են այնպիսի պատճառաբանություններ, որոնք ևս ընդգծում են սույն սահմանադրական վեճի առարկայի սահմանափակման խնդրահարույց լինելը: Մասնավորապես.

- անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ սույն գործով դիմողի բարձրացրած այն մտահոգությանը, թե վիճարկվող դրույթում օգտագործվող «վերացնել» և «վերանալ» բառերը կարող են տարբեր կերպ մեկնաբանվել, և դրանցից յուրաքանչյուրը տարբեր հետևանքներ կարող է առաջացնել, ըստ այդմ՝ բարձրացնելով հիշյալ դրույթի ենթադրյալ իրավական անորոշության հարց՝ Սահմանադրական դատարանը, **մի կողմից**, այս առնչությամբ վերահաստատել է իրավական որոշակիության վերաբերյալ նախկինում արտահայտած

դիրքորոշումները, այդ թվում՝ այն, որ «...օրենքներում կիրառվում են բազմաթիվ բառեր և արտահայտություններ, որոնց իմաստն ու նշանակությունն ուղղակիորեն բացահայտված չեն օրենսդրի կողմից, սակայն յուրաքանչյուր դեպքում իրավական որոշակիության գնահատման անվան ներքո դրանց մեկնաբանումը Սահմանադրական դատարանի իրավասության տիրույթում չէ: (...) Ուստի Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի, դրա որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավագործությունը սահմանադրորեն վերապահված է եռաստիճան դատական համակարգին, և դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցը լուծելի է օրենքի միատեսակ կիրառման համապատասխան նախադեպի ձևավորման շրջանակներում...»: Սակայն, **մյուս կողմից՝** Սահմանադրական դատարանը վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթը, այնուամենայնիվ, մեկնաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ դրույթների հետ համակարգային վերլուծության համատեքստում՝ եզրահանգելով. «...ակնհայտ է, որ կասեցման հիմքերը, տարբեր լինելով իրենց բնույթով, որոշ դեպքերում քննիչի, դատախազի, դատարանի կողմից անհնար են դարձնում «դրանց հաղթահարումը» իրենց իսկ կողմից կատարվող գործողություններով, և դրանց վերացումը հնարավոր չէ քննիչի, դատախազի, դատարանի կողմից հատուկ այդ ուղղությամբ գործողություններ կատարելով, ինչն էլ (հատկապես քննիչի մասով) ընդգծվել է արդեն Քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածում՝ օգտագործելով «վերացվել են» բառերը»:

Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր իսկ իրավական դիրքորոշումը, հաջորդիվ ցուցաբերել է այդ դիրքորոշմանը հակառակ մոտեցում՝ բացահայտել և մեկնաբանել է վիճարկվող դրույթը ոչ թե սահմանադրական բովանդակության, այլ իրավական բովանդակության տեսանկյունից, ըստ էության, ապահովելու համար դրա միատեսակ կիրառությունը, որի իրավասությունը, ինչպես հենց Սահմանադրական դատարանն է ամրագրել, սահմանադրորեն վերապահված է եռաստիճան դատական համակարգին: Բացի դրանից, այս համատեքստում հարկ է նաև նշել՝ եթե Սահմանադրական դատարանը որոշում է վիճարկվող դրույթի մասով գործի վարույթը կարճել, ապա այդ դրույթի բովանդակության վերաբերյալ արտահայտած ցանկացած մեկնաբանությամբ կաշկանդելու է իրեն այդ մասով հետագայում ըստ էության որոշում կայացնելիս,

- անդրադառնալով «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի և Սահմանադրության 79-րդ հոդվածի ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի բարձրագրած հարցին՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ դիմումում այդ մասով հակասահմանադրականության հիմնավորումները սահմանավակվում են այն դիտարկումներով, որ՝ «...«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը հստակ չէ նաև այնքանով, որքանով պարզ չէ՝ այն վերաբերում է առհասարակ «պատգամավորի թեկնածուին, թե ԿԸՀ-ի կողմից ընդունված որոշումը Սահմանադրական դատարանում քննության առնելուց հետո առկա իրավիճակին, երբ հստակ ուղենշվում է «ընտրված պատգամավոր» իրավական կարգավիճակը»: Այս առնչությամբ արձանագրելով, որ բացակայում են Ընտրական օրենսգրքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 79-րդ հոդվածի հակասության վերաբերյալ պատշաճ հիմնավորումները և հիմք ընդունելով իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը հաստատել է, որ վիճարկվող դրույթներում առկա եզրույթների բովանդակության բացահայտումը, օգտագործված առանձին արտահայտությունների մեկնաբանություններն ուղղակիորեն դուրս են Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:

Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը, ոչ քիչ թվով գործերով վիճարկվող դրույթներում ամրագրված բառերի, եզրույթների, արտահայտությունների, ձևակերպումների, բառակապակցությունների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով, կայացրել է որոշումներ<sup>1</sup> և այդ որոշումների մի մասը կայացրել է նաև իրավական որոշակիության սահմանադրական պահանջին համապատասխանության հարցը որոշելու միջոցով: Ինչ վերաբերում է այս մասով Սահմանադրական դատարանի վկայակոչած՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ի ՄԴԱՌ-141 և 2021 թվականի փետրվարի 26-ի ՄԴԱՌ-40 աշխատակարգային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնք վերահաստատվել կամ հաստատվել են ՄԴԱՌ-251 աշխատակարգային որոշմամբ, ապա հիշյալ ՄԴԱՌ-40 և ԱԴԱՌ-141 աշխատակարգային որոշումները կայացվել են դատարանների դիմումների հիմա վրա, որոնց քննությունն ու լուծումն ունեն առանձնահատկություններ՝ սահմանված «Սահմանադրական դատարանի մասին»

<sup>1</sup> Տես, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի ՄԴՌ-735, ՄԴՌ-896, ՄԴՌ-935, ՄԴՌ-1275, ՄԴՌ-1294, ՄԴՌ-1359, ՄԴՌ-1383, ՄԴՌ-1475, ՄԴՌ-1513, ՄԴՌ-1592, ՄԴՌ-1611 որոշումները:

սահմանադրական օրենքով,

- վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը (2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՄԴԱՈ-248 աշխատակարգային որոշում)՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ որպես Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ (օրինակ՝ Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և այլն) «ելնելով իրենց սահմանադրաիրավական բարձր կարգավիճակից, պետք է ցուցաբերեն առավել բարձր մակարդակի փութաջանություն և, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի/դրույթների սահմանադրականությունը, պատշաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը»:

Նախ, պետք է նշել, որ **փութաջանությունը<sup>1</sup> իրավական հասկացությունն չէ**, ուստի և առավել բարձր մակարդակի փութաջանություն ցուցաբերելու պատվիրանը չկատարելը իրավական հետևանք չի կարող առաջացնել, ըստ այդմ՝ չի կարող Սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթի կարճման պատճառաբանությունների հիմքում դրվել:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի ընդունելիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից սահմանված այն պահանջին, որ Սահմանադրական դատարան դիմող սահմանադրաիրավական բարձր կարգավիճակ ունեցող սուբյեկտները, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի/դրույթների սահմանադրականությունը, պետք է պատշաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը, հարկ ենք համարում նշել, որ, իհարկե, **Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտը չի կարող իր դիմումը ներկայացնել առանց որևէ հիմնավորման**: Օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանադրաիրավական բարձր կարգավիճակ ունեցող սուբյեկտների,

<sup>1</sup> Ըստ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ փութաջանությունը բացատրվում է որպես ջանասիրություն, աշխատասիրություն, իսկ ըստ հայոց լեզվի հոմանիշների բառարանի նաև՝ փութեռանդություն, աշխատաջանություն, ժրաջանություն, քրտնաջանություն, տքնաջանություն, գործասիրություն, բարեջանություն, ջերմեռանդություն, վաստակասիրություն:

մասնավորապես՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի, Ազգային ժողովի խմբակցության, Հանրապետության նախագահի, Կառավարության, Մարդու իրավունքների պաշտպանի համար Սահմանադրական դատարան ներկայացվող ընդհանուր պահանջներից գատ (ի մասնավորի՝ դիմումում նշելու Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և **դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով**, սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այլ պահանջներ չի սահմանել ելնելով այն հանգամանքից, որ հիշյալ սուբյեկտները, հենց իրենց սահմանադրաիրավական բարձր կարգավիճակով պայմանավորված, թեկուզ մեկ հիմնավորման առկայության դեպքում սահմանափակված չլինեն բարձրացնելու սահմանադրականության հարց: Ըստ այդմ չի կարող, առավել ևս հիշյալ սուբյեկտների համար, Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու **ընդհանրական ձևակերպմամբ, մեկնաբանությամբ** այնպիսի պահանջ դրվել, որը կարող է այդ սուբյեկտների մոտ առաջացնել նաև սահմանադրական վեճի լուծումն առկախելու սուբյեկտիվ հայեցողություն դրսևորելու հնարավորություն ստեղծելու տպավորություն կամ ստեղծել հենց նման իրավիճակ, ըստ այդմ՝ առաջացնել Սահմանադրական դատարանի նկատմամբ վստահության խնդիր: Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի հիմնավորվածության ստուգումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատողական տիրույթում է: Ինչպես Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի հիմնավորված, այնպես էլ այդ դիմումի հիման վրա գործի քննության մերժումը, քննության ընդունված գործի վարույթի կարճումը պետք է ունենա կոնկրետ հիմքեր, հիմնավորումներ, լինի պատճառաբանված: Մեկ հանգամանք ևս. թեև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով (60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) Սահմանադրական դատարանն իրավասու է կարճել գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր, սակայն առավելապես այն դեպքերում, **երբ գործի վարույթը (ամբողջությամբ կամ մասամբ) կարճվում է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ**, այն էլ տվյալ դիմումի հիման վրա գործով ըստ էության որոշում կայացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված վերջնաժամկետներին մոտ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

Ժամկետներում կամ գործով ըստ էության որոշում կայացնելու օրը<sup>1</sup>, ապա այն անկախ դիտորդի մոտ կարող է առաջացնել Սահմանադրական դատարանի կողմից առնվազն տվյալ դիմումի նախնական ուսումնասիրումը ոչ պատշաճ իրականացնելու կամ սահմանադրական վեճի լուծումն առկախելու սուբյեկտիվ հայեցողություն դրսևորելու տպավորություն:

2. ՄԴՈ-1619 որոշման մեջ սույն սահմանադրական վեճի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող այն հարցադրմանը՝ արդյոք ք Սահմանադրությամբ ամրագրված անձեռնմխելիության երաշխիքները՝ Ազգային ժողովի համաձայնությամբ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասով, տարածվում են այն պատգամավորի վրա, որի նկատմամբ մինչև պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն արդեն իսկ հարուցված է եղել քրեական հետապնդում, ըստ էության, տրվել է բացասական պատասխան, ինչը հիմնավոր չենք համարում հետևյալ պատճառաբանությամբ.

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիքում (2015թ. սեպտեմբերի 10, CDL-PI(2015)015rev, կարծիք թիվ 757/2014), անդրադառնալով Սահմանադրության 96-րդ հոդվածի կարգավորումներին, նշել է. 2-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի համաձայնությունը ստանալու համար դիմում է ներկայացվում մինչև պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, և Ազգային ժողովի նախագահն անհապաղ տեղեկացվում է, երբ պատգամավորը բռնվել է հանցանք կատարելու պահին կամ դրանից անմիջապես հետո: Այս դրույթները համապատասխանում են Խորհրդարանական անձեռնմխելիությունների ծավալի և դրանցից զրկելու վերաբերյալ զեկույցում արված առաջարկություններին և ողջունելի են (կետ 88):

Չնայած այն հանգամանքին, որ պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտն առաջացել է վաղ կոնստիտուցիոնալիզմի շրջանում, երբ ժողովրդավարական կարգերը դեռևս ձևավորման փուլում էին, և բավականին մեծ էին ու տարածված պատգամավորների գործունեությանը խոչընդոտելու, անհարկի միջամտե-

<sup>1</sup> Սահմանադրական դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 27-ից առ 2021 թվականի դեկտեմբերի 7-ը ներառյալ թվով 39 գործի վարույթ ամբողջությամբ կամ մասամբ կարճելու աշխատակարգային որոշումներ է կայացրել՝ հիմնականում վերոհիշյալ պատճառաբանությամբ և ժամկետներում:



լու երևույթները, այնուամենայնիվ, այն իր արդիականությունը չի կորցրել նաև ժամանակակից ժողովրդավարական և իրավական պետություններում, քանզի մեր օրերում էլ ոչ միայն նոր, այլև կայացած ժողովրդավարական համակարգեր ունեցող պետություններում ևս բացառված չէ առանձին պատգամավորների նկատմամբ անհիմն, կամայական և հատկապես քաղաքական հետապնդումների հնարավորությունը: Այդ իսկ պատճառով է, որ մեր օրերում պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտը համընդհանուր ճանաչում է ստացել ինչպես սահմանադրական, այնպես էլ վերազգային մակարդակներով:

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով պատգամավորական անձեռնմխելիությանը (CDL-AD(2014)011), նշել է, որ պառլամենտական իմունիտետին առնչվող կանոնները, նախևառաջ, միտված են պաշտպանելու ներկայացուցչական ժողովրդավարությունը: Նշված իմունիտետը կարող է արդարացվել այն չափով, որ չափով այն պիտանի և անհրաժեշտ է ընտրված ներկայացուցիչների կողմից առանց գործադիրի, դատարանների և քաղաքական հակառակորդների կողմից ոտնձգությունների կամ անհարկի միջամտության վախի իրենց ժողովրդավարական գործառույթների արդյունավետ իրացման համար: Նշվածը հատկապես կարևոր է խորհրդարանական ընդդիմության և քաղաքական փոքրամասնությունների համար (կետ 36):

Անձեռնմխելիության կանոնները (նեղ իմաստով) որոշ երկրներում կարող են կատարել խորհրդարանին որպես ինստիտուտ, և, մասնավորապես խորհրդարանական ընդդիմությանը գործադիրի, դատարանների կամ այլ քաղաքական հակառակորդների կողմից անտեղի ճնշումներից կամ ոտնձգություններից պաշտպանելու ժողովրդավարական գործառույթը (կետ 185):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր վճիռներից մեկում (*Kart v. Turkey*, 03.12.2009 application no. 8917/05, §90, 91, 97) անդրադառնալով պատգամավորական անձեռնմխելիությանը, արձանագրել է, որ երաշխիքները, որոնք առաջարկվում են երկու տեսակի պառլամենտական իմունիտետի կողմից, հետապնդում են նույն նպատակը՝ ապահովելու պառլամենտի անկախությունն իր գործառույթներն իրականացնելիս: Իմունիտետը (*inviolability*) օգնում է հասնել պառլամենտի ամբողջական անկախությանը՝ պաշտպանելով քաղաքականապես մոտիվացված քրեական հետապնդումներից: Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը կարող է խաթարել պառլամենտի գործունեությունը: Անձեռնմխելի

լիությունը ոչ թե անձնական արտոնություն է՝ ի շահ պատգամավորի, այլ առավելություն է՝ կապված նրա կարգավիճակի հետ, որի պատճառով շահառուն չի կարող հրաժարվել դրանից:

Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պատգամավորի անձեռնմխելիությունը միաժամանակ երկու գործառույթ ունի. այն պաշտպանում է պատգամավորին իր պառլամենտական գործունեության խաթարումից, որը կարող էր տեղի ունենալ կամայական միջամտությունների պարագայում և միաժամանակ ծառայում է ամբողջ Ազգային ժողովի գործառույթների և իրավասության անխափան իրականացմանը: Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է ինչպես Ազգային ժողովի որպես օրենսդիր իշխանության մարմնի պատշաճ գործունեությունը, այնպես էլ առանձին պատգամավորի՝ իշխանության այլ ճյուղերի, առաջին հերթին գործադիր իշխանության կողմից ոտնձգություններից զերծ մնալու հնարավորությունը: Ուստի պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտն ունի ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ-ինստիտուցիոնալ նշանակություն:

Լայն իմաստով պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն իշխանությունների բաժանման սկզբունքի կոնկրետացում է:

Անձեռնմխելիության իմաստը, ինչպես վերը նշվեց, պատգամավորին որևէ անհարկի ազդեցություններից զերծ պահելն է, իսկ քրեական հետապնդումն ի գործ է ազդելու պատգամավորի գործունեության, ներառյալ՝ նրա քվեարկությունների վրա, քանի որ այն ինտենսիվ միջամտություն է անձի իրավունքներին և ազատություններին: Քրեական հետապնդում հարուցելն էական նշանակություն ունի նաև կոնկրետ պատգամավորի և այն քաղաքական ուժի խմբակցության հեղինակության համար, որի կազմում այդ պատգամավորը գործում է, ուստի՝ անկախ քրեական հետապնդման շրջանակներում առավել խիստ խափանման միջոց կիրառելու հանգամանքից, արդեն իսկ իր էությանմբ ունակ է ներագդելու խորհրդարանի գործունեության վրա:

Պատգամավորի անձեռնմխելիությունը նշանակում է, որ պատգամավորի քրեական հետապնդումը որևէ պատճառով, ներառյալ պառլամենտից դուրս նրա վարքագծի, թույլատրելի է միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Ի տարբերություն Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի, որի գործողությունը տարածվում

Է պատգամավորի վրա նաև նրա լիազորությունների ավարտից հետո, Մահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատգամավորի անձեռնմխելիությունը ժամանակային առումով տարածվում է միայն պատգամավորական լիազորությունների ժամկետի վրա՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից մինչև այդ կարգավիճակի դադարումը կամ դադարեցումը: Ուստի Մահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն այն է, որ, քանի դեռ անձն ունի պատգամավորի կարգավիճակ, նրա նկատմամբ քրեական հետապնդումը հարուցվի միայն Ազգային ժողովի համաձայնության դեպքում:

Ազգային ժողովի համաձայնությունը պարտադիր է նաև այն դեպքում, երբ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերած անձը քրեական հետապնդման է ենթարկվել մինչև պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը, քանի որ քրեական հետապնդումը ոչ թե մեկանգամյա գործողություն է, այլ պետախիջխանական միջոցառումների ամբողջություն: Այն, հետապնդելով որոշակի նպատակ, անխուսափելիորեն ներգործում է անձի իրավունքների և ազատությունների վրա: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետը քրեական հետապնդումը բնորոշում է որպես դատավարական գործողություններ, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

Նկատի ունենալով, որ մինչև պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը սկսված քրեական հետապնդման պարագայում պատգամավորն իր լիազորությունների ողջ ընթացքում կարող է ենթարկվել վերոնշյալ ներգործության (հատկապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը ոչ նախաքննության, ոչ էլ քրեական հետապնդման համար առավելագույն ժամկետներ չի սահմանում), Մահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երաշխիքը պետք է տարածվի նաև այն պատգամավորի վրա, որի նկատմամբ մինչև նրա պատգամավորի կարգավիճակ ձեռքբերելը հարուցվել է քրեական հետապնդում: Հետևաբար՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անձի կողմից պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից պարտավոր է առնվազն վերջինիս մասով անհապաղ կա-

սեցնել քրեական գործով վարույթը՝ մինչև քրեական հետապնդման անձեռնմխելիության հաղթահարումը:

Այս եզրահանգումն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի մի շարք կարգավորումներից: Այսպես՝ հիշյալ օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը քրեական գործով վարույթը կասեցնելու հիմք է համարում այն դեպքը, երբ մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից: Հիշյալ օրենսգրքի մեկ այլ առաջին աստիճանի դատարանում վարույթը կարգավորող դրույթը նախատեսում է, որ եթե մեղադրյալը օգտվում է քրեական հետապնդման անձեռնմխելիությունից, դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում գործի վարույթը կասեցնելու մասին: Ընդ որում, այս դեպքում իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով լուծում է տվյալ անձին անձեռնմխելիությունից զրկելու և խափանման միջոցը փոխելու հարցը (295-րդ հոդվածի 1-ին մաս):

Վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունից միանշանակ և պարզորոշ հետևում է, որ քրեական հետապնդման անձեռնմխելիությունը, որպես քրեական վարույթը կասեցնելու հիմք, հավասարապես տարածվում է ինչպես այն անձի նկատմամբ, որին դեռ պատրաստվում են ներգրավել որպես մեղադրյալ, այնպես էլ հենց մեղադրյալի նկատմամբ: Վերջին իրավիճակը կարող է առաջանալ երկու դեպքում, երբ՝

1) քրեական գործով մեղադրյալ հանդիսացող, այսինքն՝ արդեն իսկ քրեական հետապնդման ենթարկված անձը քրեական վարույթի ընթացքում ձեռք է բերում քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տվող կարգավիճակ (օրինակ՝ պատգամավոր կամ Սարդու իրավունքների պաշտպան), ինչն իրատեսական է և գործնականում լիովին հնարավոր,

2) քրեական հետապնդման մարմինը, (անփութորեն կամ գիտակցված) խախտելով քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիության պահանջը, համապատասխան կարգավիճակ ունեցող անձին ներգրավել է որպես մեղադրյալ:

Այսպիսով, սահմանադրական և քրեադատավարական օրենսդրության կարգավորումներն աներկբա վկայում են, որ պատգամավորի համար քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիության երաշխիքը գործում է անկախ այն հանգամանքից, թե

քրեական հետապնդման հարուցումը ժամանակագրական առումով հաջորդել է պատգամավորի կարգավիճակ ձեռքբերելուն, թե նախորդել դրան:

Ներկայացված նպատակի համատեքստում քրեական հետապնդում հարուցելը ոչ թե պարզապես պետք է նույնացվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետով ամրագրված նույնանուն հասկացության հետ, այլ մեկնաբանվի համարժեք, որպեսզի այն չներառի սուսկ քրեական հետապնդումը, քանզի, նախ՝ Մահմանադրությունը չի կարող մեկնաբանվել սովորական օրենքների և դրանց եզրույթների միջոցով, դա անթույլատրելի է, բացի դրանից, այդպիսի սահմանափակ, զուտ տեխնիկական մոտեցման համատեքստում սողանցք է թողնվում, որ ամբողջովին շրջանցվեն պատգամավորի անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքները:

Մահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի թե՛ առաջին, թե՛ երկրորդ նախադասության տրամաբանությունը հենց այն է, որ երկու դեպքում էլ պահանջվում է Ազգային ժողովի **նախնական համաձայնությունը**, հակառակ պարագայում գործադիր իշխանության մարմինը, ինչպիսին դատախազությունն է, հնարավորություն է ստանում ներագդելու պատգամավորի անկախության վրա առանց օրենսդիր մարմնի կողմից որևէ կամաարտահայտության, և Ազգային ժողովը հայտնվում է կատարված փաստի առջև:

Մահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության նպատակն Ազգային ժողովի կողմից չքննարկված և համաձայնություն չտրված քրեական հետապնդման հետևանքներից պատգամավորին պաշտպանելն է, քանի որ դրանք կարող են հավասարապես բացասական ազդեցություն ունենալ ցանկացած պատգամավորի գործունեության վրա՝ անկախ նրանից, թե այն հարուցվում է պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից հետո, թե առաջ: Ուստի՝ Մահմանադրության հիշյալ դրույթն այս երկու հնարավոր դեպքերի միջև որևէ տարբերակում չի դնում, քանզի դրա համար չկա որևէ օբյեկտիվ կամ ողջամիտ հիմնավորում: Հենց դա է պատճառը, որ միայն Ազգային ժողովի համաձայնությամբ քրեական հետապնդում հարուցելու անվերապահ պահանջը կիրառելի է դրա ներգործության տիրույթում հայտնված ցանկացած պատգամավորի նկատմամբ:

Այսպիսով, «հարուցում» եզրույթը հարկ է մեկնաբանել ոչ թե որպես սուսկ վարութային գործընթացի սկիզբ, որից հետո ցանկացած

քրեադատավարական հարկադրանք կամ այլ սահմանափակում արդեն ինքնըստինքյան թույլատրելի է անկախ անձի կարգավիճակի փոփոխությունից, այլ առնվազն այնպիսի մեկնարկային նախապայման, որը չի կարելի նախաձեռնել կամ շարունակել, քանի դեռ սահմանված կարգով չի ստացվել Ազգային ժողովի համաձայնությունը:

Եթե առաջնորդվենք հակառակ «տրամաբանությամբ», ապա կստացվի, որ կախված այն հանգամանքից, թե պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը երբ է հարուցվել, նա կարող է ունենալ երկու տարբեր «կարգավիճակ»: Սահմանադրությունը պատգամավորի համար նման երկակի կարգավիճակ չի սահմանել, ուստի այդպիսի մոտեցումն ամբողջությամբ անտեսում է Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության կարգավորումը և դրա նպատակը, հանգեցնում Սահմանադրության կամայական մեկնաբանության: Դա իր հերթին պատգամավորի անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքներն ամբողջովին շրջանցելու սողանցք է ստեղծում, որը կարող է լայն հնարավորություն ընձեռել քողարկված քաղաքական հետապնդումների համար:

Ի վերջո, պետք է նկատի ունենալ, որ Ազգային ժողովի կողմից պատգամավորի անձեռնմխելիության հարցի քննարկումը նրան ընդամենը անհիմն կամ ապօրինի քրեական հետապնդումից զերծ պահելու երաշխիք է, սակայն ոչ քրեական հետապնդման բացարձակ արգելք: Այն դատավարական ընթացակարգերին իրավական գնահատականներ տալու կամ դրանք ուղղորդելու անհրաժեշտություն չի ենթադրում: Որպես կանոն, պառլամենտներում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցերը քննարկելիս առանցքային է համարվում այն, թե արդյո՞ք պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը զուրկ է որևէ քաղաքական ենթատեքստից, արդյո՞ք այն այլ ոչ իրավական նպատակ չի հետապնդում, արդյո՞ք ուղղված չէ պատգամավորի անկախ կարգավիճակը խաթարելու և պատգամավորին գործադիր իշխանության քմահաճույքով գործող սուբյեկտի վերածելու:

Անհիմն ենք համարում նաև այն պնդումը, թե պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու համար բավարար է այն հանգամանքը, որ վերջինիս այլ կարգավիճակում (պատգամավորի թեկնածուի) գտնվելու ժամանակահատվածում, մեկ այլ

մարմին՝ տվյալ դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, տվել է պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն: Պատգամավորի թեկնածուն և պատգամավորն ունեն միանգամայն այլ իրավական կարգավիճակ, այդ թվում՝ անձեռնմխելիության հարցում և պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձի վրա տարածվում են բացառապես պատգամավորի համար Սահմանադրությամբ նախատեսված անձեռնմխելիության կանոնները:

Միաժամանակ գտնում ենք, որ Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՄԴՈ-1476 որոշման 4.3-րդ կետով արտահայտված իրավական դիրքորոշմամբ ևս ամրագրված է, որ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «քրեական հետապնդում հարուցելու» հետ փոխկապակցված անձեռնմխելիությունը հիմք է նաև արդեն իսկ հարուցված քրեական գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կասեցնելու համար: Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ անձեռնմխելիության հիմքով կասեցման առնչությամբ կարգավորումը հավասարապես վերաբերում է սահմանադրական անձեռնմխելիությամբ օժտված բոլոր անձանց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասը պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու երկու բաղադրիչների՝ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն տալու հիմքերի ու կարգի միջև որևէ տարբերակում չի դրել (ի դեպ՝ տարբերակման որևէ սահմանադրական հիմքի մասին չի նշվում նաև ՄԴՈ-1619 որոշման մեջ), գտնում ենք, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1619 որոշման եզրափակիչ մասում պետք է ամրագրվեր նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը այն մեկնաբանությամբ, որ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձի նկատմամբ արդեն հարուցված քրեական գործով վարույթը կասեցվում է: Պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ:

Այս դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդ-

վաճի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշման 4.3-րդ կետով և կայացնել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ  
ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ  
ԱՐԵՎԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

15 դեկտեմբերի 2021 թվականի





**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ  
ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 31-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 295-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1619  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Դիմող կողմը սույն գործով առաջադրել է երկու հիմնական հարցադրումներ.

ա) արդյո՞ք «Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուի» և «Ազգային ժողովի պատգամավորի» իրավական կարգավիճակները նույնն են, և արդյո՞ք պատգամավորի անձեռնմխելիությունը կարող է հաղթահարվել ԿԸՀ-ի կողմից,

բ) արդյո՞ք ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի նկատմամբ կարող է շարունակվել քրեական հետապնդումն առանց Ազգային ժողովի համապատասխան համաձայնության, և արդյո՞ք պատգամավորի կարգավիճակ ստանալը քրեական գործի դատական վարույթում քրեական գործի կասեցման հիմք է՝ առանց հաղթահարման հնարավորության:

Բարձրացված հարցադրումների կապակցությամբ դիմող կողմը վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿ ԴԱՏԱՐԱՆ ♦ 4(104)2021 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

նադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրության 6-րդ («Օրինականության սկզբունքը»), 79-րդ («Որոշակիության սկզբունքը»), 96-րդ («Պատգամավորի անձեռնմխելիությունը») հոդվածներին համապատասխանության հարցը:

Վերը թվարկված և վիճարկվող օրինադրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանելու հիմնական սահմանադրական չափանիշներն ամրագրված են Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում. «Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող գրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից գրկելը չի կարող տնել յոթանասուններկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից գրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

Դիմող կողմի բարձրացրած հարցադրումներին պատասխանելու և վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը գնահատելու սահմանադրական-իրավական ուղին (մեթոդը) իրավական կարգավորման կառուցակարգում իրավահարաբերությունների կառուցվածքի, գործողության հիմնադրույթների քննությունը, վերլուծությունն է: Այդպիսի մաքուր իրավական վերլուծությունը հնարավորություն կտա հանգել ճշմարիտ իրավական եզրակացությունների՝ զերծ մնալով նշված իրավակարգավորումների քաղաքական, սոցիոլոգիական, անձնական-անհատական, պատեհապաշտական գնահատականներից, համապատասխան իրավական ինստիտուտների համաշխարհային կամ ազգային զարգացման միտումների վկայակոչումներից, որոնք առավելապես գիտական հետազոտության առարկա են:

Իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում իրավունքի կենսագործումը (իրականացումը) տեղի է ունենում իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման միջոցով: Իրավական կարգավորումն սկսվում է իրավահարաբերության ծագումից և ավարտվում դրա դադարմամբ: Իրավահարաբերությունն իր գործողության ընթացքում կարող է կրել այս կամ այն փոփոխությունը՝ սուբյեկտային կազմում, բովանդակության մեջ, և շարունակել գոյություն ունենալ փոփոխված տեսքով: Ընդ որում՝ իրավահարաբերությունների առաջացման համար անհրաժեշտ են որոշակի իրավական նախադրյալներ՝ իրա-

վունքի նորմ, իրավասուբյեկտ մասնակիցներ, իրավաբանական փաստեր: Այս երեք տարրերը, լինելով իրավահարաբերությունների ծագման իրավական նախադրյալներ, միաժամանակ այն չափանիշներն են, որոնցով հարակից կամ հաջորդող (նաև փոփոխված տեսքով շարունակվող) իրավահարաբերությունները զանազանվում (կամ տարբերվում) են իրարից:

Սույն գործի շրջանակներում բարձրացված իրավակարգավորումների հետևանքով առաջացած հիմնական իրավահարաբերություններն են՝

ա) քրեադատավարական վարույթային իրավահարաբերությունները, որոնց հիմքը քրեաիրավական նյութական իրավահարաբերությունն է,

բ) սահմանադրական ընտրական իրավահարաբերությունները, որոնք սկսվում են պասիվ ընտրական իրավունքի կենսագործմամբ (առաջացման հիմքը պատգամավորի թեկնածու գրանցելն է): Թեկնածուի չընտրվելու դեպքում այս իրավահարաբերությունը իսպառ դադարում է,

գ) խորհրդարանի պատգամավորի կարգավիճակի հետ կապված իրավահարաբերություններ, որոնք առաջանում են թեկնածուի պատգամավոր ընտրվելու և արդյունքում նրա լիազորություններն ստանձնելու փաստով:

Սույն գործի համատեքստում նշված երեք իրավահարաբերություններից առանցքայինը քրեադատավարական իրավահարաբերությունն է: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ «1. Քրեական դատավարությունն իրականացվում է ապահովելու համար՝

1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից.

2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

2. Քրեական դատավարությունն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

Սույն գործի համատեքստում քրեադատավարական իրավահարաբերության դինամիկայի (առաջացման, փոփոխման, դադարման) իրավական նախադրյալներն են քրեադատավարական նորմերը, քրեական դատավարության մասնակիցները (սուբյեկտները) իրենց քրեադատավարական կարգավիճակներով, և քրեադատավարական փաստերը: Այս իրավահարաբերություններն առանցքային են, որովհետև դրանք ընդհանուր նորմեր են: Սահմանադրական ընտրական (պատգամավորի թեկնածու) և պառլամենտականի կարգավիճակի հետ կապված իրավահարաբերություններն առանցքային ընդհանուր նորմերից շեղվող, հատուկ իրավակարգավորումներ են, որոնք, ինչպես քրեադատավարական իրավահարաբերություններից, այնպես էլ իրարից տարբերվում են կարգավորիչ նորմերով, մասնակից սուբյեկտներով և դրանց կարգավիճակներով, առաջացման հիմքը համարվող փաստերով:

Քրեադատավարական իրավահարաբերությունների առանցքային դերը դրսևորվում է նաև այն բանում, որ դրանք կարող են առաջանալ, փոփոխվել, գործել նաև մինչև ընտրությունները, ընտրությունների ընթացքում, անձի ընտրվելու դեպքում կարող են կասեցվել, իսկ լիազորությունների ժամկետի լրացմամբ նաև վերսկսվել:

Գործի շրջանակներում քննարկվող ընտրական իրավահարաբերությունում կարգավորիչ նորմերն ամրագրված են Ընտրական օրենսգրքով, ըստ որի՝ մասնակից սուբյեկտը սույն գործի իմաստով պատգամավորի թեկնածուն է, իսկ հարաբերության առաջացման հիմք հանդիսացող իրավական փաստը՝ պատգամավորի թեկնածու գրանցվելը:

Պառլամենտական իրավահարաբերություններում պատգամավորի կարգավիճակի և դրա հետ կապված հարաբերությունների կարգավորիչ օրենքներն են՝ Սահմանադրությունը և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը, մասնակից սուբյեկտը պատգամավորն է, իսկ իրավահարաբերության առաջացման փաստական հիմքը՝ պատգամավորի լիազորությունների ստանձնումը:

Այսպիսով, եթե սույն գործի շրջանակներում վիճարկվող նորմերի հիման վրա առաջացող իրավահարաբերությունները դիտար-

կենք դինամիկայի մեջ, կունենանք հետևյալ պատկերը. քաղաքացին իրացրել է իր քաղաքական իրավունքը, մասնավորապես՝ մասնակցել է ընտրություններին՝ որպես պատգամավորի թեկնածու: Այդ ընթացքում առաջացել է քրեական հետապնդման իրավահարաբերությունը, սակայն օրենքով նրան վերապահված է հատուկ անձեռնմխելիություն, որից զրկելը կատարվում է Ընտրական օրենսգրքին համապատասխան ԿԸՀ-ի կողմից: Եթե ընտրությունների արդյունքում թեկնածուն չի ընտրվում որպես պատգամավոր, ապա նրա հատուկ անձեռնմխելիությունը դադարում է գործել: Մինչև ընտրություններն օրենքով սահմանված կարգով ԿԸՀ-ի կողմից տրված՝ քրեական հետապնդման կամ ազատությունից զրկելու համաձայնությունը չընտրված անձի նկատմամբ չունի իրավական հետևանք, որովհետև նա այդ կարգավիճակում ենթարկվում է քրեական հետապնդման ընդհանուր կարգով: Սակայն եթե այդ անձը ընտրության արդյունքում ստանձնել է պատգամավորի կարգավիճակ, ապա իրավահարաբերության փոփոխման պայմաններում նա ձեռք է բերել նոր հատուկ կարգավիճակ՝ պատգամավորի, որն ունի իր համար Սահմանադրությամբ երաշխավորված անձեռնմխելիություն, և դրանից զրկելը պետք է կատարվի Սահմանադրությանը և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին խիստ համապատասխան:

ԿԸՀ-ի կողմից այդ կապակցությամբ տրված համաձայնություններն իրավական ուժ ունեն մինչև այն պահը, երբ Ազգային ժողովն այդ հարցով կկայացնի որոշում: Միայն պատգամավորի կարգավիճակի ստանձնումը հիմք չէ քրեադատավարական հարաբերության հրամայական կասեցման համար: ԿԸՀ-ի որոշումները շարունակում են գործել, հետևաբար՝ ՀՀ գլխավոր դատախազն անհապաղ պետք է քայլեր ձեռնարկի պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի լուծման համար:

Այսպիսով, սույն գործի շրջանակներում վիճարկվող հիմնադրույթների կարգավորման շղթան հետևյալն է. քրեական հետապնդման ենթարկվող քաղաքացի, որը հաջորդող շրջանում գրանցվում է որպես պատգամավորի թեկնածու, իսկ պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո կան նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հիմքեր: Այնուհետև այդ անձը ընտրվում է և ստանձնում է պատգամավորի կարգավիճակ:

Նման տրամաբանական վերլուծությունից բխում է դիմող կողմի՝ Ա հարցադրման տրամաբանական-իրավական պատասխանները «պատգամավորության թեկնածու» և «պատգամավոր» կարգավի-

ճակները նույնը չեն, հետևաբար՝ պատգամավորի անձեռնմխելիությունը չի կարող հաղթահարվել ԿՀԸ-ի կողմից: Այս տրամաբանություննից բխում է դիմող կողմի բարձրացրած Բ հարցի պատասխանը. պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող շարունակվել առանց Ազգային ժողովի համաձայնության:

Այս ամբողջ շղթայում Սահմանադրությունը կարգավորում է միայն վերջին փուլի իրավահարաբերությունը և միայն պատգամավորի լիազորություններն ստանձնած անձի նկատմամբ: Ընդ որում՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասը տառացիորեն, բավականին հստակ կերպով սահմանում է, որ՝

ա) «պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ»,

բ) պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող գրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո»:

Այսպիսի հստակ իրավակարգավորման պայմաններում ՄԴՈ-1619 որոշումը տարբերակում է դնում մինչև պատգամավորի լիազորությունների ստանձնումը ԿՀԸ-ի համաձայնությամբ քրեական հետապնդման ենթարկվող անձի և ազատությունից գրկված անձի միջև՝ արձանագրելով, որ

ա) «պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը. նման պարագայում քրեական հետապնդման շարունակությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով» (ՄԴՈ-1619, 18-րդ էջ),

բ) «պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո նրան ազատությունից գրկելու պարագայում. տվյալ դեպքում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերից բացի, մնացած բոլոր դեպքերում անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն անհրաժեշտաբար պայմանավորում է, որ վերջինիս ազատությունից գրկելու (իսկ մինչ այդ կարգավիճակի ձեռք բերելը ազատությունից գրկված լինելու դեպքում՝ ազատությունից գրկելը շարունակելու, այն պահպանելու) համար անվերապահորեն պետք է Ազգային ժողովի համաձայնությունը, որի բացակայությունը բացառում է պատգամավորի կարգավիճակ ունեցող անձին ազատությունից գրկելու հնարավորությունը» (ՄԴՈ-1619, 19-րդ էջ):

Կարծում ենք, որ Սահմանադրության 96-րդ հոդվածի մեկնաբանության համար իրավական հերմենևտիկայի որևէ հնարքի կիրա-

ռում չի կարող հանգեցնել նման ծավալով տարաբնույթ մտահոգումների մի դեպքում՝ տարածական (լայն), մեկ այլ դեպքում՝ սահմանափակ (նեղ), մեկ ուրիշ դեպքում՝ տառացի (համընկնող) մեկնաբանությունների:

Առանց Ազգային ժողովի համաձայնության պատգամավորը ոչ միայն չի կարող գրկվել ազատությունից կամ շարունակել մնալ ազատությունից գրկված (երբ դրանից գրկված էր մինչև կարգավիճակ ձեռք բերելը), այլև նրա նկատմամբ չի կարող հարուցվել քրեական հետապնդում կամ շարունակվել հարուցված քրեական հետապնդումը՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

Իրավաբանական տեսանկյունից անորոշության տարրեր ունի ՄԴՈ-1619 եզրափակիչ մասի 1-ին կետի գ ենթակետը, համաձայն որի՝ «անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ»: Ինչ է նշանակում «չի կարող պահվել անազատության մեջ» ձևակերպումն իրավական տեսանկյունից, ո՞վ է ազատ արձակում և ինչպե՞ս, այդ ազատումը տեղի է ունենում ինքնաբերաբար թե՛ ինչոր ընթացակարգով, գործում է անձնական անձեռնմխելիությունը սահմանափակելու կամ ազատությունից գրկելու ընդհանուր կա՞րգը, թե՛ հատուկ սահմանադրական ընթացակարգը: Եզրափակիչ մասի 1-ին կետի գ ենթակետն իր անորոշությամբ կոլիզիաներ է առաջացնում քրեական դատավարության օրենսդրորեն ամրագրված մի շարք խնդիրների հետ, մասնավորապես՝ անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, այլոց (հանցագործությունից տուժած անձանց) իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ**

**ԱՐԹՈՒՐ ՎԱԴԱՐՇՅԱՆ**

17 դեկտեմբերի 2021 թվականի



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ)  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 դեկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(104)2021



համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի ապրիլի 15-ի N 575-Ա որոշմամբ «2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 2-ի ՍԴԱՈ-131 աշխատակարգային որոշմամբ նշված գործի վարույթը կասեցվել է: Համաձայնագրի որոշ դրույթների, դրանց կիրառման կարգի և հնարավոր հետևանքների վերաբերյալ հարցումներ են ուղղվել Կենտրոնական բանկին, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Էկոնոմիկայի նախարարությանը: Հարցումների պատասխաններն ստանալուց և ուսումնասիրելուց հետո Սահմանադրական դատարանն իր՝ 2021թ. դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-244 աշխատակարգային որոշմամբ վերսկսել է գործի վարույթը՝ դատաքննությունը նշանակելով 2021 թվականի դեկտեմբերի 10-ին:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, նշված համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Ջարգացման ֆրանսիական գործակալության (ՋՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում նպատակ ունենալով հստակեցնելու ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ կիրառելի կանոնները, մասնավորապես՝ իրավաբանական, հարկային, ֆինանսական կամ այլ պայմանները Համաձայնագրի, Կողմերի պետությունների օրենսդրության և համապատասխան միջազգային պարտավորությունների համաձայն:

2. Ըստ Համաձայնագրի՝ ՋՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն՝ որպես ՋՖԳ-ի՝ մասնավոր սեկտորի զարգացման ֆինանսավորման ոլորտում մասնագիտացված մասնաճյուղ, այսուհետ հիմնադրվելու և գործունեություն են ծավալելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ցուցաբերելով իրենց ֆինանսական և տեխնիկական աջակցությունը Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացման նպատակներին համապատասխան և գործելով անկախության, ինքնորոշման, ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության սկզբունքները հարգելու հիման վրա:

ՋՖԳ-ն ֆրանսիական դրամավարկային և ֆինանսական օրենսգրքի կանոնակարգային հիմնադրույթներով ղեկավարվող առևտրային և արդյունաբերական բնույթի պետական հաստատություն է, որը հիմնականում գործում է ընդունող պետության ներդրումային գերակա ծրագրերի շրջանակում՝ պետությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին և պետական կամ մասնավոր ձեռնարկություններին կամ ֆինանսական հաստատություններին տրամադրված դրամաշնորհների, երկարաժամկետ վարկերի և երաշխիքներին միջոցով, կամ իր գործունեության շրջանակում գործող ձեռնարկություններում մասնակցություն ունենալու ձևով, ինչպես նաև առաջարկում է խորհրդատվական, վերապատրաստման և տեխնիկական աջակցության ծառայությունների տրամադրում:

ՊՐՈՊԱՐԿՈ-ն 1977 թվականին ֆրանսիական իրավունքի հիման վրա ստեղծված զարգացման ֆինանսական ընկերություն է, որը տնօրինվում է գլխավորապես ՋՖԳ-ի կողմից: Հայաստանի

Հանրապետության Կառավարության և ՋՖԳ-ի միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրվել է վարկային համաձայնագիր (ԱԺ կողմից վավերացվել է 2016 թվականի մայիսի 12-ին (ՄԴՈ-1269): Վերոնշյալ համաձայնագրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ շեշտել է, որ «...Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական մարմին է: Այդ մարմնի Կանոնադրությունը ներառված է 2014 թվականի նոյեմբերի 3-ի խմբագրությամբ Ֆրանսիայի Դրամային և ֆինանսական օրենսգրքում: Օրենսգրքի R513-22 հոդվածով սահմանվում է, որ Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական հանրային արդյունաբերական և առևտրային կազմակերպություն է: Այդ կազմակերպության Կանոնադրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն հանդիսանում է հանրային իրավունքի իրավաբանական անձ և կարող է հանդես գալ ինչպես պետության անունից, այնպես էլ որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտ»:

ՊՐՈՊԱՐԿՈ-ի հիմնական նպատակն է օժանդակել մասնավոր ներդրումներին թույլ զարգացած և զարգացող երկրներում՝ ի նպաստ աճի, կայուն զարգացման և կայուն զարգացման նպատակների իրագործման:

**3.** Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեությունը և գործողությունները համարվում են նախապատրաստված, որոշված և իրականացված Ֆրանսիայի Հանրապետությունում տեղակայված գլխամասային գրասենյակից:

**4.** Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

**4.1.** ՋՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն օգտվելու են Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ իրավաբանական անձի կարգավիճակից և իրավունակությունից՝ ունենալով հնարավորություն՝ իրականացնելու Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված գործառույթները, որոնք մասնավորապես ներառում են անհրաժեշտ ցանկացած գործունեության իրականացում՝ Համաձայնագրում սահմանված իրենց առաքելությունն իրականացնելու համար, ցանկացած անշարժ և շարժական գույքի ձեռքբերում և տնօրինում (բացառությամբ հողի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան), բանակցությունների վարում և ցանկացած համաձայնա-

գրի կամ պայմանագրի կնքում, այդ թվում՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված իրենց թույլատրելի գործունեության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Կառավարության կամ պետական կամ մասնավոր կառույցների կողմից տրամադրված ցանկացած տեսակի երաշխիքի կամ պարտավորությունների կատարման ապահովման ընդունում, Հայաստանի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիությամբ անձնակազմի աշխատանքի ընդունում, ինչպես նաև հանդես գալը դատարաններում որպես հայցվոր կամ պատասխանող, ցանկացած այլ դատական ատյանների, արբիտրաժի կամ իշխանության առջև իրենց կարգավիճակին և ֆրանսիական կիրառելի օրենսդրությանը համապատասխան և հայկական ցանկացած հաստատության կամ մարմնի առջև ցանկացած վարչական ընթացակարգի նախաձեռնում կամ մասնակցություն (Հոդված 2):

**4.2.** Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ՋՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել տրամադրել ֆինանսական օժանդակություն եվրոյով, ԱՄՆ դոլարով կամ ցանկացած այլ արտարժույթով, և ֆինանսական կամ տեխնիկական ցանկացած աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, պետական կամ մասնավոր ձեռնարկություններին և պետական կամ մասնավոր ֆինանսական կամ բանկային հաստատություններին, ինչպես նաև հայկական կամ միջազգային հանրային կամ մասնավոր կազմակերպություններին և զլխավորապես Հայաստանի Հանրապետությունում գործող կամ տեղակայված ցանկացած իրավաբանական միավորի, որն առնչություն ունի ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի որևէ գործունեության հետ՝ նկատի ունենալով, որ միջազգային կազմակերպությունների դեպքում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Կառավարության համաձայնությունը (Հոդված 3, կետ 1(a)):

**4.3.** Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ՋՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրվում է ազատորեն ձեռք բերել հայկական կամ օտարերկրյա վաճառողներից ցանկացած ընկերության կապիտալում մասնակցությունը (անկախ դրանց կազմակերպչական ձևից), ներդրումներ կատարել ներդրումային ֆոնդերում և ազատորեն տնօրինել կամ փոխանցել իրենց մասնաբաժինները կամ մասնակցությունը ազգային կամ օտարերկրյա ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, բացառությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ որևէ ֆինանսական կազմակերպության կապիտալում մասնակցության համար

պահանջվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը (Հոդված 3, կետ 1(b)):

**4.4.** Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ՉՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրվում է իրականացնել խորհրդատվական, տեխնիկական օժանդակության, վերապատրաստման կամ ուսուցման ծառայություններ պետական կամ մասնավոր կառույցների համար (Հոդված 3, կետ 1(c)):

**4.5.** Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված գործունեությունից յուրաքանչյուրը կարգավորվում է հատուկ պայմանագրով կամ համապատասխան կառույցի պարտավորություններն ու հանձնառություններն սահմանելով՝ ըստ կոնկրետ գործունեության կամ գործողության տեսակի, ընդ որում՝ Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհրաժեշտ ջանքեր գործադրել նշված պայմանագրի վավերականությունը կամ ուժի մեջ մտնելը ապահովելու համար պահանջվող հնարավոր ընթացակարգերը հեշտացնելու համար (Հոդված 3, կետ 2):

**4.6.** Համաձայնագրով նախատեսված է, որ առանց հակասելու Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1(b) կետին, Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար չպահանջել օրենսդրական, կանոնակարգող կամ վարչական բնույթի թույլտվություններ, արտոնագրեր կամ լիցենզիաներ Հայաստանի Հանրապետությունում ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի նշված գործունեությունը գործարկելու և իրականացնելու համար (Հոդված 3, կետ 3):

**4.7.** ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար Համաձայնագրի շրջանակներում ծրագրերը և համաձայնությունները կարող են ենթակա լինել ֆրանսիական օրենսդրությանը կամ ֆրանսիական դատարանի իրավագործությանը կամ միջազգային արբիտրաժային դատարանի կամ որևէ այլ՝ վեճերի լուծման համար փոխադարձաբար համաձայնեցված մարմնի իրավագործությանը, և Կողմերի կողմից լիովին ընդունվեն կայացված վճիռը կամ որոշումները՝ ապահովելով դրանց կատարումը Հայաստանի Հանրապետությունում (Հոդված 3, կետ 4):

**4.8.** Ըստ Համաձայնագրի՝ ՉՖԳ-ն, ՊՐՈՊԱՐԿՈ-ն և Համաձայնագրի 7-րդ հոդվածում նշված դրանց ներկայացուցչությունները Հայաստանի Հանրապետությունում չունեն բանկի կամ այլ ֆինանսական հաստատության կարգավիճակ: Ուստի՝ դրանք «չեն ենթարկվում ոչ բանկային ոլորտը կանոնակարգող օրենսդրության դրույթներին, ոչ էլ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղա-

կայված կամ գործող ցանկացած տեսակի բանկերի կամ ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությանը» (Հոդված 4, կետ 2):

**4.9.** Հայաստանի Հանրապետության տարածքում ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատվում են որևէ ծանուցման կամ հաշվետվությունների ներկայացման պարտավորությունից, բանկային ցանկացած թույլտվություն կամ լիցենզիա ունենալուց, ռիսկերի կառավարման հարցերով որևէ պարտավորությունից, նախագուշակյան (պրուդենցիալ) որևէ պարտավորությունից, իրենց պարտքերն ու պահանջները դասակարգելու որևէ պարտավորությունից և այդ պարտքերն ու պահանջները մարելու համար պահուստներ ստեղծելուց, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և կանոնակարգերից բխող որևէ վարչական պարտավորությունից կամ պարտականությունից, բացառությամբ վճարային հաշվեկշռի հաստատման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման և բանկային ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության կենտրոնացման (Հոդված 4, կետ 3):

**4.10.** Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի ֆինանսավորման ցանկացած շահառուին կամ այդ ֆինանսավորման ցանկացած երաշխավորին (չհակասելով երաշխիքի կամ պարտապանի գույքով ապահովման ձևին), դրամական միջոցներ փոխանցող ցանկացած հայկական կամ արտասահմանյան միջնորդ բանկին, ինչպես նաև ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրում է փոխարկել ցանկացած արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հասանելիք գումարները, մասնավորապես (առանց սահմանափակման)՝ ֆինանսավորումների մարման գումարները՝ ինչպես մայր գումարը, այնպես էլ տոկոսները, ուշացման դիմաց տոկոսները, լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության արդյունքում գոյացած այլ գումարները (այդ թվում՝ երաշխիքները և գրավադրման իրավունքը) (Հոդված 5, կետ 1):

**4.11.** ՉՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել ցանկացած արտարժույթով բանկային հաշիվներ ունենալ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև փոխարկել արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել մասնաբաժինների կամ անշարժ կամ շարժական գույքի վաճառքից գոյացած գումարներ, շահաբաժիններ և ցանկացած այլ օգուտ, կապիտալի աճ (հավելած), իրացման արտադրանք և ընդհանրապես ցանկացած եկամուտ, միջնորդավճար կամ ցանկացած բնույթի ֆոնդեր, ներառյալ, մասնավորապես՝ դատարանի վճռից կամ արբիտրաժի որոշումից բխող վնասների փոխհատուցումը, և տոկոսները, երբ այդ գումարները հիմնականում գոյանում են Հայաստանի Հանրապետությունում ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կատարած ներդրումներից կամ ցանկացած այլ գործունեությունից կամ դրանց հետ կապված կամ դրանց իրացման արդյունքում. վերոհիշյալ գործունեությունն իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի միջազգային պարտավորություններին համապատասխան (Հոդված 5, կետ 2):

**4.12.** ՉՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել անհրաժեշտության դեպքում փոխառության կամ այլ ֆինանսական գործողության, փոխարկման կամ վարկի տեսքով ուղղակի վճարումներ կատարել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող մատակարարներին կամ շահագրգիռ փոխառուի կամ շահառուի համակատարողներին, երբ դրանք օգտագործվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև օգտվել իրենց վարկերը մարելու նպատակով ուղղակի փոխհատուցումից Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող արտարժույթի միջոցով, երբ դա անհրաժեշտ է (Հոդված 5, կետ 3):

**4.13.** Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված և գործող բանկերին թույլատրել փոխարկել ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի պարտապաններից ստացած հայկական դրամը (AMD) ցանկացած արտարժույթի՝ փոխարկման գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը տվյալ բանկի կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

մից հրապարակված փոխարժեքով, ինչպես նաև թույլատրել այդ արտարժույթը փոխանցել ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին (մասնավորապես՝ Ֆրանսիայի Հանրապետությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում) (Հոդված 5, կետ 4):

**4.14.** Այն դեպքում, երբ հայկական բանկերը կհրաժարվեն կատարել արտարժույթի փոխարկում կամ փոխանցում կամ չեն ունենա բավարար չափով արտարժույթ այդ գործողությունները կատարելու համար կամ այն դեպքում, երբ որևէ այլ պատճառով բանկերին չեն թույլատրվի ՋՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին պատկանող հայկական դրամը (AMD) փոխարկել և այն փոխանցել արտասահման, Հայաստանի Հանրապետության Կառավարությունն (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջոցով) իր լիազորությունների շրջանակներում և հայկական օրենսդրությանը համապատասխան, դյուրացնի նշված հայկական դրամի (AMD) փոխարկումը արտարժույթի այդ բանկերի կողմից կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից համապատասխան փոխարկման օրվա դրությամբ հրապարակված կիրառելի փոխարժեքով, որպեսզի դրանք իրականացնեն ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին փոխանցումները (Հոդված 5, կետ 5):

**4.15.** Հայաստանի Հանրապետությունը պետք է կրի հարկային բեռը կամ ազատի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերից, տուրքերից կամ վճարումներից (ինչպիսիք են, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ մաքսատուրքեր, ավելացված արժեքի հարկ և աղբյուրի մոտ գանձվող հարկեր) ՋՖԳ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ իրականացվող միջոցառումները, առանց հակասելու Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետին, այն գործունեության նկատմամբ, որոնք նշված են Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներում և ամեն դեպքում իրականացվում են Համաձայնագրի շրջանակներում (Հոդված 6, կետ 1): Համաձայնագրով նախատեսված վերոբերյալ ազատումը կիրառվում է *inter alia*, ՋՖԳ-ի կողմից իր ցուցաբերած օժանդակության շրջանակներում (պետական կամ մասնավոր կառույցներին) ձեռք բերված արտադրանքների և գործիքների նկատմամբ (օրինակ՝ տոկոսներ, կոմիսիոն վճարներ, հնարավոր փոխհատուցումներ, շահութաբաժիններ, որպես ընկերության ղեկավար ստացած վարձատրություններ կամ բաժնեմասերի մասնակցության փոխանցումներից ստացված



հավելավճարներ), անկախ նրանից՝ դրանք վերաբերում են վարկերին (այդ թվում՝ ռիսկի ենթամասնակցություն), թե օժանդակության տեսքով կապիտալիում մասնակցությանը կամ քվազի սեփականություն հանդիսացող ֆինանսական միջոցներին (ինչպիսիք են բաժնետերերի փոխարկելի պարտատոմսեր, բաժնետիրական ընթացիկ հաշիվներ, մասնակցության փոխատվություններ, ստորադաս փոխատվություններ) կամ տրված երաշխիքներին (Հոդված 6, կետ 2):

**4.16.** ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի օգտին կատարված փաստացի, անհատական կամ այլ ապահովումները, ինչպես նաև ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից օգտագործվող անշարժ գույքի վարձակալության, վարկային պայմանագրի լիզինգի, կառավարման և փոխանցման գործարքները ազատել բոլոր տուրքերից, հարկերից, գրանցման վճարներից և այլ հարկերից և կոմիսիոն վճարներից, որոնք վճարվում են ՀՀ համապատասխան մարմիններին, ներառյալ հիպոտեքի գրանցման հայկական մարմինն կամ դրա համարժեք մարմինն (Հոդված 6, կետ 3):

**4.17.** Ապահովել, որ ՉՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին տոկոսներ, շահաբաժիններ, կոմիսիոն վճարներ, հոնորարներ կամ որևէ այլ գումար վճարող պետական կամ մասնավոր ոչ մի կառույց չպահանջի ՉՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին վճարվելիք գումարներից որևէ հարկի կամ որևէ այլ վճարի պահում կամ նվազեցում (Հոդված 6, կետ 4), քանի որ ՉՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատված են Հայաստանի Հանրապետությունում աղբյուրի մոտ գանձվող բոլոր հարկերից:

**4.18.** ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի միասնական կամ առանձնացված Ներկայացուցչությունները գրանցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում (Հոդված 7, կետ 1):

**4.19.** Համաձայնագրով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է դյուրացնել նշյալ կազմակերպությունների Ներկայացուցչության(ների) բացումը և գործունեությունը Համաձայնագրի պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ՉՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի վրա չտարածել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը (Հոդված 7, կետ 7(a)):

**4.20.** Հայաստանի Հանրապետությունում գրանցված Ներկայացուցչություններին տալ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 7-րդ կետում շարադրված դյուրացումները, արտոնությունները և անձեռնմխելիությունը (Հոդված 7, կետ 7), մասնավորապես

ա) Ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ ներմուծված կամ ձեռք բերված սարքավորումների համար բոլոր հարկերից, տուրքերից և վճարներից (ներառյալ՝ ԱԱՀ կամ համարժեք հարկերը) ազատում,

բ) Ներկայացուցչությանը պատկանող շարժական և անշարժ գույքի դատական կամ վարչական իրավագործության, բռնագրավման, առգրավման կամ հարկադիր կատարման կամ ցանկացած այլ միջամտության ձևից անձեռնմխելիություն,

գ) հանրության գերակա շահերից ելնելով՝ միջոցներ ձեռնարկելու կամ գործողություն կատարելու դեպքում ՋՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հատկացնել նախնական համարժեք փոխհատուցում ազատ փոխարկելի արտարժույթով:

**4.21.** Համաձայնագրով նախատեսվում են ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտազնա և հայկական աշխատակիցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն գործուղված ժամանակավոր առաքելությունների ու նշանակված խորհրդատուների կարգավիճակի առանձնահատկությունները (Հոդվածներ 8, 9, 10): Արտազնա աշխատակիցներին վերաբերող հիմնական դյուրացումներից ու արտոնություններից են հետևյալները

ա) նրանք օգտվում են ֆրանսիական սոցիալական ապահովության համակարգի բժշկական և կենսաթոշակային ապահովագրությունից, հետևաբար նրանց նկատմամբ այս ոլորտում չի կիրառվելու Հայաստանի Հանրապետությունում գործող կարգը, մասնավորապես՝ ազատվելու են հայկական սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գործատուների կողմից սովորաբար կատարվող սոցիալական վճարումներից (Հոդված 8, կետ 2),

բ) նրանց Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրվում է հարկերից, ներմուծման և այլ տուրքերից ազատում, արտոնություններ և առավելություններ, մասնավորապես՝ արտազնա աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվում են Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետում շարադրված առավելություններն ու արտոնությունները (Հոդված 8, կետ 4),

գ) արտազնա աշխատակիցների և նրանց ընտանիքների այն անդամների մուտքը, կեցությունը, բնակության իրավունքը, տեղաշարժվելու ազատությունը և ելքը, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվել է կացության հատուկ քարտ, հեշտացվում է (Հոդված 8, կետ 3):

ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի հայկական աշխատակիցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն գործուղված ժամանակավոր առաքելությունների ու նշանակված խորհրդատուների նկատմամբ հիմնականում չեն կիրառվելու արտագնա աշխատակիցների համար սահմանված արտոնություններն ու ազատությունները, բացառությամբ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4 (բ) կետում նշված անձեռնմխելիության, որը կիրառելի է ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից իրենց աշխատակիցներին հանձնարարված առաքելությունների համատեքստում (Հոդված 9, կետ 2, հոդված 10, կետ 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 դեկտեմբերի 2021 թվականի  
ՄԴՈ-1620



**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2018 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1620 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության իրթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1620 որոշմամբ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՊԵՎՍԿԻ ԳՐ ♦ 4(104)2021

որոշել է, որ 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ՁՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1620 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1620 որոշմամբ 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ՁՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայ-

նության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

<sup>1</sup> Համանուն իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում են, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարա-

վորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի



ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց,

այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի մեկու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչստորագրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել

և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրա-

կան դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լինեին Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդու-*

նել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եւ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

13 դեկտեմբերի 2021 թվականի



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ  
3-ՐԴ ՄԱՍԻ, 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 65-Ն ՀՐԱՄԱՆԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 դեկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝

Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 4(104)2021 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

կազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիկյանի,

Առողջապահության նախարարի ներկայացուցիչներ՝ Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության պետ Ա. Մկրտումյանի, Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ Գ. Ղուկասյանի, Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Գ. Սահակյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ նաև Օրենք) ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1992 թվականի նոյեմբերի 16-ին, ստորագրվել է Հանրապետության նախագահի կողմից 1992 թվականի դեկտեմբերի 12-ին և ուժի մեջ է մտել 1992 թվականի դեկտեմբերի 18-ից:

Օրենքի «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման բնագավառում» վերտառությամբ 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«3. Սույն հոդվածով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը»:



Օրենքը 20.1-ին հոդվածով լրացվել է 2020 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՕ-402-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2020 թվականի սեպտեմբերի 9-ից):

Օրենքի՝ «Բժշկական պարտադիր գննությունը» վերտառությամբ 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված է.

«Այն անձանց, որոնք չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական գննության, ինչպես նաև եթե բժշկական գննությամբ ախտորոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հիվանդություններից որևէ մեկը, ապա Տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ մինչև սահմանված կարգով բժշկական գննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում մինչև առողջացումը չեն թույլատրում աշխատել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Օրենքի 22-րդ հոդվածը փոփոխվել է (հոդվածի տեքստը շարադրվել է նոր խմբագրությամբ) 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-162-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ից):

Առողջապահության նախարարի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի օգոստոսի 20-իN 65-Ն հրամանն (այսուհետ՝ նաև Հրամանն) հրապարակվել է 2021 թվականի օգոստոսի 25-ին և ուժի մեջ է մտել 2021 թվականի հոկտեմբերի 1-ից: Հրամանում փոփոխություններ են կատարվել Առողջապահության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 72-Ն հրամանով, որը հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 30-ից:

Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանում փոփոխություններ են կատարվել Առողջապահության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 71-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 2021 թվականի հոկտեմբերի 1-ից): Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ/լրացումներ են կատարվել Առողջապահության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 76-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 2021 թվականի հոկտեմբերի 2-ից), հոկտեմբերի 8-ի թիվ 78-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 2021 թվականի հոկտեմբերի 14-ից, բացառությամբ նշված հրամանի առանձին դրույթների,

որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի նոյեմբերի 1-ից) և ղեկտեմբերի 1-ի թիվ 84-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 2021 թվականի դեկտեմբերի 2-ից):

**Հրամանի 1-ին կետով** (1-ին ենթակետի «բ», 2-7-րդ ենթակետերի «դ», 8-9-րդ ենթակետերի «բ», 10-12-րդ ենթակետերի «դ», 13-րդ ենթակետի «դ», «ը», «ժա», 14-15-րդ ենթակետերի «դ», 16-րդ ենթակետի «բ», 17-20-րդ ենթակետերի «դ», 21-րդ ենթակետի «բ», 22-24-րդ ենթակետերի «դ» պարբերություններ) **սահմանված են Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի`** «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՄԿ N3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» **թիվ 17-Ն հրամանի 1-24-րդ հավելվածները նոր** (համապատասխանաբար` 4.1-4.4, 8.1-8.4, 8.1-8.4, 8.1-8.4, 10.1-10.4, 5.1-5.4, 8.1-8.4, 5.1-5.4, 3.1-3.4, 8.1-8.4, 8.1-8.4, 8.1-8.4, 8.2-8.5(17.1-17.4, 26.1-26.4), 7.1-7.4, 7.1-7.4, 3.1-3.4, 7.1-7.4, 7.1-7.4, 7.1-7.4, 7.1-7.4, 5.1-5.4, 8.1-8.4, 8.1-8.4, 8.1-8.4-րդ) կետերով, իսկ **Հրամանի 2-րդ կետի 4-րդ ենթակետով` Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի** «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՄԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» **թիվ 24-Ն հրամանով հաստատված հավելվածը նոր` 8.2-8.5-րդ կետերով լրացնելու վերաբերյալ` բովանդակային առումով, ըստ էության, նույնական կարգավորումներ, որոնց համաձայն`**

«Աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ` ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության, առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (այսուհետ` սերտիֆիկատ), բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների: Սերտիֆիկատը գրանցվում է (...) գրանցամատյանում և պատճենը պահպանվում է: ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն` իր հաշվին:

(...) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված աշխատողը ներկայացնում է տվյալ պատվաստանյութի կիրառման հրահանգի համաձայն սահմանված դեղաչափերով (դեղաչափով) ամբողջական պատվաստումը հավաստող առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 2020-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (տեղեկանք) (այսուհետ՝ պատվաստման սերտիֆիկատ), որը գրանցվում է (...) գրանցամատյանում և պատճենը կցվում է աշխատողի անձնական գործին: Առաջին և երկրորդ դեղաչափերի միջև կոնկրետ պատվաստանյութի համար սահմանված ժամանակամիջոցում ամբողջական պատվաստում չունեցող աշխատողը չի ներկայացնում ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ: Կոնկրետ պատվաստանյութի համար դեղաչափերի միջև սահմանված ինտերվալից ավել ժամանակամիջոցի դեպքում երկրորդ դեղաչափը չստացած և բժշկական հակացուցում չունեցող աշխատողը ներկայացնում է ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ (...):

(...) պատվաստվելու բժշկական հակացուցումներ ունեցող աշխատողները գործատուին ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման բժշկական հակացուցումների մասին բժշկական փաստաթուղթ, տրված առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից(...):

(...) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ կատարվող պատվաստումների բժշկական հակացուցումներն են.

1) Բացարձակ հակացուցում

ա. փաստագրված՝ նախորդ դեղաչափից կամ տվյալ պատվաստանյութի որևէ բաղադրիչից առաջացած լուրջ ալերգաբանական ռեակցիա կամ անաֆիլաքսիա (տարածուն եղնջացան, սուլոդ շնչառություն, բերանի խոռոչի, կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, հիպոթենզիա և շոկ): Հաջորդ դեղաչափը չի կատարվում:

2) Ժամանակավոր հակացուցում

ա. վարակիչ կամ սոմատիկ սուր հիվանդություններ՝ միջին և ծանր ընթացքով, պատվաստումը կատարվում է առողջացումից անմիջապես հետո,

բ. քրոնիկ հիվանդությունների սրացում՝ պատվաստումը կատարվում է ռեմիսիայի շրջանում, թույլատրվում է պահպանողական թերապիայի ներքո, հարաճուն նյարդաբանական հիվանդությունների դեպքում (հարաճուն էնցեֆալոպաթիա, չկառավարվող

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(104)2021

էպիլեպսիա) պատվաստումն իրականացվում է կլինիկական երևույթների կայունացման շրջանում»:

Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի «գ», 2-7-րդ ենթակետերի «ա», 9-րդ ենթակետի «գ», 10-13-րդ ենթակետերի «ա», 13-րդ ենթակետի «գ», «թ», 14-15-րդ ենթակետերի «ա», 16-րդ ենթակետի «գ», 17-20-րդ ենթակետերի «ա», 21-րդ ենթակետի «գ», 22-24-րդ ենթակետերի «ա» պարբերություններին համապատասխան Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի Հավելված 1-ի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 2-4-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 5-6-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 7, 9-13-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելված 13-ի 14-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, Հավելված 14-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 15-18-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 19-20-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելված 21-ի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, Հավելվածներ 22-24-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը, իսկ Հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանի Հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրվել են, ըստ էության, գրեթե նույնաբովանդակ նոր խմբագրությամբ.

«(...) ախտահանման գործընթացի, ինչպես նաև անձնակազմի (...) ջերմաչափման արդյունքների, անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության, անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումային կարգավիճակի և բժշկական հակացուցումների վերաբերյալ գրանցամատյանների վարումը՝ համաձայն սույն հավելվածի Ձև(...):» (Հրամանի 1-ին կետի 8-րդ ենթակետի «բ» պարբերությանը համապատասխան Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի Հավելված 8-ը լրացվել է նոր 5.5-րդ կետով, որի դրույթները բովանդակային առումով ներդաշնակ են վերը մեջբերված դրույթի հետ):

Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններին համապատասխան գրանցամատյանների վարումը (որպես կանոն) ապահովում է ղեկավարի/տնօրենի հրամանով նշանակված պատասխանատուն:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի 2021 թվականի սեպտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողների գրավոր և բանավոր բացատրությունները, պարզաբանումները, վերլուծելով սույն գործին առնչվող իրավական ակտերը և այլ փաստաթղթեր Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները՝ Օրենքի վիճարկվող 20.1-ին հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության իրավակարգավորումների սահմանադրականության հարցի համատեքստում դիմողը բարձրացրել է հետևյալ հարցադրումը.

«Արդյո՞ք «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում հնարավոր է մի դեպքում կոնկրետ իրավունքների միջամտությունները նախատեսել օրենքով, իսկ այլ դեպքերում պարտականությունները վերապահել ենթաօրենսդրական նորմատիվային ակտերին»:

Օրենքի վիճարկվող 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորման առնչությամբ դիմողը նշում է. «Ինքնին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը կարող է կազմակերպական բնույթ ունենալ, սակայն հստակ է, որ չի կարող ուղղակի ստանձնել օրենքով կարգավորման ենթակա առարկայի տիրույթ, այն է միջամտություն իրավունքներին և/կամ պարտականությունների սահմանում: Մինչդեռ ինքնին «կանոններ» եզրույթը կարող է մեկնաբանվել այնպես, որ առաջացնի հենց համանման խնդիր և ենթաօրենսդրական մակարդակում վերածվի օրենքով հնարավոր միջամտության:

(...) Օրենսդրական կարգավորման մեջ պարտադիր կերպով պետք է կամ ձևակերպվեր կամ ընդհանուր ձևակերպումը լիներ այնպիսին, որ **բացառվեր իրավունքների հնարավոր միջամտությունը ենթաօրենսդրական իրավական ակտի կարգավիճակով**»:

Դիմողը գտնում է, որ համանման իրավակարգավորում է նախատեսում նաև Օրենքի վիճարկվող 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը՝ հնարավորություն ընձեռելով ենթաօրենսդրական ակտով միջամտել աշխատանքային իրավունքներին: Դիմողի եզրահանգ-

մամբ՝ օրենսդիրը փաստացի պահանջում է անձից կրել պարտականություններ, որոնք նախատեսված չեն օրենքով, այլ՝ Կառավարության սահմանած կարգով, որի կարգավորման առարկան և ծավալը, դիմողի կարծիքով, պարզ չեն:

Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի սահմանադրականության հարցի առնչությամբ դիմողը նշում է. «Հաշվի առնելով, որ հրամանով սահմանված կարգավորումները, որոնք տարածվում են թվով 24 հավելվածների վրա և ենթադրում են համանման նոր կարգավորումներ, որոնք նման պայմաններում հնարավոր չէ տարանջատել, դրանք վիճարկվում են ամբողջությամբ»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ դիմողը բարձրացրել է հետևյալ հարցադրումը.

«Արդյո՞ք ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կարող է իրականացվել միջամտություն աշխատանքային իրավահարաբերություններին և նախատեսել ուղղակի ծախս ենթադրող պարտականություններ»:

Դիմողը նշում է, որ վիճարկվող հրամանով աշխատողների համար նախատեսվում են երկու խումբ ուղղակի պարտականություններ, որոնց շրջանակներում միջամտություն է իրականացվում աշխատանքային իրավահարաբերություններին.

1. աշխատողները պարտավորվում են յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնել COVID-19-ի ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ (համապատասխան բացառություններով).

2. ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին:

Դիմողը շեշտադրում է. «Այսինքն այն պայմաններում, երբ ցանկացած պատվաստում ոչ թե հարկադրանքի նույնիսկ անուղղակի ձևով հարկադրանքի միջոցով պետք է իրականացվի, այլ յուրաքանչյուր անձի գիտակցված որոշման արդյունքում, վիճարկվող հրամանով անուղղակի դառնում է պարտադրանք, այն պարզ պատճառով, որ ՀՀ ում նվազագույն աշխատավարձի չափի, ինչպես նաև սոցիալական և տնտեսական վիճակի պայմաններում ՊՇՌ հետազոտման իրականացումը պարտադիր կերպով, այն էլ աշխատողի հաշվին գրեթե նույնացվում է անուղղակի պարտադրանքի հետպատվաստման մասով»:

Պատճառաբանելով, որ վիճարկվող հրամանով գործատուի վրա դրվում է ՊՇՌ հետազոտման տվյալների վերաբերյալ գրանցամատյանների վարման պարտականություն՝ դիմողը նշում է, որ հիշյալ ենթաօրենսդրական ակտով նախատեսվել են գործատու աշխատող իրավահարաբերության մասով ակնհայտ միջամտող կարգավորումներ, որոնցով աշխատողների վրա դրվել է անհամաչափ ֆինանսական բեռ այն պայմաններում, երբ դրանք պետք է կարգավորվեն պետական քաղաքականության շրջանակներում՝ որպես պետական միջոցներով ծախսային պարտականություն: Ավելին, ըստ դիմողի՝ հիշատակված կարգավորումները հանգում են անուղղակի պատվաստման հարկադրանքի:

Վերոգրյալի լույսի ներքո դիմողը խնդրում է որոշել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի Մահմանադրության 3, 25, 39, 57 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

## **2. Պատասխանողների դիրքորոշումները**

### **2.1. Ազգային ժողովի դիրքորոշումները**

Պատասխանողը, վկայակոչելով Օրենքի համապատասխան դրույթները, նշում է, որ դիմողի կողմից վիճարկվող Օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը լիազորող նորմ է, որը համապատասխանում է լիազորող նորմի Մահմանադրությամբ ամրագրված որոշակիության պահանջին, բացի այդ փոխկապակցված չէ դիմողի կողմից վիճարկվող Հրամանի հետ:

Պատասխանողը նշում է, որ Մահմանադրությամբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությունը վերապահվել է միայն Մահմանադրությամբ նախատեսված մարմիններին: Այդ մարմինները կարող են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունել միայն օրենքով հստակ նախատեսված դեպքերում, իսկ լիազորող նորմը պետք է համապատասխանի որոշակիության սկզբունքին, այսինքն՝ պետք է լինի բավականաչափ հստակ օրենսդրի կամքի բովանդակությունն ու սահմանները հասկանալու համար:

Պատասխանողի պնդմամբ՝ «Օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է որոշակիության սկզբունքին, քանի որ այդ նորմով՝

- 1) Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը
- 2) լիազորվել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով
- 3) սահմանել տվյալ հոդվածով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների (...) սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները»:

Ըստ պատասխանողի՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր հիվանդություն (վարակիչ և ոչ վարակիչ)՝ իր առանձնահատկություններով պայմանավորված, ենթադրում է կոնկրետ միջոցառումներ, օրենքով չեն կարող սահմանվել կանոններ, որոնք կիրառելի կլինեն բոլոր հիվանդությունների դեպքում:

Անդրադառնալով դիմողի՝ Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության վերաբերյալ այն պնդմանը, որ «այլ կերպ կառավարության որոշման իրավական կարգավիճակով նախատեսվում է կարգ, որի արդյունքում ուղղակի միջամտություն է տեղի ունենում մարդու աշխատանքային իրավունքներին, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով և կրկին 39-րդ հոդվածում, քանի որ փաստացի Օրենսդիրը պահանջում է անձից կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, այլ կառավարության սահմանած կարգով (...)», պատասխանողը նշում է, որ «(...) մարդու աշխատանքային իրավունքներին միջամտությունը նախատեսված է հենց նույն նորմով՝ «տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում մինչև առողջացումը չեն թույլատրում աշխատել», իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով սահմանվում է իրավունքների միջամտության ընթացակարգը»:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ պատասխանողը գտնում է. «(...) Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը ևս համապատասխանում է լիազորող նորմի՝ Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության պահանջին, բացի այդ փոխկապակցված չէ Դիմողի կողմից վիճարկվող՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի թիվ 65-Ն հրամանի հետ»:

Անդրադառնալով Սահմանադրության 39-րդ հոդվածի բովանդակությանը՝ պատասխանողը նշում է, որ այն չի կարող մեկնաբանվել շատ նեղ՝ ինչպես փորձել է դիմողը: Պատասխանողի հա-



մոզմամբ նման մոտեցման պարագայում օրենսդրությունը կդառնա չափազանց խիտ, այսինքն՝ կունենանք չափազանց մանրակրկիտ օրենքներ, որոնց բովանդակությունը պարզապես կկրկնվի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում: Ուստի՝ օրենքներով պետք է կարգավորել ընդհանուր բնույթի խնդիրները, իսկ ավելի մանրամասն կարգավորումը տեղափոխել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնցով ևս կարող են անձի համար սահմանվել որոշակի պարտականություններ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ պատասխանողը խնդրում է. «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առավազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առավազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

**2.2. Առողջապահության նախարարի դիրքորոշումները**

Պատասխանողը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման ներքոնշյալ պատճառաբանությամբ.

պատասխանողը, մեջբերելով Սահմանադրության՝ «Օրինակաւնության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի դրույթները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, որի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր, Օրենքի այն դրույթը, որի համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում իրականացնում է սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը, նշում է, որ ի կատարումն Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ Օրենքով Առողջապահության նախարարին վերապահվել է լիազորություն հաստատելու սանիտարական կանոններ, ինչը համապատասխանում

ՍԱՀՄԱՍԿՐԿՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(104)2021

է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով՝ նորմատիվ իրավական ակտի ընդունմանը ներկայացվող պահանջներին:

Պատասխանողը նշում է. «14 օրը մեկ կորոնավիրուսային ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ կամ պատվաստման սերտիֆիկատ ներկայացնելու պահանջը թեև սահմանվում է գործունեության որոշակի ոլորտներում աշխատանքներ իրականացնող անձանց համար, այդուհանդերձ դրանք չեն կարող սահմանվել աշխատանքային օրենսգրքով, քանի որ դուրս են աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներից, դրանք հանդիսանում են սանիտարական կանոններ, իրենց բովանդակությամբ համապատասխանում են սանիտարական կանոնների հասկացությանը, որոնց հաստատման լիազորությունը օրենսդիրը պատվիրակել է Առողջապահության նախարարին»:

Վկայակոչելով աշխատանքի ազատության սկզբունքն ամրագրող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ պատասխանողը նշում է. «(...) աշխատանքի ազատ ընտրության իրավունքն անձի կողմից ազատորեն աշխատանք ընտրելու կամ դրան ազատորեն համաձայնելու իրավունքն է, որին սանիտարական կանոնը որևէ ձևով չի միջամտում, առավել ևս նույն հոդվածով երաշխավորված աշխատանքից ազատման վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակում, ինչի արդյունքում գործատու-աշխատող հարաբերություններին որևէ միջամտություն չի իրականացվում և Սահմանադրության 39-րդ և 57-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում չի առաջանում»:

Պատասխանողը «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի, Օրենքի դրույթների վերլուծության արդյունքում գտնում է. «(...)սանիտարական կանոնները հաստատվում են օրենսդրությամբ, որպիսին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, հանդիսանում են օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջությունը, այսինքն՝ նաև ենթաօրենսդրական ակտով, և կրում են պարտադիր բնույթ, այսինքն՝ պարտադիր կատարման են ենթակա օրենքով նախատեսված շրջանակի համար: Բացի այդ նույն օրենքի 4-րդ հոդվածում նշված «պահանջ» բառը ինքնին ենթադրում է, որ այն հանդիսանում է պարտադիր կատարման ենթակա գործառույթ, այլ ոչ թե կամային մոտեցում

սանիտարական կանոնների պահանջների պահպանման նկատմամբ:

Այսինքն՝ սանիտարական կանոնի բնույթը, կատարման պարտադիրությունը, սուբյեկտային կազմը, որի նկատմամբ տարածվելու են սանիտարական կանոնի պահանջները, սահմանված են օրենքով, դրանք կազմող միջոցառումները այդ սուբյեկտային կազմի նկատմամբ կիրառելի են այնքանով, որքանով վերջիններս գտնվում են դրա կարգավորման տիրույթում, և դրանք չպահպանելու հետևանքները նույնպես սահմանվել են օրենքով»:

Ըստ պատասխանողի՝ «Առողջապահության նախարարի կողմից հաստատված բոլոր սանիտարական կանոնների ուսումնասիրությունից բխում է, որ դրանք պարտադիր պահպանության ենթակա պահանջներ են, ըստ էության պարտականություններ, որոնց պահպանության համար որպես երաշխիք սահմանվում է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածով դրանց արդյունքում առաջացած հետևանքների համար՝ քրեական պատասխանատվություն:

(...) Սահմանադրության 3-րդ և 39-րդ հոդվածի խախտում առկա չէ, քանի որ Առողջապահության նախարարին օրենքով վերապահված է լիազորություն հաստատելու սանիտարական կանոններ, և միաժամանակ օրենքով պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար սահմանված է պարտականություն պահպանելու այդ կանոնները»:

Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ Հրամանի հավելվածներում «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին» դրույթի սահմանմամբ խախտվել են Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջները, պատասխանողը նշել է. «(...)օրենքի լիազորող նորմի հիման վրա ենթաօրենսդրական իրավական ակտով սահմանված են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալները, որտեղ միայն պատվաստումային գործընթացն է սահմանվում անվճար, իսկ ՊՇՌ թեստավորման անվճար իրականացման մասով որևէ պարտավորություն սահմանված չէ: Վիճարկվող հրամանով նշված դրույթի սահմանումը նպատակ չի հետապնդել անձի վրա իր հաշվին ՊՇՌ թեստ իրականացնելու պարտականություն դնել, քանի որ արդեն իսկ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման հետ կապված իրավահարա-

բերությունները, այդ թվում և ծավալները հանդիսանում են այլ իրավական ակտերի կարգավորման առարկա, իսկ սույն հրամանով այն սահմանվել է որպես պարզաբանող դրույթ, որպեսզի սույն հրամանով սահմանված իրավահարաբերությունների մասնակիցների համար պարզ լինի իրենց կողմից իրականացվող գործողությունների ծավալը»:

Պատասխանողը նշել է. «(...)Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական կանոնը իմպերատիվ պահանջ չի սահմանում բնակչության բոլոր խմբերի համար, նախատեսում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնելու պահանջ, որին այլընտրանք է նախատեսում պետության կողմից երաշխավորված անվճար հիմունքներով պատվաստումային միջոցառման իրականացումը և համապատասխան սերտիֆիկատի տրամադրումը, ինչը առավել ևս որոշակի, համաչափ, կանխատեսելի է դարձնում նորմի կիրառումը և առանձնացնում է այն սուբյեկտային կազմը, որոնք խոցելի են պատվաստումային միջոցառումների իրականացման տեսանկյունից: Հետևաբար սանիտարական կանոնով սահմանված են սանիտարահամաճարակային միջոցառումների ենթակա հստակ սուբյեկտային կազմ, կոնկրետ միջոցառումներ, որոնք չեն հանդիսանում ոչ հոժարակամ կիրառվող միջոցառումներ, որպիսիք պետք է սահմանված լինեն օրենքով, ինչի արդյունքում Սահմանադրության 25-րդ հոդվածի խախտում չի առաջանում»:

Վիճարկվող հրամանով սահմանված կարգավորումներով Սահմանադրության 57-րդ հոդվածի խախտման հարցի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սահմանվել են որպես սանիտարական կանոններ. ընդ որում Հրամանով սահմանվել են նաև այլ սանիտարական կանոններ, որոնք գործունեության համապատասխան ոլորտներում ևս ենթակա են պահպանության գործատուների և աշխատողների կողմից: Առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններով հաստատված պահանջների պահպանման գործատուի պարտականությունը սահմանված է Աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածով («Աշխատանքի անվտանգ կատարման կազմակերպումը»), ինչը նշանակում է, որ Առողջապահության նախարարի

հրամանով գործատուի համար օրենքի պահանջին չհամապատասխանող որևէ պարտականություն չի նախատեսվել:

Պատասխանողի համոզմամբ՝ Հրամանով առաջարկվող միջոցառումների չեղարկումը կհանգեցնի կորոնավիրուսային հիվանդության տարածման ռիսկերի ավելացմանը, որը կնպաստի հիվանդության ցուցանիշների աճին, ավելի շատ ծանր, ծայրահեղ ծանր ձևերի գրանցմանը, Առողջապահական համակարգի գերծանրաբեռնմանը, մահվան դեպքերի ավելացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը խնդրում է մերժել դիմումը:

### 3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրումներին.

✓ արդյոք Օրենքի 20.1-ին հոդվածի վիճարկվող 3-րդ մասով ամրագրված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով նախատեսելու իրավասությունն Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին վերապահող, ինչպես նաև Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումները համահունչ են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքին.

✓ արդյոք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով անձանց համապատասխան շրջանակի համար պահանջներ սահմանելը, մասնավորապես աշխատողների համար՝ սեփական միջոցների հաշվին, յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ ներկայացնելու պահանջ սահմանելը համապատասխանում է Սահմանադրության 39-րդ հոդվածին, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով.

✓ արդյոք Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ ամրագրված իրավակարգավորումը համահունչ է Սահմանադրության 49, 57 և 82-րդ հոդվածներով ամրագրված հանրային

ծառայության անցնելու, աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքների, աշխատանքային պայմանների սահմանադրաիրավական երաշխիքներին.

✓ արդյոք Հրամանով սեփական միջոցների հաշվին յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատներ կայացնելու պահանջի ամրագրումը չի ենթադրում անհամաչափ միջամտություն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին, ինչը կարող է անուղղակիորեն հանգեցնել անձի բժշկական միջամտության ենթարկվելու (տվյալ դեպքում՝ պատվաստվելու) ազատ կամահայտնության բովանդակային առումով ձևախեղմանը.

✓ արդյոք Հրամանով կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատներ կայացնելու պահանջի մասով փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների համար բացառություն նախատեսելը համահունչ է այլոց իրավունքների, առողջության, մասնավորապես՝ միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պաշտպանման նպատակին:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

4.1. Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված իրավական պետության արժեքանական հենքերից է մարդու հիմնական իրավունքների հարգումն ու պետության կողմից դրանց արդյունավետ իրացման համար երաշխավորված նախադրյալների ամրագրումը՝ ապահովելով մարդու ազատությունների և պետական իշխանության իրականացման սահմանների հստակեցումը:

Սահմանադիրը Սահմանադրության 39-րդ հոդվածի ուժով մարդուն օժտել է գործելու ազատությամբ՝ ազդարարելով, որ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները ու չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Հիշատակված սահմանադրաիրավական դրույթը երաշխավորելու և պետական իշխանության կողմից այն անհարկի չսահմանափակելու իրավական երաշխիքներ ստեղծելու նպատակադրմամբ սահմանադիրն ամրագրել է մարդու համար պարտականությունների՝ օրենքով սահմանելու հիմնարար պահանջը:

Սահմանադրության 39 և 79-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունը որպես իրավական պետության հիմնաքար դիտարկել է իրավունքի գերակայությունը, որի երաշխավորման առանցքային բաղադրատարրն իրավական որոշակիության սկզբունքն է իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների: **Սահմանադրության 39-րդ հոդվածով ամրագրված պահանջն առ այն, որ պարտականությունները պետք է սահմանված լինեն օրենքով, ինքնանպատակ չէ, ուստի չի կարող ձևական բնույթ կրել, ինչը նշանակում է, որ մարդու համար պարտականություն սահմանող օրենքը պետք է բավարարի հստակության, կանխատեսելիության, մատչելիության որակական հատկանիշները, որպեսզի անձը կարողանա ճիշտ կողմնորոշվել օրենքով իրենից ակնկալվող/պահանջվող վարքագծի հարցում:**

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը՝ արձանագրելով, մասնավորապես, ներքոնշյալը.

ա) «(...) իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՄԴՈ-1270).

բ) «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ,

որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630).

գ) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753).

դ) «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176).

ե) «(...) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

(...) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ *կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների* միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

(...) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկխոսություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

(...) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարիությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կար-



զավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը» (ՄԴՈ-1488)։

զ) «(...) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213)։

է) «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում։ Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է։ Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1270, ՄԴՈ-1488)։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին։ Մասնավորապես, ՄԻԵԴ-ը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի։ Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր համապատասխան գործողության հետևանքները։ Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ։ Թեև սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ, անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց, իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին։ Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են

եզրույթներ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը պրակտիկայի խնդիր է (Case of The Sunday Times v. the United Kingdom, գանգատ թիվ 6538/74, 26.04.1979 թ. վճիռ, կետ 49, Case of Busuioc v. Moldova, գանգատ թիվ 61513/00, 21.03.2005 թ. վճիռ, կետ 52):

Սահմանադրության՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են **օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:**

Սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 12-ի ՄԴՈ-1530 որոշմամբ արձանագրել է. «(...) Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր վճարումների սահմանումը, հետևաբար՝ նաև դրանց տարանջատումը քաղաքացիաիրավական պարտավորություններից վերապահված են օրենսդրին: Օրենսդիրը պետք է սահմանի նաև այդ վճարումների հասկացությունը, տեսակները, ամրագրի Սահմանադրությամբ սահմանված պարտականության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ այն հաշվով, որպեսզի Սահմանադրության 39-րդ հոդվածի երկրորդ նախադասության հաշվառմամբ ըստ որի՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, հիշյալ սահմանադրական պարտականությունը կոնկրետացվի պարտադիր վճարումներին վերաբերող օրենքներում և, իր հերթին, անհրաժեշտության դեպքում մանրամասնեցվի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում: Ընդամին, հարկ է նշել, որ սահմանադրական պարտականությունները ոչ այլ ինչ են, քան որևէ հիմնական իրավունքի սահմանափակումներ, որոնք, իրենց հերթին, կանոնակարգվելով օրենքներում և դրանց հիման վրա արձակված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, հենվում են այն ելակետի վրա, որ հիշյալ օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է բավարարեն իրավական որոշակիության պահանջը»:

*Օրենքի վիճարկվող 20.1-ին հոդվածի 3-րդ մասի առնչությամբ* Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող իրավանորմով **օրենսդիրն** Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին **լիազորել է**

համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանել սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորումը հստակ է, կանխատեսելի և մատչելի, քանզի իրավահարաբերության մասնակիցների համար պարզորոշ է, որ բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների արդյունավետ իրականացման նկատառումներից ելնելով՝ պետության կողմից սահմանվող կանոնակարգումներն իրականացվելու են Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից ընդունվող ենթաօրենսդրական նորմատիվ ակտով:

Վերոգրյալի հաշվառմամբ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է իրավական որոշակիության սահմանադրական պահանջին, քանզի այն օրենքի մակարդակում կանխատեսելի է դարձնում սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանվելու հանգամանքը:**

*Օրենքի «Բժշկական պարտադիր զննությունը» վերտառությամբ 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորման առնչությամբ* Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն պետք է դիտարկել Օրենքի հիշյալ հոդվածի 3-րդ պարբերությանը նախորդող երկու պարբերություններով ամրագրված իրավակարգավորումների հետ համակարգային միասնության մեջ, քանզի նախնական և պարբերական բժշկական զննության ենթակա անձանց շրջանակը սահմանված է Օրենքի 22-րդ հոդվածի առաջին պարբերությամբ (առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները), իսկ Օրենքի հիշյալ հոդվածի 2-րդ պարբերությամբ ամրագրված է, որ բժշկական զննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը (բացառությամբ «Մենդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքի):

**Սահմանադրական դատարանը փաստում է, որ Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշ-**

կական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր զննության, և բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշումն ընդունվել է Օրենքի 22-րդ և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 20-րդ հոդվածների հիման վրա: Կառավարության հիշյալ որոշման 1-ին հավելվածի 1-ին կետին համապատասխան պարտադիր բժշկական զննության ենթակա են այդ որոշման 2-րդ հավելվածով հաստատված ցանկում նշված կազմակերպություններում աշխատանքի ընդունվող և աշխատող անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը: Որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետին համապատասխան՝ այդ որոշման 2-րդ հավելվածում ներառված կազմակերպություններում ու համապատասխան մասնագիտություններով աշխատող անձանց մինչև համապատասխան բուժման ավարտը և լաբորատոր հետազոտությունների բացասական արդյունքը չի թույլատրվում աշխատել մանրէակրության և մակաբուծակրության հայտնաբերման ու մի շարք հիվանդությունների ախտորոշման դեպքում (ցանկը սահմանված է): Որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետին համապատասխան՝ այն անձինք, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև, եթե բժշկական զննության արդյունքում ախտորոշվել է Որոշման 1-ին հավելվածի համապատասխան կետերում նշված հիվանդություններից որևէ մեկը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տարածքային կենտրոնի ղեկավարի որոշմամբ չեն թույլատրվում աշխատանքի՝ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում մինչև առողջացումը՝ համաձայն 5-րդ հավելվածի:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 22-րդ հոդվածով ամրագրված *պարտադիր բժշկական զննության պահանջը վերաբերում է առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին*, իսկ այդ առնչությամբ մանրամասները սահմանված են Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշմամբ, որն ընդունվել է նաև Օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան: Հետևաբար՝ Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ ամրագրված իրավակարգավորումներն իրավական

որոշակիության առումով խնդրահարույց չեն, հստակ են, կանխատեսելի և մատչելի:

4.2. Սույն որոշման 4.1-ին ենթակետում կատարված վերլուծության համատեքստում հաշվի առնելով, որ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն *ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով*, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով, մասնավորապես նախարարի վիճարկվող հրամանով, անձանց համապատասխան շրջանակի համար որոշակի պահանջներ սահմանելու սահմանադրականության հիմնահարցին: Մասնավորապես Հրամանով սահմանված է, որ աշխատողները որոշակի պարբերականությամբ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող կամ ամբողջական պատվաստման սերտիֆիկատ,բացառությամբ Հրամանով սահմանված դեպքերի:

Վերոնշյալի համատեքստում **Սահմանադրական դատարանը կարևորում է «օրենք» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը** միաժամանակ հաշվի առնելով, որ սահմանադիրը Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով հնարավորություն է ընձեռել օրենսդրին լիազորել Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի նոյեմբերի 27-ի ՍԴՌ-1436 որոշմամբ փաստել է. «(...) վիճարկվող դրույթների սահմանադրականությունն անհրաժեշտ է դիտարկել **«օրենքին համապատասխան սահմանված հարկեր»** արտահայտության բովանդակության լիարժեք բացահայտման համատեքստում: Այսպես սահմանադրական հիշատակված կարգավորումներում «օրենքին համապատասխան սահմանված հարկեր» դրույթի բովանդակությունից հետևում է, որ բացառապես օրենքով կարող են սահմանվել հարկերը և դրանց բովանդակությունը կազմող տարրերը: **Իսկ Սահմանադրության` «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի համատեքստում` օրենքի իրականացումն ապահովելու նպատակով Կառավարության կողմից կարող են ընդունվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, սակայն դրանք չեն կարող փոփոխել կամ լրացնել հարկի բովանդակությունը և**

հարկային պարտավորության ծավալները, ինչը նշանակում է, որ ցանկացած հասկացություն, որն օգտագործում է Օրենսգիրքը, և որի բովանդակությունից է նաև կախված հարկային պարտավորության ծավալը, պետք է ամրագրվի բացառապես օրենքով»:

Օրենքը դիտարկելով որպես պարտականության սահմանման (իրավունքի սահմանափակման) իրավական ձև՝ սահմանադիրը կանխորոշել է սահմանափակումների հիմքերը և ծավալը, ինչպես նաև բավարար չափով որոշակի լինելը: Դա ենթադրում է, որ անձի համար պարտականություն սահմանելիս օրենսդիրը պարտավոր է օրենքով բավարար հստակությամբ սահմանել այդ պարտականության հիմքը և ծավալը: Հիշատակված սահմանադրաիրավական չափորոշիչներին բավարարող օրենքի կատարումն ապահովելու նպատակով Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով օրենսդիրն օժտված է Սահմանադրությամբ նախատեսված համապատասխան մարմիններին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելը լիազորելու հայեցողությամբ, որոնք իրենց բնույթով կկոնկրետացնեն օրենքով սահմանված պարտականությունների իրավական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Հրամանը բովանդակում է *Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՄԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 17-Ն հրամանում և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՄԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 24-Ն հրամանում* կատարված համապատասխան փոփոխությունները և լրացումները: Վերը թվարկված երկու հրամաններն ընդունվել են՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 4-րդ հոդվածը և 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Օրենքի «Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները» վերառությամբ 4-րդ հոդվածով ամրագրված է. «Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (հետագայում՝ սանիտարական կանոններ) սահմանում են բնակչության համար

շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման պահանջները:

Սանիտարական կանոնների կատարումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար:

Սանիտարական կանոնների մշակման, հաստատման, վերանայման և կիրարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...):»:

**Օրենքի «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում» վերտառությամբ 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է.**

«Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (...) իր իրավասության շրջանակներում իրականացնում է (...) սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը»:

Օրենքի վկայակոչված հոդվածների իրավակարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենսդիրը հստակ սահմանել է

ա. **անձանց շրջանակը**, որոնք կրում են սանիտարական կանոնների պարտադիր պահպանման պարտականություն,

բ. **համապատասխան պարտականության հիմքը**, այն է՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,

գ. **համապատասխան պարտականության ծավալը**, որն ընդգրկում է բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման շրջանակները.

դ. **Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում**, այդ թվում՝ սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը:

Օրենսդիրը, Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին

պատվիրակելով սանիտարական կանոնների մշակումը ու հաստատումը, միաժամանակ ամրագրել է, որ **դրանք սահմանում են** բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման **պահանջները**:

**Հիշյալ պահանջները ենթադրում են պարտադիրություն, ենթաօրենսդրական մակարդակում դրանց էության մանրամասնում այն տրամաբանությամբ, որ դրանց հասցեատերերի շրջանակը չի կարող դուրս գալ Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված սուբյեկտների շրջանակից, իսկ նշված պահանջները դուրս լինել Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված հիմքից և ծավալից:**

Ինչպես վերը նշվեց Հրամանը վերաբերում է Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելուն, որոնք ընդունվել են հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 4-րդ հոդվածը և 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններով սահմանված է, որ սանիտարական կանոնները սահմանում են **կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանը ներկայացվող պահանջներ:**

Վերոնշյալի համատեքստում վերլուծության ենթարկելով Հրամանի այն կարգավորումները, որոնց համաձայն՝ համապատասխան անձինք/աշխատողները ներկայացնում են յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ (բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների), Սահմանադրական դատարանը նախ, փաստում է, որ համապատասխան անձանց/աշխատողների համար կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնելու վերաբերյալ կարգավորման հետ մեկտեղ Հրամանով նախատեսված է նրանց կողմից այլընտրանքային վարքագիծ դրսևորելու հնարավորություն նախատեսող կարգավորում իրենց



ամբողջական պատվաստումը հավաստող սերտիֆիկատի ներկայացմամբ: Այլ կերպ՝ Հրամանով համապատասխան անձանց/աշխատողների համար վարքագծի միակ տարբերակ ամրագրող անայլընտրանք նախատեսված չէ: Որպես կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատի ներկայացմանը (համապատասխան բացառություններով) այլընտրանք նախատեսված է ամբողջական պատվաստումը հավաստող սերտիֆիկատի ներկայացումը: Այլ հարց է, որ վարքագծի Հրամանով սահմանված հնարավոր տարբերակներից մեկի ընտրության պայմաններում համապատասխան փաստաթղթի ներկայացումը համապատասխան անձանց/աշխատողների համար պահանջ է, որը, ըստ էության, ենթադրում է պարտականություն:

Վերոշարադրյալի լույսի ներքո, ինչպես նաև Հրամանի հիշյալ և Օրենքի 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված կարգավորումների համադրման արդյունքներով Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով Հրամանով, համապատասխան անձանց/աշխատողների համար սահմանված վարքագծի հնարավոր ձևերից մեկի ընտրության հնարավորությունը չբացառելու պայմաններում, ըստ էության, համապատասխան պարտականություն ենթադրող պահանջի սահմանումը բխում է Օրենքի հիշատակված կարգավորումներից, քանզի այն վերաբերելի է Օրենքով ամրագրված համապատասխան անձանց շրջանակին, ընդգրկում է Օրենքով սահմանված վերը հիշատակված հիմքերը և ծավալը: Հետևաբար՝ հիշյալ հարցի համատեքստում Հրամանի վիճարկվող իրավակարգավորումները Սահմանադրության 39-րդ հոդվածին համապատասխանության առումով խնդրահարույց չեն:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում առանձնակի անդրադառնալ Հրամանի այն կարգավորմանը, որին համապատասխան ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին: Այդ առնչությամբ, մի կողմից՝ նկատի առնելով վերոնշյալը, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ ներկայացնելու պահանջի (վարքագծի նշված ձևի ընտրության պարագայում) կատարումը ենթադրում է ուղղակի ֆինանսական բեռ դրա հասցեատիրոջ աշխատողի համար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հրա-

մանով աշխատողի համար ծախս կատարելու/ֆինանսական բեռ կրելու պահանջ («իր հաշվին») սահմանելը խնդրահարույց է նշված իրավակարգավորման Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և, ըստ այդմ՝ 39-րդ հոդվածին համապատասխանության առումով: Այսպես Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*, իսկ 2-րդ մասին համապատասխան *Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր*: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի «Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները» վերտառությամբ 4-րդ հոդվածով սանիտարական կանոնների բովանդակությունը, սուբյեկտների համապատասխան շրջանակի համար այդ կանոններին հետևելու, դրանց կատարման պարտադիրությունն Օրենքի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում» վերտառությամբ 6-րդ հոդվածի 3-րդ կետով առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իր իրավասության շրջանակներում սանիտարական կանոնները մշակելու և հաստատելու լիազորությունն ամրագրող, ինչպես նաև Օրենքի այլ իրավակարգավորումներից չի բխում, որ Օրենքն Առողջապահության նախարարին վերապահել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող սուբյեկտների (աշխատողների) շրջանակը սահմանելու լիազորություն:

Հրամանով աշխատողների համար կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ ներկայացնելու պահանջ սահմանելը վերջինիս հասցեատերերի շրջանակի, պահանջի հիմքի և ծավալի առումներով խնդրահարույց չէ. մասնավորապես, **ակնհայտ է, որ պահանջի հասցեատերն աշխատողն է: Սակայն Առողջապահության նախա-**

րաբը Հրամանով պահանջի հասցեատիրոջ՝ աշխատողի վրա ՊՇՌ հետազոտությունը սեփական միջոցների հաշվին իրականացնելու պարտականություն սահմանելու համար համապատասխան լիազորություն չունի: Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակում Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ իր խնդիրը չէ օրենսդրի, իսկ օրենսդրի կողմից այլ մարմինների լիազորած լինելու դեպքում՝ վերջիններիս փոխարեն որոշել, թե ով է կրում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության դիմաց վճարման պարտականությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության դիմաց վճարման պարտականությունը, անկախ այն հանգամանքից, որ այն բնականորեն կրում է աշխատողը, այդուհանդերձ, ՊՇՌ հետազոտության ծառայությունների մատուցման իրավահարաբերություններում գույքային պարտականությունների կրողների շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի լիազորություններից: Դրանք կարգավորվում են այլ իրավական ակտերով, որոնց սահմանադրականության ստուգումը սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակից դուրս է:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հրամանի «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը համահունչ չէ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 39-րդ հոդվածի կարգավորումներին՝ նկատի առնելով, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող սուբյեկտների (աշխատողների) շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի Օրենքի համապատասխան դրույթներով սահմանված սանիտարական կանոններ հաստատելու լիազորության շրջանակից:

4.3. Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրամանի գործողությունը տարածվում է նաև «պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների» վրա (նշված բառերը փոխարինվել են «Հանրային իշխանության մարմիններում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք» բառերով՝ համաձայն Առողջապահության

նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 72-Ն հրամանի), անհրաժեշտ է համարում Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ ամրագրված իրավակարգավորման սահմանադրականության հարցը քննության առարկա դարձնել հանրային ծառայության անցնելու, ինչպես նաև աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքների սահմանադրաիրավական երաշխիքների համատեքստում: Ընդ որում՝ հաշվի առնելով Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ ամրագրված իրավակարգավորման և Սահմանադրության 57-րդ հոդվածի միջև պատճառահետևանքային ուղղակի կապի բացակայությունը (վիճարկվող իրավակարգավորման տիրույթն այլ է)՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Օրենքի վիճարկվող իրավակարգավորումը քննության առնել Սահմանադրության 57-րդ հոդվածով ամրագրված՝ աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքների ու որպես դրանց երաշխիք՝ Սահմանադրության 82-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուր աշխատողի առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման հարցի համատեքստում:

Սահմանադրության՝ «Հանրային ծառայության անցնելու իրավունքը» վերտառությամբ 49-րդ հոդվածին համապատասխան՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Սահմանադրության՝ «Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները» վերտառությամբ 57-րդ հոդվածով ամրագրված են, մասնավորապես, անձի՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքի, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության և աշխատանքային այլ սահմանադրական իրավունքները, որոնք կանխորոշիչ նշանակություն ունեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման հարցում: Ի լրումն Սահմանադրության 49 և 57-րդ հոդվածներով ամրագրված իրավական երաշխիքների՝ սահմանադրության 82-րդ հոդվածի ուժով պետական իշխանությանը պարտավորեցնում է աշխատողների համար ապահովել առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմաններ, այն է՝ երաշխավորել այնպիսի աշխատանքային միջավայր, որը կապահովի աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողի կյանքի և առողջության պահպանումը՝ հնարավորինս բացառելով վերջինիս տարաբնույթ հիվանդություններով վարակվելու/հիվանդանալու հավանականու-

թյունը: Վերոգրյալը ենթադրում է պետության անմիջական պարտականությունը՝ օրենսդրությամբ ամրագրելու աշխատողի անվտանգության և առողջության պահպանման համապատասխան իրավական կանոններ միաժամանակ, սահմանելով դրանց կատարման նկատմամբ հսկողության/վերահսկողության կառուցակարգեր, ինչպես նաև դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ:

Վերը թվարկված սահմանադրական կարգավորումներին համահունչ ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (1-ին, 3-րդ, 4-րդ հոդվածներ), այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքը (47-րդ հոդված) ամրագրում են աշխատանքային, պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման համար անվտանգ, առողջության համար անվնաս և անհրաժեշտ աշխատանքային պայմանների երաշխիքների օրենսդրական հիմքերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են հիշյալ օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք դրույթների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ *օրենսդիրը որպես աշխատանքային օրենսդրության սկզբունք, ամրագրել է յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը որպես դրա բաղադրատարր դիտարկելով անվտանգության ապահովման և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանները* (3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ) միաժամանակ, *աշխատողի համար սահմանելով աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները պահպանելու*, ինչպես նաև *մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին գործատուին անմիջապես տեղեկացնելու* (216-րդ հոդված), իսկ *գործատուի համար՝ անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ ապահովելու պարտականություն* (217-րդ հոդված): ՀՀ աշխատանքային օրենսգրքի 242-րդ հոդվածին համապատասխան՝ աշխատողների անվտանգությունը և առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպան-

ման համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական և այլ միջոցառումներ: Նույն օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ աշխատանքը պետք է կազմակերպվի աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, *հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների*, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորման առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ **Օրենքի 22-րդ հոդվածը առանձին մասնագիտությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների՝ նախնական և պարբերական բժշկական զննություն անցնելու պարտականության հետ կապված հարաբերությունները կանոնակարգում է՝ ելնելով Սահմանադրության 82 և 85-րդ հոդվածներով երաշխավորված՝ առողջության համար անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու պետության սահմանադրաիրավական պարտավորությունից բժշկական զննությունների անցկացման կարգի սահմանումը վերապահելով Կառավարությանը:**

Առանձին (որոշակի) մասնագիտությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների՝ նախնական և պարբերական բժշկական զննության չենթարկվելու, ինչպես նաև բժշկական զննությամբ նրանց մոտ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հիվանդություններից որևէ մեկի ախտորոշման դեպքերում Տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպ-

քում մինչև առողջացումն աշխատել չթույլատրելու վերաբերյալ Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը (մանրամասնված է Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշմամբ) Սահմանադրական դատարանի գնահատմամբ իրավաչափ է, քանզի համապատասխան օրենսդրական պահանջը կոչված է աշխատանքային միջավայրում ապահովելու անձանց Սահմանադրության 85-րդ հոդվածով երաշխավորված՝ առողջության պահպանման իրավունքը՝ բացառելով/նվազեցնելով անձանց զանազան հիվանդություններով վարակվելու/հիվանդանալու և դրանք տարածելու հավանականությունը, ինչպես նաև երաշխավորելու վարակված/հիվանդ անձանց առողջանալու համար անհրաժեշտ պայմանները՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների (անաշխատունակության հիմքով ծագող) պահպանմամբ: Հիշյալ իրավակարգավորմամբ օրենսդիրը հոգում է ինչպես անձի անձնական, այնպես էլ նրա աշխատանքային միջավայրում ընդգրկված անձանց առողջության պահպանման խնդիրները:

Դիմողի կողմից բարձրացված այն հարցի առնչությամբ, որ «(...) կառավարության որոշման իրավական կարգավիճակով նախատեսվում է կարգ, որի արդյունքում ուղղակի միջամտություն է տեղի ունենում մարդու աշխատանքային իրավունքներին(...)», Սահմանադրական դատարանը սույն որոշման 4.1-ին և 4.2-րդ ենթակետերում արտացոլված վերաբերելի արձանագրումներից գատ, փաստում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը համահունչ է Սահմանադրության 57 և 85-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումներին, քանզի սահմանադրի կամքը՝ անձի առողջության համար անվտանգ աշխատանքային միջավայր երաշխավորելը, օրենսդիրը կենսագործել է Օրենքի 22-րդ հոդվածով՝ աշխատողների համար համապատասխան պարտականություն սահմանելով և Կառավարությանը պատվիրակելով սահմանել այդ պարտականության պատշաճ իրականացումն ապահովող կանոնակարգումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ պարբերությամբ ամրագրված իրավակարգավորումը Սահմանադրության 49, 57 և 82-րդ հոդվածներին համապատասխանության առումով խնդրահարույց չէ:

4.4. Սահմանադրության 3-րդ հոդվածը, մարդուն հռչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիս արժանապատվությունը դի-

տարկում է որպես սահմանադրական արժեհամակարգի հիմնաքար՝ հանրային իշխանությանը պարտավորեցնելով ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը՝ միաժամանակ սահմանափակելով հանրային իշխանությանը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612 որոշմամբ արձանագրել է. «(...) Մահմանադրությունը, մարդուն ճանաչելով բարձրագույն արժեք՝ կանխորոշել է պետության պարտականությունը՝ հարգել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները (հոդվ. 3): Այս հիմնարար սկզբունքի հետ անխզելիորեն կապված է մարդու արժանապատվության անօտարելի լինելու սկզբունքը:

Սահմանադրության 3, 23 և 42-րդ հոդվածների կարգավորումների բովանդակությունից բխում է, որ մարդու արժանապատվությունը, լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները»:

Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշման մեջ նշված է.«Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն»:

Սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում մարդու արժանապատվությունն է, որի վրա խարսխվում են վերջինիս բոլոր հիմնական իրավունքներն ու ազատությունները: Մարդու կամքի ազատ արտահայտումը՝ որպես նրա արժանապատվության անքակտելի տարր, պետք է պաշտպանվի և հարգվի պետության կողմից: Հանրային իշխանության կողմից մարդու ազատ կամահայտնությանը ոչ իրավաչափ ուղղակի կամ անուղղակի ներգործություն ոտնահարում է մարդու արժանապատվությունը, ուստի՝ անառարկելիորեն պետք է բացառվի:



Կորոնավիրուսային համաճարակի դեմ պայքարում պետության քաղաքականության կիզակետում բնակչության առողջության պահպանման սահմանադրաիրավական պահանջն է, որի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ խնդրո առարկա ոլորտում մշակվող և իրացվող իրավակարգավորումների հիմքում պետք է ընկած լինեն, մասնավորապես, ներքոնշյալ մոտեցումները.

- մարդու՝ որպես բարձրագույն արժեքի, մարդու անօտարելի արժանապատվության՝ որպես նրա հիմնական իրավունքների և ազատությունների անբակտելի հիմքի, գերակայությունը.

- մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու հանրային իշխանության պարտականության ու մարդու առողջության պահպանման իրավունքի ներդաշնակեցումը.

- անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, ինչպես նաև ազատ կամաարտահայտության երաշխավորված պաշտպանությունը.

- արդյունավետ, մատչելի, պետության սահմանադրաիրավական պարտավորությունների շրջանակներում բժշկական միջամտության (այդ թվում՝ պատվաստման) պայմանների ստեղծումը:

Հրամանի ՊՇՌ հետազոտությունն *աշխատողի միջոցների հաշվին* իրականացնելու պահանջն ամրագրող կարգավորման (առանձին վերցված) Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 39-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխանության հարցին Սահմանադրական դատարանն անդրադարձել է սույն որոշման 4.2-րդ ենթակետում: Դրանից բացի, Սահմանադրական դատարանը կարևորում է *Հրամանով՝ աշխատողի կողմից, սեփական միջոցների հաշվին, յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ (այսուհետ նաև՝ թեստավորում) կամ պատվաստման սերտիֆիկատ ներկայացնելու պահանջ սահմանող կարգավորումների (համակարգային կապի մեջ) ղիտարկումը՝ բացահայտելու արդյոք սեփական միջոցների հաշվին թեստավորվելու պահանջի ամրագրումն անհամաչափորեն չի միջամտում անձի Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքին, ինչը կարող է անուղղակիորեն հանգեցնել անձի բժշկական միջամտության ենթարկվելու (տվյալ դեպքում պատվաստվելու) ազատ կամահայտնության բովանդակային առումով ձևախեղմանը և դրանով իսկ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի խախտմանը:*

Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: 2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սահմանադրության 25-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հարցի համատեքստում Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունվարի 30-ի ՍԴՈ-1504 որոշման մեջ արձանագրված է. «(...) նշված իրավունքին որևէ միջամտություն կարող է տեղի ունենալ բացառապես Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հիմքերով՝ պահպանելով նման միջամտության համաչափության պահանջը: Մնացած բոլոր դեպքերում բժշկական միջամտությունը կարող է տեղի ունենալ բացառապես նման միջամտության ենթարկվող անձի համաձայնությամբ:

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին բժշկական միջամտությունը բացառապես նման միջամտության ենթարկվող անձի համաձայնությամբ իրականացնելու սահմանադրական պահանջը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը գիտակցում է իր հոգեկան առողջության վիճակը, հստակ հասկանում և կանխատեսում է իր հոգեկան առողջությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը մեջբերվածը հավասարապես վերաբերելի է **անձի ոչ միայն հոգեկան, այլև ֆիզիկական առողջությանը, քանզի անձի բժշկական ցանկացած տեսակի միջամտության ենթարկվելու վերաբերյալ համաձայնությունը պետք է ձևավորվի այնպիսի պայմաններում, երբ անձը գիտակցում է իր առողջության (ֆիզիկական և հոգեկան) վիճակը, տվյալ միջամտության կամ դրա բացակայության արդյունքում վրա հասնելիք հնարավոր հետևանքները, կանխատեսում է դրանք, իրազեկված է դրանց մասին, ինչի արդյունքում ազատ կամահայտնությամբ և աներկբա տալիս է իր համաձայնությունը՝ ենթարկվելու համապատասխան միջամտության:**

«Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագրի (ընդ. 2005թ. հոկտեմբերի 19-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերանսի բանաձևով) 6-րդ հոդվածի 1-ին մասով որպես

սկզբունք, ամրագրված է, որ կանխարգելող, ախտորոշող կամ թերապևտիկ նպատակներով իրականացվող ցանկացած բժշկական միջամտություն պետք է իրականացվի միայն համապատասխան անձի նախնական, ազատ և տեղեկացված համաձայնությամբ՝ պատշաճ տեղեկատվության հիման վրա: Նշված հոչակագրի 27-րդ հոդվածին համապատասխան հոչակագրի սկզբունքների կիրառությունը սահմանափակելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դա պետք է արվի օրենքների հիման վրա, այդ թվում՝ այն օրենքների, որոնք ընդունվել են հանրության առողջության պահպանության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ցանկացած այդպիսի օրենք պետք է համապատասխանի մարդու իրավունքների ոլորտում միջազգային նորմերին: Հոչակագրի 28-րդ հոդվածին համապատասխան հոչակագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ այս կամ այն պետությանը, խմբին կամ առանձին անհատին որևէ հիմք է տրվում՝ զբաղվելու մարդու իրավունքները, հիմնական ազատությունները և մարդկային արժանապատվությունը նվաստացնող ցանկացած գործունեությամբ կամ կատարելու այդպիսի ցանկացած գործողություն:

*Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ 2021 թվականի հունվարի 27-ի «Covid-19 պատվաստանյութեր. էթիկական, իրավական և գործնական նկատառումներ» վերտառությամբ թիվ 2361 (2021) բանաձևում, մասնավորապես, նշված է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կառավարությունները պետք է ապահովեն, որ սեփական երկրի քաղաքացիները տեղեկացված լինեն, որ պատվաստումը պարտադիր չէ, և որևէ մեկը չի կարող ենթարկվել քաղաքական, սոցիալական կամ այլ ճնշման պատվաստվելու համար, եթե նրանք չեն ցանկանում պատվաստվել: Պետությունների կառավարությունները պետք է ապահովեն, որ ոչ ոք խտրականության չենթարկվի պատվաստված չլինելու համար՝ առողջական հնարավոր ռիսկերի կամ պատվաստվել չցանկանալու պատճառով (7.3.1, 7.3.2-րդ ենթակետեր):*

*Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ 2021 թվականի հունիսի 22-ի «Covid-ի անցագրեր կամ վկայագրեր. հիմնարար իրավունքների պաշտպանություն և իրավական հետևանքներ» վերտառությամբ թիվ 2383 (2021) բանաձևում, մասնավորապես, նշված է, որ եթե պատվաստվելուց հրաժարվելու հետևանքներն այնքան ծանր են, ներառյալ՝ ազատություններից օգտվելու սահմանափակումները, որ բացառվում է ընտրության հնարավոր*

րությունը, դա կարող է համարժեք լինել պարտադիր պատվաստմանը (10-րդ կետ, նաև 13.3.8-րդ ենթակետ):

Նկատի առնելով, որ Հրամանի վիճարկվող իրավակարգավորումները ենթադրում են *անձի երկրնտրելի վարքագիծ, այն է՝ որոշակի պարբերականությամբ սեփական միջոցների հաշվին թեստավորման կամ պատվաստման (անվճար հիմունքներով) սերտիֆիկատի ներկայացումը*, Սահմանադրական դատարանն **անհրաժեշտ է համարում անձի/աշխատողի՝ սեփական միջոցների հաշվին թեստավորվելու պահանջը դիտարկել սեփականության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափանիշների համատեքստում՝ բացահայտելու համար՝ արդյոք անձի/աշխատողի վրա ֆինանսական բեռ դնելն անուղղակիորեն կարող է հանգեցնել «ներգործության» անձի/աշխատողի պատվաստման եղանակով բժշկական միջամտության ենթարկվելու ազատ կամահայտնությանը:**

Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերստառությամբ գլխի 10-րդ հոդվածի 1-ին մասը ելակետային նշանակություն ունի սեփականության հարաբերությունների սահմանադրաիրավական կանոնակարգման առումով: Սեփականության իրավունքի ճանաչումը և պաշտպանությունը պետության հիմնարար պարտականությունն է: Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ յուրաքանչյուրի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունների եռամիասնությունը կազմում է սահմանադրական նշված իրավունքի բովանդակային հիմքը:

Սահմանադրական դատարանի 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման մեջ արձանագրված է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշման մեջ նշված է. « (...) ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավագործությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության

հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն *իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը*(...):

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ հնարավոր է համարել միջամտությունը սեփականության իրավունքին: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշման մեջ նշված է.« (...) ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ նշված պայմանների առկայությունն անհրաժեշտ է իրավունքն իրավաչափորեն սահմանափակելու համար»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրությոները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն

իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին, արձանագրել է, որ ԹԻՎ 1 արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ, նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությունն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Միաժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, երբ այն տեղի է ունեցել ի շահ հանրության: Միջամտությունն արդարացված համարվելու համար պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և լինի համաչափ: Եվրոպական դատարանը որոշում է՝ արդյոք արդար հավասարակշռություն է ապահովվել հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (Beyeler v. Italy, 05.01.2000 թ. վճիռ, §98, §107; Sporrang and Lonroth v. Sweden, 23.09.1982 թ. վճիռ, §61, §69):

Հրամանի՝ համապատասխան իրավակարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն դեպքում, երբ անձը (աշխատողը) սահմանված վարքագծի տարբերակներից ընտրում է ոչ թե պատվաստման, այլ իր միջոցների հաշվին թեստավորման և, ըստ այդմ, համապատասխան սերտիֆիկատ ներկայացնելու տարբերակը, ապա դա հանգեցնում է անձի սեփականության իրավունքին միջամտության, որպիսի պայմաններում հարկ է պարզարանել, արդյոք այդ դեպքում չի խախտվում սեփականության իրավունքի սահմանափակման համաչափության սահմանադրական սկզբունքը:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք

լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՄԴՈ-1546 որոշմամբ, մասնավորապես, փաստել է նաև, որ համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների **սահմանափակումների սահմանափակումն է** մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն: Սահմանադրական դատարանն իր հիշյալ որոշմամբ փաստել է նաև, որ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման **նպատակի լեգիտիմությունը**, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) **պիտանիությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) **անհրաժեշտությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) **համարժեքությունը** սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշմամբ բացահայտել է համաչափության սկզբունքի տարրերից յուրաքանչյուրի բովանդակությունը. «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի *սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է*, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում (...), օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝

հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, *ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:*

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով *օրենսդիրն ի գործ է հասնել հետապնդվող նպատակին*, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված *պիտանի և անհրաժեշտ միջոցը* համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության *սահմանադրական նշանակության* հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ *չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի* նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ **որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն**, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդամին, **որքան ավելի ինտենսիվ է սահմանա-**



**փակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:**

Համաչափության սկզբունքին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը՝ այն մեկնաբանելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության սահմանների որոշման նպատակով: «Համաչափության սկզբունքն իրենից ներկայացնում է «արդարացի հավասարակշռության որոնում հասարակության շահերով թելադրված պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության պահանջների միջև» (Case of Soering v. the United Kingdom, զանգատ թիվ 14038/88, 07.07.1989 թ. վճիռ, §89): « (...) դատարանը պետք է որոշի, թե արդյոք պահպանված է հասարակության շահերի և անհատի հիմնական իրավունքների պաշտպանության միջև համաչափությունը» (Case of the Former King of Greece & others v. Greece, զանգատ թիվ 25701/94, 23.11.2000 թ. վճիռ, § 89): ՄԻԵԴ-ը կարևորել է հետապնդվող նպատակի և կիրառվող միջոցի միջև համաչափության պահպանման հարցը (Case of Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium, զանգատ թիվ 17849/91, 20.11.1995 թ. վճիռ, § 38):

Անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը պաշտպանվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո (Case of X and Y v. the Netherlands, զանգատ թիվ 8978/80, 26.03.1985 թ. վճիռ, § 22): Մարդու մարմինը վերաբերում է նրա անձնական կյանքի ամենաինտիմ կողմին: Այսպիսով, հարկադիր բժշկական միջամտությունը, անգամ, եթե այն աննշան է, համարվում է միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության ներքո գտնվող նշված իրավունքին (Case of Solomakhin v. Ukraine, զանգատ թիվ 24429/03, 15.03.2012թ. (24.09.2012թ.), § 33, Case of Y.F. v. Turkey, զանգատ թիվ 24209/94, 22.07.2003թ. (22.10.2003թ.), § 33, X v. Austria, թիվ 8278/78, 13.12.1979 թ. Հանձնաժողովի որոշում, Որոշումներ և զեկույցներ (DR) 18, § 155, Acmanne and Others v. Belgium, թիվ 10435/83, 10.12.1984 թ. Հանձնաժողովի որոշում, (DR) 40, § 254): Այդ առնչությամբ պարտադիր պատվաստման (սույն գործի շրջանակներում պատվաստման պարտադիրության հարցը քննության առարկա չի հանդիսանում)՝ որպես բժշկական հարկադիր միջամտության հարց, ՄԻԵԴ-ը նշել է, որ դա նշանակում է միջամտություն անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը ներառող՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին (Case of Vavřička and others v. The Czech Republic, զանգատ թիվ 47621/13, 08.04.2021թ., § 263, Salvetti v. Italy (dec.), զանգատ թիվ

42197/98, 09.07.2002թ. և Matter v. Slovakia, գանգատ թիվ 31534/96, § 64, 05.07.1999թ.):

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին «միջամտությունը համարվում է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, եթե այն համապատասխանում է «անհետաձգելի սոցիալական պահանջին», իրավասու պետական մարմինների կողմից նշված պատճառները «բավարար են և ողջամիտ», և եթե այն համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին» (Case of Vavřička and others v. The Czech Republic, գանգատ թիվ 47621/13, 08.04.2021թ., § 273): Միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ (բնակչության առողջության պաշտպանությունը և հանրային անվտանգության ապահովումը և այլն) և լինի անհրաժեշտ: «Դատարանն արձանագրում է, որ նման միջամտությունը հստակ նախատեսված է եղել օրենքով և հետապնդել է առողջության պաշտպանության իրավաչափ նպատակ: Դատարանի կարծիքով դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիությանը միջամտությունն արդարացված էր, քանի որ ուղղված էր հանրային առողջության պաշտպանությանը և վարակի տարածման կանխարգելմանը» (Case of Solomakhin v. Ukraine, գանգատ թիվ 24429/03, 15.03.2012թ. (24.09.2012թ.), §§ 35, 36):

Համաչափության սկզբունքը դիտարկելով սեփականության իրավունքի սահմանափակման հարցի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցները պետք է համաչափ լինեն հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական նպատակին: Այդ առումով, կիրառված միջոցի և սահմանված նպատակի միջև համաչափության որոշումը յուրաքանչյուր գործով բարդ գործընթաց է, քանզի յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցի **պիտանիությունը, անհրաժեշտությունը և համարժեքությունը հետապնդվող նպատակի նկատմամբ:**

Օգտագործվող միջոցը կարող է պիտանի համարվել, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն, իսկ հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ արդյունավետ եղանակով, որն առավել նվազ կսահմանափակի հիմնական իրավունքը:

Քննարկվող պայմանների առկայությունն անհրաժեշտ է բացահայտել ներքոնշյալ հարցադրումների միջոցով.

- արդյոք հիմնական իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցի կիրառմամբ հնարավոր է հասնել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակին: *Անձի (աշխատողի) սեփականության իրավունքին միջամտությունն իրականացվում է՝ ելնելով բնակչության առողջության, մասնավորապես՝ միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պահպանման նկատառումներից.*

- արդյոք նպատակն ունի առավել կարևոր նշանակություն, քան սահմանափակվող իրավունքը: *Թեստավորման պահանջի սահմանման միջոցով հնարավոր է բացահայտել աշխատողի վարակակիր լինելու հանգամանքը, միջոցներ ձեռնարկել վերջինիս արդյունավետ բուժումը կազմակերպելու նպատակով և կանխարգելել վարակի տարածումն այլ անձանց շրջանում.*

- արդյոք սահմանված նպատակին չէր կարելի հասնել ավելի արդյունավետ միջոցով: *Թեստավորումը հնարավորություն է ընձեռում ողջամիտ ժամկետում բացահայտել անձի՝ վարակակիր լինելու հանգամանքը և ձեռնամուխ լինել վերջինիս մեկուսացմանը:*

Սահմանադրության 1-ին հոդվածի ուժով սահմանադիրը Հայաստանի Հանրապետությունը հռչակել է իբրև սոցիալական պետություն՝ այդպիսով հանրային իշխանությանը պարտավորեցնելով պատշաճ պետական քաղաքականություն մշակելու և իրականացնելու եղանակով ապահովել բնակչության արժանապատիվ գոյության պայմաններ, ինքնադրսևորման համար այնպիսի միջավայր, որը հնարավորություն կընձեռի անհատներին օգտվել անհրաժեշտ կենսական հնարավորություններից: **Պետության սոցիալական սահմանադրաիրավական բնույթը ենթադրում է սոցիալական պաշտպանվածության ապահովման համար անհրաժեշտ համապատասխան ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծում ու կենսագործում, որոնք կոչված են երաշխավորել, նախևառաջ, հասարակության խոցելի խմբերի իրավունքների արդյունավետ իրացումը: Իրեն սոցիալական հռչակած պետության ներսում անձը իր ողջամիտ սպասելիքների և պահանջումների բավարարման առումով, մշտապես պետք է զգա պետության հոգածությունը:**

Սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-792 որոշման մեջ նշել է. «ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1. հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիա-

լական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության՝ սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում»:

Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1142 որոշման մեջ նշված է. «Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: **Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:**

(...)սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող»:

Վերոնշյալի համատեքստում **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նկատի առնելով Հրամանով սահմանված թեստավորման պարբերականությունը (Հրամանով յուրաքանչյուր 14 օրը մեկ, սկսած սույն թվականի դեկտեմբերի 2-ից յուրաքանչյուր 7 օրը մեկ), Հայաստանի Հանրապետությունում թեստավորման գնեքի/արժեքների (ի կատարումն Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի ՄԴԱՈ-236 աշխատակարգային որոշմամբ սահմանված պահանջի՝ համաձայն Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) ախտորոշման «ՊՇՈ հետազոտության անցկացման համար**

գործող նվազագույն գինը 5,000 դրամ է, իսկ առավելագույն գինը՝ 15,000-ից 40,000 դրամ») և նվազագույն աշխատավարձի չափի («Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված է 68000 դրամ) միջև անհրաժեշտ համամասնականության/համաչափության պահպանման առումով առաջ է գալիս խնդիր (հանրային ծառայության մեջ գտնվող, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերի հիման վրա որոշակի գործունեությամբ զբաղվող անձանց/աշխատողների (Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի առաջին կետի 1-24-րդ ենթակետերում նշված խմբավորմանը, ինչպես նաև Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանին համապատասխան) աշխատավարձի չափերին առնչվող հարցի համատեքստում՝ ի կատարումն Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴԱՌ-235 աշխատակարգային որոշմամբ սահմանված պահանջի՝ համաձայն Վարչապետի աշխատակազմից ստացված տեղեկատվության՝ Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով (հրամանի առաջին կետի 1-24-րդ ենթակետերում նշված խմբավորմանը համապատասխան) նախատեսված աշխատողներից մինչև 68000 դրամ աշխատավարձ/եկամուտ են ստանում 129677-ը, 68001-ից 100000 դրամ՝ 201604-ը, 100001-ից 150000 դրամ՝ 117395-ը...) միաժամանակ, արձանագրելով խնդիրների առկայությունը կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության գնային քաղաքականության ոլորտում (Առողջապահության նախարարը պատասխան գրությամբ հայտնել է, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության գնային քաղաքականությունը դուրս է Առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակներից, քանի որ թեստավորումն իրականացվում է մասնավոր լաբորատորիաների կողմից):

Նվազագույն աշխատավարձի չափով/ոչ մեծ եկամուտ ստացող (սոցիալապես խոցելի կարգավիճակում գտնվող) անձանց/աշխատողների վրա կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատը ներկայացնելու պահանջից բխող ֆինանսական բեռ դնելու և նրանց կողմից այն կրելու օբյեկտիվ անհնարինության հանգամանքով պայմանավորված, վերջիններին կողմից,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

իրենց ազատ կամահայտնությանը հակառակ, բժշկական միջամտությունը պատվաստումը, և ըստ այդմ, պատվաստման սերտիֆիկատը ներկայացնելու տարբերակն (պատվաստման անուղղակի պարտադրանք) ընտրելու հնարավորության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակին, որպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետությունում առաջացել է արտակարգ իրավիճակ, որը ենթադրում է կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացում միտված բնակչության առողջության, մասնավորապես միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պահպանմանը: Դրան են միտված նաև Հրամանով սահմանված համապատասխան կարգավորումները, որոնց համաձայն՝ անձր/աշխատողն ունի վարքագծի թույլատրելի ձևերի՝ թեստավորման կամ պատվաստման, միջև ընտրություն կատարելու հնարավորություն (ՀՀ օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով պարտադիր պատվաստման՝ որպես բժշկական հարկադիր միջամտության, վերաբերյալ իրավակարգավորումներ սահմանված չեն): Ընդ որում, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով պատվաստումներն իրականացվում են անվճար. այլ կերպ՝ պատվաստման ծախսերը կրում է պետությունը: Այդ առնչությամբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման տեսակ սահմանված է առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, որը ներառում է նաև իմունականխարգելումը՝ երաշխավորված պետության կողմից: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ, որն ընդունվել է վերոնշյալ օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան:

Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի «Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունական-

խարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՄԿ N 3.3.1.003-20 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի N 20-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետին համապատասխան՝ պլանային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ պետության կողմից ձեռք բերված պատվաստանյութերով, իսկ մնացած բոլոր դեպքերում պատվաստումներն իրականացվում են վճարովի հիմունքներով:

Տվյալ դեպքում պետության կողմից պատվաստումային գործընթացի անվճար հիմունքներով (պետական պատվերի շրջանակներում) իրականացման երաշխավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կորոնավիրուսային հիվանդությունը հնարավոր է կանխարգելել և դրա տարածումը կառավարելի պահել պատվաստումների միջոցով: Մինչդեռ թեստավորման նպատակն անձի մոտ կորոնավիրուսային հիվանդության առկայությունը կամ բացակայությունն ախտորոշելն է:

Այսպիսով, Հրամանով անձին/աշխատողին ընձեռնված է հնարավորություն անվճար հիմունքներով պատվաստվել, ինչը նվազեցնում է պատվաստված անձի կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու, ինչպես նաև այլոց վարակելու ռիսկերը՝ դանդաղեցնելով կորոնավիրուսային հիվանդության տարածման ընթացքը, նվազեցնելով պետության Առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունը: Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ առկա բոլոր պատվաստանյութերը կանխարգելում են հիվանդության ծանր, ծայրահեղ ծանր ձևերը և մահվան դեպքերը, կրճատում հոսպիտալացումների դեպքերը (<https://www.who.int/groups/strategic-advisory-group-of-experts-on-immunization/covid-19-materials>): Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող COVID-19-ի դեմ բոլոր պատվաստանյութերն ունեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Եվրոպական դեղերի գործակալության, ինչպես նաև առանձին երկրների կողմից տվյալ ոլորտը կանոնակարգող կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակներում կիրառման թույլտվություն:

Որպես անվճար հիմունքներով պատվաստմանն այլընտրանք՝ նախատեսված է վճարովի հիմունքներով թեստավորումը: Առողջա-

պահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանի առաջին կետի 1-24-րդ ենթակետերում նշված խմբավորմանը, ինչպես նաև Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանին համապատասխան բոլոր աշխատողների թեստավորման բեռը պետությունը չի կրում նաև այն պատճառով, որ կրում է պատվաստման ծախսերը: Հրամանի անձի/աշխատողի կողմից թեստավորման(բացասական արդյունքով) սերտիֆիկատ ներկայացնելու պահանջն ինքնանպատակ չէ. համապատասխան կարգավորման նպատակն այլոց, մասնավորապես միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պահպանումն է: Այդ առնչությամբ, թեստավորման միջոցով, դրա արդյունքներով վարակակիր անձանց վաղ հայտնաբերումը և նրանց մեկուսացումը հնարավորություն է ընձեռում ընդհատել վարակի փոխանցման շղթան, նվազեցնել հիվանդացության միջին օրական և միջին շաբաթական ցուցանիշները՝ նպաստելով Հանրապետությունում համաճարակային իրավիճակի կայունացմանը:

Ելնելով վերնշյալից Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հրամանին համապատասխան՝ առանձին խումբ աշխատողների(առանձին սոցիալական խմբերի) համար (կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատը ներկայացնելու պահանջից բխող ֆինանսական բեռի մասով) հատուկ կարգավորումներ նախատեսելը պետության հայեցողության և հնարավորությունների տիրույթում է, ինչն առհասարակ չի բացառում պետության կողմից ֆինանսական բեռի/ծախսերի ստանձնումը՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ գործոններով (այդ թվում՝ նվազագույն աշխատավարձի չափով):

Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի պայմաններում Հայաստանի Հանրապետությունում առաջացած իրավիճակը ենթադրում է կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը նաև հանրային աջակցություն՝ սոցիալական համերաշխության օրակարգով:

4.5. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ արդյոք Հրամանով կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնելու պահանջի



մասով փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների համար բացառություն նախատեսելը համահունչ է այլոց իրավունքների, առողջության, մասնավորապես՝ միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պաշտպանման նպատակին: Այդ առնչությամբ, **Հրամանով թեստավորման և, ըստ այդմ, համապատասխան սերտիֆիկատ ներկայացնելու պահանջի մասով փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների համար նախատեսված բացառությունն արդարացնող հիմնավորումներ Սահմանադրական դատարանին չեն ներկայացվել: Սահմանադրական դատարանը նկատում է, որ նշված կատեգորիաների անձինք ևս պոտենցիալ վարակակիր են, և նրանց կողմից ՊՇՌ թեստի պատասխանի բացակայությամբ պայմանավորված՝ կարող է փտանգվել այլոց, մասնավորապես՝ միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջությունը: Տվյալ դեպքում խնդիրը դիտարկվում է փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների բացառապես թեստավորման, այլ ոչ պատվաստման հարթությունում՝ նկատի ունենալով, մի կողմից՝ Հրամանով սահմանված այն կարգավորումը, որին համապատասխան պատվաստվելու բժշկական հակացուցումներ ունեցող աշխատողները գործատուին ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման բժշկական հակացուցումների մասին բժշկական փաստաթուղթ՝ տրված առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից, մյուս կողմից՝ նաև հղիների պատվաստման հետ կապված որոշակի ռիսկերը:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հրամանի համար հիմք ծառայած օրենքով և Հրամանով հետապնդվող սահմանադրական նպատակին՝ այլոց իրավունքների, առողջության, մասնավորապես՝ միևնույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց առողջության պաշտպանմանն ուղղված միջոցառումը՝ համապատասխան սերտիֆիկատ (բացասական արդյունքով) ներկայացնելու պահանջը, պետք է վերաբերի նաև փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողներին և հղիներին: Ընդ որում՝ նկատի ունենալով, որ, մասնավորապես, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների մասով (Հրամանի համաձայն՝ բացարձակ հակացուցումը փաստագրված նախորդ դեղաչափից կամ տվյալ պատվաստանյութի որևէ բաղադրիչից առաջացած լուրջ ալերգաբանական

ռեակցիան կամ անաֆիլաքսիան է (տարածուն եղնջացան, սուլոդ շնչառություն, բերանի խոռոչի, կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, հիպոթենզիա և շոկ), Հրամանին համապատասխան՝ խոսքը վերաբերում է պատվաստանյութի նախորդ դեղաչափից կամ տվյալ պատվաստանյութի որևէ բաղադրիչից առաջացած հետևանքներին, ինչպես նաև նրանց առողջական վիճակի առանձնահատկությունները՝ փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների, ինչպես նաև հղիների թեստավորման ծախսերի հարցի լուծումն իրավաստեղծ մարմնի իրավասության տիրույթում է՝ հաշվի առնելով, մասնավորապես, Հրամանին համապատասխան՝ փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների կողմից պատվաստումն (այլընտրանքը) ընտրելու հնարավորության բացառված լինելու հանգամանքը:

Վերոգրյալի լույսի ներքո Մահմանադրական դատարանը գտնում է, որ Հրամանով սահմանված այն կարգավորումը, որին համապատասխան՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնելու պահանջի մասով փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների համար նախատեսված է բացառություն, լիարժեքորեն չի ապահովում այլոց/այլ աշխատողների, մասնավորապես՝ միննույն աշխատանքային միջավայրում գտնվող անձանց և նրանց հետ հարաբերվող անձանց՝ Մահմանադրության 82-րդ հոդվածով ամրագրված առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների, Մահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված առողջության պահպանման իրավունքների արդյունավետ իրացումը՝ Մահմանադրության 49-րդ և 57-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների իրացման համատեքստում:

Մահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով պատվաստումային քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս պետությունը, նախքան համապատասխան կառուցակարգերի ներդրումը, ինչպես նաև դրանց ներդրմանը զուգահեռ, գործունե միջոցներ ձեռնարկի պատվաստման վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկվածության, դրա մակարդակի բարձրացման ուղղությամբ ներկայացնելով/տրամադրելով պատվաստման կանխարգելիչ նշանակության, պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության, ինչպես նաև պատվաստվելու կամ չպատ-

վաստվելու հնարավոր ռիսկերի և անցանկալի հետևանքների վերաբերյալ անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն: Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի պայմաններում նշված հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելումը և դրա դեմ պայքարը յուրաքանչյուր պետության պոզիտիվ պարտականություններն են (այլ ոչ հայեցողությունը), և պետությունը պատվաստումային քաղաքականությունը մշակելիս ու իրականացնելիս առաջնահերթ պետք է գործադրի համոզման գործիքակազմը: Այդ համատեքստում, հանրային իրազեկման արշավի ոչ պատշաճ կազմակերպումը և արդյունքում՝ հանրության ոչ բավարար իրազեկվածությունը, ինչպես նաև հոչակված սահմանադրական նպատակների ուղղված գործիքակազմում չհիմնավորված վերը նշված բացառությունները, ծնում են տարաբնույթ մտահոգություններ/մտավախություններ պատվաստումային գործընթացի (լայն առումով) առնչությամբ՝ ընդհուպ կասկածի տակ դնելով նշված գործընթացի արդյունավետությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության 4.1-ին կետի, 2-7-րդ ենթակետերի «դ» պարբերության համապատասխանաբար՝ 8.1, 8.1, 8.1, 10.1, 5.1, 8.1-ին կետերի, 8-9-րդ ենթակետերի «բ» պարբերության համապատասխանաբար՝ 5.1, 3.1-ին կետերի, 10-12-րդ ենթակետերի «դ» պարբերության 8.1-ին կետի, 13-րդ ենթակետի «դ», «ը», «ժա» պարբերությունների համապատասխանաբար՝ 8.2, 17.1, 26.1-ին կետերի, 14-15-րդ ենթակետերի «դ» պարբերության 7.1-ին կետի, 16-րդ ենթակետի «բ» պարբերության 3.1-ին կետի, 17-20-րդ ենթակետերի «դ» պարբերության 7.1-ին կետի, 21-րդ ենթակետի «բ» պարբերության 5.1-ին կետի, 22-24-րդ ենթակետերի «դ» պարբերության 8.1-ին կետի, 2-րդ կետի 4-րդ ենթակետի

8.2-րդ կետի «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը ճանաչել Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին հակասող և անվավեր նկատի առնելով, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող սուբյեկտների (աշխատողների) շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2021 թվականի  
ՍԴՈ-1621



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ) ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ**

2021 թվականի նոյեմբերի 1-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանում «Արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի ղեկավար Փիթեր Գյորթլերին: Ծրագիրն իրականացվում է Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) կողմից՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:



Արման Դիլանյանը կարևորել է IRZ-ի կողմից իրականացվող ծրագիրը և հույս է հայտնել, որ այն կնպաստի Հայաստանի դատական համակարգի անկախության, արդյունավետության, բարեկարքության, հաշվետվողականության և թափանցիկության հետագա բարձրացմանը: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել գործընկերության և հետագա համագործակցության շուրջ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱԴԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
«INTERNATIONAL IDEA» ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ**

2021 թվականի դեկտեմբերի 2-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է «International IDEA» միջկառավարական կազմակերպության ներկայացուցիչներ Կիմանա Զուլուետա-Ֆյուլշերին, Նանա Կալանդադեին և կազմակերպության փորձագետ, Չիկագոյի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Թոմ Գինսբուրգին:



Ողջունելով հյուրերին՝ Արման Դիլանյանը մեծապես կարևորել է սահմանադրական իրավունքի լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով տարբեր միջազգային և միջկառավարական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը և համատեղ մասնագիտական ծրագրերի իրականացումը:

Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել համատեղ մասնագիտական ծրագրերի իրականացման հեռանկարների շուրջ և երկուստեք պատրաստակամություն են հայտնել դիտարկելու փոխաշահավետ գործընկերության այլ ձևաչափեր:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎՈՒՄՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎՈՒՄՅԱՆ ԿԱՏԱՐԱՆԻ**

2021 թվականի դեկտեմբերի 7-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համագործակցության ծրագրերի բաժնի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության պատվիրակությանը:



Ողջունելով Եվրոպայի խորհրդի պատվիրակությանը՝ Արման Դիլանյանը նշել է, որ Սահմանադրական դատարանը մեծապես կարևորում է Եվրոպայի խորհրդի և դրա մասնագիտացված մարմինների հետ համագործակցության շարունակական զարգացումը և նոր համատեղ ծրագրերի իրականացումը:

Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության և սահմանադրական արդարադատության ոլորտներում հետագա համագործակցության շուրջ: Երկուստեք կարևորվել են դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացումը և քաղաքացիների շրջանում իրավունքի գերակայության, Եվրոպական կոնվենցիայի ու սահմանադրական արդարադատության վերաբերյալ իրազեկվածության խթանումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թվականի դեկտեմբերի 8-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեին:



Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը կարևորել է հայ-լիտվական բարեկամական հարաբերությունների շարունակական զարգացումը և երկու երկրների սահմանադրական դատարանների միջև փոխադարձ շահավետ համագործակցությունը: Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Լիտվայի Հանրապետության դեսպան Ստանիտե-Տոլոչկիենեն նշել է, որ Լիտվան պատրաստակամ է աջակցել Հայաստանի դատաիրավական համակարգի զարգացման օրակարգին և կիսվել ժողովրդավարական բարեփոխումների լիտվական փորձով:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկու երկրների սահմանադրական դատարանների գործընկերության խթանմանը, բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպմանը և համատեղ նոր ծրագրերի իրականացման հեռանկարներին: Դեսպան Ստանիտե-Տոլոչկիենեի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի կողմից ներկայումս իրականացվող ծրագրերի ընթացքը:



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ

2021 թվականի դեկտեմբերի 13-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյին: Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը շնորհավորել է տիկին դեսպանին նշանակման



առթիվ՝ հույս հայտնելով, որ նրա պաշտոնավարման ընթացքում նոր լիցք կհաղորդվի հայ-ֆրանսիական միջդատարանական ու իրավական երկխոսությանը: Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական խորհրդի միջև համագործակցությանը՝ Արման Դիլանյանն արժևորել է բարեկամական կապերի ամրապնդումը թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափերում, մասնավորապես՝ Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության շրջանակներում: Շնորհակալություն հայտնելով ջերմ հյուրընկալության համար՝ դեսպան Լույոն վստահեցրել է, որ իր գործունեության ընթացքում կգործադրի անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ երկու երկրների սահմանադրական արդարադատության մարմինների հարաբերությունները և համագործակցությունը զարգացնելու համար: Կողմերը երկուստեք կարևորել են մոտ ժամանակաշրջանում բարձր մակարդակի փոխադարձ այցելությունների

կազմակերպումը: Դեսպան Լույսյի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի գործառնությունները և դերակատարումը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի դեկտեմբերի 15-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը քաղաքավարական հանդիպում է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերի հետ:

Շնորհավորելով Վիկտոր Ռիխտերին պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ դեսպանի գործունեությունը կնպաստի հայ-գերմանական իրավական հարաբերությունների ու համագործակցության հետագա զարգացմանը:



Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Վիկտոր Ռիխտերը նշել է, որ Գերմանիան շարունակելու է նպաստել Հայաստանում անցկացվող ժողովրդավարական ու դատաիրավական բարեփոխումներին: Դեսպանը վստահեցրել է, որ անհրաժեշտ ջանքեր կներդնի ընդլայնելու հայ-գերմանական երկկողմ փոխգործակցությունը նաև սահմանադրական արդարադատու-

թյան ոլորտում: Զրուցակիցները քննարկել են երկու երկրների միջև իրավական կապերի ակտիվացման, մասնավորապես իրավունքի գերակայության, սահմանադրական արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում համագործակցության ընդլայնման հեռանկարները: Այս առումով երկուստեք ընդգծվել է Մահմանադրական դատարանի և գերմանական տարբեր մասնագիտական գործակալությունների երկխոսության և տեխնիկական գործակցության կարևորությունը:

Դեսպան Ռիխտերի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է Մահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը և ներկայումս իրականացվող ինստիտուտիցոնալ ծրագրերի ընթացքը:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Մահմանադրական դատարան և հանդիպել Մահմանադրական դատարանի դատավորներին:



**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Քննարկմանը մասնակցել են Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, Սահմանադրական դատարանի դատավորներ Վահե Գրիգորյանը, Երվանդ Խունդկարյանը, Աշոտ Խաչատրյանը, Արաիկ Թունյանը, Արթուր Վաղարշյանը, Էդգար Շաթիրյանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանն ու ամրապնդմանը վերաբերող հարցեր:

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ**

**2021 թվականի հոկտեմբերի 21-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հյուրընկալել է Արարատի Մարզի Գեղանիստ գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներին:

Ողջունելով աշակերտներին՝ Արման Դիլանյանը ներկայացրել է ՄԴ առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները, այնուհետև պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

Հանդիպման ավարտին Արման Դիլանյանն աշակերտներին հորդորել է սովորել բարձր առաջադիմությամբ և ձեռք բերված գիտելիքները հետագայում ծառայեցնել Հայաստանի Հանրապետության հզորացմանն ու զարգացմանը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՈՒՀԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ**

**2021 թվականի նոյեմբերի 8-ին** Սահմանադրական դատարանի նախագահն ընդունել է Ռուսաստանի Դաշնության մի շարք համալսարանների ու գիտական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ներկայացուցիչների, որոնք Հայաստան են ժամանել ճանաչողական այցով:



Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը ողջունել է խմբի այցը և կարևորել իրավագիտության ոլորտում Հայաստանի ու Ռուսաստանի միջև համագործակցության զարգացումն ու ընդլայնումը: Սահմանադրական դատարանի նախագահը հույս է հայտնել, որ այս այցը նոր հնարավորություններ կստեղծի հայ և ռուս իրավագետների համար՝ քննարկելու համատեղ ծրագրերի ու նախագծերի իրականացման հնարավորությունները՝ արդյունավետ գործընկերություն ապահովելով երկու երկրների ակադեմիական շրջանակների համար: Այնուհետև Արման Դիլանյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել հյուրերին հետաքրքրող հարցերին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՂՉ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

**2021 թվականի դեկտեմբերի 1-ին** Սահմանադրական դատարան են այցելել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները, որոնց ընդունել է դատավոր Արթուր Վաղարշյանը:

Ողջունելով ուսանողներին՝ դատավորը ներկայացրել է ՄԴ առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել է նրանց հետաքրքրող հարցերին:



Այցի շրջանակներում ուսանողները ծանոթացել են նաև Բարձր դատարան ներկայացվող անհատական դիմումի քննության առանձնահատկություններին, որոնց մասին նրանց հետ զրուցել է ՄԴ անհատական դիմումների բաժնի վարիչ Արուս Հայրապետյանը: Ամփոփելով հանդիպումը՝ Արթուր Վաղարշյանն ուսանողներին հորդորել է սովորել բարձր առաջադիմությամբ և ձեռք բերված գիտելիքները գործածել ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԵՐՎԱՆԴ  
ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

2021 թվականի դեկտեմբերի 2-ին Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ Սահմանադրական դատարան են



այցելել այդ ֆակուլտետի 1-4-րդ կուրսի ուսանողները, որոնց ընդունել է ՄԴ դատավոր Երվանդ Խունդկարյանը:

Ողջունելով ուսանողներին դատավորը ներկայացրել է ՄԴ առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել է նրանց հետաքրքրող հարցերին:

Այցի շրջանակներում ուսանողները ծանոթացել են նաև Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկություններին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի լիազորությունների տարանջատմանը: Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի իրավական համակարգում ՄԴ որոշումների դերին և նշանակությանը վերաբերվող մի շարք հարցերի:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

2021 թվականի դեկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը տարեվերջյան հանդիպում է ունեցել Հայ-ռուսական համալսարանի՝ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավագիտության բաժնի ուսանողների հետ:



Սահմանադրական դատարանի նախագահն ուսանողների հետ հանդիպման ընթացքում պատասխանել է նրանց հարցերին, որոնք մասնավորապես վերաբերել են սահմանադրական արդարադատությանը, Սահմանադրական դատարանի լիազորություններին, Բարձր դատարանի միջազգային կապերին և ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումներին, դատական իշխանության դերակատարմանը պետական կառավարման համակարգում և երկրում իրավական ու սահմանադրական մշակույթի զարգացման հեռանկարներին:

Արման Դիլանյանը երիտասարդներին հորդորել է իրենց առջև ավելի հավակնոտ նպատակներ դնել, լինել լայնախոհ և ապագայում համալսարանական գիտելիքները ծառայեցնել ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԼ Է  
ՖՐԱՆԿՈՖՈՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ**

2021 թվականի հոկտեմբերին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի և Կանադայի Գերագույն դատարանի նախագահ, Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության նախագահ Ռիչարդ Վազների միջև տեղի ունեցած նամակների փոխանակման և դրան նախորդած քննարկումների արդյունքում Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության բյուրոն միաձայն կողմ է քվեարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի Ընկերակցությանն անդամակցությանը:

Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության տարածած մամուլի պաշտոնական հաղորդագրությունում մասնավորապես ասվում է. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, որի նախագահը Արման Դիլանյանն է, պաշտոնապես կդառնա ընկերակցության 46-րդ լիիրավ անդամը



ն կլինի Եվրոպայի Հարավային Կովկաս տարածաշրջանի առաջին սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը, որն անդամակցում է Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցությանը: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արդեն իսկ անդամակցում է մի շարք տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողովին (2001 թվականից), ինչպես նաև ակտիվ գործընկերություն է զարգացնում Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի հետ»:

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ IV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ**



2021 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Եվրասիական տնտեսական միության դատարանի IV միջազգային խորհրդաժողովի բացման արարողությանը: Միջոցառումն այս տարի անցկացվում է առցանց ձևաչափով և կրում է «Իրավունքի միանման կիրառման ապահովումը Եվրասիական տնտեսական միությունում. Դատարանի դերը» խորագիրը:

Խորհրդաժողովի մեկնարկին Արման Դիլանյանն իր ողջույնի խոսքում շնորհակալություն է հայտնել ԵԱՏՄ դատարանի նախագահ Էռնա Հայրիյանին՝ միջոցառման կազմակերպման բարձր մակարդակի համար և հույս հայտնել, որ նախանշված թեմայի շրջանակներում առաջիկա օրերին սպասվող մասնագիտական քննարկումները կնպաստեն Եվրասիական տիրույթում իրավունքի կիրառման լավագույն փորձի փոխանակմանը:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է ԵԱՏՄ տարածքում թվային փոխակերպման գործընթացը և առաջարկել է դիտարկել միջդատարանական համագործակցությանը միտված էլեկտրոնային արդարադատության գործիքների հետագա ներդրումը:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է ԵԱՏՄ տարածքում թվային փոխակերպման գործընթացը և առաջարկել է դիտարկել միջդատարանական համագործակցությանը միտված էլեկտրոնային արդարադատության գործիքների հետագա ներդրումը:

Ամփոփելով իր խոսքը՝ Արման Դիլանյանը վերահաստատել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի պատրաստակամությունը՝ խորացնելու Եվրասիական տնտեսական միության դատարանի, ինչպես նաև անդամ-պետությունների Բարձր դատարանների հետ գործընկերային հարաբերությունները:

### ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

**2021 թվականի դեկտեմբերի 11-12-ին** Դիլիջանում տեղի է ունեցել «Սահմանադրական դատարանի ակտերի մշակման առանձնահատկությունները. ժամանակակից փորձն ու զարգացման միտումները» խորագրով երկօրյա սեմինարը: Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից ֆինանսավորվող և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) ղեկավարությամբ Կոնսորցիումի կողմից իրականացվող «Արդարադատության համակարգի ամրապնդման» ծրագրի շրջանակներում:



Իր ողջույնի խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհակալություն է հայտնել «Արդարադատության համակարգի ամրապնդման» ծրագրի աշխատակազմին՝ տվյալ մասնագիտական միջոցառումը բարձր մակարդակով և սեղմ ժամկետներում կազմակերպելու համար: Անդրադառնալով սեմինարի օրակարգին և դրա շրջանակներում քննարկվող թեմաներին՝

Արման Դիլանյանը կարևորել է նմանօրինակ մասնագիտական քննարկումները և հույս հայտնել, որ դրանք կկրեն շարունակական բնույթ:

Հայաստանում «Արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի ղեկավար Փիթեր Գյորթլերն իր հերթին ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ շնորհակալություն հայտնեց Սահմանադրական դատարանին՝ ձևավորված արդյունավետ և հեռանկարային համագործակցության համար: Երկօրյա սեմինարի ընթացքում քննարկվել են Սահմանադրական դատարանի ակտերի մշակման առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի ակտերի կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց նախագծման առնչությամբ գոյություն ունեցող չափանիշները և միջազգային փորձը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵՐ**

**ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ Է ԺԱՄԱՆԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐԱԲ ՏՈՒՐԱՎԱՅԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

2021 թվականի նոյեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հրավերով պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի գլխավորած պատվիրակությունը:

Այցի նպատակն է որակական նոր լիցք հաղորդել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև նպաստել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով միջդատարանական համագործակցության խորացմանը:

Պաշտոնական այցի շրջանակներում տեղի կունենան առանձնազրույց Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանադրական դատարանների նախագահների միջև, ընդլայնված կազ-

մերով մասնագիտական քննարկումներ, ինչպես նաև նախատեսված են հանդիպումներ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ:

**ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑԸ**

**2021 թվականի նոյեմբերի 4-ին** տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի և Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի առանձնազրույցը:



Ողջունելով իր վրացի գործընկերոջը՝ Արման Դիլանյանը կարևորել է Հայաստանի և Վրաստանի սահմանադրական դատարանների երկարամյա համագործակցությունը և հույս հայտնել, որ պաշտոնական այցը նոր շունչ կհաղորդի երկկողմ հարաբերություններին:

Մերաբ Տուրավան իր հերթին շնորհակալություն է հայտնել պաշտոնական այց կատարելու հրավերի և ջերմ ընդունելության համար և նշել, որ հայ-վրացական դարավոր բարեկամությունը պարարտ հող է ստեղծում երկու երկրների սահմանադրական դատարանների միջև իրավական կապերի ամրապնդման համար:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել բարձր մակարդակի շփումները երկկողմ օրակարգի բոլոր հարցերով ու դիտարկել համատեղ տարածաշրջանային ծրագրերի իրականացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ ԵՆ ԸՆԴԼԱՑՆՎԱԾ ԿԱԶՄԵՐՈՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

2021 թվականի նոյեմբերի 4-ին Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի գլխավորած պատվիրակության՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի են ունեցել երկու դատարանների ընդլայնված կազմերով աշխատանքային քննարկումներ:



Քննարկումների շրջանակներում մասնավորապես անդրադարձ է կատարվել Հայաստանում և Վրաստանում սահմանադրական դատարան ներկայացվող անհատական գանգատի ինստիտուտի առանձնահատկություններին, ինչպես նաև սահմանադրական դատարանների և այլ դատարանների միջև փոխհարաբերություններին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021

Ամփոփելով թեմատիկ քննարկումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը և Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավան ընդգծել են մասնագիտական նմանատիպ ձևաչափերի կազմավորման անհրաժեշտությունը և սահմանադրական արդարադատության ոլորտում փորձի փոխանակման կարևորությունը:

**ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ**

2021 թվականի նոյեմբերի 4-ին Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի ղեկավարած պատվիրակությունն այցելել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:



Երկու երկրների բարձր դատարանների ներկայացուցիչները Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանի ուղեկցությամբ շրջայց են կատարել թանգարանային համալիրում և ծանոթացել հայ միջնադարյան մատենագրությանը, ինչպես նաև այլալեզու ձեռագրերի հավաքածուներին:

**ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ  
ԱՅՑԵԼԵԼ Է ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ**


2021 թվականի նոյեմբերի 5-ին Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավան Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի ուղեկցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:



**ՏԵՂԻ Է ՌԻՆԵՑԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ  
ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

2021 թվականի նոյեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն ընդունել է ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հրավերով պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավայի գլխավորած պատվիրակությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(104)2021



ՍԱՐՄԱՍԱՆՈՂՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(104)2021

Հանդիպմանն արձանագրվել է հայ-վրացական բազմաբեկո հարաբերությունների եւ փոխգործակցության բարձր մակարդակը: Զրույց է ծավալվել երկու երկրների իշխանությունների՝ տարբեր թեւերում առկա գործընկերային հարաբերությունների եւ դրանց ընդլայնման շուրջ: Այս համատեքստում ՀՀ ԱԺ նախագահը նշել է, որ Վրաստանի հետ միջխորհրդարանական հարաբերությունները չափազանց կարեւոր են բարեկամ երկրի հետ համատեղ աշխատանքային օրակարգեր ունենալու տեսանկյունից: Ալեն Սիմոնյանն ընդգծել է, որ Վրաստանի հետ բոլոր ոլորտներում համագործակցության խորացումը բխում է եղբայրական եւ հարեւանային շահերի առաջնահերթություններից:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Վրաստանի ՍԴ նախագահը կարեւորել է Հայաստան կատարած այցը՝ շեշտելով, որ երկու երկրների օրենսդիր մարմինների օրինակելի փոխգործակցությունը կարեւոր ցուցիչ է սահմանադրական դատարանների համար: Նրա խոսքով՝ Վրաստանի ՍԴ նիստերին իրենց մասնակցությունն են բերում պատգամավորները, ինչը մեծապես օգնում է օրինաստեղծ պրակտիկայի կատարելագործմանը:

Կողմերը քննարկել են գործընկերային ամուր հիմքեր ունեցող ծրագրերի իրականացմանը միտված հարցեր:



**ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

2021 թվականի նոյեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Վրաստանի սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավային և նրա գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով Վրաստանի ՄԴ ներկայացուցչական պատվիրակության պաշտոնական այցը մեր երկիր՝ վարչապետը նշել է. «Ուրախ եմ ընդգծել, որ Հայաստանի և Վրաստանի հարաբերություններում նոր դինամիկա է արձանագրվում: Այդ մասին են վկայում երկու երկրների տարբեր ոլորտները ներկայացնող պատվիրակությունների ակտիվ փոխայցերը, սերտ շփումները, այս անգամ արդեն՝ սահմանադրական արդարադատության բնագավառում»: Նիկոլ Փաշինյանը կարևորել է երկու երկրների Սահմանադրական դատարանների միջև համագործակցության զարգացումն ու փորձի փոխանակումը՝ հաշվի առնելով կառավարման համակարգերի ընդհանրությունները:



Շնորհակալություն հայտնելով ՀՀ վարչապետին և հայկական կողմին ջերմ ընդունելության համար՝ Մերաբ Տուրավան նշել է, որ Վրաստանի ՄԴ նախագահ ընտրվելուց հետո սա իր առաջին արտերկրյա այցն է՝ ի վկայություն այն բանի, թե որքան է Վրաստանը կարևորում Հայաստանի հետ բազմաոլորտ կապերի զարգացումը: Նա արդյունավետ է գնահատել հայ գործընկերների հետ քննարկումները եւ ամուր համագործակցությունը և ընդգծել, որ հայ-վրացական կապերի՝ վերջին շրջանի դինամիկան լավ հիմք է երկու երկրների սահմանադրական դատարանների միջև իրավական կապերի ամրապնդման համար:

Հանդիպմանն արձարծվել են խորհրդարանական կառավարմանը և դրա ժողովրդավարական նշանակությանը վերաբերող հարցեր: Մտքեր են փոխանակվել Հայաստանում և Վրաստանում խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման ընթացքի և առանձնահատկությունների շուրջ: Վրաստանի ՄԴ նախագահը նշել է, որ Վրաստանում ոգևորիչ են համարում և բարձր գնահատում Նիկոլ Փաշինյանի ներդրումը Հայաստանի ժողովրդավարական զարգացման գործում:

---

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,  
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,  
Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ**

Ստորագրված է տպագրության՝ 21.02.2022թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 100

Խմբագրության հասցե՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am  
<http://www.concourt.am>

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(104)2021  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(104)2021  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(104)2021